

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

**3**

**ARMENOLOGICAL ISSUES**

**BULLETIN**

ԵՐԵՎԱՆ – YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS  
2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ  
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.  
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Սիմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

**Ավագյան Ա. Ա.**

**Ավետիսյան Լ. Վ.** (գլխավոր  
խմբագրի տեղակալ)

**Ավետիսյան Հ. Գ.**

**Ավետիսյան Յու. Ս.**

**Բայրամյան Հ. Ս.**

**Բարդակչյան Գ. (ԱՄՆ)**

**Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)**

**Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.**  
(Գերմանիա)

**Զաքարյան Ս. Ա.**

**Հայրունի Ա. Ն.**

**Հովհաննիսյան Մ. Ս.**

**Հովսեփյան Լ. Ս.**

**Ղարիբյան Ա. Ա.**

**Սարգսրյան Հ. Գ.**

**Մինասյան Է. Գ.**

**Մուրադյան Ս. Պ.**

**Պողոսյան Վ. Ա.** (պատասխանատու քարտուղար)

**Սայադով Ս. Մ.** (Ռուսաստան)

**Սաֆարյան Ա. Վ.**

**Տազեյան Ա. (Լիբանան)**

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

**Avagyan A.**

**Avetisyan H.**

**Avetisyan L.** (Deputy editor-in-chief)

**Avetisyan Y.**

**Bardakchian G.** (USA)

**Bayramyan H.**

**Dakessian A.** (Lebanon)

**Dedeyan G.** (France)

**Drost-Abgaryan A.** (Germany)

**Gharibyan A.**

**Hayruni A.**

**Hovhannisyan M.**

**Hovsepian L.**

**Margaryan H.**

**Minasyan E.**

**Muradyan S.**

**Poghosyan V.** (Executive Secretary)

**Safaryan A.**

**Sayadov S.** (Russia)

**Zakaryan S.**

# Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

## ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ՄԱՅՐ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 95-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ\*

*Բանալի բառեր – համալսարան, պատմալեզվաբանական, պատմություն, բանասիրություն, մայր ֆակուլտետ, հոբելյան, կրթություն, գիտելիք, գիտություն, ուսուցիչ, մտավորական, դասսիսու, գիտնական, շրջանավարտ, ժողովուրդ*

2014 թ. ուսումնական տարվա սկիզբը առանձնապես նշանակալից էր Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ու պատմության ֆակուլտետների համար. 95 տարի առաջ՝ 1919 թ., հիմնադրվեց հանրապետության առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, որն ուներ ընդամենը մեկ պատմալեզվաբանական ֆակուլտետ:

Այդ ֆակուլտետի բացումը պատահական չէր: Նորաստեղծ երկրին անհրաժեշտ էին ազգային նկարագրով լեցուն ուսուցիչներ, մտավորականներ, գաղափարակիրներ ու, մանավանդ, գաղափարատարներ, որ անկախացած Հայաստանի ազատության, ինքնուրույն պետականության ու ժողովրդի հոգևոր հարակայության հունդերը սերմանեին մարդկանց մեջ:

Ուշագրավ է եղել մայր բուհի մայր ֆակուլտետի անցած ուղին: Այս առումով Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների հիմնադրման 95-ամյակի առիթով ուղերձում նշել է. «Համալսարանի հայագիտական երկու ֆակուլտետներն էլ ունեն կարևոր առաքելություն: Դա մեր պետությանը, մեր ժողովրդին, գիտելիքի լույսին ու բարուն ծառայելու պատրաստ բանիմաց ու լայնախոհ մասնագետներ պատրաստելն է: Այդ առաքիլություններով օժտված համալսարանականներն են, որ շարունակելու են կերտել Հայաստանի ու Երևանի պետական համալսարանի կենսագրությունը և կոչված են պատվով կրելու «համալսարանական» անունը»:

Հոբելյանը, իրոք, լավ առիթ դարձավ վերագնահատելու համալսարանի անդրանիկ ֆակուլտետի անցած ուղին ու նախանշելու նոր անելիքները:

XX դարի առաջին երկու տասնամյակները հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական փուլերից եղան: Մի կողմից Առաջին աշխարհամարտի պատճառած տնտեսական ավերածություններն ու մարդկային զոհե-

---

\* Հոդվածի սեղմ տարբերակն ընթերցվել է 2014 թ. սեպտեմբերի 10-ին ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների 95-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում:

րը, մյուս կողմից Մեծ եղեռն անվամբ պատմության մեջ մտած՝ պետական մակարդակով Օսմանյան կայսրությունում երիտթուրք պարագլուխների կազմակերպած ցեղասպանությունը արևմտահայության նկատմամբ և, վերջապես, ցարական կարգերի փլուզումն ու բոլշևիկյան տիրապետության հաստատումը, այդ ամենի հետևանքով զանգվածային փախստականների ու համաճարակների, սովի, դրանց հավելյալ անտանելի ցրտերի պատճառած վնասները քարքարի վրա չթողին Հայաստան աշխարհում:

Ահա այսպիսի պայմաններում ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ ի սկզբանե ստիպված լինելով պայքարել իր հարևանների արշավող բանակների դեմ, զսպել իրար հաջորդող ներքին ապստամբություններն ու դավաճանությունները: Նորաստեղծ հանրապետության ամբողջ տարածքում անմշակ էին մնացել դաշտերն ու այգիները: Երևանի փողոցներում ու շենքերի բակերում, Վաղարշապատի պարիսպներից ներս ու դուրս հարյուրհազարավոր գաղթականներ ու որբեր մեռնում էին՝ հա ց, հա ց մուրալով: Այդ դաժան օրերի մասին Կոստան Զարյանն իր «Նավը լեռան վրա» վեպում վկայում է, թե ինչպես ամեն առավոտ քաղաքի փողոցներով շրջում էին դիահավաք սայլերը, թե ինչպես նենգում էին մեծ տերությունները, թե ինչպես երկիրը սրընթաց դեպի անդունդն էր գլորվում: Սսես մի վերին անեծքով սովը, ցուրտը, համաճարակները, պատերազմները դարձել էին Հայաստան աշխարհի «դաշնակիցները»:

Այսպիսի իրավիճակում 1919 թ. մայիսի 16-ին ՀՀ Նախարարների խորհրդի որոշմամբ, որտեղ մեծ էր կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի դերը, հիմնվում է Երևանի համալսարանը, որը իր աշխատանքները պետք է սկսեր Երևանում, սակայն այստեղ հարմար շենքի բացակայության պատճառով իր գործունեությունը ծավալում է Ալեքսանդրապոլում՝ առևտրային դպրոցի շենքում, որը կանգուն է նաև մեր օրերում և քաղաքի լավագույն կառույցներից է: Նախատեսվում էր հաջորդ ուսումնական տարին վերսկսել Երևանում, որտեղ համալսարանին հատկացվեց Աստաֆյան փողոցում գտնվող ուսուցչական սեմինարիայի շենքի առաջին հարկը, երկրորդ հարկը դեռ զինվորական հիվանդանոց էր: 1920 թ. հոկտեմբերին ծավալված հայ-թուրքական պատերազմը կասեցրեց գործընթացը, ապա հաջորդեց բոլշևիկյան կարգերի հաստատումը, և միայն 1921 թ. հունվարին հնարավոր եղավ սկսել պարապմունքները:

1919 թ. համալսարանի տեսուչ (ռեկտոր) էր հաստատվել Եվրոպայում ու Ռուսաստանում մեծ համբավ վայելող իրավաբան, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը: Կազմակերպչական աշխատանքներին զուգահեռ՝ անհրաժեշտ էր լուծել երկու կարևորագույն՝ որակյալ դասախոսական կազմի և ուսանողների ընդունելության կարգի խնդիրներ: Դասախոսական աշխատանքի հրավիրվեցին ժամանակի անվանի մի շարք մտավորականներ, մասնագետներ ու գիտնականներ, որոնց մի մասը 1910-1920-ական թվականներին հայ իրականության մեջ արդեն հայտնի դեմքեր էին և ունեին գիտական ու մանկա-

վարժական աշխատանքի մեծ փորձ: Նրանց թվում էին Մանուկ Աբեղյանը, Ստեփան Մալխասյանը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մինասյանը, Երվանդ Տեր-Մինասյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Միրական Տիգրանյանը, Հակոբ Մանանդյանը, Գրիգոր Ղափանցյանը և այլք: Ուսանողության ընդունման հարցը որոշվում է հետևյալ սկզբունքով. նախ ընդունել միջնակարգ կրթություն ունեցողներին, ապա՝ չունեցողներին, ովքեր պետք է ուսանեին ազատ ունկնդրի կարգավիճակով: Ընդունելության սկզբունքը մեկն է եղել. «մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար»: Արդյունքում հայտ ներկայացրած 632 քաղաքացիներից համալսարան են ընդունվում 260-ը:

Ուշագրավ է, որ անդրանիկ դասախոսությունը կարդացել է Գևորգյան ճեմարանի նախկին տեսուչ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Սովսիսյանը («Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով), ով պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկանն էր: Պատվարժան ու լուսավոր մի մարդ, որ գիտեր մի քանի լեզուներ, ավարտել էր Դորպատի համալսարանը, կատարելագործվել Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում, եղել Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանների մոտ, Պետերբուրգում պաշտպանել գիտական թեզ: Թեմայի ընտրությունը պատահական չէր: Կրթական ու գիտական զարգացումից զատ, անհրաժեշտ էր ուսանողներին նաև հոգևոր ու բարոյական բարձրացման մղել:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Երևանի համալսարանը նոր շունչ է ստանում, վերանվանվում Երևանի ժողովրդական համալսարան, ռեկտոր է նշանակվում Հակոբ Մանանդյանը: Ցավոք, համալսարանում պարապմունքները նորից են ընդհատվում՝ պայմանավորված 1921 թ. փետրվարյան քաղաքացիական դեպքերով: Նույն տարվա հոկտեմբերին դասերը վերսկսվում են:

Հետագա տարիներին համալսարանում եղան մի շարք բաժանումներ ու վերաբաժանումներ, ստեղծվեցին ու փակվեցին ֆակուլտետներ ու բաժիններ: Հաճախակի կրկնվող այս ընդհատումներն ու փոփոխությունները վառ կերպով ցույց են տալիս Հայաստանի այդ տարիների ոչ միայն քաղաքական, տնտեսական ու ռազմական հեղհեղուկ վիճակը, այլև կրթական ու մշակութային որքան բարդ, նույնքան և տխուր կացությունը: Այդուհանդերձ, հետագա տարիներին համալսարանը շատ ավելի կայուն քայլերով է առաջադիմում: Պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է նոր ուժերով՝ Լեո (Առաքել Բաբախանյան), Արսեն Տերտերյան, Հայկ Գյուլի-Քնիսյան, Հրաչյա Աճառյան, Գուրգեն Էդիլյան, Աշոտ Հովհաննիսյան, Աբգար Հովհաննիսյան, Գուրգեն Սևակ և այլք:

1936-1937 թթ. ուստարվանից պատմագրական ֆակուլտետի հենքի վրա ստեղծվեցին պատմության և բանասիրության ինքնուրույն ֆակուլտետները: Հետագա տարիներին պատմության ֆակուլտետից կազմավորվեցին փիլիսոփայության, հոգեբանության ու միջազգային հարաբերությունների, իսկ բանասիրականից՝ արևելագիտության, ռուս բանասիրության, ռոմանագեր-

մանական բանասիրության և ժուռնալիստիկայի ֆակուլտետները:

1920-1930-ական թվականներին, ինչպես և հետագա տարիներին, համալսարանում գործել է հայ պատմաբանների շատ ուժեղ փաղանգ: Նրանք ոչ միայն իրականացրել են այդ տարիների ուսանողության ուսուցման գործը, այլև պատրաստել փոխարինողներ, ուսումնական գործընթացներում ընդգրկել նոր առարկաներ ու ուսուցման մեթոդիկաներ, հիմնել նոր ամբիոններ՝ ԽՍՀՄ պատմության, ընդհանուր պատմության, հայ ժողովրդի պատմության, հնագիտության և ազգագրության և այլն: 1940-ական թվականներին ինչպես նախկին պատմալեզվաբանական, այնպես էլ վերակազմավորված պատմության և բանասիրական ֆակուլտետները իրենց գործունեության ընթացքում արդեն հասցրել էին մի քանի շրջանավարտ կուրսեր ունենալ: Այդ շրջանավարտների լավագույններից մի քանիսը շարունակեցին իրենց ուսուցիչների գործը, դարձան գիտության ու կրթության կազմակերպիչներ, առաջատար դասախոսներ, պրոֆեսորներ ու ակադեմիկոսներ: Նրանցից շատերը պատմության, հայոց լեզվի ու գրականության զարգացման առաջին դիրքերում եղան տասնամյակներ շարունակ, գրեցին բազում մենագրություններ, դասագրքեր, հարյուրավոր գիտական հոդվածներ: Այսօր էլ նոր սերունդը ակնածանքով է մտաբերում այնպիսի ճանաչված գիտնականների ու դասախոսների, ինչպիսիք են Հակոբ Մանանդյանը, Առաքել Բաբախանյանը, Ստեփան Ներսիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Արգար Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Վահան Ռշտունին, Հակոբ Ջորյանը, Աշխարհաբեկ Քալանթարը, Հենրի Գաբրիելյանը, Նորայր Դաբաղյանը, Հրաչիկ Միմոնյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Բաբկեն Հարությունյանը, Էդիկ Ջոհրաբյանը, Մկրտիչ Մկրյանը, Էդուարդ Աղայանը, Գևորգ Ջահուկյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Հրանտ Թամրազյանը, Հովհաննես Բարսեղյանը, Վաչե Նալբանդյանը, Էրիկ Աթայանը, Աշոտ Սուքիասյանը, Ալբերտ Շարուրյանը, Մանվել Ասատրյանը, Սիրաք Գյուլբուդաղյանը, Սերգեյ Գալստյանը և շատ ուրիշների:

Մեր օրերում այդ ֆակուլտետների գիտական ու կրթական աշխատանքներն իրենց ուսերին են տանում ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները՝ Է. Մինասյանը, Պ. Հովհաննիսյանը, Ա. Միմոնյանը, Հ. Ավետիսյանը, Հ. Մարգարյանը, Ա. Ստեփանյանը, Հ. Պետրոսյանը, Լ. Չուգասզյանը, Վ. Գաբրիելյանը, Լ. Եզեկյանը, Լ. Հովսեփյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, Ռ. Սաքապետոյանը, Յու. Ավետիսյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Մնացականյանը, Կ. Աղաբեկյանը, գիտության տասնյակ այլ դոկտորներ, դոցենտներ, ասիստենտներ, որոնց գործունեությունը չի սահմանափակվում միայն ֆակուլտետների պատերից ներս: Համագործակցելով ՀՀ գրողների միության, Գիտությունների ազգային ակադեմիայի, Մատենադարանի, Երևանի մի շարք բուհերի, թանգարանների, դպրոցների, Հայաստանի Հանրապետության ու Ղարաբաղի զորամասերի, արտասահմանի, Սփյուռքի, Ջավախքի կրթական ու գիտական ուժերի հետ՝ ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմը հանդես է գալիս դասախոսություններով, գիտա-

կան զեկուցումներով, մասնակցում գրքերի քննարկումների, գրական, պատմագիտական ու լեզվաբանական բանավեճերի, պոեզիայի փառատոների և մրցանակաբաշխությունների: Անուրանալի է այս ֆակուլտետների ներդրումը հանրապետությունում մանկավարժական կադրերի պատրաստման և կրթական նոր համակարգերի ու ծրագրերի ստեղծման գործում:

Մեծ է նրանց ներդրումը մանավանդ գիտական ուժերի պատրաստման ոլորտում: Արդեն տասնամյակներ շարունակ հայ բանասիրության ֆակուլտետում գործում է «Գրականագիտություն» մասնագիտական աստիճանաշնորհող խորհուրդը, ուր իրենց թեկնածուական ու դոկտորական աշխատանքներն են պաշտպանել մի քանի տասնյակ գիտնականներ: Վերջին տարիներին ֆակուլտետում հաջողությամբ գործում է նաև «Մանկավարժության տեսության և պատմության» աստիճանաշնորհող խորհուրդը: Պատմության և հայ բանասիրության ֆակուլտետների մի շարք առաջատար գիտնականներ համապատասխանաբար ընդգրկված են ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող «Պատմություն» և Լեզվի ինստիտուտում գործող «Լեզվաբանություն» մասնագիտությունների գիտական աստիճան շնորհող խորհուրդների կազմում: Երկու ֆակուլտետները պարբերաբար կազմակերպում են հանրապետական, միջբուհական ու միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, կլոր սեղաններ: Ահա այդպիսի մթնոլորտում են ձևավորվել ու ստեղծագործական կյանք մտել բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ, մեր գրականության տաղանդավոր ներկայացուցիչներ Խաչիկ Դաշտենցը, Գուրգեն Մահարին, Նաիրի Զարյանը, Հովհաննես Շիրազը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Հրաչյա Հովհաննիսյանը, Վարդգես Պետրոսյանը, գրողների միության նախկին նախագահ Լևոն Անանյանը, ներկայիս նախագահ Էդուարդ Միլիտոնյանը, մեր օրերում ստեղծագործող Ն. Ադայանը, Հ. Էդոյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Հարությունյանը, Դ. Հովհաննեսը, Դ. Սիրունյանը, Ա. Ավագյանը: Մշակույթի և գիտության բնագավառի այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք են գրականագետներ Սերգեյ Սարինյանը, Պիոն Հակոբյանը, Ալբերտ Մուշեղյանը, Սարգիս Հարությունյանը, Ալբերտ Կոստանյանը, Ալբերտ Արիստակեսյանը, Արիկ Գրիգորյանը, նույնպես այդ ֆակուլտետի շրջանավարտներ են: Հայ բանասիրության ֆակուլտետն ավարտած շրջանավարտների մի մասը ընթացավ կյանքի այլ ուղիներով՝ դարձավ կուսակցական, հասարակական ու քաղաքական գործիչ, խմբագիր, լրագրող, կրոնավոր՝ Գ. Սահակյան, Ռ. Շառոյան, Ա. Վարդանյան, Կ. Խողիկյան, Հ. Հովեյան, պատմության ֆակուլտետի նշանավոր շրջանավարտներից են հանրապետությունում այնպիսի հայտնի անձինք, ինչպիսիք են Վ. Սարգսյանը, Վ. Բարխուդարյանը, Լ. Ղարիբջանյանը, Ի. Զաքարյանը, Լ. Մկրտչյանը, Ա. Մելքոնյանը, Հ. Դեմոյանը և այլք:

Զարմանալի չթվա, որ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ են Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ու ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանը, ով նաև ԵՊՀ կառավարման

խորհրդի նախագահն է: Ս. Մարգարյանի ուսանողական տարիներից իմ մեջ տպավորվել է մի խոսակցություն: 1965 թ. Երևանը եռուսու էր քաղաքական ու ազգային զարթոնքով: Խորհրդային սահմանափակ իրականության մեջ առաջին անգամ տեղի էին ունենում փողոցային ցույցեր ու երթեր: Ամենքը պահանջում էին Արևմտյան Հայաստանի նվաճված հողերի վերադարձը: Հանրահավաքներից ու ելույթներից բացի՝ եղան նաև հալածանքներ ու ձերբակալություններ: Այդ բուռն դեպքերին հաջորդած 70-ական թվականների մթնոլորտը պակաս լարված չէր. պահանջատիրությունը շարունակում էր բորբոքել հոգիները: Ու երբ մի անգամ դասամիջոցին խոսում էինք կորցված հողերի ազատագրման խնդիրներից, Ս. Մարգարյանը խորհրդավոր կերպով ասաց, որ մինչ այդ դեռ ուրիշ կարևոր անելիքներ կան: Անկեղծ ասած՝ այն ժամանակ չհասկացա, թե նա ինչ էր ուզում ասել: Ջանգը հնչեց, մեր զրույցը ընդհատվեց, գնացինք լսարան: Իսկ երբ 1980-ականներին սկսվեց դարաբաշխի շարժումը, որի առաջնորդների թվում ես տեսա նաև նրան, նոր միայն հասկացա, թե ինչ նկատի ունեւր նա տասնամյակ առաջ:

Եթե խոսք բացվեց Ղարաբաղի մասին, չեմ կարող չնշել նաև, որ 1988 թ. հենց հայ բանասիրության ֆակուլտետում Արցախից ժամանած դերասանուհի Ժաննա Գալստյանի հետ հանդիպումից հետո ֆակուլտետի ուսանողությունը ուղևորվեց օպերայի հրապարակ և սկիզբ դրեց ամենքիս հայտնի նստացույցերին:

Ղարաբաղյան շարժման ամենաառաջին շարքերում էր նաև համալսարանի պատմության ֆակուլտետը, որի կուսակցական կազմակերպությունը այդ օրերին անցկացնում էր դռնբաց ժողովներ, ուր ընդունվում էին այն ժամանակվա իշխանությունների պահվածքի դեմ վճռաբեկ որոշումներ, կազմվում Մոսկվա ուղարկվելիք բողոքներ ու նամակներ:

Եթե թռուցիկ հայացք նետենք վերոհիշյալ ֆակուլտետների անցած ճանապարհին, ապա կտեսնենք, որ այն ընթացել է ոչ միայն դժվարություններով, այլև լի է ձեռքբերումներով: Լայն առումով, այդ ճանապարհը բոլորովին էլ 95 տարի առաջ չի սկսվել: Դա մի պատմություն է, որ հեռուներից է գալիս, կրթվելու ու զարգանալու մեր ժողովրդի հավերժական տենչանքից, իր պայծառ երազանքները իրականացնելու հոգևոր ու ֆիզիկական գոյակովից: Այդ է եղել մեր ողջ ազգի կյանքի իմաստը, ու պատահական չէ, որ Շահան Շահնուրը գրել է.

«Ա՛զգ,

Կռուէ՛ ամբողջությամբը քու միսերուդ:

Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ դենդերներո՛վդ, ջիղերովդ, երակներովդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ ոսկորներո՛վդ:

Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծո՛վդ:

Եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններո՛վդ:

Եթէ ասոնք ալ տարտղնուեցան, կորսուեցան, չքացան, այն ատէն կռուէ՛, ազգ, չերսոս՛վդ»:



Իսկ հերոսները միայն մարտի դաշտում ընկածները չեն, այլև մեր դժվարին պատմության լաբիրինթոսներում լույսի նման ճառագած այն մարդիկ, որոնք ճանապարհ են մատնանշել եկող սերունդների համար, կրթել ու լուսավորել են նրանց, նահատակ դարձել հանուն իրենց գաղափարների: Հայ մարդը արդեն հազարավոր տարիներ քայլում է այդ ուղիներով, կովում իր երկրի հողերն ամայացնողների դեմ, անընդհատ արշավող թշնամիների դեմ: Լինելով, Խորենացու խոսքերով ասած, «փոքր ածու»՝ նա, հանուն իր ազատության ու առաջադիմության, պայքարել է զանազան հազկերտների, մորիկների, լենկթեմուրների, չինգիզխանների դեմ, որ եկել են ու ավերել, անապատ դարձրել հայոց ծաղկուն դաշտերն ու այգիները, քանդել վանքերն ու կրթարանները, լուսավորության օջախներն ու համալսարանները:

Բայց միշտ էլ հայ ժողովուրդը՝ քարի հետ քար, հողի հետ հող, նստել ու սպասել է: Այս անարդար աշխարհում նա ամենից շատ սպասել է արդարության: Իմացել է, որ չկա իր որոնած արդարությունը, բայց սպասել է, քանի որ ցանկացել է աշխարհ մի մաքուր ու երկիր մի շեն, ուր լինել խաղաղ մի՛ դաշտ, այդ դաշտի մեջ՝ խաղաղ մի տնակ, տնակի մեջ՝ օջախ, օջախի մեջ՝ կրակ: Կրակ, որ ջերմություն լինելուց առաջ՝ **լույս է**: Ահա այդ լույսի հետևից է, որ վազել է հայ մարդը, լույս, որ խաղաղ արարումն է, առաջադիմությունը, համազգային բաղձանքների իրականացումը, քրիստոնեական մարդասիրությունը:

Դարեր շարունակ հենց այդ ամենի համար գործեցին մեր մտքի մեծերը՝ հայ կյանքի գոհասեղանին դնելով ամեն բան: Այդպես մի Մաշտոց արարեց հայոց գրերը ու հիմնեց թարգմանչաց դպրոցը, մի Խորենացի այրվեց մեր պատմության բավիղներում, մի Նարեկացի հավասարը հավասարի գրույցի բռնվեց Բարձրյալի հետ, մի Գրիգոր Մագիստրոս հիմնեց Հավուց թառի համալսարանը, մի Նչեցի՝ Գլաձորի կրթարանը, մի Մխիթար՝ Վենետիկի միաբանությունը, մի Մեղապարտ՝ հայ տպագրությունը, մի Աշտարակեցի՝ Ներսիսյան դպրոցը, մի Կոմիտաս հայտնաբերեց հայ երգն ու մեղեդին, մի Աբովյան կրթական լույսի բարձրացրեց մի ամբողջ ժողովրդի, ու մի Աղբալյան իր ստորագրությամբ վավերացրեց հայոց համալսարանի գործունեությունը:

Նրանցից ամեն մեկը սովորական մարդ կամ գործիչ չի եղել, այլ բարձր մտավորական, իր ժամանակի լուսավոր մարդ, հայրենիքի ջահակիր զինվոր, որ որպես զենք օգտագործել է գրիչը, միտքը, գաղափարը, ասել է թե՛ սերն ու նվիրումը իր ժողովրդին, այսինքն՝ եղել է սկիզբ, եղել է **ուսուցիչ**, եղել է գիտություն տարածող:

Ահա այդպես էլ 1918 թ. նոր-նոր անկախություն ձեռք բերած ժողովուրդը ձեռնամուխ եղավ կրթության իր մայր օջախի՝ Երևանի համալսարանի ստեղծմանը, որի բաղկացուցիչներից մեկն ու առաջնեկը եղավ պատմալեզվաբանական ֆակուլտետը՝ այսօրվա պատմության և հայ բանասիրության ֆակուլտետները, որոնց կոչումն է շարունակել այն ամենը, ինչը բարձր է ու վեհ, հայեցի կրթությամբ լուսավորել նոր սերնդին, նպաստել գիտության

զարգացմանն ու տարածմանը, սատար լինել հայ ոսկեդենիկ լեզվի, գրականության, պատմության ու մշակույթի առաջընթացին, որը նշանակում է սատար լինել մեր ազգային գաղափարադրույթներին, այլ խոսքով՝ շարունակել այն, ինչը սկսել ու մասամբ իրագործել են մեր մտքի մեծերը, մեր մտքի հանճարները, ասել է՝ լինել մեծ **համալսարան** մեր ժողովրդի համար: Եվ երբ մենք այսօր տոնում ենք մեր մայր բուհի ու նրա մայր ֆակուլտետների 95-ամյակը, այն ամենից առաջ որպես բոլոր համալսարանականների վաստակի գնահատում է հնչում, մանավանդ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի համար, որի աշխատանքի շնորհիվ է Երևանի պետական համալսարանը ինչպես տարածաշրջանի առաջատար, այնպես էլ նախկին ԽՍՀՄ-ի և ներկայիս ԱՊՀ-ի երկրների հարյուրավոր համալսարանների վարկանիշների գնահատումների արդյունքներով գրավում տասնմեկերորդ պատվավոր տեղը:

Տեղին է մտաբերել ֆակուլտետի 95-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում ասված խոսքը. «Յուրաքանչյուր ժողովրդի ազգային նկարագիրը պայմանավորված է նրա հոգևոր-մշակութային զարգացման աստիճանով»: Մեր ժողովրդի համար այդ զարգացման հենասյուններից մեկը եղել է Երևանի պետական համալսարանի առաջնեկ մայր ֆակուլտետը:

#### **Ариун Авакян – 95-летний путь первого факультета главного вуза**

Статья посвящена 95-летию историческому пути, пройденному первым факультетом Ереванского государственного университета – историко-языковедческим. Оцениваются и обосновываются усилия тех деятелей Первой Республики Армении, которые сделали все возможное для создания в молодой республике очага просвещения, первый факультет которого впоследствии прошел доблестный путь, воспитал целую плеяду арменистов, подготовил тысячи выпускников, специализировавшихся в области армянской филологии и истории. В статье акцентируется мысль о том, что создание историко-языковедческого факультета не было случайностью. Молодой республике нужны были деятели науки, культуры и просвещения, воспитанные на национальных ценностях, способные распространять идеи независимой государственности и содействовать образованию и прогрессу. За прошедшие 95 лет университет и его первый факультет интенсивно развивались. Были созданы десятки новых факультетов, отделений и кафедр.

#### **Artsrun Avagyan – The 95-Year Road of the Main Faculty of the Alma Mater**

The article is devoted to the 95-year road of the Historical-Linguistic Faculty – the first faculty of Yerevan State University. The efforts of those statesmen of the First Republic of Armenia who did their best to create an Alma Mater in the newly-established republic, the first faculty of which later passed a productive road, educated and formed a powerful army of Armenologists and historians, gave thousands of graduates to the Armenian thought and science are highly appreciated.

The idea that the establishment of the faculty had not been arbitrary, is emphasized in the article. The newly-established country needed teachers, intellectuals and scientists having national character, who would become the those spreading the ideological principles of Independent Armenia and independent statehood and would contribute to the development of enlightenment and progress. During the past 95 years the University and its first faculty have had great progress, created dozens of new faculties, chairs and departments, educational structures.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ**

*Բանալի բառեր – Պատմագրություն, պատմագիտական հայեցակարգ, քաղաքականացված պատմագրություն, մարք-լենինյան գաղափարախոսություն, Հայ հեղափոխական դաշնակցություն, պատմական ճշմարտություն, սփյուռքահայ պատմագրություն, խորհրդահայ գաղափարախոսություն*

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո նրա պատմության վերաբերյալ ստեղծվել է հսկայածավալ գրականություն: Չկա մեր պատմության այդ կարճ, բայց կարևորագույն ժամանակահատվածի որևէ դրվագ, որը պատմաբաններն անտեսած լինեն: Թերևս սա այն փուլն է, որին անդրադարձները բազում են, և որոնք կարծես սպառվելու միտում դեռևս չունեն: Այսօր դրանցից առավել կարևոր ենք համարում խորհրդային և հետխորհրդային տարիներին թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում Հայաստանի առաջին Հանրապետության պատմության կամ դրան առնչվող պատմագրության նվաճումների համակարգումն ու գնահատումը՝ հիմնականում ելնելով հետևյալ պատճառներից.

*Առաջին.* Հայաստանի առաջին Հանրապետության պատմությանը վերաբերող ժամանակահատվածը, չնայած կարճատևությանը, հագեցած է եղել ռազմաքաղաքական բուռն իրադարձություններով, որոնցից հայ քաղաքական ղեկավարների նախընտրած դիվանագիտական քայլերի սակավաբերությունը տարբեր քաղաքական ճամբարների, տվյալ պարագայում՝ դաշնակցականների և բոլշևիկների պատմագիտական մոտեցումներում հիմնականում պայմանավորվել են սխալները մեկը մյուսի վրա բարդելու դիրքորոշում որդեգրելով: Դա հանգեցրել է պատմական իրադարձությունների գնահատման միակողմանիության, որի արդյունքում ստեղծվել է քաղաքականացված պատմագրություն:

*Երկրորդ.* Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությանը ձեռնամուխ եղան շատերը: Խորհրդային գաղափարական կապանքներից ձերբազատված շատ հեղինակներ սկսեցին դարձյալ քաղաքական բնույթի աշխատություններ հրամցնել, որոնք, սակայն, նույնիսկ խորհրդային տարիներին լույս տեսած որոշ աշխատությունների համեմատությամբ երբեմն նույնիսկ շատ ավելի հեռու էին պատմական ճշմարտությունն անկողմնակալ դիրքերից մեկնաբանելուց: Դրանց հիմքում երբեմն խարսխված էին ծայրահեղ մոտեցումներ և ակադեմիական պատմագրությանն անհարիր գնահատակներ:

*Երրորդ.* Հայաստանի առաջին Հանրապետությունը մեր պատմության այն փոքրիկ, բայց դարերով սպասված պարզևն էր, որի կարճատև գոյության ընթացքում տեղի ունեցած պատմաքաղաքական, ռազմական և դիվանագիտական գործընթացների վերհանումը արդիական հնչեղություն ունի տարբեր առումներով: Նախ որքան էլ հայ քաղաքական շատ գործիչներ դրա արարումը և կայացումը ածանցյալ են համարել մեծ տերություններից, ի վերջո այն կայացել է՝ շատ ավելի սեփական ուժերին ապավինելու շնորհիվ, և երկրորդ՝ դիվանագիտական հաջողությունների հիմքում միշտ խարսխվել է հաղթական պատերազմը, որի կարևորությունը, ցավոք, անտեսվել է մասնավորապես 1920 թ., երբ մեր ժողովուրդն ահավոր պարտություններ կրեց: Այս ամենի գիտակցումն անհրաժեշտ է նաև ներկա ժամանակաշրջանի համար:

Հայաստանի առաջին Հանրապետության ձևավորմանը, զարգացմանը և անկմանը նվիրված կարևորագույն աշխատությունների համակարգված վերլուծությամբ ու գնահատմամբ հնարավոր կլինի զատորոշել քաղաքականացված և ապաքաղաքական պատմագրությունները, հստակ հայեցակարգեր մշակել նրա պատմության վերաբերյալ ստեղծված աշխատությունների քննական վերլուծության հիման վրա: Այդ պատմության գնահատման հայեցակարգային մոտեցումները հարկ է պայմանավորել ոչ թե առկա արդյունքներին արհեստականորեն հակադրվելու կամ ումանց հետ համաձայնվելու ճանապարհով, այլ փաստական նոր տվյալների օգտագործման կամ տարբեր հայեցակարգերի զարգացման տրամաբանության մեջ հակասական մոտեցումների բացահայտման միջոցով:

Մեր խորին համոզմամբ Հայաստանի առաջին Հանրապետության պատմագրության վերլուծությունն ու գնահատումն անհրաժեշտ է կատարել հետևյալ հայեցակարգային մոտեցումների հիման վրա:

*Առաջին. խորհրդահայ պատմագրությունն իր ամբողջության մեջ գնահատելի ներդրումներ ունի Հայաստանի առաջին Հանրապետության պատմության վերաբերյալ ընդունելի տեսակետներ մշակած լինելու տեսանկյունից:* Այդուհանդերձ, այս դիրքորոշումը չի կարող վերաբերել 1920-1930-ական թվականներին գրված ուսումնասիրություններին, երբ խորհրդահայ պատմագրությունը դեռևս ձևավորման փուլում էր: Դրանց հեղինակների հայեցակետը հետևյալն է. *քանի որ Դաշնակցությունը հակախորհրդային ճամբարում է, ուրեմն իմպերիալիզմի կցորդ է, և նրա ղեկավարությամբ կերտված Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարները թույլ են տվել միայն սխալներ, իրականացրել են հայության շահերին ոչ համահունչ և անարդյունավետ քաղաքականություն:* Այն է՝ Դաշնակցությանը և Հայաստանի Հանրապետությանը տրված գնահատականներն ուղիղ համեմատական էին: Հարկավ կարելի է դրանցում երբեմն գտնել նաև ընդունելի և տրամաբանական գնահատականներ, բայց այդ հեղինակների՝ Հայաստանի առաջին Հանրապետության գոյության նկատմամբ որդեգրած տեսական դրույթները ընդհանուր առմամբ մերժելի են: Մենք պատահաբար չենք օգ-

տագործում «ուսումնասիրություններ» բառը, որովհետև դրանց հեղինակներն ավելի շատ փորձել են կոմունիստական կուսակցության կամ մարքսլենինյան գաղափարախոսության դիրքերից բացահայտել Դաշնակցության էությունը, որը, ըստ նրանց, ինքնին համահունչ է Հայաստանի Հանրապետության էությունը: Նրանց թվում եղել են ոչ միայն պատմաբաններ, այլև կուսակցական ղեկավար գործիչներ կամ գաղափարախոսներ, որոնք հանդես են եկել 1920-1930-ական թվականներին, երբ, ինչպես նշեցինք, խորհրդահայ պատմագրությունը դեռևս կայացման փուլում էր<sup>1</sup>: Այդ աշխատությունները մեծմասամբ հիշեցնում են գաղափարական պայքար, քանի որ դրանց հեղինակները հիմնականում նպատակ են հետապնդել Դաշնակցություն կուսակցության գաղափարական՝ բուրժուական համարվող էության բացահայտումը: Նման գնահատականը միանգամայն բնորոշ էր նաև Հայաստանի Հանրապետությանը:

Բայց ահա արդեն 1950-1980-ական թվականներին նկատվում է պատմաբանների մի նոր սերունդ, որը մարքսլենինյան գաղափարախոսության քողի տակ ձգտում էր մոտենալ Դաշնակցության ճշմարիտ էության բացահայտմանը, իսկ դա իր հերթին նպաստում էր Հայաստանի Հանրապետության պատմության նորովի լուսաբանմանը: Իհարկե, մինչ այդ ևս պատմական ճշմարտության բացահայտման փորձեր կատարողներ եղել են, որոնցից հատկապես կցանկանայինք առանձնացնել Բ. Բորյանին<sup>2</sup>:

Այս ժամանակաշրջանում ևս պատմաբանների մի մասը այդուհանդերձ շարունակում էր Հայաստանի Հանրապետությանն առնչվող իրադարձությունները լուսաբանել հայեցակարգային նախկին դիրքերից, գրել գրքեր, որոնք որևէ նորույթ գրեթե չէին պարունակում նախորդ սերնդի ներկայա-

---

<sup>1</sup> Տե՛ս Դաշնակցություն կուսակցության դոկումենտներից, Առաջաբան, Երևան, 1922, **Մարտունի Ալ. (Մյասնիկյան Ալ.)**, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, **Հովհաննիսյան Սշ.**, Դեպքերը Բաքվում, **նույնի**, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», գիրք 2, Երևան, 1923, **նույնի**, Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924, **նույնի**, Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929, **նույնի**, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, **նույնի**, Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», գիրք 3, Երևան, 1923, **նույնի**, Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք 1, 1927, **նույնի**, Համազգային կրիզիսը, Երևան, 1926, **նույնի**, Դաշնակցական Հայաստանի գործերից, «Նորք», գիրք 5-6, Երևան, 1925, **Կարինյան Ա.**, Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1924, **նույնի**, Դաշնակցությունը փաստերի դեմ, Երևան, 1926, **նույնի**, Նացիոնալիզմի «նոր դիրքերը», Մոսկվա, 1929, **նույնի**, Դաշնակցությունը և իր «զինակիցները», Երևան, 1932, **Չուբարյան Գ.**, Դաշնակցության տաճկական օրինատացիան և «Հայրենիքի փրկության կոմիտեն», Երևան, 1929, **Աբով Գ.**, Դաշնակցությունը անցյալում և այժմ, Երևան, 1929 և 1930, **Խանոյան Ս.**, Դաշնակցության տրագիկոմեդիան, Երևան, 1930, **Չուբար Ե.**, Դաշնակցությունը երրորդ շրջանում, Երևան, 1930, **Պարսամյան Վ.**, Էջմիածինն ու դաշնակցությունը, Երևան, 1931, **Ներսիսյան Մ.**, «Դաշնակցական դրախտավայրը» կամ «սովի ու մահվան աշխարհը», Երևան, 1932 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս **Борьян Б. А.**, Армения, международная дипломатия и СССР, ч. 1-2, М., 1928-1929:

ցուցիչների առաջադրած գնահատականների համեմատությամբ<sup>1</sup>, թեպետ ոմանք, ինչպես նշեցինք, առանց շեղվելու կոնյուկտուրայի պահանջներից, հակված էին նոր գնահատականներ տալու հայոց նոր պատմության վերջին դրվագներին<sup>2</sup>:

Գրքերի սուկ վերնագրերից համոզվում ենք, որ գերակշռում էին հին հայեցակարգային մոտեցումների կողմնակիցները: Սա, իհարկե, չի նշանակում, թե նրանց աշխատություններում առհասարակ բացակայում են ընդունելի հայեցակարգերը, բայց ընդհանուր առմամբ դրանցում դժվար է որևէ դրական գնահատական գտնել Հայաստանի Հանրապետության ղեկավար կամ քաղաքական գործիչների մասին: Դրանց մանրամասնորեն անդրադառնալն այլ խնդիր է, որին ձեռնամուխ կլինենք առաջիկայում:

Ինչ վերաբերում է երկրորդ հոսանքի ներկայացուցիչներին, ապա հասկանալի է, որ նրանք ևս եթե նույնիսկ ցանկանային, չէին կարող անկողմնակալ քննադատի դեր ստանձնել Հայաստանի առաջին Հանրապետության համար բախտորոշ նշանակություն ունեցած այնպիսի իրադարձությունների նկատմամբ, ինչպիսիք են՝ 1920 թ. հայ-թուրքական պատերազմը, բոլշևիկյան-քեմալական դաշինքը, 1918 թ. Բաքվի իրադարձությունները և այլն:

---

<sup>1</sup> Տե՛ս **Վարդանյան Հ.**, «Դաշնակցություն» պարտիան որպես օտարերկրյա իմպերիալիզմի և ռուսական ռեակցիոն ուժերի գործակալ (1918-1920), Երևան, 1955, **նույնի՝** Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից, 1903-1920 թթ., Երևան, 1962, **Բաղայան Խ.**, Դաշնակների կոնտրոնոլյուցիոն գործունեության մի քանի փաստերի մասին (1918-1920 թթ.), Երևան, 1955, **Գալստյան Գ.**, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961, **Ղարիբջանյան Բ.**, Խորհրդային իշխանության համար մղված պայքարում (1917-1920), Երևան, 1966, **Ղարիբջանյան Գ.**, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը (1917-1924 թթ.), Երևան, 1975, **Վարսապետյան Հ.**, Լենինը և Հայաստանը, գիրք 1-2, Երևան, 1986-1988, **Աղայան Մ.**, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, **Մնացականյան Ա. Ն.**, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, Երևան, 1961, **Агаян Ц. П.**, Развал буржуазно-националистической диктатуры дашнаков и победа советской власти в Армении в 1920 году, История СССР, 1960, N 6, **նույնի՝** Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу советской власти, Ереван, 1962, **նույնի՝** Победа советской власти и возрождение армянского народа, М., 1981, **Эльчибекия А. М.**, Установление советской власти в Армении, Ереван, 1954, **նույնի՝** Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, Ереван, 1957, **Մելքոնյան Ա.**, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Երևան, 1965, **Տոնոյան Հ.**, Փառապանծ էջ Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունից: Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1955 և այլն:

<sup>2</sup> Տես **Թուրքյան Հ.**, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965, **Հարությունյան Ա.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, **Խուրշուդյան Լ.**, Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977, **Չոհրաբյան Է.**, Խորհրդային Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 1979, **Հարությունյան Ա.**, (Հարենց), Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Երևան, 1960, **Хуршудян Л. А.**, К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн, ЛՀԳ, 1988, թիվ 7, **Միմոնյան Հր.**, Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարախոսությունը և զաղափարաբանությունը, Երևան, 1986 և այլն:

Բայց այստեղ կարևորն այն է, որ նրանք հնարավորության սահմաններում մոտեցել են պատմական ճշմարտության բացահայտմանը՝ անշուշտ չհակադրվելով այն հայեցակետին, ըստ որի՝ հայ ժողովրդի փրկությունը պայմանավորված է եղել խորհրդային իշխանության հաստատմամբ: Այնուամենայնիվ, նրանք կարողացել են ապացուցել, որ սխալ է, օրինակ, Դաշնակցություն կուսակցությանն իբրև բուրժուական գնահատելը, տեսակետները հիմնավորելով Լենինից և այլ կուսակցական գործիչներից բերված քաղվածքներով՝ փաստել են Բաքվում բոլշևիկների և դաշնակցականների համատեղ ճակատի գոյությունը թուրքերի դեմ, որը գործել է մինչ անգլիացիներին հրավիրելու որոշում կայացնելը, Հայաստանի Հանրապետության անկումը բոլշևիկյան-քեմալական համագործակցության հետևանքով և այլն:

*Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության պատմագրության գնահատման հիմքում պետք է խարսխվի այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի՝ խորհրդահայ ժամանակահատվածում ստեղծված աշխատությունները միանշանակորեն չեն կարող մերժելի համարվել պատմական ճշմարտությունների բացահայտման և բազում հայեցակարգերի՝ իրենց արդիականությունը պահպանած լինելու առումներով:*

Այս հայեցակետը մենք համարում ենք կարևոր Հայաստանի Հանրապետության պատմության ամբողջ պատմագրությունը անաչառ գնահատելու համար:

*Երկրորդ. Հայաստանի առաջին Հանրապետության պատմության Մփյուռքում ստեղծված կուսակցական և մասնավորապես դաշնակցական պատմագրության մշակած դրույթները չի կարելի իրենց ամբողջության մեջ անվերապահորեն ընդունելի համարել, քանզի այն ևս զերծ չէ միակողմանիությունից: Մփյուռքահայ պատմագրության գնահատման հարցում անհրաժեշտ է չանտեսել կարևորագույն մի հանգամանք. այն, ըստ էության, զերծ է քննական-վերլուծական բնույթից, որը հատուկ է խորհրդահայ կամ առհասարակ խորհրդային պատմագրությանը: Այս իրողությունը շեշտում ենք՝ անկախ պատմագիտական հայեցակարգերից կամ այս կամ այն չափով դրանց ընդունելի կամ անընդունելի լինելու հանգամանքից: Մփյուռքահայ պատմագրությունը գլխավորապես նկարագրողական բնույթի է: Հաճախ նաև այդ աշխատությունները կրում են կիսահուշագրական-կիսապատմագիտական բնույթ, ուստի և գուտ պատմագիտական որակվել չեն կարող<sup>1</sup>: Ըստ այդմ, հարկ է դրանց մեծ մասը վերլուծել ոչ թե պատմագիտության զարգացմանը նպաստելու, այլ պատմագիտական հայեցակարգեր մատուցելու տեսանկյունից:*

---

<sup>1</sup> Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուօ, 1968, **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, Ե. հատոր, Պէյրուօ, 1966, **Տերտեբեան Հ.**, Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, «Հայրենիք», Պոստոն, 1954, թիվ 1-2, 5, **Սասունի Կ.**, Մայիսեան խռովութիւնները և թաթարական ապստամբ շրջանները, Պէյրուօ, 1968 և այլն:

Այս անջրպետի փաստումը կարևոր ենք համարում, քանի որ հաճախ առկա է դրանք որպես պատմագիտական աշխատություններ ներկայացնելու միտումը: Այսպես, Ալ. Խատիայանի աշխատությունը, որն աչքի է ընկնում պատմագիտական շատ հայեցակարգերի հիմնավորված մատուցմամբ, իր ամբողջության մեջ չի կարելի համարել պատմագիտական, թեև այն նաև գուտ հուշագրություն չէ, քանի որ նրա հուշերը վերաբերում են միայն առանձին ժամանակահատվածների: Նույնը կարելի է հավաստել Ս. Վրացյանի և Կ. Սատուևու նշված և այլ աշխատությունների մասին: *Ուստի ճիշտ ենք համարում Հայաստանի առաջին Հանրապետության պատմագրությունը համակողմանի ներկայացնելու դեպքում չորջանցել այս և նմանաբնույթ գործերը ու ըստ արժանվույն գնահատել դրանց մատուցած պատմագիտական հայեցակետերը:*

Ինչպես արդեն շեշտեցինք, Հայաստանի առաջին Հանրապետության վերաբերյալ սփյուռքահայ կուսակցական պատմագրության դրույթները չի կարելի անվերապահորեն ընդունելի համարել, որի կողմնակալ միտվածությունն իրեն զգալ տվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ արդեն շատերին մատչելի դարձան մասնավորապես դաշնակցական գործիչների աշխատությունները՝ վերահրատարակված նաև Հայաստանում: Անտեսվեց և այժմ ևս ոմանց կողմից շարունակվում է անտեսվել մի կարևոր հանգամանք. այն է՝ *դաշնակցական պատմագրությունը, գտնվելով խորհրդահայ պատմագրության հակադիր բևեռում, չէր կարող ամբողջությամբ ապաքաղաքականացված լինել, մանավանդ որ առձակատման մեջ էր կոմունիստական գաղափարախոսության հետ:* Ուստի անժխտելի է, որ այդ պատմագրությունը երբեմն ծայրահեղ թշնամական դիրքերից է ներկայացնում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանի առաջին Հանրապետության նկատմամբ: Թեպետ ոչ մեկը չի կարող ժխտել բոլշևիկյան-քեմալական համագործակցության դերը Հայաստանի անկախ հանրապետության տապալման գործում, այդուհանդերձ իրավասու չենք անտեսելու, որ նրա ղեկավարների թույլ տված քաղաքական սխալները նույնպես նպաստել են դրան, որոնք, ցավոք, նրանց սատարող հեղինակները երբևէ չեն խոստովանել և առ այսօր չեն ընդունում: Դրանց վելուծությունն ու ապացուցումը թողնելով ապագային՝ պարզապես կցանկանայինք շեշտել մի քանի հանգամանք: Ա) արդյո՞ք հնարավոր չէր խուսափել հայ-թուրքական վերջին պատերազմից, եթե 1920 թ. օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնագրի նախագծից առաջ հայ քաղաքական ղեկավարները փորձեին հայտարարի գալ բոլշևիկների հետ՝ հրաժարվելով Դաշնակիցներից: Չէ՞ որ արդեն միանգամայն պարզ էր, որ Մերի պայմանագիրը չէր իրականացվելու: Նույն օրը կնքվել էր Թիֆլիսի համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև, որը կասկածելի էր դարձնում Մերի պայմանագիրը կյանքի կոչելու հնարավորությունը: Բ) Եթե ռուս-թուրքական համաձայնագրից առաջ հայ պատվիրակները համաձայնության գային քեմալականների հետ, ապա արդյո՞ք դա չէր կանխի պատերազմը: Ոչ ոք չի կարող այս հարցին վերջնական ժխտական պա-



տասխան տալ: Գ) Եթե Հայաստանի Հանրապետությունը խորհրդային հռչակվեր 1920 թ. օգոստոսի սկզբին, արդյո՞ք Ռուսաստանը թույլ կտար թուրքերի հարձակումը նրա վրա: Կարծում ենք, որ դա տեղի չէր ունենա:

Դարձյալ կարելի է հարցադրումներ կատարել, որոնք հիմնականում բացակայում են դաշնակցական պատմաբանների աշխատություններում, քանի որ նրանց հայեցակարգերի հիմքում հաճախ խարսխված չէ սեփական գործողությունների արդյունավետության չափի ճշգրտումը հայ ժողովրդի համար: Իսկ դրանք բխում են հիմնականում Ս. Վրացյանի աշխատությունից, որը կարելի է թերևս այս կուսակցության պատմագրության գլուխգործոցը համարել<sup>1</sup>:

Մենք կարծում ենք, որ կարելի է արժեքավոր համարել Ռուբեն Տեր Մինասյանի աշխատությունը<sup>2</sup>, որը թեպետ գետեղված է նրա հուշերի վերջին հատորում, բայց, այդուհանդերձ, ունի ոչ թե հուշագրական, այլ քննական-վերլուծական բնույթ, ինչն առհասարակ բնորոշ չէ դաշնակցական պատմագրությանը: Սակայն դաշնակցական պատմաբանների՝ Հայաստանի Հանրապետությանն առնչվող հետագա աշխատությունները ևս, ինչպես նշեցինք, մեծ մասամբ կրկնում են Ս. Վրացյանի հայեցակարգերը<sup>3</sup>:

Իհարկե Հայաստանի առաջին Հանրապետության պատմությանն անդրադարձել են նաև սփյուռքահայ քաղաքական այլ կուսակցությունների ներկայացուցիչ պատմաբաններ, բայց վեստին հպանցիկ և հիմնականում ոչ անաչառ: Նրանց գնահատականների հիմքում ընկած է Դաշնակցության նկատմամբ ժխտողական վերաբերմունքը<sup>4</sup>:

Սույն հոդվածի նպատակը ՀՀ պատմության պատմագրության վերլուծությունը չէ, ուստի բավարարվում ենք մատուցման հայեցակարգային հիմքերի ճշգրտմամբ, որոնց *իմաստը հանգում է սփյուռքահայ և խորհրդահայ կուսակցականացված պատմագրությունների կողմից Հայաստանի առաջին Հանրապետությանը տրված գնահատականների բացահայտ միակողմանիությանը, թեև թե՛ մեկը և թե՛ մյուսն առհասարակ զերծ չեն պատմական ճշմարտությունը վեր հանելու գնահատելի ջանքերից:*

*Երրորդ.* Խորհրդային Միության գոյության շրջանում Սփյուռքում լույս են տեսել Հայաստանի Հանրապետության պատմությանն առնչվող պատմագիտական աշխատություններ, որոնց հեղինակները փորձել են կառավարության գործունեությանը կամ դրա առանձին դրվագներին գնահատականներ

<sup>1</sup> Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Պէրյութ, 1958:

<sup>2</sup> **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7/է/, Lou Անձելլա, 1952, տե՛ս մասն երրորդ, Հայաստանի Հանրապետությունը:

<sup>3</sup> Տե՛ս **Տասնապետեան Հր.**, Ն. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդի. ժողով (1890- 1924), Աթէնք, 1988, **Քիրքճեան Հ.**, Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան 1914-1924 հնգամեակի, Աթէնք, 1988 և այլն:

<sup>4</sup> Տե՛ս **Ղազարեան Վ.**, Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէրյութ, 1978, **Եսփունճեան Ա.**, Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմաւորման, Գահիրէ, 1977, **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցութիւնը, Պէրյութ, 1981 և այլն:

տալ անաչառ, ապաքաղաքականացված դիրքերից՝ հետապնդելով հայ ժողովրդի համար դրանց ունեցած արդյունավետությունը բացահայտելու նպատակ: Կարծում ենք, որ այդ աշխատությունները գերադասելի է արժևորել հայեցակարգային հետևյալ մոտեցմամբ. դրանք ստեղծվել են խորհրդային և սփյուռքահայ կուսակցական պատմագրությունների դրվատելի կողմերի և արտահայտված հայեցակետերի ճշմարտությունն ապացուցող նոր փաստերի համադրմամբ:

Առհասարակ չպետք է անտեսել մի կարևորագույն հանգամանք ևս. այն է՝ պատմագիտական բնույթի աշխատությունների հիմնական նպատակը պետք է լինի պատմագիտական հայեցակարգերի վերհանումն ըստ փաստերի համակողմանի վերլուծության կամ, ինչպես ընդունված է Արևմուտքում, փաստերի և այլ հեղինակների եզրակացությունների համադրմամբ՝ դեպքերի՝ առանց սեփական ընդհանրացումների կամ եզրակացությունների շարադրումը: Ուրեմն, այդ աշխատությունները պետք է գնահատել վերլուծության շնորհիվ պատմագիտական նոր հայեցակարգեր կայացնելու և պատմական իրադարձություններն առանց սեփական ընդհանրացումների հանգամանորեն շարադրելու առումներով:

Ոչ քաղաքականացված, անաչառ լինելու ձգտումներով ակադեմիական պատմագրություն ստեղծելուն միտված այս ուղին ինքնադրսևորվեց Մփյուռքում խորհրդային<sup>1</sup> և հետխորհրդային ժամանակաշրջաններում, երբ վերացան կոմունիստական գաղափարական կապանքները:

Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի առաջին Հանրապետության պատմագրությունը անհրաժեշտ է մատուցել համակարգված՝ ելնելով պատմագիտական մտքի զարգացման առանձնահատկություններից: Նախ և առաջ հարկ է առանձնացնել խորհրդային պատմագրության այն սերնդի ներկայացուցիչների աշխատությունները, որոնք բախտ ունեցան ստեղծագործելու նաև հետխորհրդային շրջանում՝ ստեղծելով պատմագիտական մնայուն արժեք ունեցող գործեր, վերանայելով իրենց պատմագիտական տարբեր հայեցակարգերը և մշակելով նորերը: Դրանք գնահատելի են նրանով, որ կրում են խորհրդային դպրոցի քննական-վերլուծական պատմագրության լավագույն ավանդույթները, գերծ են ծայրահեղ գնահատականներից և խորհրդային գաղափարախոսության պարտադրանքներից<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Մարդեան Ջ.**, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի և Կարսի դաշնագիրերը, 1920-1921 թթ.), Պէրոյթ, 1979, **Մխիթարեան Ս.**, Հայկական Հարցը, Փարիզ, 1968, **Չորմիսեան Լ.**, Կուսակցությունները, Պէրոյթ, 1965, **Hovannisian R.G.**, The Republic Armenia, vol. 2, 1919-1920, Berkeley-Los Angeles-London, 1982, **նույնի՝** The Republic Armenia, vol. 3, From London to Sevres, February August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, **նույնի՝** The Republic Armenia, vol. 4, Between and Sickle: Partition and Sovietization, Berkeley-Los Angeles-London, 1996, **Ter Minassian A.**, La Question arménienne, Paris, 1983, **նույնի՝** 1918-1920, La République d'Arménie, Bruxelles, 2006 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս **Գալոյան Գ.** Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, **Ավետիսյան Հ.**, Հայոց ազգային միասնության հաղթանակը, Երևան, 1998, **նույնի՝** Հայկական հար-

Այս աշխատությունները, ինչպես ցանկացած պատմագիտական ուսումնասիրություն, հարկավ չէին կարող առհասարակ գերծ լինել թերություններից: Մակայն դրանց կարևորագույն արժեքն այն է, որ դրանց հեղինակները փորձել են ի հայտ բերել մեր հաղթանակների և ապա կրած դառը պարտությունների իրական պատճառները և հասնել հայ ժողովրդի պատմության փոթորկալից և խռովահույզ մի ժամանակահատվածի պատմական ճշմարտության բացահայտմանը: Այս աշխատությունները պետք է ըստ արժանվույն գնահատվեն ու մատուցվեն հայ ընթերցողին:

Նախորդ սերնդի ներկայացուցիչների հետ մեկտեղ՝ նոր աշխատություններով հանդես եկան նաև երիտասարդ պատմաբանները, որոնք հետխորհրդային շրջանում փորձեցին նորովի գնահատել և վերլուծել Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը կամ դրան առնչվող որոշ հիմնախնդիրներ: Արդեն շուրջ քառորդ դար չի մարում հետաքրքրությունը մեր ժողովրդի պատմության այս կարճատև, բայց իրադարձություններով հարուստ հատվածի նկատմամբ: Բայց չի կարելի պնդել, որ նրանց գործերն ամբողջությամբ ապաքաղաքականացված են և անաչառ: Ուստի դրանք նույնպես պետք է հաշվեկշռի ենթարկել խիստ նրբանկատորեն՝ գնահատման հիմքում դնելով հեղինակների անաչառությունն ու անկողմնակալությունը, քանզի նրանցից շատերի վրա մեծ է դաշնակցական պատմաբանների կամ հուշագիրների, իսկ ոմանց վրա՝ խորհրդային գաղափարախոսության ազդեցությունը<sup>1</sup>: Կարծում ենք, որ Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրությունը լիարժեքորեն կարելի է գնահատել միայն ու միայն նշված հայեցակարգերով առաջնորդվելու պայմաններում:

---

ցը 1918 թվականին, Երևան, 1997, **Ջոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, **Նույնի՝** Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», Երևան, 2002, **Նույնի՝** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, **Միմոնյան Հր.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, **Սարգսյան Ե.**, Դավադիր գործարք: Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994, **Ղազարյան Հ.**, Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու դրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, **Նույնի՝** Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք առաջին-երկրորդ, Երևան, 2012, **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006 և այլն:

<sup>1</sup> Տե՛ս **Հարությունյան Հ.**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում, Երևան, 2003, **Միմոնյան Ա.**, Ջանգեզուրի գոյամարտը (1920-1921), Երևան, 2000, **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, 1918-1920, Երևան, 2005, **Նույնի՝** Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, **Ներսիսյան Ա.**, Կարո Սասունի, Երևան, 2004, **Նույնի՝** Ջորավար Մեպուհ, Երևան, 2005, **Նույնի՝** Ռուբէն, Երևան, 2007, **Սարգսյան Վ.**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, **Վևորգյան Հ.**, Դրո, Երևան, 1999, **Махмурия Г.**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., Ереван, 2002 և այլն:

**Арам Симонян, Ашот Нерсисян – *Концептуальные основы оценки историографии Первой армянской республики***

В статье представлены концептуальные основы, позволяющие с политически неангажированных и сугубо академических позиций оценить историографию Первой Республики Армении. Эта историография в целом имела односторонний характер, поскольку создавалась в антагонистичных друг другу идейно-политических лагерях. Одной из концептуальных основ оценки этой историографии мы полагаем тот факт, что при всем неблагоприятном отношении к Первой Республике, которое проявляла к ней армянская советская историография, многие ее положения не утратили своей актуальности. Многие историки, несмотря на идеологические запреты, стремились выявить историческую правду. Следующая касается зарубежной армянской, в частности, дашнакской историографии, которая зачастую также страдает односторонностью, поэтому не все ее оценки приемлемы. Кроме того, утверждается, что как в советский период, так и после того за рубежом делались попытки создать деполитизированную историографию, а на родине аналогичный подход стал осуществляться лишь в постсоветское время. Историографию истории Первой Республики Армении можно полноценно оценить только при том условии, если будут приняты во внимание эти концепции.

**Aram Simonyan, Ashot Nersisyan – *The Conceptual Bases of Evaluation of the Historiography of the First Republic of Armenia***

The article presents the conceptual foundations by means of which it becomes possible to evaluate the historiography of the history of the first Republic of Armenia from apolitical and academic positions, which was one-sided as it was created on different and opposing ideological fronts.

One of the conceptual bases of this assessment is considered the history that the Soviet historiography had a hostile attitude towards the Republic of Armenia, but most of these historical arguments have not lost their relevance. Many historians, in spite of ideological objections, wanted to get closer to the historical truth.

The next part deals with the Diaspora Armenian and particularly Dashnak historiography, which is often marked by narrowness, therefore, proposed all ratings are not acceptable.

In addition, it is stated that both in the Soviet era and after it an attempt was made to create a non-political historiography in the Diaspora, the same approach was applied in the post-Soviet period in Armenian homeland. The historiography of the history of the First Armenian Republic can fully be appreciated only by considering these conceptions.

**ԹՈՒՐԲԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ 1991-1994 ԹԹ.**

*Բանալի բառեր – Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Ադրբեջան, ԼՂ հակամարտություն, Հայոց ցեղասպանություն, Այաթոնի ծրագիր, քաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցություն*

*Ա. Հայ-թուրքական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզման  
ժամանակաշրջանում*

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո հայ-թուրքական հարաբերությունները եղել են թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային հիմնախնդիրների կարևորագույն բաղկացուցիչ: Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը անմիջապես առնչվեց մի շարք բարդ խնդիրների հետ, որոնց լուծումը կարևոր նշանակություն ուներ նորանկախ պետության համար: Դրանցից մեկը տարածաշրջանի ամենաազդեցիկ երկրներից Թուրքիայի հետ բնականոն հարաբերությունների հաստատումն էր:

ԽՍՀՄ փլուզման շեմին Թուրքիան լուրջ մտավախություն ուներ՝ կապված Հայաստանի անկախության ձեռքբերման հնարավոր հետևանքների հետ: Ուստի պատահական չէ, որ դեռևս 1990 թ. սկզբներին թուրք հայտնի հրապարակախոս Իլհան Սելչուքը գրում էր, որ եղբայրական Ադրբեջանի անկախացումը ինքնին ենթադրում էր անկախության ճանապարհին քաջալերում նաև Հայաստանին: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվելու էր Հունաստան-Հայաստան «աքցանի» մեջ, քանի որ այդ պետությունները պահանջատիրական հավակնություններ ունեին Թուրքիայի նկատմամբ<sup>1</sup>: Սակայն ՀՀ Գերագույն խորհրդի նորընտիր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ մի հայտարարությամբ, որը փարատեց Թուրքիայի մտավախությունը: Նա մասնավորապես նշեց, որ Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատի անխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի

<sup>1</sup> Տե՛ս **Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 11:

հետ<sup>1</sup>: Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը դրական գնահատեց Լ. Տեր-Պետրոսյանի հայտարարությունը: 1991 թ. հունվարի 7-ին նա, թուրքական հեռուստատեսությամբ պատասխանելով «32-րդ օր» հաղորդաշարի հեղինակ, հայտնի թուրք հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի հարցերին, ընդգծեց, որ Թուրքիան ծրագրում է տնտեսական հարաբերություններ հաստատել ՀՀ հետ<sup>2</sup>: Այս հայտարարությունը անշուշտ կարող էր դրականորեն ազդել հայ-թուրքական հարաբերությունների վրա, սակայն Թուրքիան դեռևս հստակ դիրքորոշում չունեի ՀՀ նկատմամբ և, բացի դրանից, ձգտում էր հասնել այն բանին, որ պաշտոնական Երևանը Հայոց ցեղասպանության խնդիրը չներառեր իր արտաքին քաղաքական օրակարգում:

Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը մասամբ հստակեցնելու նպատակով 1991 թ. ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը եռօրյա պաշտոնական այցով ժամանեց Հայաստան. սպասվում էր, որ այն հայ-թուրքական հարաբերությունները կբարձրացնի նոր մակարդակի: Լ. Տեր-Պետրոսյանը Վ. Վուրալի հետ հանդիպման ժամանակ նշեց. «Հայաստանը փոխվում է, և այս նոր աշխարհում պետք է նոր մտածողությամբ հարևան երկրներ լինենք: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության: Հայաստանը որևէ տարածքային պահանջներ չունի Թուրքիայից»<sup>3</sup>: Այդ հանդիպման ժամանակ նախորոշվեցին երկու պետությունների կողմից հարաբերություններ զարգացնելու գերակայությունները: Եթե Հայաստանի համար երկկողմ հարաբերությունների օրակարգում առաջնային էին տնտեսական համագործակցության զարգացմանն առնչվող խնդիրները, ապա թուրքական կողմի համար առանձնակի կարևորություն ունեին արցախյան հիմնահարցի կարգավորումն ու հայ-թուրքական սահմանի ճանաչման հարցերը<sup>4</sup>:

Հայաստանի ղեկավարների հետ հանդիպումից հետո թուրք դիվանագետը, պատասխանելով թուրքական «Հյուրիյեթ» թերթի թղթակցի հարցերին, ընդգծել էր, որ ՀՀ ղեկավար մարմինների կողմից Թուրքիայի նկատմամբ որդեգրած նոր քաղաքականությունն արդիական էր և համապատասխանում էր երկու ժողովուրդների շահերին<sup>5</sup>: Այսպիսով, թուրք դիվանագետի այցը Հայաստան դիտվում էր լավ նախադրյալ երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համատեքստում:

Սակայն շուտով հայ-թուրքական հարաբերություններում լուրջ տարածայնություններ ի հայտ եկան: Բանն այն է, որ 1991 թ. մայիսի 11-ին «Արգու-

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> «Ազգ», 27.04.1991:

<sup>3</sup> “Независимая газета”, 14.05.1991.

<sup>4</sup> Տե՛ս **Մաֆրաստյան Ռ.**, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003, էջ 39:

<sup>5</sup> “Hürriyet”, 02.05.1991.

մենտի ի ֆակտի» օրաթերթում հրատարակվեց Լ. Տեր-Պետրոսյանի հարցազրույցը, որտեղ նա, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, նշեց, որ Եվրոպայում 1920-1921 թթ. հարատև հեղափոխության գաղափարի ձախողումից հետո Խորհրդային Ռուսաստանն իր հայացքն ուղղեց Արևելք՝ ձգտելով ստանալ Թուրքիայի և մուսուլման ժողովուրդների համակրանքը: Այդ նպատակին հասնելու համար Հայաստանն անդամահատվեց: Ռուսաստանը Կարսի մարզը զիջեց Թուրքիային, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին<sup>1</sup>: Այս մեկնաբանությունները լուրջ դժգոհություն առաջացրին թուրքական շրջանակներում, ուստի պատասխանն իրեն երկար սպասեցնել չտվեց:

Մոսկվայում Թուրքիայի դեսպանությունը՝ հանձին դեսպան Վ. Վուրալի, բողոքի նոտա հղեց, որտեղ մասնավորապես նշվում էր. «Հայաստանի հարևանությամբ գտնվող ոչ մի պետական միավոր չի կարող և չպետք է մի կտոր հող տա Հայաստանի Հանրապետությանը..., պատմական փաստերի բողոքարկումը և առավել ևս դրանց խեղաթյուրումը անթույլատրելի են»<sup>2</sup>:

Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին 1991 թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: Դեկտեմբերի 16-ին Թուրքիայի կառավարությունը, ի թիվս նախկին ԽՍՀՄ հանրապետությունների, ճանաչեց ՀՀ անկախությունը: Այդ կապակցությամբ 1991 թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայի վարչապետ Մուլեյման Դեմիրելն ուղերձով դիմեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, որով ՀՀ-ին կոչ էր անում Թուրքիայի և մյուս հարևանների հետ իր հարաբերություններում հավատարիմ մնալ միջազգային իրավունքի հիմնական և հատկապես տարածքային ամբողջականության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին, ղեկավարվել բարիդրացիության սկզբունքներով և իր քաղաքականությունը կառուցել դրանց հիման վրա<sup>3</sup>: Թեև Թուրքիան ճանաչեց ՀՀ անկախությունը, այնուամենայնիվ չշտապեց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Նա, վկայակոչելով ՀՀ Անկախության հռչակագիրը, իր քայլը պատճառաբանեց Հայաստանի տարածքային պահանջներով<sup>4</sup>: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում թուրքական կողմն անհրաժեշտ նախապայման էր համարում ՀՀ պաշտոնապես հրաժարումը Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից, թեև Լ. Տեր-Պետրոսյանը փաստացի հրաժարվել էր:

<sup>1</sup> Տե՛ս **Киреев И.**, Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века, М., 2001, с. 366.

<sup>2</sup> «Независимая газета», 14.05.1991.

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀԱ), ֆ. 326, ց. 9, գ. 192, թ. 1-2:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2004, էջ 6:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար հետազայում Թուրքիան Հայաստանին ներկայացրեց մի քանի այլ նախապայմաններ՝ չհիշատակել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը<sup>1</sup>: Հայաստանի ղեկավարությունը անշուշտ մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմանները<sup>2</sup>: Փաստորեն մինչև 2009 թ. հոկտեմբերի 10-ը Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունները հիմնվում էին ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի իրավապայմանագրային համակարգի, Եվրախորհրդի կառույցների, Սևծովյան տնտեսական համագործակցության հռչակագրի, Եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատման պայմանագրի և Վիեննայի համաձայնագրի շրջանակներում ստանձնած ընդհանուր պարտավորությունների վրա:

*Բ. Միջինասիական էներգակիրների՝ ՀՀ տարածքով  
տեղափոխման ծրագիրը*

Թեև Թուրքիան ցուցադրաբար հրաժարվեց ՀՀ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, այդուհանդերձ պաշտոնական Անկարան ձգտում էր որոշակի հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ մասնավորապես տնտեսական ոլորտում: Ահա այս համատեքստում հատկանշական էր պաշտոնական Անկարայի դիրքորոշումը, որը հավանություն տվեց «Ալարկո Հոլդինգ» բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահ Իցհակ Ալաթոնի ծրագրին և պատրաստակամություն հայտնեց ՀՀ օգտագործման տրամադրել Տրապիզոնի նավահանգիստը<sup>3</sup>:

Ըստ Ալաթոնի ծրագրի՝ միջինասիական հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի հուճքը, այդ թվում՝ բնական գազն ու նավթը Հայաստանի վրայով պետք է փոխադրվեր Տրապիզոն, իսկ այդտեղից՝ արևմտյան շուկաներ<sup>4</sup>: Նախատեսվում էր Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի համար դարձնել ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ նա ոչ միայն ճեղքում էր շրջափակումը, այլև վերածվում միջազգային տարանցիկ կետի Միջին Ասիա-Արևմուտք

---

<sup>1</sup> **Migdalovitz C.**, Armenia-Azerbaijan Conflict, CRS Issue Brief, Congressional Research Service, The Library of Congress, updated August 17, 1995. p. 11; **Görgülü A.**, Turkey-Armenia Relations: A Vicious Circle,- TESEV Publications, Foreign Policy Analysis Series, № 8, p. 8.

<sup>2</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», թիվ 16, Երևան, 1996, էջ 15:

<sup>3</sup> Տե՛ս **Չաքրյան Հ.**, նշվ. աշխ., էջ 15:

<sup>4</sup> «Ազգ», 23.11.1991:



առևտրատնտեսական կապերում: Ծրագրով նախատեսվում էր նաև բացել Մարգարա-Ալիջան սահմանային կետը և ձեռնամուխ լինել Էրզրում-Տրապիզոն երկաթգծի կառուցմանը, որպեսզի հնարավոր լիներ ապահովել Գյումրիի երկաթուղային հաղորդակցությունը Տրապիզոնի նավահանգստի հետ<sup>1</sup>:

Նախագծի ֆինանսավորումն ու իրականացումն Ալաթոնի ընկերության հետ ստանձնում էր ԱՄՆ-ում Հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյանի «Հովտնս քամփրնի» ընկերությունը: Այս նախագիծը իրականացնելու նպատակով Ի. Ալաթոնը և Հ. Հովնանյանը Մոսկվայում ստորագրեցին «Հովտն-Ալարկո» համատեղ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին համաձայնագիրը<sup>2</sup>: Ինչ խոսք, Ալաթոնյան ծրագիրը բավականին շահավետ էր Հայաստանի համար և լայն հեռանկարներ էր բացում: Ուստի պատահական չէ, որ Հայաստանը մեծ կարևորություն էր տալիս դրան: Հատկանշական է, որ ամերիկյան «Հովտնս» ընկերությունը թուրքական «Ալարկո» ընկերության հետ թուրք-ամերիկյան բաժնետիրական ընկերություն ստեղծելիս ելակետ էր ընդունում Հայաստանի կառավարության հանձնարարությունը: Ծրագրի շուրջ թուրքական իշխանությունների հետ հայկական կողմից բանակցում էր «Մոսինտերստրոյի» ընկերության տնօրեն Վարդգես Արծրունին, որին նոյեմբերի 11-ին Ս. Դեմիրելիին հղած նամակում ՀՀ վարչապետի պաշտոնակատար Հրանտ Բազրատյանն անվանում է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ<sup>3</sup>:

Հատկանշական է, որ Թուրքիայի իշխանությունները նույնպես շահագրգռվածություն ցուցաբերեցին այդ նախագծի նկատմամբ և մեծ գոհունակությամբ էին վերաբերվում հատկապես Հայաստանի առաջարկություններին: Այդ կապակցությամբ պաշտոնական Անկարան, ի դեմս արտաքին գործերի նախարար Սաֆա Գիրայի, իր գոհունակությունը հայտնեց հայկական կողմի առաջարկությունների կապակցությամբ. «Թուրքիան բարյացակամորեն է տրամադրված իր բոլոր հարևանների նկատմամբ, որոնք հրաժարվում են ցանկացած թշնամանքից և ձգտում բարեկամական հարաբերություններ ունենալ իր հետ: Այս առումով մենք դրական ենք գնահատում հայկական կողմի ձեռնարկած քայլերը: Սա դրական ազդեցություն կունենա նաև մեր գործարարների համար, որոնք ձգտում են ընդլայնել իրենց առևտրական գործունեությունն ու ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը»<sup>4</sup>: Պատրաստակամություն հայտնելով ընդլայնել առևտրատնտեսական կապերը Հայաստանի հետ և համաձայնվելով տրամադրել Տրապիզոնի նավա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Mustafa Aydın**, *Non-traditional Security Threats and Regional Cooperation in the Southern Caucasus*, Amsterdam, 2011, p. 155.

<sup>2</sup> «Ազգ», 07.12.1991:

<sup>3</sup> Տե՛ս **Չաքոյան Հ.**, նշվ. աշխ., էջ 16-17:

<sup>4</sup> «Milliyet», 10.10.1991.

հանգիստը՝ Թուրքիան միաժամանակ փորձեց հայ-թուրքական հարաբերությունները տնտեսականից տեղափոխել քաղաքական հարթություն:

Թուրքիայի ղեկավար շրջանակները սկսեցին հանդես գալ մասնավորապես դարաբաղյան հիմնահարցում միջնորդի դեր ստանձնելու պատրաստակամության մասին հայտարարություններով: Այս կապակցությամբ Ս. Դեմիրելը 1992 թ. հունվարին «32-րդ օր» հեռուստահաղորդման ժամանակ նշեց, որ Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե ՀՀ ու Ադրբեջանը շարունակեն իրեն վստահել<sup>1</sup>:

#### *Գ. Թուրքիան և ԼՂ հիմնահարցը*

1992 թ. փետրվարին դարաբաղյան ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարևոր ռազմական հենակետերից մեկի՝ Խոջալուի չեզոքացումից հետո, ԼՂ հիմնահարցը դարձավ քաղաքական կարևոր գործոն ՀՀ և Թուրքիայի հարաբերություններում: Թուրքիայի ղեկավարությունը, շահարկելով Խոջալուի դեպքերը, Հայաստանի նկատմամբ ճնշում գործադրելու քաղաքականություն որդեգրեց:

Խոջալուին հաջորդեցին հայկական ուժերի կողմից Շուշիի ազատագրումն ու Լաչինի միջանցքի բացումը, որոնց հետևանքով հայ-թուրքական հարաբերություններում լարվածությունն աճեց: Մասնավորապես, Շուշիի ազատագրումից հետո Ս. Դեմիրելը հայտարարեց, որ տեղի ունեցածն «ադրբեջանցիների նկատմամբ հայերի իրականացրած հերթական ահաբեկչությունն է: Այսուհետ Թուրքիան չի կարող հանդես գալ որպես կողմնակի դիտորդ, որովհետև ակնհայտ է դարաբաղյան հակամարտությունն ուժի միջոցով լուծելու փորձը»<sup>2</sup>:

Հայ-թուրքական հարաբերությունները ԼՂ հակամարտության ընթացքում խիստ լարվեցին 1992 թ. մայիսին, երբ լուրեր տարածվեցին, թե իբր հայկական ուժերը գրոհել են Նախիջևանի Սադարակ քաղաքի շրջակայքում գտնվող բարձունքները<sup>3</sup>, ինչին ի պատասխան՝ Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար Մուհիթթին Ֆիտունօղլուն հայտարարեց, որ «բոլոր անհրաժեշտ պատրաստություններն իրականացվել են, և բանակն Անկարայի հրամանին է սպասում, որ հարձակվի»<sup>4</sup>:

Հակադարձելով Թուրքիայի այս ռազմատենչ հայտարարություններին՝ ԱՊՀ Հավաքական զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Եվգենի

<sup>1</sup> «Ազգ», 01.02.1992:

<sup>2</sup> «Независимая газета», 13.05.1992.

<sup>3</sup> Sté u Witt H., War's Ebb and Flow a Cycle of Revenge, «Chicago Tribune», 27.05.1992, p. 1.

<sup>4</sup> Hale W., Turkey, the Black Sea and Transcaucasia, «Transcaucasian Boundaries», New York, 1996, p. 64.

Շապոռնիկովը հայտարարեց, որ «Թուրքիայի ներխուժումը (Հայաստան – Գ.Ա.) կարող է հանգեցնել Երրորդ համաշխարհային պատերազմի»<sup>1</sup>: Այս նախագուշացումը լուրջ արձագանք ստացավ Թուրքիայում:

Չնայած Ռուսաստանի կողմից Թուրքիային ուղղված հստակ ազդանշաններին՝ վերջինը շարունակեց ԼՂ հակամարտության ընթացքում լայնածավալ ռազմական, ֆինանսական, քաղաքական և դիվանագիտական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին:

### *Դ. Դրական տեղաշարժեր ՀՀ – Թուրքիա հարաբերություններում*

Թեև Թուրքիայի և Հայաստանի միջև նկատվող լարվածությունն ակնհայտ էր, Թուրքիան այդուհանդերձ խրախուսում էր Հայաստանի հետ շփումները: Այս շրջանակներում ուշագրավ էր 1992 թ. հունիսի 23-26-ը Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության այցելությունը Թուրքիա: Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության հոչակագրի ստորագրման արարողակարգի շրջանակներում տեղի ունեցավ նրա հանդիպումը Ս. Դեմիրելի հետ, որի ընթացքում, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններին՝ Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ դրանք չպետք է բխեն հայ-ադրբեջանական հարաբերություններից, ինչին ի պատասխան՝ Ս. Դեմիրելին ընդգծեց, որ իրենք համաձայն են, բայց այնտեղ արյուն է հեղվում, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող զինված ընդհարումներն են<sup>2</sup>: Նշենք, որ ՀՀ նախագահի՝ Թուրքիա կատարած այցելությունից հետո հայ-թուրքական հարաբերություններում ընդհանուր առմամբ նկատվեց որոշակի դրական տեղաշարժ<sup>3</sup>:

Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները բարելավելու և հատկապես առևտրատնտեսական կապերը զարգացնելու նպատակով 1992 թ. հունիսի 5-7-ը Իզմիրում կայանալիք թուրքական տնտեսության զարգացմանը նվիրված երրորդ վեհաժողովին մասնակցելու համար Թուրքիա մեկնեց հայկական պատվիրակությունը՝ փոխվարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ: Հունիսի 5-ին Իզմիրի նահանգապետի գրասենյակում տեղի ունեցավ Հ. Բագրատյանի և Ս. Դեմիրելի հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին դիվանագիտական և սոցիալ-տնտեսական երկկողմ հա-

---

<sup>1</sup> Zaman A., Azerbaijan Looks to Ankara, The Middle East, № 213, 11.07.1992, p. 8; Fuller E.G., Turkey faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union, Santa Monica, Rand Study, 1992, p. 50; Nazmi Çora, Birleşik Türk Devletleri, Istanbul, 2004, s. 40.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 10-12:

<sup>3</sup> Տե՛ս Görgülü A., նշվ. աշխ., էջ 10:

բաբերություններ հաստատելու, Ղարաբաղի և Նախիջևանի շուրջ նկատվող լարվածությանն առնչվող հարցեր: Բազրատյանը Դեմիրելին փոխանցեց Հայաստանի նախագահի նամակը, որում առաջարկվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել կողմերի միջև, ինչպես նաև նշվում էր, որ Հայաստանը պահանջներ չունի Նախիջևանի նկատմամբ, որի հետ պատրաստ է համաձայնագիր կնքել<sup>1</sup>: Այս երկու այցելությունները կարծես թե որոշակի խթան դարձան հայ-թուրքական հարաբերություններում. դրանցից շատ չանցած՝ 1992 թ. օգոստոսի 23-25-ը, Թուրքիայի փոխարտգործնախարարի տեղակալ Բիլգին Ունանը, Բալկանների ու Կովկասի վարչության տնօրենի տեղակալ Ջանդան Ազերը և արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ալթայն այցելեցին Երևան<sup>2</sup>: Հանդիպումների ժամանակ հայկական կողմը հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիր ստորագրել Թուրքիայի հետ, որին ի պատասխան՝ Ունանը նշեց, որ Հայաստանը մինչ այդ պետք է ճանաչի ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այս հարցի կապակցությամբ հայկական կողմն ընդգծեց, որ Հայաստանը, անդամակցելով ՄԱԿ-ին, արդեն իսկ պարտավորվել է հարգել տարածքային ամբողջականության սկզբունքը<sup>3</sup>:

Այնուամենայնիվ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համաձայնագրի շուրջ բանակցությունները շարունակվեցին և մեծ մասամբ ամբողջական տեսք ստացան, բացառությամբ մեկ՝ առկա սահմանների ճանաչման հարցի ձևակերպման: Կողմերը պայմանավորվեցին բանակցությունները շարունակել և ավարտին հասցնել 1993 թ. ձմռանը<sup>4</sup>:

Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններում նկատվող դրական տեղաշարժի միտմանը նույնիսկ չվնասեց 1992 թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ արտգործնախարար Բաթթի Հովհաննիսյանի՝ Եվրոպայի խորհրդի ստամբուլյան հանդիպման ժամանակ Թուրքիայի հասցեին բավականին կոշտ հայտարարություններով հանդես գալը: Իր ելույթում Հովհաննիսյանն անդրադարձավ Հայոց ցեղասպանության հիմնահարցին, Թուրքիային մեղադրեց Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու, ինչպես նաև Ղարաբաղի խնդրում չեզոքություն չպահպանելու և ԵԱՀԽ-ին Հայաստանի անդամակցությանը խանգարելու համար<sup>5</sup>: Այս ելույթը, անշուշտ, բողոքի մեծ ալիք բարձրացրեց Թուրքիայում: Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը, անդրադառնալով Բ. Հովհաննիսյանի ելույթին, նշեց, որ Եվրախորհրդի ստամբուլյան ժողովում նման պնդումներ անելու

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 6-9:

<sup>2</sup> Տե՛ս **Куреев И.**, նշվ. աշխ., էջ 366:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս **Libaridian G. J.**, *Modern Armenia: People, Nation, State*, Chicago, 2004, p. 269-270.

<sup>5</sup> «Cumhuriyet», 18. 09.1992.

հարկը չկար<sup>1</sup>: Իսկ Եվրախորհրդում Թուրքիայի մշտական ներկայացուցիչը՝ արտակարգ ու լիազոր դեսպան Սյունմեզ Քոքսալը, հայտարարեց, որ Բ. Հովհաննիսյանի ելույթը գարմանք ու վիշտ է առաջացրել թուրքական շրջանակներում, քանի որ նրա հրահրիչ ու ագրեսիվ ելույթը չի կարող Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների ձգտող երկրի քաղաքական կամքի արտահայտությունը համարվել<sup>2</sup>:

Բ. Հովհաննիսյանի ելույթը միանշանակ չընդունվեց նաև Հայաստանի ղեկավար շրջանակներում: Վերադառնալուց հետո նա հրաժարական ներկայացրեց, որի գլխավոր պատճառը, թերևս, Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրում նրա և նախագահի մոտեցումների տարբերությունն էր<sup>3</sup>: Դրանով իսկ Հայաստանի ղեկավարությունը ակնարկում էր, որ նրա ելույթը չէր համապատասխանում պաշտոնական Երևանի տեսակետին<sup>4</sup>:

Չնայած Բ. Հովհաննիսյանի կոշտ հայտարարություններին՝ 1993 թ. սկզբին, երբ սոցիալ-տնտեսական ճգնաժամը Հայաստանում հասավ իր գագաթնակետին, Թուրքիայի ղեկավարությունը թույլատրեց իր տարածքով փոխադրել արտասահմանից Հայաստան առաքվող մարդասիրական օգնությունը<sup>5</sup>:

Բացի դրանից, ՀՀ և Թուրքիայի միջև հարաբերություններում առկա լարվածությունը հաղթահարելու և երկկողմ հարաբերությունները կարգավորելու նպատակով 1992 թ. սեպտեմբերի վերջին ԱՄՆ-ում տեղի ունեցավ Լ. Տեր-Պետրոսյանի և Հ. Չեթինի հանդիպումը, որից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարարը «Միլլիյեթ» թերթին տված հարցազրույցում նշեց, որ Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններում առաջնայինն Ադրբեջանի հարցն է՝ հավելելով, որ հայկական զինուժերը պետք է հետ քաշվեն Ադրբեջանի տարածքից, և այնուհետև Ղարաբաղի քաղաքական իրավիճակը պետք է քննարկվի Միսակի հանդիպման ժամանակ: «Այս հարցերի շուրջ Լ. Տեր-Պետրոսյանի կողմից ես նկատեցի որոշակի ըմբռնում՝ նշելով, որ Ղարաբաղի քաղաքական ապագան կքննարկենք հետո, հիմա անհրաժեշտ է կարգավորել մյուս խնդիրները»<sup>6</sup>,– նշել է նա: Թվում էր, թե այս հանդիպման ընթացքում ձեռք բերված որոշակի փոխհամաձայնությունները կնպաստեին երկկողմ հարաբերությունների բարելավմանը, սակայն երբ հայկական ուժերը 1993 թ. ապրիլին ազատագրեցին Քելբաջարը, հայ-թուրքական հարաբերությունները կրկին ծայրաստիճան լարվեցին:

---

<sup>1</sup> «Anatolia News Agency», 18.09.1992.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Milliyet», 18.11.1992.

<sup>4</sup> «Երկիր», 16.09.1992:

<sup>5</sup> Տե՛ս **Goldenberg S.**, *Pride of Small Nations*, Zed Books, 1994, p. 55.

<sup>6</sup> «Milliyet», 29.09.1992.

### *Ե. Թուրք-հայկական հարաբերությունների նոր սրումը*

Թուրքիայի հակազդեցությունը Քելբաջարի ազատագրմանը չափազանց կտրուկ էր: Այդ օրերին Թուրքիայի քաղաքական և ռազմական շրջանակներում դարձյալ ակտիվորեն սկսեց քննարկվել Ղարաբաղյան հակամարտությանը Թուրքիայի հնարավոր ռազմական միջամտության հարցը: Այդ կապակցությամբ «Հյուրիյեթ» թերթը գրում էր, որ «հայ-ադրբեջանական պատերազմի ընդլայնման հնարավորությունը ստիպեց Թուրքիային ռազմական պատրաստության վիճակի բերել Երրորդ բանակի զորամիավորումները: Ինչպես հայտնում են զինվորական սկզբնաղբյուրները, Սարիղամիջում, Աշքեղեում, Կարսում, Արդահանում և Դումլուում գտնվող սահմանապահ զորքերը համալրվել են, և թուրքական ռազմական օդանավերը մշտական հերթապահ թռիչքներ են իրականացնում»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ Քելբաջարի ազատագրումը Թուրքիայի համար ՀՀ լիակատար շրջափակման ենթարկելու լավ առիթ դարձավ: 1993 թ. ապրիլին Թուրքիայի կառավարությունը, Հայաստանը ներկայացնելով որպես դարաբաղյան հակամարտության մասնակից և մեղադրելով նրան Ադրբեջանի նկատմամբ բացահայտ ագրեսիա իրականացնելու համար, փակեց H-50 միջազգային օդային միջանցքը՝ արգելելով իր տարածքով օդանավերի թռիչքները Հայաստան, փակեց Գյումրի-Կարս երկաթգիծը, ինչպես նաև արգելեց իր տարածքով մարդասիրական օգնության առաքումը Հայաստան<sup>2</sup>: Իր հերթին խիստ ելույթով հանդես եկավ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը, որն այդ օրերին պաշտոնական այցով գտնվում էր Ղրղըզստանում. «Ի՞նչ կլինի, եթե Հայաստանի սահմանի մոտ զորախաղեր անցկացնենք, և մեր ռուբլեից երեքն ընկնի Հայաստանի տարածք: Ի՞նչ կլինի, եթե Նախիջևան մեկ-երկու զորամիավորում մտցնենք: Նախիջևանի հետ կապված ենք պայմանագրով: Ի՞նչ կլինի, ո՞վ մեզ ինչ կանի, ո՞վ պիտի միջամտի: Ո՞վ կարողացավ միջամտել Բոսնիայի դեպքերին: Համաշխարհային քաղաքականության մեջ առանց ռիսկի դիմելու ոչնչի չենք հասնի»<sup>3</sup>:

Բիշկեկում Թուրքիայի դեսպանությունում տված հարցազրույցի ժամանակ անդրադառնալով Քելբաջարի ազատագրմանը՝ Թ. Օզալը նշել է. «Մենք խորհրդակցում ենք Ռուսաստանի հետ, լուծումներ ենք որոնում, բայց հաշվի առնող չկա: Վերևից և ներքևից միջանցք բացեցին և Լեռնային Ղարաբաղը փաստորեն կապեցին Հայաստանին: Այլևս դարաբաղյան խնդիր չկա, կան Հայաստանի նկրտումները Մեծ Հայաստանի վերաբերյալ: Կարծում եմ՝ այստեղ կանգ է առնելու, ուրիշ բան չի անելու... Ինձ մի հարցրեք՝ Հայաս-

<sup>1</sup> «Hürriyet», 08.04.1993.

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, Ժամանակագրություն, էջ 5; Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան, 2005, էջ 109:

<sup>3</sup> Նույն տեղում:

տան մտնել պե՛տք է, թե՛ ոչ: Բայց Թուրքիան պետք է լավ հաշվարկի իր քայլերը»: Ուշագրավ է, որ նրա հայտարարությունից անհանգստացած՝ Հ. Չեթինը լքեց Թուրքիայի դեսպանության շենքը, իսկ երեկոյան հրաժարվեց նախագահի խոսքերը մեկնաբանելուց<sup>2</sup>: Դա նշանակում էր, որ Թ. Օզալի ռազմաշունչ հայտարարությունը ինքնաբուխ էր և չէր արտացոլում երկրի ղեկավարության ընդհանուր դիրքորոշումը:

Ի տարբերություն Թ. Օզալի հայտարարությունների, Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը հանդես եկավ ավելի զգույշ և հավասարակշռված հայտարարությամբ: Նա դեմ էր Թուրքիայի ռազմական միջամտությանն այդ հակամարտությանը, ուստի անդրադառնալով ռազմական միջամտության հնարավորությանը՝ հայտարարեց. «Հայաստանի թիկունքում կանգնած են ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Այդ պատճառով արտգործնախարարությունն ինձ խորհուրդ չտվեց բանակցել Բ. Քլինթոնի և Ֆ. Միտերանի հետ: Բացի դրանից, Թուրքիայում կան ուժեր, որոնք պահանջում են անցնել սահմանը: Ես դրանց պատասխանում եմ, որ գնալը հեշտ է, բայց այնտեղ ում հետ եմ հանդիպելու, ամերիկացիների՝ ... Այնտեղ իմ դեմ դուրս կգա Ռուսաստանը, Կարմիր բանակը»<sup>3</sup>:

Փաստորեն Քելբազարի ազատագրումից հետո Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ուժ չկիրառելը, մեր կարծիքով, պայմանավորված էր հետևյալ պատճառներով: Երկրի նախագահի ազդեցիկ տրամադրվածությունը աջակցություն չէր գտնում վարչապետ Ս. Դեմիրելի և արտաքին գործերի նախարար Հ. Չեթինի կողմից: Վերջիններս գտնում էին, որ Հայաստանի վրա հարձակումը կհանդիպի միջազգային հանրության, մասնավորապես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կոշտ ընդդիմությանը: Իսկ հիմնական պատճառը այն էր, որ Հայաստանի վրա հարձակումը նշանակում էր պատերազմ սանձազերծել Ռուսաստանի դեմ:

Թուրք-հայկական լարված հարաբերությունների մթնոլորտում 1993 թ. հուլիս-օգոստոսին հայկական ուժերը նոր հաջողություններ ունեցան: ԼՂՀ բանակին հաջողվեց ազատագրել Ադդամը և Ֆիզուլին, Ջաբրայիլը և Ջանգելանը, որը բողոքի մեծ ալիք բարձրացրեց Թուրքիայում: Հայկական ուժերի հաջողությունների կապակցությամբ 1993 թ. հուլիսի 25-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի նստավայրում տեղի ունեցավ Թուրքիայի Անվտանգության խորհրդի դռնփակ նիստ, որից հետո Հ. Չեթինը լրագրողներին հայտնեց, որ օգտվելով Ադրբեջանի ներքին անկայունությունից՝ հայերը նոր տարածքներ էին «նվաճել»: Նա հայերին զգուշացնում էր, որ այդ տարածքները չեն կարողանալու իրենց ձեռքում պահել. «Հայաստանը շատ թանկ է վճարելու այս տարածքների համար»<sup>4</sup>:

Ս. Դեմիրելը, պատասխանելով «Ջումհուրիյեթի» թղթակցի հարցին, թե

---

<sup>1</sup> «Milliyet», 08.04.1993.  
<sup>2</sup> Նույն տեղում:  
<sup>3</sup> «Sabah», 05.04.1993.  
<sup>4</sup> «Hürriyet», 26.07.1993.

արդյո՞ք «Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության պայմանագիր կնքելու հարցն օրակարգում է», ասաց, որ ամեն ինչ հնարավոր է՝ հավելելով, որ նախ պետք է ամրացնեն հարցի քաղաքական հիմքը, քանզի հայերի ագրեսիան համաշխարհային հասարակայնության օրակարգի առաջնային խնդիրներից չէ: «Նախ հարցը պետք է մտցնենք օրակարգ: Մյուս քայլերը կկատարենք՝ ելնելով իրավիճակից»<sup>1</sup>:

Այսպիսով, Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունները բավականին լարված էին, ուստի չէր բացառվում նաև թուրքական ռազմական միջամտությունը դարաբաղյան հակամարտությանը: Թուրքիայի որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ նույնիսկ բացեիբաց խոսում էին այդ մասին: Օրինակ՝ հայկական ուժերի կողմից Քելբաջարի գրավումից հետո հերթական անգամ ռազմաշունչ էլույթ ունեցավ Թ. Օզալը՝ հայտարարելով, որ Թուրքիան ընդլայնելու է ռազմական համագործակցությունն Ադրբեջանի հետ և զենք է ուղարկելու այդ երկիր<sup>2</sup>: Հայկական ուժերի հաջողություններից անհանգստացած Թուրքիան 1993 թ. սեպտեմբերի սկզբին հայ-թուրքական սահմանի երկայնքով տեղակայեց ավելի քան հիսունհազարանոց զորք<sup>3</sup>: Այդ օրերին Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլերը հարցազրույցներից մեկում սպառնաց «գնալ Թուրքիայի խորհրդարան և պատերազմ հայտարարել Հայաստանին, եթե հայերը դիպչեն Նախիջևանին»<sup>4</sup>:

Հատկանշական է, որ թուրքական ռազմական ներխուժման հնարավորությանն իր հուշերում անդրադարձել է այդ տարիներին Հայաստանում Հունաստանի դեսպան Լեոնիդաս Խրիզանտոպուլոսը: Նա նշում է, որ 1993 թ. հոկտեմբերի սկզբին Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում ստեղծված խորհրդարանական ճգնաժամից, ձգտում էր հարված հասցնել Հայաստանին և Վրաստանին: Հոկտեմբերի 5-ին Հայաստանի զինված ուժերը Թուրքիայի հնարավոր հարձակմանը դիմակայելու նպատակով բերվեցին ամենաբարձր պատրաստության<sup>5</sup>:

Ըստ Լ. Խրիզանտոպուլոսի՝ 1993 թ. հոկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցած պետական հեղաշրջման դեկավար, Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասբուլատովի և Թ. Չիլերի միջև գոյություն է ունեցել զադոնի բանավոր պայմանավորվածություն, համաձայն որի՝ հակաէլցինյան ուժերի հաղթանակի պարագայում թուրքական զինված ուժերը պատրաստվում էին հարվածել Հայաստանին<sup>6</sup>:

<sup>1</sup> «Cumhuriyet», 27.07.1993.

<sup>2</sup> Տե՛ս **Cornell E.S.**, Undeclared War: The Nagorno-Karabakh Conflict Reconsidered, Journal of South Asian and Middle Eastern Studies, vol. 20, № 4, Summer 1997, p. 14:

<sup>3</sup> Տե՛ս **Bishku B.M.**, Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus, Journal of Third World Studies, vol. 18 № 2, 2001, p. 3:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս **Демоян Г.**, Турция и Карабахский конфликт, Ереван, 2006, с. 123:

<sup>6</sup> Նույն տեղում:



Այնուամենայնիվ, Թուրքիան խուսափեց ԼՂ հակամարտությունում անմիջական մասնակցություն ունենալուց՝ սուկ ընդլայնելով իր ռազմաֆինանսական աջակցությունն Ադրբեջանին: Թեև Թուրքիան պաշտոնապես չէր մասնակցում հայ-ադրբեջանական հակամարտությանը, սակայն միայն 1993 թ. Ադրբեջանին պաշտոնապես 30 մլն. դոլարի վարկ հատկացրեց՝ զենք գնելու համար<sup>1</sup>: Բացի դրանից, թուրքական կառավարությունը դեղորայքի և պարենամթերքի քողի տակ 1992 թ. ադրբեջանցիներին մատակարարեց զենք և ռազմամթերք, այդ թվում՝ «Ստինգեր» տեսակի հինգ հազար հրթիռ, հրթիռային կայանք, ականներ և ականանետեր<sup>2</sup>: Դրանով իսկ, Թուրքիան դարձավ դարաբաղյան հակամարտության անմիջական մասնակից՝ իր անուղղակի մասնակցությունը բերելով նաև Ղարաբաղում ընթացող ռազմական գործողություններին:

Այսպիսով, գնահատելով Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի հանդեպ միջազգային հարաբերությունների տեսության դիտանկյունից՝ կարելի է այն բնութագրել որպես հարկադրման քաղաքականություն, որի նպատակն էր ստիպել Հայաստանին ենթարկվել Թուրքիային: Որպես հարկադրանքի միջոց օգտագործվում էին վերը նշված նախապայմանները<sup>3</sup>:

**Григор Аршакян – Основные принципы политики Турции по отношению к Республике Армения в 1991-1994 гг.**

Статья посвящена изучению проблем основ внешней политики Турции по отношению к Республике Армения. В частности, автор освещает первые политические сношения между руководствами двух государств в начале 1990-ых годов и определяет основные политические предусловия, которые Турция ставила перед Арменией, взамен на установление дипломатических отношений и развитие экономического сотрудничества. Автор также уделяет внимание изучению фактора Нагорно-карабахского конфликта в армяно-турецких отношениях. Политика Турции данного периода освещается также в региональном и международном контексте, что позволяет более полно выявить ее основы.

**Grigor Arshakyan – Main principles of the Policy of Turkey in Regard to Armenia in 1991-1994**

The article is devoted to the foreign policy of Turkey in regard to Armenia in the beginning of 1990s. The author examines the political, economic and international factors, which shaped the policy of Turkey vis-a-vis newly independent Armenia. The article focuses on identifying reasons of political preconditions, raised by Turkish leadership for establishing diplomatic relations and economic cooperation with Armenia. The first cases of political dialogue between Armenia and Turkey, bilateral diplomatic consultations are explored by the author in his work. G. Arshakyan draws attention to the Nagorno-Karabakh conflict and its impact on the Armenian-Turkish relations. The policy of Turkey on the conflict is assessed in the light of regional and international relations of the taken period.

---

<sup>1</sup> «Hürriyet», 23.12.1993.

<sup>2</sup> Gerçek, Haftalık Haber Dergisi, № 1, 14.06.1992, s. 10.

<sup>3</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Տաֆրաթյան Ք.**, Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 21, Երևան, 2002, էջ 147-155:

**ՖՐԵՂԵՐԻԿ ԴՅՈՒ ԲՈՒԱ ԴԸ ՄՈՆՊԵՐՈՅԻ  
ՔԱՐՏԵԶԸ ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր - Ֆրեղերիկ Դյու Բուա դը Մոնպերո, Մեծ Հայք, Հայաստան, Ադվանք, Մեծ Թուրան, Ադրբեջան, հին (պատմական) քարտեզներ, ֆրանսիական քարտեզներ, պատմական սկզբնաղբյուրներ*

Սկզբնաղբյուրների համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում քարտեզները, որոնք յուրահատուկ տեղեկություններ են հաղորդում աշխարհագրական օբյեկտների տարածական տեղաբախշման և ժամանակի ընթացքում դրանց կրած փոփոխությունների մասին: Քարտեզները, աշխարհագրական բնույթի պատմական աշխատությունները և այլ գրավոր սկզբնաղբյուրները՝ որպես անցյալի անմիջական վկայություններ, մեծ արժեք ունեն<sup>1</sup>:

Պատմական քարտեզներն ուսումնասիրողների առջև ծառայած առաջնային խնդիրներից է գրադարաններից, արխիվներից և մասնավոր հավաքածուներից անհրաժեշտ «քարտեզագրական նյութի» հայտնաբերումն ու դրանց նկարագրումը<sup>2</sup>:

Տարածաշրջանային քարտեզներին անդրադառնալը՝ քարտեզների հավաքածուներ ստեղծելը, մեզ համար շատ կարևոր է և արդիական ոչ միայն գիտական, այլև քաղաքական և աղբյուրագիտական տեսակետներից: Առավել ևս, որ այսօր մեր հարևաններն ամեն կերպ ջանում են իրենց քարոզչական աշխատանքներում շահարկել հին (պատմական) քարտեզներին վերաբերող հարցերը և ըստ դրանց նենգափոխել պատմական իրականությունը՝ հետապնդելով հեռահար քաղաքական նպատակներ: Այս պայմաններում հարկ է ծանոթ լինել մեր տարածաշրջանին առնչվող բոլոր քարտեզներին և դրանց ուղեկցող նյութերին, եթե այդպիսիք կան (ճանապարհորդական նոթեր և նկարագրություններ, հաշվետվություններ, նկարներ և այլն):

2012 թ. ադրբեջանցիները հրատարակել են այսպես կոչված «Ադրբեջանի

<sup>1</sup> St' u Салищев К. А., Картоведение, Учебник, изд. Московского университета, М., 1976, с. 320:

<sup>2</sup> St' u Skelton R. A., Maps: A Historical Survey of their Study and Collecting, Chicago, London, 1972, p. 105; Постников А. В., Развитие картографии и вопросы использования старых карт, М., 1985, с. 13:

հին քարտեզների հավաքածու»<sup>1</sup>: Ըստ համացանցում տեղադրված գովազդային հայտարարության՝ այն ամփոփում է պատմական և աշխարհագրական քարտեզներ, որոնցում արտացոլված է «Ադրբեջանի տարածքը» տարբեր պատմական ժամանակաշրջաններում: Հրատարակիչները նշում են նաև, որ քարտեզներն ընտրված են XVI-XIX դդ. (թեպետ, ըստ վերնագրում նշված տարեթվերի, խնդրո առարկա քարտեզներն առնչվում են XVII-XX դդ.) հրատարակված ատլասներից և հետաքրքրություն են ներկայացնում գիտական, պատմական ու կուլեկցիոն առումներով: Հավատարիմ իրենց գործելաճին՝ ադրբեջանցիները ֆինանսական միջոցներ չեն խնայել և հրատարակել են քարտեզների շքեղ ու թանկարժեք հավաքածու՝ կաշեպատ, ոսկե դրոշմնկարով, իսկ որպես հավաքածուից ընտրված օրինակ-նմուշներ՝ հայտարարության ստորին հատվածում զետեղել են փոքրիկ, ցածրորակ և դժվարընթեռնելի գովազդային երեք քարտեզ:

Հրատարակված հավաքածուն անչափ թանկ լինելու պատճառով հնարավոր չեղավ ձեռք բերել: Ուստի դրանում ընդգրկված քարտեզների, ինչպես նաև հրատարակիչների կիրառած մոտեցումների մասին պատկերացում կազմելու համար դիմեցինք ընդամենը ցուցադրված քարտեզների օգնությամբ: Փնտրտուքների շնորհիվ ճշգրտեցինք առաջին քարտեզի ոչ միայն վերնագիրը, հեղինակին, այլև այն հին ատլասը, որից այն պատճենվել է:

Տարիների մեր հետազոտությունների արդյունքում ստեղծել ենք Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզների դեռևս անտիպ հավաքածու՝ ուսումնասիրելով մասնավորապես Հայաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի ազգային գրադարաններում ու արխիվներում պահվող նյութերը: Կուտակված նյութի հիման վրա կարող ենք հավաստել, որ համացանցում ադրբեջանցիների ցուցադրած երեք քարտեզներից առաջինը ունի «Tauride, Caucase et Arménie, de Strabon, mort en 29 de J.C., carte composée et dessinée par Frédéric Du Bois» («Տորիդ (Տավրիկա, Տավրիա, Տավրիդա – Վ.Մ.)»<sup>2</sup>, Կովկաս և Հայաստան, ըստ Ստրաբոնի, մահացել է Ք. հ. 29 թ., քարտեզը կազմվել է և գծագրվել Ֆրեդերիկ Դյու Բուայի կողմից») վերնագիրը, և այն պատճենել են «Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée» («Ճանապարհորդություն Կովկասում, չերքեսների ու աբխազների մոտ, Կովսիդայում, Վրաստանում, Հայաստանում և Դրիմում») ատլասից: Ամենայն հավանականությամբ հրատարակիչներն օգտվել են Սանկտ Պետերբուրգի՝ Ռուսաստանի ազգային գրադարանի քարտեզագրության բաժնում պահվող ատլասի բնօրինակից:

Անգամ անզեն աչքով ընթեռնելի է, որ քարտեզի վրա գլխատառերով գրված է ARMENIE MAJEURE, IBERIE, COLCHIDE, ALBANIE, MEDIE (ՄԵԾ

<sup>1</sup> Տե՛ս «Собрание старинных карт Азербайджана. Факсимильное издание 1667-1914 гг.», СПб., 2012. <http://www.alfaret.ru/item.php?prod=2204&subid=130&catid=194>

<sup>2</sup> Տե՛ս «Большая советская энциклопедия», т. 13, М., 1973, с. 509:

ՀԱՅՔ, ՎԻՐՔ, ԿՈՂՔԻՍ, ԱՂՎԱՆՔ, ՄԱՐԱՍՏԱՆ (ՄԱԴԱՅ)) (տե՛ս թիվ 1 քարտեզը): Հետազոտողից մեծ ջանքեր չի պահանջվի համոզվելու, որ Ադրբեջան բառը այդ քարտեզում ընդհանրապես գոյություն չունի: Միաժամանակ նա չի դժվարանա կռահել այսպես կոչված «հրատարակիչների» որքան հավակնոտ, նույնքան և պարզունակ մտադրությունը, այն է՝ խեղաթյուրելով պատմական սկզբնաղբյուրները՝ ցանկալին ներկայացնել որպես իրականություն: Իհարկե այստեղ խոսքը վերաբերում է Ալբանիա (Աղվանք) կոչվող երկրին, ուստի ակնհայտ է, որ մեր հարևանները ջանք ու եռանդ չեն խնայում՝ նմանատիպ կեղծարարությունների և ակնհայտ ստի միջոցով անտեղյակ հանրությանը մոլորության մեջ ձգելու, տարածաշրջանում իրենց վերագրելու «տեղաբնիկների» կարգավիճակ՝ «ալբանացիների հետնորդներ» հորջորջվող պիտակով:

Եթե այսպես կոչված «հավաքածուի» հեղինակները նպատակահարմար են գտել ընդգրկել այս քարտեզը, ապա կարծում ենք, որ Ֆրեդերիկ Դյու Բուայի վերոհիշյալ ատլասից և նրա աշխատություններից այլ քարտեզներ ևս ներառնված կլինեն:

Կարծես վերոհիշյալ հավաքածուում ցուցաբերված մոտեցման շարունակությունն են մեր հարևանների՝ համացանցում տարածաշրջանային քարտեզներին առնչվող և օր օրի սաստկացող, սակայն բարբաջանքից ոչնչով չտարբերվող հակահայկական քարոզչության փորձերը, որոնք նենգափոխում են պատմական սկզբնաղբյուրները: Տվյալ պարագայում խոսքը վերստին վերաբերում է հին քարտեզներին և դրանց բովանդակությանը: Նմանօրինակ հիվանդ երևակայության ու մտավարժանքների արդյունք է Էմիր Էյվազի՝ համացանցում տեղադրած հրապարակումների շարքը՝ «Մեծ Թուրանի» երկյուղը հայերին ստիպում է նենգափոխել հին քարտեզները»<sup>1</sup> խորագրով, որը վերաբերում է տարածաշրջանին առնչվող ֆրանսիական հին քարտեզներին:

Ակնհայտ է, որ ադրբեջանական կողմն իր քարոզչական գործունեությունն իրականացնելիս միշտ և ամենուր օգտվում է իր հոգեկերտվածքին հարազատ ու բնորոշ կարգախոսից՝ պատերազմում (տվյալ դեպքում՝ տեղեկատվական) բոլոր միջոցներն ընդունելի են:

Նկատի ունենալով վերն ասվածը և ամեննին նպատակ չհետապնդելով գնահատել տեղեկատվական պայքարում առկա խնդիրները՝ կցանկանալինք պարզաբանել, թե մենք որքանով ենք տեղեկացված վերոհիշյալ քարտեզի հեղինակ, Եվրոպայում և Ռուսաստանում XIX դ. մեծ ճանաչում ձեռք բերած Ֆրեդերիկ Դյու Բուայի գործունեությանը, նրա հրատարակած վեցհատորյա «Ճանապարհորդությանը» և կազմած «Ատլասին», որոնցում, ի դեպ, թեև Հայաստանն ու հայերը ներկայացված են բարյացակամ դիրքերից, այդուհանդերձ ադրբեջանցիները ջանասիրաբար փորձում են օգտագործել

---

<sup>1</sup> **Амир Эйваз**, Страх перед «Великим Тураном» заставляет армян искажать старинные карты. <http://gulustan.ws/2012/04/strax-pered-velikim-turanom/>

նրա աշխատանքները հայերի դեմ ծավալած քարոզչական պայքարում:

Յավոք սրտի, առանց երկմտելու կարելի է հավաստել, որ արդյունքները գոհացուցիչ չեն: Ապարդյուն անցան նրա աշխատանքներին անդրադարձներ պարունակող որևէ հրատարակության ծանոթանալուն միտված մեր ջանքերը՝ չնայած այն հանգամանքին, որ նրա «Ճանապարհորդության» մի մասը նվիրված է Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակին, պատմամշակութային արժեքներին ու կենցաղին, իսկ «Ատլասին» ծանոթանալուց հետո կարող ենք փաստել, որ դրանում մեծ տեղ է հատկացված Հայաստանը ներկայացնող՝ պատմական և տվյալ ժամանակաշրջանին առնչվող քարտեզներին, ինչպես նաև հնագիտությանը, ճարտարապետությանն ու բնաշխարհին նվիրված նկարներին:

Տարածաշրջան այցելած ճանապարհորդներին և նրանց գործունեությանը հայ հեղինակներից անդրադարձել են Հովհաննես Հակոբյանը<sup>1</sup> և ակադեմիկոս Մանվել Զուլայանը<sup>2</sup>: Վերջինս իրավամբ նշել է, որ եվրոպական սկզբնաղբյուրներում եղած ոչ բոլոր տեղեկություններն են հայ իրականության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա դարձել: Ըստ նրա խորհրդահայ պատմագրության մեջ եվրոպական հեղինակների որոշ վկայություններ, իրենից բացի, օգտագործել են նաև Լեոն, Հակոբ Անասյանը, Աշոտ Հովհաննիսյանը և այլք<sup>3</sup>:

Հրապարակում եղած նյութերը հստակ վկայում են, որ տարածաշրջան այցելած առանձին ճանապարհորդների գործունեությանը նվիրված պատմաաշխարհագրական հետազոտություններ չեն իրականացվել, ուստի նրանց կազմած քարտեզները չէին կարող ուսումնասիրվել պատմական քարտեզագրության և պատմական աշխարհագրության տեսանկյուններից:

Տողերիս հեղինակն իր հնարավորությունների սահմաններում փորձելու է ներկայացնել հանիրավի մոռացության մատնված Ֆրեդերիկ Դյու Բուայի՝ պատմաբանի, աշխարհագետի, քարտեզագրի, բնագետի, երկրաբանի, ինչպես նաև նկարչի կյանքն ու գործունեությունը, նրա գլխավոր աշխատությունները, մասնավորապես՝ «Ատլասը»:

Դյու Բուայի աշխատություններում անշուշտ կան որոշակի անճշտու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Հակոբյան Հ.**, Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Ա., ԺԳ-ԺԶ դար, (1253-1582), Յերեվան, 1932, *նույնի՝* Աղբյուրներ Հայաստանի յեվ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Զ, ԹԺ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Յերեվան, 1934:

<sup>2</sup> Տե՛ս **Զուլայան Մ. Կ.**, Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին (XIII-XVI դդ.): Աղբյուրագիտական ակնարկ, Պատմաբանասիրական հանդես, 1985, թիվ 2, էջ 56-72, *նույնի՝* Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին (XVI- XVIII դդ.): Աղբյուրագիտական ակնարկ, *նույն տեղում*, 1985, թիվ 3, էջ 23-40, *նույնի՝* Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Երևան, 1990:

<sup>3</sup> **Զուլայան Մ. Կ.**, Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին (XIII-XVI դդ.), էջ 56-57:

թյուններ, բացթողումներ կամ թերացումներ, որոնք չեն համապատասխանում ժամանակակից մարդու աշխարհընկալմանն ու տեսակետներին կամ ներկայումս գիտության մեջ շրջանառվող ուսումնասիրության մեթոդներին և մոտեցումներին, ինչն օրինաչափ է: Սակայն հարկ է աներկբայորեն հավաստել, որ նրա աշխատությունները մեր հայրենիքի համար անգնահատելի պատմական սկզբնաղբյուրներ են:

*Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի կյանքն ու գործունեությունը*



Ծագումով ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոն (Frédéric Du Bois de Montperreux) ծնվել է 1798 թ. մայիսի 28-ին Շվեյցարիայի Մոթիե (Môtiers) բնակավայրում: Նա սերում է սնանկացած ազնվականի ընտանիքից: Հայրը զբաղվում էր ժանյակների առևտրով, իսկ պապը իսպանական արքունիքում եղել է էմալները (արծնապակի) զարդարող նկարիչ: Ենթադրելի է, որ Դյու Բուային էին պապից ժառանգաբար փոխանցվել նկարչական ունակությունները, որոնք նրան հնարավորություն ընձեռեցին ճանապարհորդության ընթացքում իրեն դրսևորել փայլուն ձևով: Սկզբնական

կրթությունը նա ստացել է տեղի քոլեջում, 1817-1819 թթ. Սեն-Գալում (St-Gall) եղել է ֆրանսերենի ուսուցիչ: 1819-1821 թթ. որպես ուսուցիչ-դաստիարակ աշխատել է Կուրլանդիայում՝ լեհ ազնվականի ընտանիքում: Այստեղ, առիթից օգտվելով, Դյու Բուան սկսել է ուսումնասիրել բալթյան երկրների, հատկապես Լիտվայի, մշակութային հուշարձանները: 1821-1829 թթ. նա Լիտվայում աշխատել է որպես կառավարիչ, իսկ 1825 և 1829 թթ. ճանապարհորդել է Լեհաստանում: 1829-1831 թթ. Բեռլինի համալսարանում նա աշակերտել է հանրագիտարանային գիտելիքների տեր եվրոպական գիտության այնպիսի նշանավոր դեմքերի, ինչպիսիք էին հելլենիստ Օգուստ Բյոկը, աշխարհագետ Կարլ Ռիթերը, երկրաբան Լեոպոլդ ֆոն Բուխը և բնագետ Ալեքսանդր դը Հումբոլդտը: Այդ ժամանակ է նրա մոտ հղանում դեպի Ղրիմ և Կովկաս ճանապարհորդելու լայնածավալ ծրագիրը: Ալեքսանդր դը Հումբոլդտի և Լեոպոլդ ֆոն Բուխի ղեկավարությամբ և խորհուրդներով, գիտական աշխարհի աջակցությամբ, ռուսական իշխանության թույլտվությամբ ու օգնությամբ շատ համեստ ֆինանսական միջոցների տեր Դյու Բուան 1831-1834 թթ. միայնակ սկսում է վտանգներով լի իր գիտահետազոտական ճանապարհորդությունը դեպի Ղրիմ և Կովկաս: Նա

նախ այցելում է Ղրիմ, այնուհետև Սևաստոպոլից ռուսական ռազմանավով՝ կովկասյան ափագծի երկայնքով ձգվող հիմնական նավահանգիստները: Սակայն այդ ճանապարհորդությանը նվիրված իր աշխատության մեջ նա նկարագրությունը սկսում է Կովկասից և վերջացնում Ղրիմով:

Չորս տարի տևած այդ ճանապարհորդության ընթացքում հավաքած, մշակված ու խմբագրած նյութերի հիման վրա Դյու Բուան 1839-1843 թթ. Փարիզում հրատարակում է «Ճանապարհորդություն Կովկասի շրջակայքում, չերքեզների ու աբխազների մոտ, Կոլխիդայում, Վրաստանում, Հայաստանում և Ղրիմում» վերտառությամբ վեցհատորյա աշխատությունը<sup>1</sup>, իսկ 1843 թ. Շվեյցարիայի Նոշատել քաղաքում լույս է ընծայում իր կազմած «Ճանապարհորդություն Կովկասում, չերքեզների ու աբխազների մոտ, Կոլխիդայում, Վրաստանում, Հայաստանում և Ղրիմում»<sup>2</sup> ատլասը, որը համարվում է հազվագյուտ աշխատանք:

Ռուսական իշխանությունները Դյու Բուային առաջարկում են մնալ Ռուսաստանում և շարունակել գիտահետազոտական աշխատանքները, սակայն նա գերադասում է վերադառնալ հայրենիք և աշխատել 1838 թ. հիմնադրված Նոշատելի նորաստեղծ ակադեմիայում, ուր ստանձնում է հնագիտության ամբիոնի ղեկավարի պաշտոնը, իսկ ակադեմիայի փակվելուց հետո (1848 թ.) իրեն նվիրում է Նոշատելի հնագիտական ժառանգության ուսումնասիրությանը և պատրաստում «Նոշատելյան հնություններ» աշխատությունը, որը լույս է տեսնում նրա վախճանից հետո<sup>3</sup>:

Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Դյու Բուայի կատարած աշխատանքը: «Ճանապարհորդությունը» ֆրանսերենով հրատարակվելուց հետո ամբողջությամբ թարգմանվել է գերմաներեն: Փարիզի Աշխարհագրական ընկերությունը նրան պարգևատրել է Մեծ մրցանակով: Լոնդոնի երկրաբանական ընկերությունը բարձր է գնահատել նրա կատարած աշխատանքը, իսկ Ռուսական կառավարությունը 20000 ռուբլի դրամական պարգև է տրամադրել Դյու Բուային աշխատությունները հրատարակելու համար: Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ը նրան պարգևատրել է Սուրբ Ստանիսլավի շքանշանով և նվիրել ադամանդակուռ մատանի: Գիտության բնագավառում հաջողությունների համար Պրուսիայի թագավորը նրան պարգևատրել է Մեծ ոսկե մեդալով<sup>4</sup>: Լոնդոնի, Բեռլինի և Սանկտ Պետերբուրգի աշխարհագրական ընկերությունները Դյու Բուային ընտրել են իրենց թղթակից անդամ:

---

<sup>1</sup> **Frédéric DuBois de Montperreux**, Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Librairie de Gide, Editeur des annales des voyages, rue de Seine Saint-Germain, № 6 bis, t. I-VI, Paris, 1839-1843.

<sup>2</sup> **Frédéric DuBois de Montperreux**, Lithographie de H. Nicolet à Neuchâtel (Suisse), Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS, Neuchâtel en Suisse, chez l'Auteur, Paris, chez Gide Libraire-éditeur, Rue des petits Augustins № 5, 1843.

<sup>3</sup> Les antiquités [monuments] de Neuchatel. Ouvrage posthume de Frédéric DuBois de Montpérreux, 1852.

<sup>4</sup> Sté u **Jeanneret F. A. M.**, et **Bonhôte J. H.**, Biographie Neuchâteloise, t. 1, Locle, chez Eugène Courvoisier, Libraire-éditeur, 1863, p. 279-280 :

Ըստ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի կտակի, որը մահկանացուն կնքել է 1850 թ. հուլիսի 5-ին Պեգոյում, նրա հավաքածուները և գրադարանը նվիրաբերվել են Ցյուրիխ քաղաքին<sup>1</sup>:

Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն՝ Դյու Բուան իր աշխատություններում կարողացել է արձանագրել XIX դ. 30-ական թվականներին Կովկասում և Ղրիմում տիրող իրավիճակը՝ շրջանառության մեջ դնելով հսկայական պատմական, աշխարհագրական, քարտեզագրական և մշակութային նյութեր, որը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություններ և վերլուծություններ: Նա գրի է առնել այն ամենն, ինչ լսել է և նկարել է այն, ինչ տեսել է: Լավ տիրապետելով Արևմտյան Եվրոպայում ուսումնասիրվող՝ տարածաշրջանին առնչվող նյութին, ինչպես նաև ծանոթ լինելով տարածաշրջանի պատմական և իր ժամանակի քարտեզներին՝ նա փորձ է արել համեմատել իր տրամադրության տակ եղած տեղեկությունները և դրանց նկատմամբ ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում: Գիտական շրջանակներում ունեցած անձնական կապերի և նոր ծանոթությունների շնորհիվ՝ նա կարողացել է օգտվել նաև չիրատարակված նյութերից և պատմական փաստաթղթերից: Այս առումով հարկ է հիշատակել նրան մեծապես օժանդակած Մարի Բրոսսեի անունը<sup>2</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ ռուսական կառավարությունը անգնահատելի մեծ օժանդակություն է ցուցաբերել Դյու Բուային թե՛ բարոյական և թե՛ նյութական առումներով, սակայն նրա «Ճանապարհորդության» առաջին հատորը միայն 1937 թվականին է թարգմանվել ռուսերեն<sup>3</sup>, իսկ հաջորդ հատորները դեռևս սպասում են իրենց թարգմանչին: 2009 թ. Ուկրաինայում հրատարակվել է «Ճանապարհորդություն դեպի Ղրիմ» վերտառությամբ աշխատությունը: Այնտեղ թարգմանաբար ներկայացված են Դյու Բուայի աշխատության այն հատվածները, որոնք նվիրված են Ղրիմին<sup>4</sup>, իսկ 2009 թ. Ռուսաստանում առաջին անգամ «Ալֆարետ» հրատարակչությունը շատ շքեղ ձևավորմամբ վերատպել է Դյու Բուայի «Ատլասը»<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Sté u **Knoepfler D.**, Université, Histoire de l' Université de Neuchâtel, t. 1 : La première Académie, 1838-1848, Neuchâtel : Univ. de Neuchâtel [u.a.], 1988, p. 257-304 :

<sup>2</sup> Sté u **Монперэ Ф. Д.**, Путешествие вокруг Кавказа, у черкесов и абхазов, в Колхиде, в Грузии, в Армении и в Крыму, пер. с фр. Данкевич Н. А., Пушиной под ред. к.и.н. Фадеева А. В., (Грузинский филиал АН СССР. Труды института абхазской культуры, вып. VI. Свидетельства иностранцев об Абхазии), Сухуми, 1937, т. 1, от редакции:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Sté u **Монперэ Ф. Д.**, Путешествие в Крым, Серия «Старинный путеводитель», в пер. с фр., Фадеева Т., Симферополь, 2009:

<sup>5</sup> Sté u **Дюбуа де Монпере Ф.**, Атлас к путешествию по Кавказу, к черкесам и абхазам, в Колхиду, в Грузию, в Армению и в Крым, в 5 кн.-репринтное издание 1843 г., СПб., 2009:



*«Ճանապարհորդություն Կովկասում, չերքեզների ու արխագների մոտ, Կովխիդայում, Վրաստանում, Հայաստանում և Ղրիմում» ատլասը*

Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոն իր ճանապարհորդության ընթացքում (Ղրիմից նա մեկնում է Անդրկովկաս, նաև՝ Արևելյան Հայաստան) հավաքել է ահռելի քանակությամբ բազմաբնույթ նյութեր: Ուստի տրամաբանական է, որ նրանից պահանջվել են տարիներ՝ դրանց հիման վրա շարադրելու գրքեր և հրատարակելու դրանք համալրող և ամբողջական դարձնող շքեղ մի ատլաս:

Մեզ համար, բնականաբար, առաջին հերթին մեծ հետաքրքրություն է ներկայացնում Դյու Բուայի հեղինակած ու 1843 թ. հրատարակած «Ատլասը»: Ուստի հարկ ենք համարում այս հազվագյուտ աշխատությունը ներկայացնել հնարավորինս հիմնավոր և որոշակի մեկնաբանություններով:

Ատլասը բաղկացած է երկու հատորից՝ 42x58 սմ չափերով: Հատորները ստորաբաժանվում են հինգ բաժինների կամ թեմատիկ մասերի, որոնցից յուրաքանչյուրը մի ամբողջություն է, ինչը դյուրին է դարձնում աշխատությունն ընկալելու հավուր պատշաճի:

Առաջին հատորն սկսվում է տիտղոսաթերթին (տե՛ս թիվ 2 տիտղոսաթերթը) հաջորդող էջում Նիկոլայ I-ին ուղղված՝ հեղինակի շնորհակալական և երախտիքի խոսքով՝ ցարի ցուցաբերած բազմակողմանի օգնության համար, որը նրան հնարավորություն է ընձեռել իրականացնելու աննախադեպ այս ճանապարհորդությունը Ռուսական կայսրության տարածքում:

I. Ատլասի առաջին հատորը ներառում է երկու թեմատիկ մասեր.

1. Série de géographie ancienne et moderne ou I<sup>e</sup> Série (Անտիկ ու ժամանակակից աշխարհագրության մաս կամ I մաս):

Առաջին թեմատիկ մասը բաղկացած է անհրաժեշտ մեկնաբանություններով ուղեկցվող 21 անուն պլանշետներից (որոնցից 16-ը քարտեզներ են, իսկ հինգը՝ հատակագծեր): Քարտեզները ներկայացված են ժամանակագրական կարգով: Այստեղ հեղինակը փորձ է անում ցուցադրելու Հայաստանի, Կովկասի և Ղրիմի տարբեր տարածքների իր ժամանակի և անտիկ ժամանակաշրջանի քարտեզները, որոնց մի մասը Դյու Բուան ինքն է կազմել՝ օգտվելով տարբեր սկզբնաղբյուրներից, իսկ մյուս մասը՝ ներկայացրել է ըստ այլ հեղինակների:

Ներկայացված քարտեզներն են.

Պլ. (Պլանշետ) I - Carte générale de la Crimée et des Pays situés au Sud et au Nord du Caucase, Dressée et dessinée d'après les meilleures cartes Russes et d'après ses propres observations, par Frédéric Du Bois, 1841.

Պլ. II - Carte ancienne et moderne de l'extrémité de la presqu'île de Kertche, de celle de Taman, avec une partie de la Circassie, dessinée en 1835, par Frédéric Du Bois.

Պլ. III - Carte de la côte orientale de la Mer Noire du Cap Takil au Fleuve Phase (Rion), réduite de moitié d'après celle du Cap : Lieutenant E. Manganari, relevée en 1834, gravée en 1840.

ՊԼ. IV - Forteresse de Ghéлиндjik et ses alentours en 1833, par Frédéric Du Bois.

ՊԼ. V - Carte de l'Arménie Russe, dessinée d'après les meilleurs documents russes, par Frédéric Du Bois, 1844.

ՊԼ. VI - Carte de la contrée qui s'étend des monts Bechetau au monts Elbrous, en principalement des sources minérales qu'elle renferme, par Frédéric Du Bois.

ՊԼ. VII - Carte du bassin du lac Sévang en Arménie, relevée par les ingénieurs russes en 1832.

ՊԼ. VIII - Géorgie primitive avant l'invasion des Scythes (Khazares) selon les Origines Géorgiennes de Vakhtang V, publiées par J. de Klaproth, VI<sup>e</sup> Siècle avant J.C.

ՊԼ. IX - Scythie et Caucase, d'Hérodote d'Halicarnasse, en 446 avant J.C., composés par Frédéric Du Bois.

ՊԼ. X - Carte Du Périples dit de Scylax Caryandinien, Edition de David Hoeschel, Aug : Vind : 1600, Ce Périples ne remonte pas au delà du 3<sup>me</sup> Siècle av : J.C.

ՊԼ. XI - Tauride, Caucase et Arménie, de Strabon, mort en 29 de J.C., carte composée et dessinée par Frédéric Du Bois.

Ein weiterer Gründungs- und Vorstandsmitglied der DAG, Dr. Hajranjan,<sup>1</sup> war kurz vor dem Krieg in das Osmanische Reich zurückgekehrt, um seine hochbetagten Eltern noch einmal zu sehen. Nach Kriegsausbruch meldete er sich als Militärarzt zum Lazarettendienst. In Sivas richtete er Kurse für die Ausbildung von Pflegern ein, und pflegte viele Verwundete und an Seuche erkrankte Türken. Nachdem aber die Armenierverfolgung eingesetzt hatte, wurde er mit sämtlichen armenischen Hilfsärzten ins Gefängnis geworfen.

Als Lepsius sich beim Gespräch mit Kriegsminister Ismail Enver überzeugen musste, dass seine Absicht, Enver vom Plan des Völkermordes abzubringen, gescheitert war, wollte er wenigstens noch versuchen, Hajranjan zu retten. Lepsius bat den Kriegsminister, Hajranjans Freilassung und Rückkehr nach Deutschland zu erwirken. „Ich verbürgte mich persönlich für meinen Freund“, schrieb Lepsius rückblickend über seine Intervention, „dass ihm jede unbesonnene Handlung fern liege, und dass er seine Freilassung auf keine Weise missbrauchen würde“.<sup>2</sup>

Enver versicherte ihm, dass es ihm eine Freude wäre, seinen Wunsch zu erfüllen, dass er aber zuvor beim Wali von Sivas anfragen müsse, was gegen Hajranjan vorläge. Lepsius sagte, dass nichts anderes gegen ihn vorläge, als gegen alle armenischen Ärzte, die verhaftet worden seien, nämlich, dass er Armenier sei. Enver Pascha versicherte ihm noch einmal, dass „wenn die Antwort irgend es erlaubte, er für die Heimkehr meines Freundes sorgen würde“.<sup>3</sup> Nach Deutschland zurückgekehrt, erfuhr Lepsius aber, dass Hajranjan im Gefängnis ermordet worden sei.<sup>4</sup>

Lepsius stand in Konstantinopel unter anderem mit dem Aufseher des dortigen zentralen Gymnasiums Astwazatur Chatschatrjan in Verbindung, der für ihn einen Empfang beim Patriarchen Sawen vereinbarte.<sup>5</sup> Wie der Patriarch in seinen Memoiren erwähnte, verlief die Begegnung sehr herzlich und bewegend. „Dr. Lepsius traf pünktlich in Patriarchat ein“. Wir beide waren niedergedrückt. Ich, weil ich gegen die unsagbare Katastrophe an meinem Volk machtlos war, und Dr. Lepsius, weil seine Mission gescheitert war. Ich schilderte die unheilvolle Situation der Armenier im Inneren des Landes so ausführlich wie möglich, berichtete ihm über meine Bittgesuche an die türkischen Minister und den deutschen Botschafter, der uns versichert hatte, „dass nicht einmal ein Finger eines Armeniers bluten werde“, während das ganze Volk nun zu Tode verschickt wird. Auch Dr. Lepsius berichtete mir über seine an die türkischen Minister und den Botschafter Wangenheim gerichteten Anträge und sagte dabei, dass er nun verzweifelt zurückfahren müsse. Schluchzend, mit Tränen in den Augen sagte mir dieser deutsche Humanist: „Möge Gott Ihnen helfen!“ und nahm Abschied“.<sup>6</sup>

Auch Patriarch Sawen stellte Lepsius zahlreiche wichtige Informationen und

---

<sup>1</sup> Nach der Schätzung von Dr. Lepsius war er ein Mann „von friedfertigem und nachdenklichem Wesen, von großer Güte und zartestem Gemüt“. **Lepsius, J.**, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, in: „Der Orient“, 1919, S. 28.

<sup>2</sup> Ebd.

<sup>3</sup> Ebd.

<sup>4</sup> Ebd.

<sup>5</sup> Der armenische Patriarch in Konstantinopel Arschruni war Ende August 1913 abgetreten. Am 30. August wurde der Bischof Sawen zum Patriarchen ausgewählt, der vom 8. November sein Amt innehatte. **S. Papasjan, W.**, Meine Erinnerungen, Bd. 2, Beirut, 1952, S. 262.

<sup>6</sup> **Sawen Arkepiskopos**, Meine Patriarchenerinnerungen, Dokumentationen und Augenzeugenberichte, Kairo, 1947, S. 110-111.

Materialien zur Verfügung, die er in seinem „Bericht...“ verwendet hat.<sup>1</sup>

Im Jahr 1915 lernte Dr. Lepsius in Genf Jerwand Agathon kennen,<sup>2</sup> und es entstand eine freundschaftliche Beziehung. Agathon, der sich früher als Verwalter der Besitztümer von Nubar in Ägypten, dann auch als stellvertretender Vorsitzender der von Nubar gegründeten Armenischen Wohltätigkeitsvereinigung betätigt hatte, wohnte während des Weltkrieges in Genf,<sup>3</sup> wo er dem dortigen armenischen Gemeinde vorstand und sich publizistisch betätigte.<sup>4</sup> Während seiner Genfer Zeit bemühte er sich außerdem darum, mit Hilfe der europäischen Armenierfreunde ihre Regierungen auf Vernichtung der osmanischen Armenier aufmerksam zu machen<sup>5</sup> und organisierte zugleich Hilfsaktionen.<sup>6</sup>

Eines Tages erhielt Agathon über einen armenischen Freund in einem Tabaksack den von Lepsius veröffentlichten Geheimbericht, der in Deutschland bereits verboten war. P. Nubar bat ihn, das Buch auch in französischer Fassung zu veröffentlichen. Agathon beauftragte damit dem armenischen Franziskanermönch H. Mikaeljan, der sowohl des Deutschen als auch des Französischen mächtig war. Dann schickte Agathon die Übersetzung nach Paris, wo sie allerdings entsprechend der Forderung von Lepsius erst nach Kriegsende veröffentlicht wurde.<sup>7</sup>

---

<sup>1</sup> Der Todesgang des Armenischen Volkes..., S. 160, 172-173 u. a. Dr. Lepsius schrieb darin über den Patriarchen unter anderem das Folgende: „Der Patriarch Sawen ... hat alle in seiner Kompetenz liegenden Schritte getan, hat die unglückliche Lage seines Volkes während des Krieges den Ministern solange in ernsten Bitten und Beschwerden vorgetragen, bis sich die Türen vor ihm verschlossen und er sich von der völligen Ohnmacht seines Amtes überzeugen musste. Nicht einmal die geringsten auf die kirchliche Versorgung der Deportierten bezüglichen Wünsche, wie die Entsendung von Priestern an die Verschickungsorte mit den für die Erfüllung der kirchlichen Bräuche notwendigen kirchlichen Requisiten wurden gewährt. Er musste es ruhig mit ansehen, dass mit der Vernichtung des Volkes zugleich die Rechte des Patriarchats außer Kraft gesetzt und die kirchlichen Organisationen des armenischen Volkes vernichtet wurde“. Ebd., S. 171-172.

<sup>2</sup> **Agathon, Grigor J.**, Meine Erinnerungen, Genf, 1932, S. 205.

<sup>3</sup> Bis zum Ausbruch des Weltkrieges hielt sich Agathon, dessen Familie sich in Genf befand, üblicherweise nur in den Sommermonaten dort auf, wonach er wieder nach Ägypten zurückkehrte. Nach dem Kriegsausbruch übersiedelte er nach Genf, wo er im Laufe des Krieges lebte. Dann fuhr er als Mitglied der Delegation von P. Nubar (er hatte darin die Stelle des Sekretärs von Nubar inne) nach Paris, wo nach dem Waffenstillstand auch der Vorstand der Armenischen Wohltätigkeitsvereinigung aus Ägypten umgezogen war. Ebd., S. 204, 241.

<sup>4</sup> Es ist bezeichnend, dass Agathon in Genf neben anonymen Broschüren und Zeitungsberichten auch Artikel im Namen der schweizerischen Armenierfreunde Léopold Favre und Basterro Lui Ferrier veröffentlicht hat, natürlich, nachdem er das zuvor mit ihnen verständigt hatte. Er ging im Hinblick darauf davon aus, dass von ihm unterschriebene Veröffentlichungen den Türken zum Anlass für weitere Grausamkeiten gegen die Armenier dienen würden. Ebd., S. 219.

<sup>5</sup> Agathon hat nicht nur im Namen der armenischen Gemeinde in Genf Bittgesuche und Appelle an die Regierungen der Großmächte geschickt, sondern er diese in einzelnen Fällen durch die Unterstützung der Schweizer Armenierfreunde auch mit den Unterschriften der Vorsteher aller schweizerischen evangelischen Synoden hat versehen können. Das war beispielsweise bei seinem an den Präsidenten der USA gerichteten telegraphischen Appell der Fall, den er ihm über den amerikanischen Botschafter in Bern hat senden lassen. Ebd., S. 231-233. Er schickte am 10. Februar 1918 im Namen der armenischen Gemeinde in Genf ein bewegendes Bittgesuch auch an den deutschen Kaiser. Ebd., S. 227-228.

<sup>6</sup> Agathon wurde 1916 zum Vorsitzenden des Vereins ausgewählt, der sich mit der Organisation und Ausführung der Hilfsaktionen befasste. Ebd., S. 215. Nach dem Waffenstillstand engagierte er sich in der Armenischen Nationaldelegation als Sekretär Nubars.

<sup>7</sup> Agathon arbeitete in Genf unter anderem auch mit Dr. A. Fischer zusammen, der sich als Arzt in den Jahren 1905-1914, auch eine Zeit lang im Jahre 1919 in der Station der DOM in Urfa betätigt hatte. Ebd., S. 219-220.

Wie schon erwähnt, gehörte dem Vorstand der DAG auch Awetik Isahakjan an,<sup>1</sup> der im Frühjahr 1914 aus Genf nach Berlin eingeladen wurde, um die Schriftführung für den armenischen Teil der Zeitschrift „Mesrop“ zu übernehmen.<sup>2</sup> Er stellte dabei Kontakte zu dem herausragenden Dichter Siamanto (Atom Jartjanjan) und anderen armenischen Autoren her, die er einlud, für die Zeitschrift zu schreiben.<sup>3</sup> Ende August 1914 kehrte Isahakjan, der unter anderem die russische Staatszugehörigkeit besaß, nach Genf zurück<sup>4</sup> und später nach Venedig. Er blieb aber mit Lepsius und DAG auch weiterhin in Kontakt. Anfang Mai 1919 bzw. noch vor der Veröffentlichung der Hauptauflage von „Deutschland und Armenien...“ hat Lepsius neben den an die Versailler Friedenskonferenz, an das anglo-armenische Komitee, sowie an die Baseler und Genfer Komitees geschickten etwa 50 Exemplaren durch A. Isahakjan auch Exemplare an die beiden armenischen Delegationen in Paris versandt, die dort für die Rechte des armenischen Volkes kämpften.<sup>5</sup>

Als Lepsius im Juni 1917 offiziell aus seiner Deutschen Orient-Mission ausschied, besaß er bis zum Dezember 1917 für sich und seine große Familie keine Einkünfte. In dieser Zeit unterstützten ihn in seiner vielfältigen Tätigkeit armenische Freunde, vor allem Armen Mserjan und der Vorsitzende des Comité arménien de La Haye, Mkrtitsch Mhirdatjanjan finanziell und durch ihre Verbindungen.<sup>6</sup>

Am 15. Mai 1921 wurde Talaat Pascha in Berlin in der Hardenbergstraße von einem jungen Armenier, Soghomon Tehlirian, erschossen.<sup>7</sup> Lepsius, der auf Antrag des Geheimrats von Gordon als Sachverständiger zum Prozess geladen war, wurde vom Vorsitzenden des Gerichts am ersten Prozesstag, dem 2. Juni 1921, zum Umfang und dem Ablauf der Deportationen vernommen.<sup>8</sup> In seiner Sachverständigenaussage stellte Lepsius so ausführlich wie möglich die betreffenden Hergänge dar, indem er zugleich eingehende Erklärungen zur Armenischen Frage, dem politischen Hintergrund der Deportationen und ihren Folgen machte.<sup>9</sup>

---

<sup>1</sup> Goltz, H., Zwischen..., S. 879.

<sup>2</sup> Isahakyan Wigen, Mein Vater, Jerewan, 2000, S. 38.

<sup>3</sup> Ebd..

<sup>4</sup> A. Isahakjan besaß auch einen persischen Pass, den ihm der persische Botschafter in Berlin Howhannes Chan Masehjan, ein Armenier und guter Freund von Isahakjan, zur Verfügung gestellt hatte. Isahakjan lebte in dieser Zeit in Genf unter dem Decknamen Awetis Bajaset. S. Isahakjan, Awik, Guten Tag, Meister!, Jerewan 2008, S. 37.

<sup>5</sup> Goltz, H., Zwischen..., S. 879. Vgl. Die Armenische Frage..., S. 603.

<sup>6</sup> Goltz, H., Zwischen..., S. 876.

<sup>7</sup> Tehlirian war Mitglied der geheimen armenischen Organisation „Operation Nemesis“, die die Hauptverantwortlichen für den Völkermord an den Armeniern verfolgte und tötete. Sie ist in Reaktion auf die Straflosigkeit der Täter des Genozids entstanden, denn obwohl diese, zumeist Mitglieder des von 1908 bis 1918 regierenden jungtürkischen Komitees für Einheit und Fortschritt, noch im Frühjahr 1919 in ihrer Heimat wegen des Völkermords angeklagt und zum Tode verurteilt worden waren, geschah das aber in den meisten Fällen in ihrer Abwesenheit, weil sie bereits ins Ausland geflüchtet waren. Sie freuten sich dann ihrer Straflosigkeit, da die Entente-Mächte untätig blieben. Zur ausführlichen Information über die genannte Organisation und ihre Aktivitäten s. in: Hofseld, Rolf, Operation Nemesis, Köln, 2005.

<sup>8</sup> Lepsius teilte dabei mit, dass schätzungsweise 1.400.000 Armenier deportiert worden seien. S. Gutachten von Dr. Johannes Lepsius, in: „Der Orient“, 1921, S. 89.

<sup>9</sup> „... In einem von Talaat unterzeichneten Befehl“, sagte Lepsius unter anderem, „kommt das Wort vor: „Das Verschickungsziel ist das Nichts“. Im Sinne dieses Befehls wurde dafür gesorgt, dass von der gesamten Bevölkerung, die aus den ostanatolischen Provinzen nach Süden transportiert wurde, etwa nur 10 Prozent am Verschickungsziel ankam. Die übrigen 90 Prozent sind schon unterwegs ermordet worden



Lepsius' Aussage besaß große Überzeugungskraft, denn obgleich die Staatsanwaltschaft die für vorsätzlichen Mord vorgesehene Todesstrafe beantragt hatte, sprachen die Geschworenen Tehlirjan wegen nicht erwiesener Schuldfähigkeit frei.<sup>1</sup> Tehlirjan schrieb später in seinen Erinnerungen über Lepsius das Folgende: „Im Alter von über 60 Jahren, aber eine schöne Stirn, blaue Augen, edler Mund, zum Teil ergrauter kurzer Bart, straffe und strenge Wangen. So war Dr. Lepsius. Die Erinnerung an seine Bemühungen und Interventionen für die Armenier war noch lebendig, und die Dankbarkeit zu ihm sehr groß. ... Er hat erheblich zur Aufklärung der Wahrheit beigetragen, indem er unmittelbar nach dem Waffenstillstand in einem Buch die deutschen diplomatischen Aktenstücke zur Deportation und dem Völkermord veröffentlichte. Jetzt begann er, seine blauen Augen durch die Brille auf den Vorsitzenden richtend, zu sprechen.“<sup>2</sup>

Die Rede von Lepsius war so informativ, dass die anschließende Aussage des Feldmarschalls Otto Liman von Sanders, der die türkische Regierung zu entlasten und die begangenen Verbrechen den örtlichen Behörden zu zuschreiben versuchte, gar nicht überzeugen konnte. Dementsprechend hatte auch der Staatsanwalt, der, sich auf die Aussagen von Liman von Sanders stützend, für Tehlirjan Todesstrafe beantragte, keinen Erfolg. „Nach der Rede von Sanders entstand solch eine Situation, dass nicht ich, sondern Talaat und er bestraft werden mussten“, schrieb Tehlirjan zurückblickend. „Seine zusammenhangslose, formale, herzlose, und, was das wichtigste ist, unrichtige Darstellung hatte keinen Einfluss, denn nicht nur das Gericht, sondern auch die urteilsfähige Zuhörerschaft begriff genau, dass man für „militärische Zwecke“ ein ganzes Volk nicht vernichten darf, dass es nicht ehrlich ist, die Schuld der Befehlshaber den unteren Rängen zu zuschreiben, die die Befehle ausführten, ferner, dass es leicht möglich gewesen wäre, dem Morden vorzubeugen, wenn es wahrlich um eine Deportation ginge, dass es keinen Sinn hat, mit einem Vorbehalt den Deportationsbefehl zu beurteilen und auf seine „schlechte Ausführung“ hin zu deuten, dass letztendlich die vielen Hunderttausende Kinder und Frauen nicht Schuld an den verlogenen politischen Geschehnissen waren.“<sup>3</sup>

Lepsius' Aussage wurde begreiflicherweise von Armeniern mit großer Dankbarkeit aufgenommen. „Lieber Dr. Lepsius“, schrieb ihm Poghos Nubar in einem Brief vom 6.

---

oder, soweit nicht Frauen oder Mädchen von den Gendarmen verkauft und von Türken und Kurden verschleppt wurden, durch Hunger und Erschöpfung umgekommen. Die Armenier, die aus Westanatolien, Kilikien und Nordsyrien an den Rand der Wüste befördert wurden, bildeten in den Konzentrationslagern nach und nach eine beträchtliche Menschenmenge von einigen hunderttausend. Diese sind dann größtenteils durch systematische Aushungerung und periodische Massakres vernichtet worden. So oft sich nämlich die Konzentrationslager durch neue Züge füllten, so dass für die Menschenmengen nicht mehr Raum war, hat man sie truppweise in die Wüste geführt und dort abgeschlachtet...“ Ebd. Lepsius machte zugleich eingehende Erklärungen über das „diplomatische Spiel“ der Großmächte, in dem „die Armenier immer Mittel zum Zweck“ geworden seien, und das zu der zuerst vom Abdul Hamid und dann von der jungtürkischen Regierung geplanten und durchgeführten Vernichtung des armenischen Volkes beigetragen habe. Ebd. S. 88-95: Er legte dem Gericht dann mehrere Erlasse von Talaat in Sachen der Deportation des armenischen Volkes vor, die das Gesagte dokumentierten. S. Erlasse von Talaat Pascha in Sachen der Deportation des armenischen Volkes, in: „Der Orient“, 1921, S. 72-80.

<sup>1</sup> Lepsius, J., Der Prozess Teilirian-Talaat, in: „Der Orient“, 1921, S. 71. Vgl. Hofmann, Tessa (als Hrsg.): Der Völkermord an den Armeniern vor Gericht: der Prozess Talaat Pascha, 3. ergänzte und überarbeitete Auflage, Göttingen 1985,

<sup>2</sup> Tehlirjan, Soghomon, Erinnerungen, Kairo, 1956, S. 366.

<sup>3</sup> Ebd., S. 381-382.

Juni 1921, „ich las in den Zeitungen Ihren während des Prozesses von Tehlirjan erstatteten Bericht. Sie haben mit dem ehrlichen Gefühl der Gerechtigkeit und Aufrichtigkeit die auf Befehle von Enver und Talaat Paschas begangenen Verbrechen dargestellt, um den Grund der Tat des vor dem Berliner Gericht Angeklagten zu klären. Ich erwartete von Ihrem großen Herzen nichts anderes, indem ich mich an die Tapferkeit und Selbstlosigkeit erinnerte, womit Sie die Unterstützung der Armenier übernommen haben, und zwar in einer Zeit, wenn solch ein Unternehmen vor allem für Sie gefährvoll war. Die Freilassung unseres Landsmanns hat wieder einmal bewiesen, dass es Richter in Berlin gibt, und ich habe keinen Zweifel daran, dass Ihre Einschaltung zur Klärung der Wahrheit und zur Regung des Gewissens derjenigen, die Tehlirjan für unschuldig erklärten, erheblich beigetragen hat. Meinerseits, im Namen der Nationaldelegation sowie aller Armenier möchte ich Ihnen von ganzem Herzen unsere tiefe Dankbarkeit für diesen Ihren neuerlichen Einsatz zugunsten der Armenischen Frage zum Ausdruck bringen. Nehmen Sie bitte, lieber Lepsius, meine besten Gefühle an!<sup>1</sup>

Die Erinnerungen Tehlirjans weisen unter anderem darauf hin, dass die deutsche Öffentlichkeit durch den „Bericht über die Lages des armenischen Volkes in der Türkei“ ziemlich gut informiert war. Der Mann, der Tehlirjan zum ersten Mal verhörte, verhielt sich zu ihm in Anwesenheit eines Verwandten Talaats streng und kalt. Nachdem dieser sich aber entfernt hatte, sei er milder geworden und habe über die armenischen Massaker gesprochen, wobei er den Namen Lepsius erwähnte.<sup>2</sup> Der deutsche Priester, der Tehlirjan im Gefängnis besuchte, und dessen Aufgabe war, die Gefangenen zu trösten bzw. ihnen das Evangelium nahe zu bringen, war sich ebenso durch die Veröffentlichungen von Lepsius der gegen die osmanischen Armenier begangenen Verbrechen gut bewusst.<sup>3</sup>

Auch in den Nachkriegsjahren stand Lepsius mit seinen armenischen Freunden in Verbindung.<sup>4</sup> In der Annahme, dass Deutschland zu einem Zentrum sowjetrussischer Aktivitäten geworden war, wollte die von der Partei Daschnakzutjun dominierte Delegation der bereits nicht mehr existenten Republik Armenien im Sommer 1922 ihre Exiltätigkeit nach Deutschland verlagern und beauftragte ihr Mitglied Wahan Papasjan, der noch Ende Mai nach Berlin gefahren war, damit, in Berlin zu bleiben. Er sollte durch die Unterstützung Deutschlands Gebietsabtretungen von der Türkei erlangen, sich in Berlin auch mit den Bolschewiken in Verbindung setzen und mit ihnen über eine Zusammenarbeit der Partei Daschnakzutjun verhandeln.<sup>5</sup> In Berlin riet Greenfield Papasjan, vor allem Lepsius zu treffen, der eine Stelle im Auswärtigen Amt gefunden hatte, und bei ihm vorzufühlen, wie das Auswärtige Amt zu der genannten Frage stand.<sup>6</sup>

Wie oben berichtet wurde, waren Lepsius und Papasjan alte Bekannte. „Wir trafen uns mit ihm in einem kleinen Raum des Auswärtigen Amtes“, so Papasjan. „Er grüßte mich sehr bewegt und mit starkem Schmerzgefühl und sagte mir mit heiserer

---

<sup>1</sup> Johannes Lepsius und das armenische Volk, Jerewan 1998, S. 46-47.

<sup>2</sup> **Tehlirjan, S.**, Erinnerungen, Kairo 1956, S. 314.

<sup>3</sup> Ebd., S. 323.

<sup>4</sup> Wie Dr. Axel Meißner darauf hingewiesen hat, ging selbst die Gründung der Ligue Internationale Philarmeniene (kurz: LigPhilarm), die auf dem philarmenischen Kongress in Genf erfolgte, auf eine Anregung von Lepsius zurück, der schon während des Krieges von Holland aus Poghos Nubar einen Statutenentwurf übersandt hatte. S. **Meißner, A.**, Martin Rades..., S. 272.

<sup>5</sup> **Papasjan, W.**, Meine Erinnerungen, Bd. 3, Kairo 1957, S. 188.

<sup>6</sup> Ebd., S. 191.

Stimme: „Es ist schade um Ihr wunderbares christliches Volk... Sie sind den „zivilierten“ Raubtieren zum Opfer gefallen“.<sup>1</sup> Papasjan zufolge glaubte Lepsius nicht daran, dass die deutsche Regierung die Wünsche der exilarmenischen Regierung unterstützen werde. „Deutschland befindet sich derzeit inmitten von solchen politischen und wirtschaftlichen Herausforderungen“, sagte er, „dass es kaum imstande ist, Ihnen die erwünschte Hilfe zu leisten“.<sup>2</sup> Er empfahl Papasjan, den Vorsitzenden der Deutsch-türkischen Gesellschaft Dr. Aschke aufzusuchen, der für die Türken eine Autorität darstelle, und außerdem den Abteilungsleiter für Orientalische Angelegenheiten im Auswärtigen Amt Blücher zu treffen.<sup>3</sup>

In der Zeit der Inflation, als man mit ausländischer Währung in Deutschland sehr billig leben konnte, überlegte Lepsius, mit ausländischen Geldern armenische Waisenkinder in Deutschland unterzubringen und sie dort zu erziehen. „Am Jahresanfang 1923 trug man sich ernstlich mit einem solchen Plan“, schrieb dazu der langjährige, treue Mitarbeiter von Lepsius Richard Schäfer.<sup>4</sup> Im Januar 1923 fand in Lausanne eine Besprechung betreffs der armenischen Waisenhäuser statt.<sup>5</sup> Wie die armenischen Quellen berichten, meldete sich bei der Besprechung auch der Mitarbeiter von Lepsius R. Schäfer, der den Teilnehmern im Auftrage von Lepsius ein Programm zur Unterbringung von 400 Waisenkindern in Berlin vorlegte. Im Namen von Lepsius teilte Schäfer mit, dass vorgesehen sei, für diesen Zweck ein Gebäude<sup>6</sup> zusammen mit einem Grundstück zu kaufen, was 6000 Dollar kostete, und die jährlichen Kosten des Waisenhauses 16.000 Dollar betragen. Zur Erfüllung des Plans bitte Dr. Lepsius die armenische Seite um eine einmalige Zahlung von 6000 Dollar, während er die anderen Kosten von den in Amerika ansässigen Deutschen zu erhalten hoffe. Am Abend des gleichen Tages traf Schäfer erneut Gabriel Noratunkjan,<sup>7</sup> der sich als Kuratoriumsdirektor der Sanasarjan gern bereit erklärte, diese Summe Lepsius aus den Mitteln des Kuratoriums zur Verfügung zu stellen und mit seiner Hilfe in Berlin ein Waisenhaus zusammen mit der Schule zu errichten. Schäfer fuhr dann nach Berlin zurück. Es sollten Verhandlungen zur Umsetzung dieses Plans beginnen,<sup>8</sup> aber es kam dazu nicht. Schäfer geht in seinem Buch auf seinen Besuch und die getroffenen Vereinbarungen gar nicht ein, sondern teilt lediglich mit, dass „man doch wieder von diesem Plan abgekommen ist, weil man mit ihm vom Auslande abhängig geworden wäre, und weil gewisse Schwierigkeiten der herrschenden Lebensmittelrationierung bestanden, und schließlich auch der Gedanke Widerstand fand, eine größere Zahl von ausländischen Kindern dem deutschen Lebensverbände einzufügen und damit ihrer orientalischen Lebenshaltung zu entfremden“.<sup>9</sup>

---

<sup>1</sup> Ebd..

<sup>2</sup> Ebd..

<sup>3</sup> Ebd.. Papasjan machte alles so, wie ihm Dr. Lepsius empfohlen hatte. Er konnte bei seinem Vorstoß im AA aber keinen Erfolg erzielen.

<sup>4</sup> Schäfer, R., Geschichte..., S. 117.

<sup>5</sup> An der Besprechung nahmen Wickri, Berri, Mngomer, Künzler und von armenischer Seite Noratunkjan, Khatitsjan und Phaschaljan teil. S. Papasjan, W., Meine Erinnerungen, Bd. 3, Kairo, 1957, S. 292-293.

<sup>6</sup> Es bestand aus 60 Räumen.

<sup>7</sup> G. Noratunkjan war in den Jahren 1912-1913 der Außenminister des Osmanischen Reiches gewesen.

<sup>8</sup> Ebd., S. 293.

<sup>9</sup> Schäfer R., Geschichte..., S. 117.

Lepsius' Plan kam bald aber zu einer anderen Lösung. Im August 1924 war Lepsius nach Genf gefahren, um bei der am 2. September dort tagenden internationalen Armenierkonferenz einen Vortrag zu halten. Dort kam er in Verbindung mit Vertretern der Near East Relief, die große Hilfsarbeit für die armenischen Waisen leistete, und fasste den Entschluss, den Unterhalt und die Pflege von 400 Waisen zu übernehmen.<sup>1</sup>

Zum Schluss soll noch hinzugefügt werden, dass der Umstand, dass Lepsius vorwiegend mit Angehörigen der Partei Daschnakzutjun Kontakte gehabt hat, nicht an einer sonderlichen Sympathie für diese Partei liegt, sondern ausschließlich daran, dass vor allem Daschnakzutjun im Vordergrund des damaligen politischen Lebens der Armenier gestanden hat. Es gab mit Sicherheit auch weitere Armenier, mit denen Lepsius persönliche Kontakte hatte. Zu ihnen zählten beispielsweise Melkon Krischtschjan, Artasches Abeghjan, Kostan Sarjan, Arschak Tschopanjjan und andere. Da es aber immer noch nur sehr wenig betreffs ihrer Beziehungen bekannt ist, wird jetzt darauf nicht eingegangen.

### **Աշոտ Հայրունի – Յոհաննես Լեփսիուսի կապերը հայ գործիչների հետ**

Հոդվածում լուսաբանվում են հայ ժողովրդի մեծ երախտավոր դր. Յոհաննես Լեփսիուսի և այն հայ հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչների առնչությունները, որոնք կարևոր դերակատարում են ունեցել Լեփսիուսի և նրա երկու կազմակերպությունների՝ Գերմանա-հայկական ընկերության ու Գերմանական արևելյան առաքելության երկարամյա հայանպաստ գործունեության ծավալման ու զարգացման հարցում: Երկկողմ կապերի և համագործակցության այդ հարուստ տարեգրության քննական լուսաբանումը միաժամանակ հնարավորություն է ընձեռում լուսաբանելու կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ, որոնք տևականորեն քննարկման առարկա են դարձել ինչպես հայ, այնպես էլ գերմանական պատմագրության մեջ՝ առանց ամբողջական պարզաբանում ստանալու. գործիչնակ, թե ինչպիսի կապեր է ունեցել Լեփսիուսը հայ գործիչների հետ, որոնք են եղել նրանց գործունեության հիմնական աղբյուրները, որպիսի ընթացք և արդյունքներ է ունեցել նրանց համագործակցությունը և այլն: Այդ և հարակից հարցերի քննական լուսաբանումը, բնականաբար, ոչ միայն նպաստում է համապատասխան պատմական իրողությունների առավել հանգամանալից գնահատմանն ու արժևորմանը, այլև հնարավորություն է ընձեռում ամբողջացնել և ճշգրտել Լեփսիուս մարդասերի, հայանվեր մեծ գործի և գորեղ անհատակաւության մասին առայսօր ի հայտ եկած ըմբռնումները:

### **Ашот Айруни – Связи Иоганнеса Лепсиуса с армянскими деятелями**

В статье освещаются вопросы, связанные с контактами верного друга армянского народа доктора Иоганнеса Лепсиуса с армянскими общественными, политическими и культурными деятелями, сыгравшими важную роль в многолетней арменофильской деятельности Лепсиуса и двух созданных им организаций – Германско-армянского общества и Немецкой восточной миссии. Критический обзор этой богатой летописи двусторонних связей и сотрудничества дает возможность осветить ряд важных вопросов, которые исследовались как в армянской, так и в немецкой историографии, однако не получили целостной интерпретации. Это касается, в частности, контактов Лепсиуса с армянскими деятелями, основных точек соприкосновения их деятельности, процесса и результатов их сотрудничества и др. Критическое освещение указанных и смежных с ними вопросов не только способствует возможно более целостной оценке соответствующих исторических фактов, но и предоставляет возможность уточнить и обобщить существующие на сегодняшний день представления о деятельности выдающегося гуманиста Иоганнеса Лепсиуса.

<sup>1</sup> Ebd.. Vgl. **Papasjan, W.**, Meine Erinnerungen, Bd. 3, Kairo, 1957, S. 170-172.

**ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ**

*Բանայի բառեր – Սահմանադրության վերահռչակում, Օսմանյան կայսրության խորհրդարան, պատերազմական նախարարություն, օսմանյան բանակ, կայսերական իրադե, զինվորագրություն, Աբդուլ Համիդ*

XIX դարում լուրջ փոփոխություններ կատարվեցին Օսմանյան կայսրության ռազմական համակարգում: Բազմաթիվ գործոններ ստիպեցին վերակազմավորել կամ ամբողջությամբ լուծարել զինվորական որոշ կառույցներ՝ որոնք մինչ այդ բանակի հիմնական մասն էին կազմում: Դրա հետ մեկտեղ՝ սուլթանները սկսեցին խորհել բանակը համալրելու այլընտրանքների մասին: Դեռևս Մահմուդ II-ը (1808-1839) մտադրվել էր կայսրության բոլոր հպատակ ժողովուրդների համար պարտադիր զինվորագրության օրենք սահմանել:

1843 թ. սեպտեմբերին ընդունվեց զինվորական բարեփոխումների մասին նոր օրենք, ըստ որի՝ օսմանյան բանակը վերակազմավորվեց եվրոպական բանակների օրինակով: Այն բաժանվեց երկու հատվածի՝ գործող բանակի (նիզամիե) և պահեստային բանակի (ռետիֆ), որոնց զորակոչիկները ծառայում էին համապատասխանաբար՝ հինգ և յոթ տարի ժամկետներով: Ընդունված նոր օրենքի հիման վրա կազմավորվեց օսմանյան հինգ բանակ<sup>1</sup>:

1864 թ. Կ. Պոլսում սկսեց գործել Փանկալթըրի զինվորական վարժարանը (Հարբիյե), սակայն միայն մուսուլմանների համար: Սուլթան Աբդուլ Ազիզի II-ի (1861-1876) հրամանով՝ որպես փորձ հինգ հայ երտասարդների (Գաբրիել Էքնայան, Կարապետ Բարադամյան, Սիմոն Տատյան, Հովյան և Սինարյան) թույլատրեցին ընդունվել այդ վարժարան, որոնց մտադիր էին բարձրացնելու մինչև հազարապետի-բինբաշիի աստիճանի: Բայց հետո հրաժարվեցին այդ մտադրությունից, և նրանց հարյուրապետի-յուզբաշիի աստիճանից բարձր կարգավիճակ չշնորհվեց: Նրանք օսմանյան բանակի առաջին և վերջին զինվորականներն էին<sup>2</sup>: Սակայն Խ. Սրաջյանը, վկայակոչելով այս փաստը, գրում է որ «...մինչև հարյուրապետութեան աստիճան խոստացան, հայերն ալ մէկ մէկ պատրուակով հրաժարեցան»<sup>3</sup>:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ օսմանյան պետությունը քրիստոնյաներից ևս զինվորներ պահանջեց: Հայոց ազգային

<sup>1</sup> Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 11:

<sup>2</sup> **Աճառյան Հր.**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999, էջ 15:

<sup>3</sup> **Սարաջեան Խ.**, Հայոց դերը Թուրքիոյ մէջ, Երևան, 2000, էջ 25:

երեսփոխանական ժողովում այս հարցի քննարկումը վեճ հարուցեց. Մաթևոս Իզմիրլյանը և Խորեն Նար բեյը պնդում էին, թե ընդհանուր զինվորագրությունը պահանջում է պետության մեջ հավասարություն: Ուստի նրանք հարց էին բարձրացնում, թե Օսմանյան կայսրությունում հավասարության բացակայության պայմաններում արդյոք նպատակահարմար է այդ պետությանը զինվորներ տրամադրել: Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանն ընդունեց գլխահարկի փոխարեն զինվորներ տալու տարբերակը, սակայն պայմանով, որ հայերը թուրք զինվորների հետ չխառնվեն, այլ ընդգրկվեն առանձին գնդում՝ ունենալով դրոշակ և հրամանատար<sup>1</sup>: «Դուրը կ'ուզեր օսմանեան բանակին մեջ համեմատաբար մեծ թուով զօրք ունենալ, Ներսես Վարժապետեան ալ կ'ուզէր հայ զինվորին ծառայութիւնը մատնանիշել»<sup>2</sup>, – նկատում է Խ. Սարաջյանը:

1877 թ. դեկտեմբերի վերջերին Հայոց ազգային ժողովը մերժեց կայսերական իրադեն, որով 17–45 տարեկան բոլոր քրիստոնյաները բանակ էին գորակոչվում: Ճառով հանդես եկած Խորեն Նար բեյը պարզաբանում էր, որ հայ զորակոչիկներին առանց նախնական զինվորական ծառայության ու պատրաստության թշնամու դեմ ուղարկելը նշանակում է նրանց սպանդանոց ուղարկել<sup>3</sup>:

Թուրքական մամուլում հայերին անվանեցին «դավաճան և ապերախտ», մանավանդ որ հունաց պատրիարքը սուլթանին տվել էր իր համաձայնությունը<sup>4</sup>: Հարկ ենք համարում նշել, որ Հր. Աճառյանը վիճարկում է այս հանգամանքը և նշում, որ հույները ևս մերժել էին այդ առաջարկը<sup>5</sup>:

Հետագայում նույնպես օսմանահպատակ քրիստոնյաների զինվորագրության հարցը շարունակում է մնալ օրակարգում: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը (1876–1909), որը ոչ մուսուլման ժողովուրդների զինվորագրությունը ինքնասպանության հավասար բան էր համարում և մանրամասնում, որ եթե թուրքերն իբրև «տիրող տարր» օսմանյան բանակում հավասարություն հաստատեն օտար հավատացյալների հետ, ապա «ի վերջոյ պիտի գար նաեւ կարգը «յունական», «պուլկարական» բանակներու»<sup>6</sup>:

1908 թ. Օսմանյան Սահմանադրության վերահռչակումից հետո հայերը և իսլամ չղավանող՝ կայսրության մյուս ժողովուրդները պահանջեցին զինվորագրվելու և հավասար իրավունքներով ու պարտականություններով օս-

<sup>1</sup> Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 15:

<sup>2</sup> **Սարաջեան Խ.**, նշվ. աշխ., էջ 25:

<sup>3</sup> Տե՛ս **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան, 1878, էջ 119:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 120:

<sup>5</sup> **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 15:

<sup>6</sup> **Շաղրճեան Գ.**, Ապտիւլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Յարակից Օսմանեան ևս հաստատութիւններ, Պէյրուժ, 1980, էջ 832:

մանյան բանակում ծառայելու թույլտվություն: Սակայն քրիստոնյաներին զինվորագրելու հարցում թուրքական կառավարությունը տատանվում էր: Այս խնդրի լուծման հետ կապված՝ կառավարությունը երկու մտահոգություն ուներ, քանզի որ դրանով նախ պետությունը գրկվում էր զինվորական տուրքից գոյացող հասույթից<sup>1</sup>, բացի դրանից՝ ծառանում էր նաև քրիստոնյաների նկատմամբ անվստահության խնդիրը:

Զինվորագրության հարցը հայկական շրջանակներում ևս լուրջ վեճերի տեղիք է տվել բազմաթիվ ժողովների և հանդիպումների ընթացքում: Ըստ օսմանյան բանակի հայազգի սպա Գ. Սյուրմենյանի վկայության՝ «պահպանողական տարրը հակառակ էր զինուորագրութեան, իսկ երիտասարդութիւնը՝ կողմնակից էր: Ի վերջոյ, օրէնքն ալ օգնեց վերջիններուն եւ կառավարութիւնը 1910էն սկսաւ զինուոր առնել հայերէն»<sup>2</sup>:

Նման հանդիպումներից թերևս ամենանշանակալին 1909 թ. մարտին Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցածն էր, որը նախագահել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գրիգոր Չոհրապը: Մեկնաբանելով հավաքույթի նպատակը՝ նա շեշտել է զինվորագրության անհետաձգելի անհրաժեշտությունը. «Սահմանադրութեան իմաստին համաձայն Հայերը կ'ուզեն զինուորագրուիլ, Հայրենիքին պաշտպանութեան համար իրենց անձնուէր գործակցութիւնը բերել, վերջապէս ստանալ ազգերու հաւասարութեան իրաւունքն, որ կ'ըլի Սահմանադրութենէն: Այն օրը, որ ամէն ազգէ բանակ մը կազմուի, այն օրը Օսմանեան Տէրութիւնը բնավ վախ պիտի չունենայ օտար հարձակումներէ...»<sup>3</sup>: Նրանից հետո էլույթ է ունեցել Պետրոս Էֆ. Հալաճյանը, որը ևս անհրաժեշտ է համարել հայոց զինվորագրությունը,

---

<sup>1</sup> Բեդել-ի Ասքերիե (արաբերեն՝ փոխանակություն և զինվոր, զորք, զորախումբ բառերից): Թուրքերենում «բեդել» նշանակում է նաև զին, բառացի՝ զինվորական զին: Ըստ թուրքերենի՝ բանակից «ազատվելու համար հարկ, որ վճարում են ոչ մուսուլման օսմանցիները հին իրավակարգի տակ»: Սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև որպես ասքեր բեդելիե, բեդելի ասկեր, բեդելի իսկերիե և բեդելիո, որոնք նույն անվան աղավաղված տարբերակներն են: Հիշատակվում է նաև որպես բաշխարաճ: Մինչև 1855 թ. վերանվանումը հարկը կոչվել է ջիզիլե: 20-ից մինչև 40 տարեկան մուսուլմանները համարվել են զինապարտ, ոչ մուսուլմանները զինվորական ծառայության փոխարեն վճարել են 5.000 դուրուշ: Ոչ մուսուլմաններից այս գումարի գանձումը կատարել են պետական հարկահավաքները: Զինվորական հարկերը բաշխվել են ու գանձվել բոլոր ոչ մուսուլման հպատակներից, բացառությամբ հոգևորականների: 1689-1691 թթ. ջիզիլեն հավասար էր 12, 24 և 48 դիրհեմ արծաթի: Ըստ սկզբնաղբյուրների՝ բեդել-ի ասքերիեն տատանվել է 20 և 37,5 դուրուշի միջև: XIX դ. 80-ական թթ. այն դարձել է 37, 25 դուրուշ, որը սակայն գանձվում էր 38 դահեկանի հաշվով: 1900 թ. մարտի 1-ին կրել է 6 %-ի հավելում: Մինչև 1908 թ. հասել է 54 դուրուշի: Տե՛ս **Լեոն Վարդան**, Հարկերը Օսմանեան և Պարսկական կայսրութիւններուն մէջ, Պէրոյթ, 2012, էջ 261-265, **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թ.), Երևան, 2002, էջ 173-175:

<sup>2</sup> **Միւրմենեան Գ.**, Տաճկահայ զինուոր եւ զինուորականութիւնը նախ տաճկական ապա հայկական բանակներուն մէջ, Պէրոյթ, 1967, էջ 12:

<sup>3</sup> «Բիւզանդիոն», թիւ 3.797, Կ. Պոլիս, 1909, փետրուար 27-12 մարտ:

որպեսզի ազգը կատարելապես տիրանա իր սահմանադրական իրավունքին և ոչ թե ստրուկ դառնա՝ զրկվելով զինվորական պարտականությունից: Այնուհետև «Միթինկի» որոշումները ամփոփվել են բանաձևի մեջ և ներկայացվել Օսմանյան խորհրդարանին:

Քանի որ «Գանունը Էսասին» (Սահմանդրությունը) բոլոր օսմանահպատակներին զինվորական ծառայություն կատարելու հնարավորություն էր ընձեռում, ուստի տարակույս չկար, որ Երեսփոխանական ժողովը կվավերացներ զինվորագրության նոր օրենքը: «Վարչապետի կողմէ ըստ այսմ հրամայած է, որ այժմեն պատրաստութիւն տեսնուի ոչ-իսլամայ զինուորագրութեան համար»<sup>2</sup>: Պատերազմական նախարարությունը բոլոր հրամանատարներին կարգադրել է մարդահամար կատարող պաշտոնյաներից պահանջել զինվորական ծառայության տարիքի հասած, սակայն զինվորական պարտքը չկատարած իսլամ չդավանողների ցուցակը: Հարկ է եղել փոփոխություններ կատարել նաև ռետիֆների ցուցակներում<sup>3</sup>:

1910 թ. օգոստոսին և սեպտեմբերին հրատարակվել է գորակոչի հրամանը<sup>4</sup>: Ձինվորական ծառայության շրջանը սահմանվել է քսան տարի, որից երեքը նախատեսվել է կանոնավոր զինծառայության (ասքերիե նիզամիե) համար: Այնուհետև երեք տարին՝ ինթիեաթի, դրանից հետո ութ տարին՝ ռետիֆի<sup>5</sup> և մնացյալ վեց տարին՝ մյուսթահֆըզի<sup>6</sup>: Ձինակոչիկ է համարվել յուրաքանչյուր 20-ամյա երիտասարդ<sup>7</sup>:

Ձինվորագրության իրավունքը և զինվորական վարժարաններում սովորելու հնարավորությունը արևմտահայության համար ունեին ոչ միայն գործնական, այլև բարոյական մեծ նշանակություն: Դրա կարևորությունը փաստում է նաև ժամանակի մամուլը, որը լեցուն էր նմանատիպ հրապարակումներով. «Ձինվորագրութեան իրավունք ոչ միայն զենքի գործածություն է և մարզանք է, այլև սրանով է միայն, որ պիտի փրկուինք կեավորի զգացումներէն և հետևաբար անոր խղճուկ կերպարանքէն»<sup>8</sup>:

Ամենօրյա հրապարակումներում կարելի է հանդիպել զինվորագրությանը վերաբերող ամենաբազմազան ու տարաբնույթ հոդվածների: «Ժամանակ» օրաթերթը, օրինակ, գրում էր. «Կետիկ Փաշայի Կրթասիրաց Ակումբը

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> «Բիւզանդիոն», թիւ 3.800, Կ. Պոլիս, 1909, մարտ 27-9 ապրիլ:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> **Վահէ Հ.**, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 661-662:

<sup>5</sup> Ինթիեաթի և ռետիֆները տարբեր աստիճանի պահեստային զինվորներ էին՝ պայմանավորված տարիքային խմբերով:

<sup>6</sup> Մյուսթահֆըզի խմբին պատկանող զինծառայողները կրկին ծառայության էին կանչվում միայն պատերազմների ժամանակ:

<sup>7</sup> Տե՛ս «Կանոնագիր ոչ իսլամ տարրերու զինվորագրութեան», թարգմանեց բացատրութեամբ Սօլախեան Կ., Կ. Պոլիս, 1910, էջ 16:

<sup>8</sup> «Բիւզանդիոն», թիւ 3.727, Կ. Պոլիս, 1908, դեկտեմբեր 26-8 հունվար:



իր դասախօսութեանց շարքին մէջ կարելոր տեղ մը տուած է զինվորական վարժարանի քննութեանց պատրաստվող աշակերտներու զարգացման գործին, առաջնորդութեամբ վարժարանին տնօրէն Ներսէս Էֆ. Զաքարեանի»<sup>1</sup>:

Ներկայացնելով մինչսահմանադրական ժամանակաշրջանում օսմանյան բանակում տիրող իրավիճակը, Գ. Մյուրմենյանը փաստում է, որ այն սոսկալի վիճակում էր. զինվորականությունը կիսամերկ էր ու անոթի, իսկ սպայական կազմը տարեկան միայն երկու անգամ՝ «պայրամէ պայրամ» էր աշխատավարձ ստանում և ապրում էր կաշառակերությամբ ու զեղծարարությամբ<sup>2</sup>:

Սահմանադրության հետ մեկտեղ՝ օսմանյան կառավարությունը հետամուտ եղավ բանակի և նավատորմի արդիականացմանը: Արդէն իսկ անհետաձգելի բարեփոխումները ենթադրում էին սպայական կազմի որակի բարձրացում, նոր սպառազինության ձեռքբերում, բանակի հրամանատարական կազմում ընդգրկվածների փոխարինում զինվորական կրթություն ստացած նոր կադրերով, զինվորական վարժարաններում ծրագրային փոփոխությունների կատարում և այլն: Սակայն, թերևս, ամենամեծ փոփոխությունը ռազմական համակարգում իսլամ չղավանողներին գորակոչման իրավունքի տրամադրումն էր, որը դարեր շարունակ, մասնավորապէս XIX դարում, բազմիցս քննարկվել էր, սակայն որպէս օրենք չէր ամրագրվել:

Հայերի զինվորագրության հարցը քննարկվել է ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան մամուլում: Այս հարցին անդրադարձել է Բոստոնի «Հայրենիք» թերթը՝ մասնավորապէս նշելով. «Այդ օրինագիծը հաւասարութեան գաղափարին գործածական արտայայտութիւնն էր և սկիզբը բոլոր տարրերու մերձեցման և ընդհանուր շահերու շուրջ եղբայրակցութեան: Այդ օրինագիծը կնշանակէր հայուն համար թե՛ այլևս կառավարութիւնը միմեան հայու դրամի պէտք չունէր հայկական ջարդեր կազմակերպելու կամ Ատանաներ ստեղծելու...»<sup>3</sup>:

Իսկ Կ. Պոլսում հրատարակվող «Ազատամարտ» օրաթերթում կարդում ենք. «Իսլամ պետութեան մը մէջ՝ որ իր դժնդակ աւանդութիւններն ունի, ուր կրօնական զգացումը աւելի զօրաւոր է յաճախ քան քաղաքական հասկացողութիւնները, քրիստոնէայ տարրերու զինուորագրութիւնը սահմանադրական մեծագոյն յաղթանակներէն մէկն է,- և պէտք է որ զիտենանք գնահատել զայն իր իսկական արժէքովը և իր բուն ծանրութեամբ... Հայ ժողովուրդը, առանձնապէս, պարտաւոր է ուրախ և գոհ ըլլալէ իր նորակոչ զաւակներուն առաջին զինուորական համագգեստովը և առաջին զէնքովը...»<sup>4</sup>:

Քրիստոնյաները զինվորագրության պիտի մասնակցեին հետևյալ տոկոսային հարաբերականությամբ՝ 12,5% հույներ, 4,5% հայեր, 4% բուլղարներ և

<sup>1</sup> «Ժամանակ», թիւ 459, Կ. Պոլիս, 1910, ապրիլ 14-27:

<sup>2</sup> Միւրմենեան Գ., նշվ. աշխ., էջ 11:

<sup>3</sup> «Հայրենիք», թիւ 32, Պոսթըն, 1911, օգոստոսի 1:

<sup>4</sup> «Ազատամարտ», թիւ 218, 1910, փետրուար 24/9 մարտ:

4% Միրիայի կաթոլիկներ ու հրեաներ: Քրիստոնյաները կազմում էին Օսմանյան կայսրության բնակչության մեկ քառորդ մասը, ուստի բանակում ևս հարկ էր պահպանել միևնույն համամասնությունը<sup>1</sup>:

«Բիւզանդիոն» գրում էր, որ 1912 թ. զինվորական վարժարանի շրջանավարտներին ավարտական վկայականներ հանձնելու և նրանց երդման արարողությանը ներկա են գտնվել սուլթան Մեհմեդ V Ռեշադը (1909-1918), բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև Հունաց և Հայոց պատրիարքները<sup>2</sup>:

Թերթը միաժամանակ նշում է, որ զինվորական վարժարանի շրջանավարտ սպաների ընդհանուր թիվը հասնում էր 394-ի, որոնցից 355-ը հետևակայիններ էին, իսկ 39-ը՝ հեծելազորայիններ: Նրանց թվում կային նաև երեք հայ, չորս հույն և մեկ հրեա: Շրջանավարտ հայերն էին հեծելազորային Հարություն էֆ. Էրպուացին, հետևակայիններ Գառնիկ էֆ. Պոլը և Մելքոն էֆ. Պոլը: Հունիս ամսվա շրջանավարտներից 425-ը հետևակայիններ էին, իսկ 30-ը հեծելազորայիններ, որոնցից հինգը հայեր էին, մեկը՝ հույն<sup>3</sup>:

1913 թ. հունիսին զինվորական վարժարանի շրջանավարտների թիվը հասնելու էր 323 հետևակայինի և 51 հեծելազորային սպաների, որոնց թվում կային չորս հայ և երկուական հույն ու հրեա<sup>4</sup>:

Թերթերից բացի այս հարցին անդրադարձել են նաև տարբեր մտավորականներ՝ հրատարակելով գրքեր ու բազմաթիվ գրքույկներ ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև դրա սահմաններից դուրս: Հիշարժան է Միքայել Վարանդյանի գնահատականը. «Զինուորագրութեան օրէնքն ընդունեց: Ամբողջ Օսմանեան երկիրը պիտի ներկայացնէ այսուհետև մի ձոյլ բանակ, կազմած իր բոլոր կենսատու տարրերից, առանց խտրութեան ցեղի, կրօնի ու դաւանանքի: Մի քայլ ևս արւեց դէպի երկրի խաղաղացումը, դէպի Նրա ներքին կազմաւորումն ու վերազինումը... Զօրքը անհրաժեշտօրէն պիտի դառնար բոլոր հատուածներով ընդհանուր հայրենիքի, բովանդակ օսմանցիութեան շահերի ու բաղձանքների հարազատ արտայայտիչ: Օսմանեան զօրքը և օսմանցիութիւն պիտի կազմեն ոչ հակամարտ էութիւններ, այլ ներդաշնակ մի միութիւն: Եւ միևնոյն ներդաշնակութիւնը պիտի շեշտուի այսուհետև բանակի այլազան հատուածների միջև, ոչ միայն տարբեր աստիճանների, այլ և տարբեր ազգայնական մասնիկների. թիւրք ու հայ, բուլգար ու հրեա, քիւրդ ու ալբան, յոյն ու արաբ զինուորների միջև: Եւ բոլոր ազգերի համար հաւասարապէս մանտչէլի պիտի դառնան բոլոր աստիճանները»<sup>5</sup>:

Հստակ ըմբռնելով զինվորագրության կարևորությունը և ինչու ոչ նաև առավելությունները, մի շարք հայ երիտասարդներ դիմեցին և ընդունվեցին

<sup>1</sup> Տե՛ս «Բիւզանդիոն», թիւ 3.777, 1909, փետրուար 27-12 մարտ:

<sup>2</sup> Տե՛ս «Բիւզանդիոն», թիւ 4.690, 1912, մարտ 15-28:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Վարդանէան Մ., Համաժողովրդական բանակ, Ժընև, 1909, էջ 3, 6-7:

զինվորական բարձրագույն հաստատություններ: Գ. Սյուրմենյանը արդեն որպես Երզնկայում տեղակայված IV բանակի զինվորական Ռյուշտիե և Էտաստիե վարժարանների շրջանավարտ, 1910 թ. սեպտեմբերին արդեն Փանկալթը զինվորական վարժարանի՝ Հարբիեի ուսանող էր<sup>1</sup>:

Այս վարժարանում գործում էին հետևակային և հեծելազորային բաժիններ, որոնցից յուրաքանչյուրում արդեն կային հայ ուսանողներ (Վահան Չափյան, Լևոն Մեֆերյան՝ Իզմիրից, Հակոբ Չոպանյան՝ Ֆերի գյուղից, Սամուել Գանձապետյան՝ Մարաշից, Պողոս Պետրոս և այլք): Վարժարանի երեք կուրսերում ուսանում էին շուրջ 1400 ուսանողներ: Առաջին երեք կարգերում կային ութ հայ (Կ. Պուլից՝ Գառնիկ Նավասարդյան, Վահե Չոպուրյան և Մելքոն, Թորատից՝ Հարություն (հեծալագորի սպա), Մարաշից՝ Օհանես, Սամասունից՝ Ռուբեն, Երզնկայից՝ Գալուստ Սյուրմենյան, Մերաստիայից՝ Օհանես Ակինյան)<sup>2</sup>: Հայ երիտասարդներից բացի՝ վարժարանն ուներ նաև մի քանի հույն և մեկ բուլղար ուսանողներ<sup>3</sup>:

1912 թ. ամռանը Փանկալթը վարժարանն ունեցել է շուրջ 900 շրջանավարտ, այդ թվում նաև հայ երիտասարդներ, ովքեր, ավարտելով ուսումը, ընդգրկվել են օսմանյան բանակի շարքերում՝ իբրև անդրանիկ հայ սպաներ<sup>4</sup>:

Սահմանադրության վերահռչակմանը հաջորդած տարիներին բարձրագույն զինվորական կրթություն ստացած առաջին հայ սպաներն ու զինվորները միամտորեն կարծում էին, որ օսմանյան կառավարության ընդունած օրենքները իրենց հավասար իրավունքներով կայսրությանը ծառայելու հնարավորություն են ընձեռելու: Այնինչ կարճ ժամանակ անց հայ զինվորականները ոչնչացվելու էին նույն պետության հրամանով՝ իրենց հետ մեկտեղ նույն հրամանագրով զորակոչված թուրք զինվորականների կողմից:

#### **Ани Восканян – Первые армянские военнослужащие османской армии**

После провозглашения конституции в 1908 г. христиане Османской империи стали требовать себе права на прохождение военной службы в османской армии. После обстоятельного обсуждения этого вопроса Османский парламент в 1910 г. принял решение о предоставлении права на мобилизацию в армию представителей народов, не исповедующих ислам. Армян стали призывать в османскую армию наряду с мусульманами, а офицеры, получившие военное образование, стали служить почти во всех воинских формированиях империи.

#### **Ani Voskanyan - The First Armenian soldiers of the Ottoman Army**

After the proclamation of the Constitution in 1908 the non-Muslim population of the Ottoman Empire started to claim the right to serve in the army. After the detailed discussion of this issue the Ottoman Parliament passed the conscription act for non-Muslims. Since then Armenians had been called up along with Muslims, and officers with military education started to serve almost in all military units.

---

<sup>1</sup> Տե՛ս **Միսրմենյան Գ.**, նշվ. աշխ., էջ 14:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 120:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 14:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

ԿԻԼԻԿԻԱՆ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՆՏԱՆՏԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ  
(1915 թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄ)

*Բանալի բառեր* - Առաջին աշխարհամարտ, Կիլիկիա, Սիրիա, Անտանտ, Օսմանյան կայսրություն, Ջեմալ փաշա, Սազոնով

Առաջին աշխարհամարտի հետաքրքիր և թերևս մութ դրվագներից է երիտթուրքական եռապետության անդամ, ռազմածովային նախարար, Սիրիայում և Պաղեստինում տեղակայված օսմանյան IV բանակի հրամանատար Ջեմալ փաշայի հետ Անտանտի երկրների բանակցությունների խնդիրը, որը համընկավ Կիլիկիայում կամ Սիրիայում Անտանտի կողմից ավիհանում կատարելու հերթական նախագծերի քննարկմանը և որոշակի դերակատարություն ունեցավ դրանց ձախողման հարցում:

Անտանտի տերությունները պատերազմի ընթացքում բազմիցս քննարկել են Կիլիկիայում ավիհանման հարցը, որը հնարավորություն կընձեռեր Փոքր Ասիան մեկուսացնելու Սիրիայից և Միջագետքից: Դրանով Օսմանյան կայսրության առջև կծառանար ոչ միայն տարածքային կորուստների, այլև, հավանաբար, պատերազմից դուրս գալու անհրաժեշտություն: Դեռևս 1914 թ. վերջից քննարկվում էր Կիլիկիայի տարածքից Օսմանյան կայսրությանը հզոր հարված հասցնելու խնդիրը, սակայն ի վերջո գերադասվեց կիրառել Դարդանեղի ռազմական գործողությունը, որից հետո Կիլիկիայում ավիհանում կատարելու հարցը որոշ ժամանակով հետաձգվեց: Երբ պարզ դարձավ, որ Դարդանեղում իրականացվող ռազմական գործողությունը դատապարտված է ձախողման, ֆրանսիական և բրիտանական ռազմական ու քաղաքական գործիչները 1915 թ. կեսերից կրկին առաջադրեցին Կիլիկիայում նոր ռազմաճակատ բացելուն առնչվող տարբեր նախագծեր:

Այդ ժամանակաշրջանում Սիրիայում և Կիլիկիայում թուրքերը ունեին միայն փոքրաքանակ, հիմնականում արաբներից բաղկացած զորքեր: Հետևաբար, դաշնակիցների բանակների ավիհանումը կարող էր հաջողության հանգեցնել: Ջեմալ փաշան իր հուշերում խոստովանում է, որ 1915 թ. սկզբին իր ռազմական ուժերն անբավարար էին Սիրիան, Պաղեստինը և Կիլիկիան պաշտպանելու համար, իսկ Դարդանեղի գործողության ժամանակ նույնիսկ դրանց զգալի մասը, այդ թվում ամենամարտունակ դիվիզիաները, ուղարկվել էր Կ. Պոլիս<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Djemal Pasha, *Memories of a Turkish Statesman, 1913-1919*, New York, 1922, p. 167.

1915 թ. օգոստոսին Ալեքսանդրետում ավիանում կատարելու անհրաժեշտության առնչությամբ հիմնավորումներով Ֆրանսիայի կառավարությանը դիմեց ֆրանսիական բանակների գլխավոր շտաբի պետ, գեներալ Մորիս Մարրան: Բայց նրա նախագծի դեմ հանդես եկան ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար Ժոզեֆ Ժոֆրը, վարչապետ Ռենե Վիվիանին և ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը<sup>1</sup>: Ժոֆրը անձնական ընդգծված հակակրանք էր տածում Մարրայի նկատմամբ, ինչը նույնպես որոշակի ազդեցություն ունեցավ որոշման կայացման վրա<sup>2</sup>:

Սեպտեմբերի 22-ին Միջերկրական ծովի ֆրանսիական 3-րդ էսկադրայի հրամանատարի Ժամանակավոր պաշտոնակատար, դերծովակալ Դարրիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին հղած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր Միջերկրականի արևելյան ափին իրենց համար ստեղծված բարենպաստ իրավիճակը և առաջարկում դիմել վճռական գործողությունների<sup>3</sup>: Նա գտնում էր, որ ավիանումը Ալեքսանդրետի ծոցի խորքում՝ Իսոսի դաշտում, կարող էր արդյունավետ լինել, ուր հնարավոր էր համարում Թոփրակ-Կալեի երկաթուղային հանգույցի և Տավրոսից Բոզանտ ձգվող ելքերի գրավումը, որից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին առանց դժվարության առաջ ընթանալ դեպի հարավ և ազատագրել Սիրիան: Այդ պահին Սիրիայում թուրքական բանակն ուներ ընդամենը 20.000 զինվոր, և հաջողության հասնելու համար ֆրանսիացիներին բավարար կլինեին ընդամենը մեկ բանակային կորպուս: Դերծովակալի կարծիքով, այդ գործողությունը կարող էր լինել չափազանց արդյունավետ, իսկ թուրքերը ստիպված կլինեին Դարդանեյի ռազմաճակատից որոշ ուժեր տեղափոխել Սիրիա: Բացի դրանից, այդ գործողությունը կնպաստեր դասալքության աճին թուրքական բանակում: Դարրիոն նաև գտնում էր, որ եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակությամբ զորքեր ուղարկել, ապա հարկ կլինի զինել թուրքերի նկատմամբ ատելությանմբ համակված տեղացի բնակչությանը: Նա խնդրում էր որպես առաջին քայլ իրեն տրամադրել 800 հրացան և ռազմամթերք՝ մուսալեռոցիների զինելու համար: «Այս ձևով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամկետում կվերածվեն ահարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն և եթե, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձևով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Գասպարյան Ե.**, Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000, էջ 48-49:

<sup>2</sup> [http://en.wikipedia.org/wiki/Maurice\\_Sarrail](http://en.wikipedia.org/wiki/Maurice_Sarrail)

<sup>3</sup> Տե՛ս **Պեյլերյան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, փաստաթղթերի ժողովածու, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 170-176:

դության»<sup>1</sup>, – մատնանշում էր դերծովակալը: Դարրիոն նախատեսում էր զինել թե՛ Անտիոքի շրջանի հայերին և թե՛ լիբանանցիներին և պահանջում տրամադրել 20.000 հրացան ու ռազմամթերք ոչ միայն այդ համընդհանուր ապստամբությունը սկսելու, այլև այն հաղթական ավարտի հասցնելու համար:

Հոկտեմբերի 1-ին Կահիրեում Ֆրանսիայի դեսպան Ալեքսանդր Դեֆրանսը արտաքին գործերի նախարար Թեոֆիլ Դելկասեին հղած զեկուցագրում լիովին հավանություն էր տալիս Դարրիոյի ծրագրին և հաստատում, որ Սիրիայում թուրքերը միայն բարոյալքված վիճակում գտնվող աննշան ուժեր ունեն: Սակայն նա դեմ էր տեղացի ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին, չնայած դա համարում էր իրագործելի: Նա գտնում էր, որ եթե թուրքերը Սիրիայից վտարվեին առանց Ֆրանսիայի ղեկավարության գործուն մասնակցության, ապա հետագայում ֆրանսիացիները ստիպված կլինեին այդ երկրամասը կրկին գրավել այնտեղ անիշխանությունը վերացնելու և թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Ինչ վերաբերում է մուսալեոցիներից կազմված զորամասին, նա գտնում էր, որ հարկ է այն օգտագործել թուրքական ափերում միայն կարճաժամկետ դիվերսիաներ կազմակերպելու նպատակով: Դեֆրանսը հարցի լուծման լավագույն տարբերակ էր համարում Սիրիայի գրավումը ֆրանսիական զորքերի միջոցով<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի և Կիլիկիայի գրավմանը, ինչը կարող էր հետագայում բարդությունների հանգեցնել, երբ փորձեին այդ տարածքները ֆրանսիական զորությունների վերածել: Նա նույնիսկ դեմ էր փոքրաթիվ հայկական ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողությունների ուղարկելու հնարավորությանը՝ երկյուղելով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը կարող էր հայկական ինքնավարության հիմքեր ստեղծել:

Իր զեկուցագրի վերջում Դեֆրանսը վկայակոչում էր այդ հարցի շուրջ Եգիպտոսում բրիտանական զորքերի գլխավոր հրամանատար Ջոն Մաքսվելի կարծիքը: Վերջինս Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար գտնում էր, որ «հարկ էր գործել Ալեքսանդրեոսի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»<sup>3</sup>:

Նոյեմբերին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար լորդ Հենրի Թիթչեները նույնպես անդրադարձավ Կիլիկիայում դաշնակիցների զորքերի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 194-196:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 196:

ավհանման խնդրին: Դա պայմանավորված էր Դարդանելի գործողության ձախողմամբ, իսկ դաշնակիցներին անհրաժեշտ էր որևէ ձևով վերականգնել իրենց հեղինակությունն Արևելքում: Բրիտանական կառավարությունը դիմեց Ֆրանսիային՝ խնդրի շուրջ նրա կարծիքին տեղեկանալու համար:

Նոյեմբերի 13-ին ֆրանսիական կառավարությունը Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողությունների հարցը քննարկելու նպատակով հրավիրեց խորհրդակցություն, որի ընթացքում Կիլիկիայում ավհանումը համարվեց աննպատակահարմար, և այդ մասին տեղեկացրեց բրիտանական կառավարությանը<sup>1</sup>:

Նոյեմբերի 15-ին Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնը Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանին տեղեկացրեց, որ Ալեքսանդրետում դեսանտ իջեցնելու՝ Քիթչեների ծրագրի մասին զրուցել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյի հետ: Վերջինս այդ ռազմական գործողությունը համարել էր բավական դժվար իրականանալի՝ հաշվի առնելով բրիտանական զորքերի ցրվածությունը տարբեր ռազմաճակատներում՝ Բալկաններում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Դարդանելում: Գրեյը նշել էր նաև, որ այդ հարցը դեռևս քննարկվելու է կառավարության և ռազմական իշխանությունների կողմից, սակայն, նրա կարծիքով, դրան դեմ կլինեին գլխավոր շտաբում և ծովակալությունում<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, խնդրի շուրջ տարաձայնություններ կային նաև բրիտանական տարբեր գերատեսչությունների միջև, սակայն դրանք հիմնականում պայմանավորված էին դաշնակից ֆրանսիացիներին անհանգստություններ չպատճառելու մտահոգությամբ:

Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու ծրագրի շուրջ ֆրանսիացիների բացասական դիրքորոշումը Քիթչեներին բավական վրդովեցրեց, որն այդ քայլը մեկնաբանեց իբրև քաղաքական դիտավորություն: Այդ տպավորությունը մեղմելու համար Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Ժոզեֆ Գալիենին փորձել է համոզել, որ իրենք միայն ռազմական նկատառումներով են հրաժարվում այդ նախագծից՝ չվարանելով նույնիսկ մատնանշել, որ բրիտանացիներին տրվում են Ալեքսանդրետի տարածաշրջանում իրենց հայեցողությամբ գործելու հնարավորություններ<sup>3</sup>:

Դեկտեմբերի 4-ից 6-ը Ֆրանսիայի Շանտիյե քաղաքում տեղի ունեցավ դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների և բանակների ներկայացուցիչների համաժողով: Քննարկվեց դաշնակիցների կողմից հակառակորդին միաժամանակյա և համաձայնեցված հարվածներ հասցնելու հարցը,

---

<sup>1</sup> Տե՛ս **Գասպարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 49:

<sup>2</sup> Տե՛ս **Պեյլեքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 230:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 231:

ասկայն մասնակիցները ընդհանուր եզրակացության չհանգեցին<sup>1</sup>: Բրիտանացիները ցանկանում էին Սալոնիկը հանձնել և զորքերը տեղափոխել Սիրիա, Եգիպտոս կամ Ֆրանսիա: Ռուսական կողմը գտնում էր, որ հարկ է Սալոնիկը պահել և աջակցել այնտեղ սերբական բանակի մնացորդների ամրապնդմանը<sup>2</sup>: Համաժողովում Ֆրանսիայի ճնշմամբ վերջնականապես որոշում կայացվեց հրաժարվել Կիլիկիայում ավիհանում կատարելու Քիթչենների ծրագրից<sup>3</sup>: 1916 թ. փետրվարի 15-ին Շանտիյեում տեղի ունեցած հաջորդ խորհրդածրոջում որոշվեց Սալոնիկը պահել և ուժեղացնել տեղի բանակը<sup>4</sup>:

Այդ ժամանակաշրջանում ֆրանսիացիները չունեին Կիլիկիա ուղարկելու բավարար ուժեր: Փաստորեն, Ալեքսանդրետում նախատեսվող ռազմական գործողությունում հիմնական դերակատարությունը ստանձնելու էին բրիտանացիները, իսկ Ֆրանսիան վախենում էր, որ կարող է կորցնել Կիլիկիան, եթե այն զրավվի այլ երկրի զորքերի կողմից: Ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Միխայիլ Ալեքսեյևը 1915 թ. նոյեմբերին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին գրում էր, որ միայն իրենց սեփական շահերով առաջնորդվող դաշնակիցների մոտ բացակայում է ընդհանուր ռազմավարական միտքը, յուրաքանչյուր տարածաշրջանի համար թատերաբեմի գնահատման, պայքարի ընդհանուր նպատակը տեսնելու պատրաստակամությունը<sup>5</sup>:

Բրիտանական վերնախավի մի մասը դեմ էր Արևելքում ֆրանսիական նկրտումներին: Հնդկաստանի բրիտանական կառավարությունը պահանջում էր չմասնատել Օսմանյան կայսրությունը, գնդապետ Լոուրենս Արաբացին առաջարկում էր ստեղծել արաբական պետություն և դեմ էր Սիրիան Ֆրանսիային զիջելուն<sup>6</sup>: 1915 թ. նոյեմբերի 2-ին Ժորժ Պիկոյին փոխանցված հրահանգներում Բրիանը պահանջում էր բանակցությունների միջոցով ապահովել Մեծ Սիրիայի ստեղծումը Ֆրանսիայի վերահսկողության ներքո: Ըստ դրանց՝ Սիրիային հարավում կցվելու էր Պաղեստինը, իսկ հյուսիսում՝ Կիլիկիան, Խարբերդը, Դիրարբեքիրը, Վանը, Մոսուլը<sup>7</sup>: Սիրիան, Կիլիկիան և Մոսուլը Ֆրանսիային հանձնելու հարցը լուծվեց միայն 1916 թ. Մայքս-Պիկոյի համաձայնագրով:

Թե դաշնակիցների համար որքան արդյունավետ կլինեք Կիլիկիայում նախատեսվող ավիհանումը, կարելի է եզրակացնել՝ ծանոթանալով գերմա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 7-10:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 1:

<sup>3</sup> Տե՛ս **Գասպարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 53:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 39:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 1:

<sup>6</sup> **Shane L.**, Mark Sykes: His Life and Letters, London, 1923, p. 248-249.

<sup>7</sup> Տե՛ս **Fitzgerald E. P.**, France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918, "The Journal of Modern History", vol. 66, 1994, p. 709.



նացի ֆելդմարշալ Պատու ֆոն Հինդենբուրգի տեսակետին, որն իր զարմանքն էր հայտնում առ այն, թե ինչու Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան չօգտվեցին այդ անպաշտպան օղակից և շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային: «Այդպես վարվելու դեպքում,– նշել է նա,– նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը, հանդերձանքն ու սպառազինությունները ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ Կովկասյան բանակներին»<sup>1</sup>: Ֆելդմարշալը նշում էր, որ Ալեքսանդրետի ծովածոցը պաշտպանված չէր, քանի որ թուրքերը գորքերը ուղարկել էին Սիրիա և Միջագետք: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը ևս վախենում էր, որ հակառակորդները կարող էին բացահայտել թուրքերի «թուլությունը հենց այդ կրիտիկական կետում»<sup>2</sup>:

Ամերիկյան կոնգրեսական, նախկինում Եգիպտոսում ԱՄՆ ներկայացուցիչ, գնդապետ Էդուարդ Լիթլը 1918 թ. փետրվարի 7-ին Կոնգրեսում ելույթի ժամանակ սխալ է համարել Ուինստոն Չերչիլի՝ Դարդանելի, այլ ոչ թե Ալեքսանդրետի վրա հարձակվելու նախաձեռնությունը: Նա վստահ էր, որ Կիլիկիայում ավիանման դեպքում, որը երկաթուղային կարևոր հանգույց էր, բրիտանական զորքերը այնտեղից կարող էին առաջ ընթանալ դեպի Կ. Պոլիս, Երուսաղեմ կամ Արաբիա: Նա զարմանք է հայտնել, որ բրիտանացիները չեն դիմել այդ քայլին, որի շնորհիվ Սիրիայի թուրքական բանակը կոչնչացվեք<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, Անտանտի երկրները բաց են թողել Կիլիկիայում ավիանում իրականացնելու և այնտեղ հաջող ռազմական գործողություններ ծավալելու հնարավորությունը: Դա պայմանավորված էր Մերձավոր Արևելքում բրիտանա-ֆրանսիական գաղտնի մրցակցությամբ: Ֆրանսիացի գործիչները ցանկանում էին պատերազմից հետո Կիլիկիան միացնել իրենց գաղութներին, սակայն այդ ժամանակ Արևելքում բավարար գորքեր չունեին այդ երկրամասը գրավելու համար: Նրանք բացասաբար էին վերաբերվում Կիլիկիան բրիտանական և հայկական ուժերով ազատագրելու ծրագրերին՝ երկյուղելով այն կորցնելու հնարավորությունից:

Հարկ է անհրաժեշտ ուշադրություն դարձնել ևս մեկ հանգամանքի. Կիլիկիայում ավիանում կատարելու հարցում Անտանտի երկրների անվճարականությանը նպաստել են նաև Ջեմալ փաշայի առաջ քաշած նախագծի շուրջ բանակցությունները:

1915 թ. վերջին ռուսական դիվանագիտությունը օրակարգի խնդիր դարձրեց Օսմանյան կայսրությունը պատերազմից դուրս բերելու մի

---

<sup>1</sup> Հղումը ըստ՝ **Կիրակոսյան Ջ.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915 թ.-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 68:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 5, տես նաև՝ **Little E.**, Armenia and Turkey, “Congressional Record”, Washington, March 8, 1918, vol. 56, p. 7:

նախագիծ: Ռուսներին հայտնի էր դարձել, թե իբր երիտթուրքական եռյակի անդամների միջև առաջացել էին տարաձայնություններ: Այդ տեղեկությունը Բուխարեստում ռուսական դեսպան Ս. Պոկլևսկուն տրամադրել էր ՀՅԳ գործիչ Հակոբ Չավրիկը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության քաղաքական երկրորդ բաժնի խորհրդական Ն. Գուլկևիչին դեկտեմբերի 11-ին հղած հեռագրում դեսպանը տեղեկացնում էր, որ Չավրիկին հայտնի է դարձել, թե օսմանյան կառավարությունից դժգոհ Ջեմալը պատրաստ է ապստամբելու, եթե նրան խոստանան իր իշխանությունը հաստատել Փոքր Ասիայում: Չավրիկը նաև նշել էր, որ եթե ռուսական կառավարությունը դեմ չէ, ապա հայերը հնարավորություն ունեն բանակցություններ սկսելու Ջեմալի հետ: Հաջորդ օրը Գուլկևիչը պատասխանել է, որ օսմանյան կառավարությունում առկա տարաձայնությունները ձեռնառու են իրենց, և կարելի է Ջեմալին ամենալայն խոստումները տալ<sup>1</sup>:

ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն վկայում է, որ Ջեմալ փաշան ոչ միայն դժգոհ էր Էնվերից ու Թալեաթից, այլև չափազանց փառասեր էր, բացահայտորեն ցույց էր տալիս իր հակակրանքը գերմանացիների նկատմամբ, իսկ Սիրիայում իրեն պահում էր ինչպես սուլթան. ուներ սեփական արքունիք, կատարում էր ուրբաթօրյա աղոթքի արարողություն, անկաշկանդ հրապարակում սեփական կարգադրությունները, հաճախ արհամարհում Կ. Պոլսից ստացվող հրահանգները, միաժամանակ ատելություն էր տածում բոլոր հպատակ ժողովուրդների նկատմամբ: Մորգենթաուն նրան համեմատում էր Մարկոս Անտոնիոսի հետ և նշում, որ Ջեմալը նպատակ ուներ կայսրության մի հատվածում հիմնել իր սեփական պետությունը և հաստատել իր ժառանգական հարստությունը<sup>2</sup>:

Դեկտեմբերի 25-ին Պոկլևսկին Գուլկևիչին տեղեկացրել է, որ հայկական կողմը ճիշտ է համարում Ջեմալի հետ ռուսական գործակալների անմիջականորեն բանակցությունների մեջ ընդգրկումը, իսկ եթե ռուսները ցանկանային գործել հայերի միջոցով, ապա այդ պարագայում Չավրիկն առաջարկել էր աջակցել երկու հայ գործիչների (ռուսահպատակ և բրիտանահպատակ) մեկնումը Եգիպտոս՝ այնտեղից Ջեմալի հետ կապ հաստատելու նպատակով<sup>3</sup>:

Դեկտեմբերի 25-ին Ալեքսանդր Իզվոլսկուն, Ալեքսանդր Բենկենդորֆին, Մաքսիմ Գիրսին՝ համապատասխանաբար Փարիզում, Լոնդոնում և Հռոմում ռուսական դեսպաններին հղած հեռագրերում Մագոնովը, ըստ Կ. Պոլսի հայկական շրջաններից ստացված հաղորդումների, տեղեկացնում էր, որ

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան» յեվ Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից», առաջաբանը՝ Աշոտ Հովհաննիսյանի, Յերեվան, 1926, էջ 14:

<sup>2</sup> Տե՛ս «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները», Երևան, 1990, էջ 143-147:

<sup>3</sup> «Հայաստանի ավտոնոմիան»..., էջ 16-17:

իբր հույս կա Ջեմալին դրդելու երիտթուրքական կառավարության ու գերմանացիների դեմ բացահայտ ապստամբության, եթե Անտանտի պետությունները նրան առաջարկեն հետևյալ պայմանները.

1. Երաշխավորել Ասիական Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը՝ բաղկացած սուլթանի գերիշխանության ներքո գտնվող հետևյալ ինքնավար նահանգներից՝ Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա, Քրդստան և Հայաստան՝ ներառյալ Կիլիկիան:

2. Սուլթան է հռչակվելու Ջեմալը՝ գահը ժառանգաբար փոխանցելու իրավունքով:

3. Ջեմալը պարտավորվելու է թուրքական կառավարությանն ու սուլթանին, որպես գերմանացիների ձեռքում հայտնված գերիների, հայտարարել գահընկեց արված և արշավել նրանց դեմ:

4. Կ. Պոլսի վրա արշավելու ժամանակ Անտանտի տերությունները Ջեմալին մատակարարելու են պարեն, զենք և հրետանի:

5. Պատերազմի ավարտից հետո տերությունները Ջեմալին ֆինանսական օժանդակություն են տրամադրելու:

6. Ջեմալը հրաժարվելու է Կ. Պոլսից և նեղուցներից:

7. Ջեմալը պարտավորվելու է անմիջապես քայլեր ձեռնարկել՝ հայերին փրկելու և մինչև պատերազմի ավարտը կերակրելու համար:

Սազոնվը կարծում էր, որ հավատարիմ հայերի միջոցով անհրաժեշտ է Ջեմալի հետ բանակցություններ սկսել, քանի որ ցանկացած ներքին խնդիրներ կարող էին թուլացնել Թուրքիայի ուժերը և ծառայել իրենց շահերին: Եթե նույնիսկ Ջեմալին չհաջողվեր կառավարությունը տապալել և գերմանացիներին վտարել, այնուամենայնիվ Օսմանյան կայսրությունում խռովությունը օգտակար կլիներ: Նա դեսպաններին առաջարկում էր համապատասխան երկրների արտաքին գործերի նախարարների հետ խորհրդակցել և պատասխաններն անմիջապես հաղորդել իրեն<sup>1</sup>:

Հաջորդ օրը Գիրսը Սազոնվին հեռագրեց, որ Իտալիայի արտաքին գործերի նախարար Սիդնի Սոննինտն լիովին համաձայն էր Ջեմալի հետ բանակցելու պայմաններին, եթե հաջողության որևէ հույս կար, քանի որ դրանով բրիտանացիներին կազատեին Եգիպտոսի վրա թուրքական հարձակման վտանգից, իսկ գերմանացիներին կզրկեին Փոքր Ասիայի մարդկային ներուժից, որի հետ նրանք հույսեր էին կապում<sup>2</sup>:

Դեկտեմբերի 27-ին Իզվոլսկին հաղորդել է, որ Բրիանը հետաքրքրությամբ է վերաբերվել Ջեմալի հետ բանակցելու հնարավորությանը, խոստացել այն քննարկել կառավարության նիստում և կարծիք է հայտնել, որ Ջեմալի հետ համաձայնություն կայացնելու պայմանները կարող են շոշափել Բրի-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 1-2:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 2:

տանիայի շահերը<sup>1</sup>: Սակայն հաջորդ օրերին ակնհայտ է դարձել, որ ֆրանսիական կողմին այնքան էլ դուր չեն եկել այդ պայմանները: Ուստի երկու օր անց նա Սազոնովին տեղեկացրել է կառավարության նիստից հետո Բրիանի հայտնած դժգոհության մասին այն պատճառով, որ Ռուսաստանը ստանալու էր Կ. Պոլիսն ու նեղուցները, իսկ Ֆրանսիան գրկվելու էր Սիրիայից, Պաղեստինից ու Կիլիկիայից<sup>2</sup>:

Դեկտեմբերի 28-ին Բենկենդորֆը տեղեկացրել է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Գրեյի տեսակետի մասին: Վերջինս գտնում էր, որ արաբների հետ հարկ է՝ բանակցեն բրիտանացիները, իսկ հայերի ու Ջեմալի հետ՝ Ֆրանսիան: Գրեյն առաջարկել էր կազմակերպել Ջավրիսի մեկնումը Կահիրե, որտեղ նա պետք է տեղի ֆրանսիական դեսպանի հետ ճշգրտեր անելիքը: Իսկ անգլիացի դիվանագետ, լորդ Արթուր Նիքոլսոնը Բենկենդորֆին հայտնել էր, որ Ջեմալը արաբների հակառակորդն է, ինչը դժվարություններ է հարուցում նրա հետ բանակցելու հարցում<sup>3</sup>:

Դեկտեմբերի 30-ին Բենկենդորֆը տեղեկացրել է, որ բրիտանական կողմը որոշ կասկածներ է տածում Ջեմալի հնարավորությունների հանդեպ: Բրիտանացիները միաժամանակ բանակցում էին արաբների հետ և չէին ցանկանում հիասթափեցնել վերջիններիս, որոնք լուրջ ուժ էին ներկայացնում: Մեծ Բրիտանիան պատրաստվում էր ստեղծել արաբական պետություն, իսկ դաշնակիցները Սիրիան նախապես խոստացել էին Ֆրանսիային: Հետևաբար, բրիտանացիները վստահ էին, որ Ջեմալը ոչ մի բանի չի հասնի, եթե փորձի արաբներին դեմ գնալ, ուստի և նրա միակ հնարավորությունը արաբների հետ համաձայնության եզրեր գտնելն է<sup>4</sup>:

Դեկտեմբերի 30-ին Իզվոլսկուն ուղարկած հեռագրում Սազոնովը պարզաբանել է, որ Ջեմալի հետ բանակցությունները համարում է միջոց, որով հնարավոր է Թուրքիայում խռովություն առաջ բերել և դեպի Եգիպտոս թուրքական արշավանքը ձախողել, այդ իսկ պատճառով հայերի ներկայացրած վերոհիշյալ ծրագիրը բառացիորեն ներկայացրել է դաշնակիցների քննարկմանը՝ չթափանցելով մանրամասների մեջ և ամբողջությամբ չսատարելով Ջեմալի ցանկությունները: Նա նաև նշում էր, որ ինքը ենթադրում էր հարցը քննարկել, երբ դաշնակիցներն ընդունեին բանակցելու գաղափարը, քանի որ հայերի միջոցով ներկայացրած բոլոր կետերը չէ, որ պետք է ընդունեն, այլ կարող են Ջեմալի պատվասիրությունն օգտագործել նաև այլ պայմաններով: Նախարարն առաջարկում էր վստահեցնել Բրիանին, որ ռուսական կողմը ցանկություն չունի վնասելու Ֆրանսիայի շահերը, միաժամանակ ցանկանում

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան»... էջ 18:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», էջ 380:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 20-21:

էր պարզաբանել, թե ինչպիսիք են նրա ցանկություններն ու պայմանները<sup>1</sup>:

1916 թ. հունվարի 1-ին Իզվոլսկին պատասխանել է, որ Սազոնովի հեռագրի բովանդակության մասին տեղեկացրել է Բրիանին, որը լավ տպավորություն է թողել նրա վրա: Վերջինս կրկին հայտնել էր, որ ֆրանսիական կառավարությունը թեև հավատ չի տածում Ջեմալի ընդունակությունների հանդեպ՝ նշված դերն ի կատար ածելու խնդրում, և նույնիսկ որոշակի մտավախություն ունի, որ դա նրա կողմից լարված թակարդ է, այնուամենայնիվ պատրաստ է նրա հետ բանակցություններ սկսել, սակայն պայմանով, որ չխախտվեն Ֆրանսիայի իրավունքները Պաղեստինում և Սիրիայում՝ Կիլիկիայով հանդերձ, որոնք ճանաչված են Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի ու նեղուցների մասին Ֆրանսիայի հետ կնքված՝ 1915 թ. մայիսի 9-ի Լոնդոնի համաձայնագրով: Իզվոլսկին փորձել էր նաև ճշտել, թե արդյոք ֆրանսիացիները ցանկանում են, որ նշված վայրերն անպայման Ֆրանսիային կցվեն, թե հնարավոր է այլ տարբերակ, օրինակ՝ պրոտեկտորատի հաստատում սուլթանի անվանական գերիշխանության ներքո, որը կարող էր ավելի նպաստավոր ու գործնական լինել Ֆրանսիայի համար և դյուրին դարձնել բանակցությունները Ջեմալի հետ: Բրիանը նշել էր, որ չի կարող անմիջապես պատասխանել այդ հարցադրմանը, սակայն եթե բանակցությունները հանգեցնեն դրան, ապա դաշնակիցները պետք է հատուկ քննարկեն այդ խնդիրը<sup>2</sup>:

Հունվարի 2-ին Սազոնովը Իզվոլսկուն և Բենկեդորֆին տեղեկացրել է, որ միջնորդներն առաջարկում են Ջեմալի հետ բանակցությունները վարել Եգիպտոսում, հետևաբար ֆրանսիացիներն ու բրիտանացիները կարող էին այնտեղ բանակցությունները սկսել, իսկ եթե կամենում էին, ապա կարող էին նախապես խորհրդակցել Բուխարեստում գտնվող Ջավրիևի հետ<sup>3</sup>:

Ռուսական և ֆրանսիական կողմերը միաժամանակ դիմել են Մեծ Բրիտանիային, որպեսզի վերջինիս ներկայացուցիչները Եգիպտոսից բանակցություններ սկսեն Ջեմալի հետ՝ Մեքքայի շերիֆի հետ բանակցությունների գուզընթաց: Սակայն հունվարի 10-ին Բենկեդորֆը Սազոնովին տեղեկացրել է, որ Գրեյը հրաժարվել է Ջեմալի հետ բանակցությունները բրիտանական կողմի վրա վերցնելու պարտականությունից և առաջարկել, որ դրանք վարի Ֆրանսիան<sup>4</sup>:

Ի վերջո, հունվարի 12-ին Սազոնովը Իզվոլսկուն տեղեկացրել է, որ Ջեմալի հետ բանակցությունները ճիշտ կլինի կենտրոնացնել ֆրանսիացիների ձեռքում, ինչպես առաջարկել էր Գրեյը: Սազոնովն առաջարկում էր Բրիանին տեղեկացնել, որ իրենք պատրաստ են ֆրանսիացիներին թողնել ղեկավար դերը Ջեմալի հետ բանակցություններում, քանի որ Սիրիայի հետ կապ-

<sup>1</sup> ՀԱՄ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 4:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 5:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան»..., էջ 22-23:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:

ված հարցը շոշափում էր նրանց շահերը: Նա ցանկալի էր համարում, որ իրենց տեղյակ պահեն բանակցությունների ընթացքի մասին, և խոստանում էր ռուսական ներկայացուցիչների միջոցով ամեն կերպ աջակցել դաշնակից ֆրանսիացիներին<sup>1</sup>:

Հունվարի 23-ին Բենկենդորֆը տեղեկացրել է Սազոնովին, որ բրիտանական կողմը վերջնականապես հրաժարվել է Ջեմալի հետ բանակցություններին միջամտելուց, քանի որ դա կվնասեր արաբների հետ տարվող բանակցություններին, սակայն դեմ չէր լինի, եթե Ռուսաստանը կամ Ֆրանսիան փորձեն գործարք կայացնել Ջեմալի հետ<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, առաջարկվող պայմաններով Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բաժին չէին ստանալու «օսմանյան ժառանգությունից», հետևաբար նրանք ի վերջո մերժեցին այդ նախագիծը<sup>3</sup>:

Մարտի 22-ին Իզվոլսկու միջնորդությամբ Բրիանի հետ հանդիպեց Ջավրիևը և ներկայացրեց Ջեմալի հետ բանակցությունների խնդրի շուրջ իր առաջարկները: Սակայն Բրիանը նրան խուսափողական պատասխան տվեց, իսկ Իզվոլսկուն տեղեկացրեց, որ Ասիական Թուրքիայի բաժանման մասին եղած ֆրանս-բրիտանական Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, որի շուրջ տվյալ պահին բանակցություններ էին ընթանում Պետերբուրգում, անհարիր է Ջեմալի հետ համաձայնության գալու պայմաններին: Իզվոլսկին այդ բացասական վճռի մասին հայտնեց նաև Ջավրիևին<sup>4</sup>:

Փաստորեն դրանով ավարտվեցին Ջեմալի հետ բանակցություններ վարելու շուրջ քննարկումները: Այս առնչությամբ Հայկ Ղազարյանը գրում է. «Ֆրանսիան դժգոհեց, որովհետև նրանից **«վերցվում էին» Գիլիկիան, Սիրիան և Պաղեստինի** մի մասը (որոնք մինչ այդ խոստացվել էին Պուանկարեին): Բրիտանական կողմները գաղտնի բանակցություններ էին վարում **Մեքքայի շերիֆի հետ**, խոստանալով ստեղծել արաբական ընդարձակ խալիֆաթ՝ Լոնդոնի հովանու ներքո: Այժմ Ջեմալի գործարքը փաստորեն խառնում էր բոլոր խաղաքարտերը: Մեկ խոսքով, դեռևս բանակցությունները չսկսված, Անտանտի շրթայում բացահայտ ճեղքեր էին երևում»<sup>5</sup> (ընդգծումները հեղինակինն են – Ս. Պ.):

Հետաքրքիր է նշել, որ Ջեմալի հետ բանակցությունների գաղափարը առաջ քաշվեց անմիջապես այն բանից հետո, երբ 1915 թ. նոյեմբերին վեր-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 6:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան»..., էջ 25:

<sup>3</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թթ., Երևան, 2002, էջ 91-92:

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան»..., էջ 34:

<sup>5</sup> **Ղազարյան Հ.**, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ: Գիրք առաջին: 1920 թվականի պայմանագիրը և միացյալ անկախ Հայաստանի հռչակումը, Երևան, 2012, էջ 176:

ջինս մեկնեց Կ. Պոլիս, ուր մնաց երկու շաբաթ և Էնվերի հետ քննարկեց տիրող իրավիճակը<sup>1</sup>: Մեր կարծիքով, այդ բանակցությունների գաղափարը նրանց միջև քննարկված և Անտանտի համար նախատեսված ծուղակ էր, որով կանխվեց Ալեքսանդրետի շրջանում դաշնակիցների ավիանման նախագիծը: Այդ ժամանակ թուրքական հիմնական գորքերը Սիրիայից ուղարկվել էին Դարդանեյ, և բավարար ուժեր չունեին դիմակայելու հակառակորդին: Հնարավոր է նաև այն տարբերակը, որ Ջեմալն ու Էնվերը չէին կարողացել ընդհանուր հայտարարի հանգել, ինչը, սակայն, մեզ նվազ հավանական է թվում:

Այնուամենայնիվ, Ջեմալի հետ բանակցությունները չկայացան, սակայն դրանց շուրջ ծավալված քննարկումները որոշ չափով կանխեցին Անտանտի երկրների կողմից Կիլիկիայի ու Սիրիայի ուղղությամբ վճռական գործողությունների դիմելու նախագծերի իրականացումը: Հավանաբար նրանց ավիանման սպառնալիքն էր այն պատճառներից մեկը, որ Ջեմալն իր ենթակայության տակ գտնվող շրջաններում ապաստանած տարագիր հայ գաղթականների համար ստեղծեց ապրելու փոքրիշատե տանելի պայմաններ: Սիրիայի թուրքական իշխանությունները ֆրանս-բրիտանական գորքերի ավիանման անմիջական սպառնալիքի պայմաններում վախենում էին կոտորածների հետագա պատասխանատվությունից: Միաժամանակ, Ջեմալի համար հայերի նկատմամբ սկզբնական շրջանում ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքը կարող էր բարձրացնել նրա հեղինակությունը Անտանտի երկրների և հպատակների աչքերում, դառնալ խայծ բանակցությունների համար: Սակայն ավիանման վտանգի վերացումից անմիջապես հետո՝ 1916 թ. սկզբներին, Դեր Ջորում, Ռաս ու Այնում և այլուր կազմակերպվեցին մի քանի հարյուր հազար հայերի նոր կոտորածներ: Դա վկայում է, որ Ջեմալի «մարդասիրությունը» պայմանավորված էր սուկ հակառակորդի ներխուժման վտանգով:

Հետաքրքիր է նշել, որ իր հուշերում Ջեմալն անդրադառնում է Մորզենթաուի հուշերում իր մասին հնչած գրեթե բոլոր մեղադրանքներին, փորձում արդարանալ, սակայն չի մեկնաբանում կամ ժխտում ռուսների հետ բանակցելու իր նախաձեռնության մասին ամերիկյան դիվանագետի վկայությունը:

Այսպիսով, Ջեմալի հետ բանակցելու գաղափարը որոշ չափով նպաստել է Կիլիկիայում կամ Սիրիայում ավիանում կատարելու Անտանտի նախագծերի ձախողմանը, որի արդյունքում թուրքերը հնարավորություն ունեցան շարունակելու հայ ժողովրդի հանդեպ իրականացվող ցեղասպան քաղաքականությունը՝ Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում ոչնչացնելով հարյուր հազարավոր հայ գաղթականների:

---

<sup>1</sup> Տե՛ս **Djermal Pasha**, նշվ. աշխ., էջ 168:

**Погосян Самвел – Проблема оккупации Киликии и переговоров с Джемаль-Пашой в проектах Антанты (вторая половина 1915)**

Во время Первой мировой войны, государства Антанты обсудили проблему высадки в Киликии. Обсуждения начались с новой силой, когда стало ясно, что операция Дарданеллы не удастся. Но во время этих обсуждений осенью 1915 была выдвинута идея переговоров с Джемаль пашой. Российские власти узнали, что Джемаль был готов к сотрудничеству с союзниками; в обмен он надеялся захватить власть в Турции и был провозглашен султаном. Однако в этом случае Англия и Франция теряли возможность приобрести территорий Османской империи. Именно по этой причине переговоры не состоялись. Однако эта идея стала одной из причин, которые предотвратили проекты высадки в Киликии. С одной стороны, предотвращение переговоров, с другой стороны, отказ высадки в конечном итоге привело к уничтожению нескольких сотен тысяч армянских беженцев, сосредоточенных в пустынях Сирии.

**Poghosyan Samvel – *The Problem of Occupation of Cilicia and Negotiations with Djemal Pasha in Projects of Entente (Second Half of 1915)***

During the First World War, Entente states discussed the problem of landing in Cilicia. The discussions started with new strength, when it became clear that the Dardanelles operation failed. But during these discussions in autumn 1915, the idea of negotiations with Djemal Pasha was put forward. Russian authorities knew that Djemal was willing to cooperate with the Allies; in return for this he hoped to seize power in Turkey and to be proclaimed Sultan. However, in that case Britain and France would lose the opportunity to gain the territories of the Ottoman Empire. That was the reason why the negotiations with Djemal did not take place. However, this idea became one of the reasons, which prevented the projects of landing in Cilicia. Preventing the negotiations on the one hand and landing failure on the other, eventually led to annihilation of a few hundred thousand Armenian refugees concentrated in the deserts of Syria.



ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԵՅՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ  
ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԵՎ ԵՐԿՐԱՄԱՍԻ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

*Բանալի բառեր* – Խատիայան, Վրացյան, Քաջագունի, Թումանյան, Գեգեչկորի, Չխենկելի, Ժորդանիա, Կոմիսարիատ, Սեյմ, անկախություն, Թուրքիա, բոլշևիկյան Ռուսաստան

1917 թ. դեկտեմբերի 5-ին՝ Երզնկայի զինադադարի ստորագրումից հետո, իշխանական ճգնաժամն Անդրկովկասում թևակոխեց հերթական փուլ, որը բոլշևիկյան հեղաշրջմանը հաջորդած բուռն իրադարձությունների հետևանքն էր: Նոր իրավիճակի յուրահատկությունը պայմանավորված էր մի կողմից՝ երկրամասային իշխանության և բոլշևիկյան կենտրոնական ու տեղական ուժերի առձակատմամբ, իսկ մյուս կողմից՝ առավել կայուն իշխանության հաստատման հրամայականով: Սահմանադիր ժողովի ցրումը 1918 թ. հունվարին ավելի սրեց այդ գործընթացը, և Անդրկովկասում իշխանության խնդիրն ուղղակիորեն և բացահայտորեն առնչվեց երկրամասը Խորհրդային Ռուսաստանից վերջնականապես անջատելու, ինչպես նաև անդրկովկասյան ժողովուրդների անկախության հիմնահարցերին:

Այդ հետևողական քաղաքականությունն իրականացնողը սկզբնական շրջանում Անդրկովկասի կոմիսարիատն էր, այնուհետև՝ Սեյմը: Հարկ է վերջինիս գործունեության մեջ առանձին անցումային փուլ համարել նոր կառավարության ստեղծման հիմնահարցը, որին լուծում տրվեց 1918 թ. մարտի 13 (26)-ի Սեյմի 17-րդ նիստում:

Առաջնորդվելով Սեյմի ընդունած «Ծրագիր-Հռչակագրի» դրույթներով՝ մենշևիկ Ե. Գեգեչկորիի գլխավորած նորընտիր կառավարությունը ներկայացրեց իր առջև ծառայած առաջնահերթ խնդիրները, որոնցից առաջինը «կայուն հաշտության և Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների» վերականգնում էր<sup>1</sup>:

Առանձնացնենք երկու հանգամանք. նախ՝ պարտադրվում էր այն հետևողական մոտեցումը, որ Խորհրդային Ռուսաստանը չճանաչող «միասնական» Անդրկովկասն Առաջին աշխարհամարտի նախօրեին «բարիդրացիական» հարաբերություններ ուներ Օսմանյան կայսրության հետ: Այս հարցում

<sup>1</sup> Տե՛ս Закавказский Сейм, Стенографический отчет, Тифлис, 1918, Зас. 17-ое, с. 28.

կրկին առաջ էին մղվում բացառապես վրացական շահը և մոտեցումը: Չանտեսենք 1914 թ. վրաց-թուրքական հակառուսական գաղտնի պայմանագիրը, ինչը հակասում էր միասնական Անդրկովկասի իրական կարգավիճակին:

Հաջորդ մեծ հակասությունն այն էր, թե Ե. Գեգեչկորին ինչպես էր պատկերացնում այդ «պատվաբեր հաշտության» կնքումը Թուրքիայի հետ, որը, վերագրավելով Արևմտյան Հայաստանը, մոտենում էր Անդրկովկասին: Երգրումի անկումը, իսկ ավելի ուշ՝ Կարսի խայտառակ հանձնումը թուրքերին լիովին բացահայտում էին վրացական քաղաքականության միտումներն ու հեռանկարները և մասնավորապես այն ռազմավարությունը, որն ի վերջո հանգեցնելու էր Անդրկովկասում հայկական շահերի դեմ և հայկական տարածքների հաշվին կնքվելիք «պատվաբեր հաշտությանը»: Ե. Գեգեչկորիի ելույթի հիմքում խարսխված էր հենց այդ հակասական և զարմանալի հարցադրումը, ըստ որի՝ «պատվաբեր ու կայուն հաշտությունը տրվում է այն ժողովուրդներին, որոնք պատրաստ են զինված բազկով դիմագրավել իրենց տարածքի և կենսական շահի դեմ ուղղված թշնամու ոտնձգությունները»<sup>1</sup>: Նա հավանաբար նկատի ուներ հայերին:

Ուշագրավ է նաև այն, որ մարտի 13-ին՝ նախքան Անդրկովկասի անկախության հռչակումը, կառավարության նախագահը վստահեցնում էր, «որ մինչև արյան վերջին կաթին **իրենց անկախությունն ու ազատությունը** (ընդգծումը մերն է – Վ.Մ.) պաշտպանելու ելած Անդրկովկասի ժողովուրդների ամուր վճռականության վրա հենվելով՝ կառավարությունը ամեն ինչ կանի բոլորին հզոր հակահարված տալու համար»<sup>2</sup>:

Խոսելով թուրքական ներխուժման և դրա հնարավոր հետևանքների մասին՝ Ի. Ծերեթելին թե՛ հայերի և թե՛ վրացիների համար կանխատեսում էր միևնույն վտանգը: Պարզվում է նաև, որ 1918 թ. մայիսին Ժողովարանի և Խատիսյանի «միասին չխորտակվելու» մասին հայտնի երկխոսությունից առաջ՝ դեռևս մարտին, Ի. Ծերեթելին առաջ էր քաշում այն որոշիչ թեզը, թե «ծայրահեղ ճակատագրական պահերին չպետք է մոռանանք, որ Անդրկովկասի թվաքանակով մեծ երեք գլխավոր ազգերից յուրաքանչյուրը կարող է կործանել մյուսներին ու իրեն, և նրանցից ոչ մեկը չի կարող իրեն փրկել, եթե իր ամբողջ ուժերը չտրամադրի մյուսներին փրկելու համար»<sup>3</sup>: Նման անսքող ամբոխավարությանն ու ազգամիջյան հակասությունների պոռթկմանը մնում էր մեկ ամիս, երբ Ա. Չխենկելին Կարսը կհանձնեթ թուրքերին:

1917 թ. նոյեմբերից, երբ վրացական մենշևիզմի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ ձևավորվեցին Անդրկովկասի հակախորհրդային իշխանությունները՝ Կոմիսարիատը, ապա և Սեյմը, վրացական քաղաքական վերնախավը վրացական ազգային համագումարի ընդունած որոշումների

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 39:

հիման վրա մի քանի փուլով հետևողականորեն ընթանում էր երկրամասը բոլշևիկյան Ռուսաստանից անջատելու և անկախ Վրաստան ձևավորելու ճանապարհով<sup>1</sup>:

Անդրկովկասն անկախ հռչակելու վերաբերյալ մարտի 13-ի նիստում ելույթ ունեցան՝ վրացիներից Դ. Օնիաշվիլին, Գ. Գեորգաձեն, Գ. Գվազավան, Իվ. Լորդ-Կիպանիձեն, Գ. Լասխիշվիլին, Ռ. Արսենիձեն, Գոբեչիան, Ա. Չխենկելին, հայերից՝ Հ. Քաջազունին, Մ. Թումանյանը, Ալ. Խատիսյանը, թաթար-մուսուլմաններից Գ. Ռասուլ-Չադեն, Մուհամեդբեկովը, Ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը, ռուսներից՝ Յու. Սեմյոնովը, Ա. Կանտեմիրովը: Հատկապես այս նիստում կուսակցականության ու առավել ևս Մեյմի խմբակցությունների սկզբունքը հիմնականում ետին պլան էր մղվել՝ ի հաշիվ ազգային շահերի:

Անդրկովկասյան Մեյմի 1918 թ. ապրիլի 9 (22)-ի 22-րդ նիստը դարձավ բեկումնային. բոլշևիկյան հեղաշրջումից ի վեր այն դարձավ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և երկրամասն անկախացնելու գլխավոր ջրբաժանը: Վերլուծելով սույն նիստի ելույթների մոտեցումներն ու հիմնավորումները՝ մենք մեր առջև դնում ենք երեք գլխավոր նպատակներ. նախ՝ առաջին անգամ հայ, ինչպես նաև անդրկովկասյան պատմագրության մեջ համակողմանիորեն լուսաբանել հնչած ելույթների ուղղվածությունը, դրանց միջոցով պարզաբանել վրացական քաղաքական դաշտում շրջանառվող տարբեր հոսանքների գոյության փաստը, վեր հանել Անդրկովկասն անկախ հռչակելու անհրաժեշտության հիմնահարցը թուրքական արշավանքի, Տրապիզոնի, Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի բանակցությունների համատեքստում:

Նիստի բանախոս Դ. Օնիաշվիլիի գլխավոր հիմնավորումներից մեկն այն էր, որ «Անդրկովկասի խայտաբղետ էթնիկ պատկերն Անդրկովկասյան հանրապետության ստեղծումով կկարգավորի ժողովուրդների փոխհարաբերությունները», ինչը զուրկ էր որևէ հիմքից: Ելույթից բացահայտ զգացվում էր, որ նրա նպատակը Ռուսաստանից ցանկացած գնով անջատվելն էր և Տրապիզոնի ու Բրեստ-Լիտովսկի քաղաքական-դիվանագիտական գծի հաղթանակը:

Համոզված, որ իր հիմնավորումներն անհերքելի են, մենշևիկ Դ. Օնիաշվիլին հանձնաժողովի անունից Մեյմին առաջարկում է Անդրկովկասի դաշնային հանրապետությունը հռչակել անկախ:

«Անդրկովկասի ժողովուրդների միասնություն» կարգախոսը Գ. Գեորգաձեն, ինչպես և իր նախորդ մենշևիկ գործընկերն ուղղում էին բոլշևիզմի և հատկապես Ստ. Շահումյանի ու հայկական գործոնի դեմ: Անհնար է համաձայնվել Գ. Գեորգաձեի այն տեսակետի հետ, որ երկրամասի միասնությունը

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Մելիքյան Վ.**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը (1917 թ. նոյեմբեր-1918 թ. մարտ), Երևան, 2010:

նրա տարածքային անվտանգության երաշխիքն է, առավել ևս՝ երբ դա հայտարարվում էր Կարսի հանձնումից հետո:

Վրաց ազգային-դեմոկրատ Գ. Գվազավան, համեմատելով 1801 և 1918 թթ. իրողությունները, նշում էր, որ եթե 1801 թ. դեպի «լուսի, իրավունքի և ազատության իդեալ Եվրոպան» տանող միակ ճանապարհն անցնում էր Ռուսաստանով, ապա այժմ այդ ճանապարհը Մոսկվայի վրայով չի անցնում<sup>1</sup>: Թուրքիայի հետ ամենալայն ու բացահայտ փոխգործակցությանը նախապատվություն տալը պատգամավորն այսպես էր հիմնավորում. «Ներկա կոնյուկտուրայից ելնելով՝ մենք փոխում ենք մեր կողմնորոշումը ոչ թե Թուրքիային և կամ թուրք զինվորներին սիրելու պատճառով, այլ որովհետև սիրում ենք մեզ, մեր ժողովրդին, մեր դեմոկրատիան, որը հիմա պետք է ստեղծի մարդկային կոլտուրական կյանք, ինչը մենք չենք կարող սպասել բոլշևիկյան Ռուսաստանից»<sup>2</sup>: Ռուսաստանից «արյունաքամ Վրաստանի» փրկության միակ ուղին նա համարում էր Անդրկովկասի անկախության հռչակումը և բացահայտելով վրացական ազգայնականության իրական դեմքը՝ հայտարարում էր, որ «ցարիզմի անկման պահից ինքնին վերածնվեց ազատ Վրաստանը»<sup>3</sup>:

Տվյալ դեպքում պարզ է դառնում այն կարևոր հանգամանքը, որ ինչպես Տրապիզոնի, այնպես և Բաթումի բանակցություններում ոչ միայն հայկական կողմը, այլ առավելապես վրացիներն էին հայտնվել քաղաքական անորոշության մեջ, որոնք, դեպի Բաթում և Թիֆլիս շարժվող թուրքերի հետ բանակցելով, փորձում էին լուծել իրենց «հակառուսական խնդիրները»:

Մենշևիկ Իվ. Լորդ-Կիպանիձեն, հակադարձելով ձախ էսեռ Լ. Թումանյանին և կադետ Յու. Մեմլոնովին, իր ելույթը կառուցել էր հիմնականում հակաբոլշևիզմի, ժողովրդապետի հակառուսական արտաքին քաղաքականության վրա: Նա անգամ գտնում էր, որ Բրեստի հաշտությամբ բոլշևիկների՝ Կարսը, Արդահանը և Բաթումը Թուրքիային հանձնումով՝ Ռուսաստանը անուղղակիորեն ճանաչում էր Անդրկովկասի անկախությունը<sup>4</sup>:

Այս համատեքստում չափազանց ուշագրավ է Լորդ-Կիպանիձեի դիտարկումը թուրք-բոլշևիկյան համաձայնեցված գործողությունների վերաբերյալ: «Գոյություն ունի ինչ-որ տարօրինակ, համաձայնեցված, դավաճանական քաղաքականություն,– նշում էր էսեռ բանախոսը,– տարօրինակ կերպով ներդաշնակվում է թուրքերի ու բոլշևիկների հարձակումը. գրավում են Բաքուն, մի քանի օրից՝ Բաթումը, բոլշևիկները հարձակվում են Սուխումի վրա, թուրքերը գրավում են այլ շրջաններ: Այսօր ստացանք լուր, որ թուրքական բանակները գրավել են Գուրիայի մայրաքաղաք Օզուրգեթը, իսկ մյուս

<sup>1</sup> Տե՛ս Զակ. Сейм, зас. 22-ое, 9-ое апреля, с. 25:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 34:

կողմից՝ բուլճնիկները մտել են Քյուրդամիր»<sup>1</sup>: Ուստի Լորդ-Կիպանիձեն եզրակացնում էր, որ եթե չհռչակվի անկախությունը, ապա այդ երկու ուժերը շուտով կհայտնվեն Թիֆլիսում: Նրա կարծիքով, եթե «Քառյակ դաշինքին անհրաժեշտ է տիրել Բաքու-Բաթում գիծը, ապա ավելի լավ է հնազանդվել որպես անկախ երկիր. ապագա միջազգային խորհրդածողովին Անդրկովկասը կներկայանա որպես զինված ագրեսիայի հետևանքով հնազանդեցված երկիր»<sup>2</sup>:

Մի կողմից դժվար է թերագնահատել Լորդ-Կիպանիձեի հեռատես, բավականին սթափ վերլուծությունը, անգամ իր ժամանակի գործչի համար գրեթե անհնար կանխատեսումները ապագա բուլճնիկյան-քեմալական համագործակցության վերաբերյալ: Նա իրավացի էր փաստելով, որ Անդրկովկասը, հեռանալով բուլճնիզմից, իսկ վրացիների պարագայում՝ Ռուսաստանից, փաստորեն ենթարկվում էր Թուրքիային: Իրականությունն այն էր, որ այդ ուղղորդիչ հարցում գերակշռում էր վրացական ազգային շարժման ազդեցությունը, որը Թուրքիայի հետ ամեն գնով հարաբերություններ հաստատելը, վերջինիս կողմից նվաճվելը գերադասում էր բուլճնիզմից և ռուսական կողմնորոշումից: Տվյալ դեպքում վրաց գործիչներին ամենևին չէր հետաքրքրում հայության ճակատագիրը. դրանով է հիմնականում բացատրվում նաև Կարսի հանձնումը: Մեկ ազգի շահի տեսանկյունից դա ինչ-որ չափով կարելի է ընդունելի համարել, սակայն եթե խոսքը վերաբերում է հատկապես հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած փուլում միասնական Անդրկովկասի՝ Կոմիսարիատի, Մեյմի, այնուհետև դաշնային հանրապետություն ստեղծելու գաղափարին, ապա ծառանում է գլխավոր հարցը՝ առանց հարևանների շահերը և հատկապես նրանց միջազգային կարգավիճակը հաշվի առնելու ինչպե՞ս էր լուծվելու Վրաստանի խնդիրը մանավանդ թուրքական արշավանքի պայմաններում:

Գ. Լասխիշվիլին հպարտորեն արձանագրում էր, որ Անդրկովկասում ստեղծվել են ոչ միայն անկախ կառավարություն և անկախ օրենսդիր հաստատություն, այլև հիմք է դրվել Թուրքիայի և Գերմանիայի հետ միջազգային հարաբերություններ հաստատելու գործընթացին: Այդ ամենը, նրա կարծիքով, անկախ պետության բաղկացուցիչներ են: Նա նույնպես ոգևորված նշում էր. «Մենք փաստորեն իրականացրել ենք մեր անկախությունը, և մեզ միայն մնում է պաշտպանել այդ անկախությունը մեծ վտանգից անարխիստական հյուսիսից ու մեզ վրա արշավող հարավից»<sup>3</sup>: Կեղծիքն ու հակասությունը միափոխվում էին հարցադրման մեջ. «միջազգային հարաբերություններ» հորջորջվող հասկացությունը ինչպե՞ս կարող էր տեղավորվել հարավից, այսինքն՝ Թուրքիայից եկող «մեծ վտանգի» սահմաններում, և որ առա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>3</sup> Նույն տեղում:

վել կարևոր էր՝ ո՞ր ժողովուրդն ու ուժերն էին պաշտպանելու այդ «միասնական», ժողովրդավարական երկրամասը:

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկ պատգամավոր Ռ. Արսենիձեն իր հերթին ցավ էր հայտնում, որ «շատ դժվար է մեկ հարվածով կտրել իրենց կուսակցության անվան մեկ հատվածը», այսինքն՝ Ռուսաստան բառը: Նա իր կուսակցության խմբակցության համար կատարված փաստ էր համարում Ռուսաստանից անջատվելը<sup>1</sup>: Հարց է առաջանում՝ ո՞ր մնաց կուսակցական կարգապահությունը, ինչպե՞ս կարող էին վրաց մենշևիկներն առանց իրենց կուսակցության ղեկավար մարմնի որոշման միակողմանիորեն դուրս գալ, անջատվել այն երկրից, որտեղ գտնվում էին այդ կուսակցության կենտրոնական կոմիտեն, առաջատար գործիչները, որոնք, ի դեպ, անմնացորդ պայքարում էին այդ նույն ատելի բոլշևիզմի դեմ: Ընդգծենք, որ այս նիստում լռում էին Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին ու վրացական մենշևիզմի հայր Ի. Օերեթելին: Չէ՛ որ հենց նրանք պետք է աջակցեին համառուսաստանյան մենշևիզմին և միասնական պայքարով հաղթահարեին ընդհանուր վտանգը և ոչ թե Թուրքիայի հետ մերձենալով՝ լքեին իրենց «դաշնակցին»: Մեր կարծիքով, կարելի է փաստել, որ այս նիստում վրաց մենշևիկներն անուղղակիորեն կասեցնում էին իրենց գործունեությունը, չնայած «ռուսական դեմոկրատիա» բառակապակցությունը դեռևս միառժամանակ կօգտագործվեր նրանց կողմից, և ինչպես Ռ. Արսենիձեն էր հույս հայտնում՝ «ռուսական դեմոկրատիան կհասկանա անջատվելու մեր քայլը»<sup>2</sup>:

Անդրադառնանք մուսուլման պատգամավորների կարծիքներին. Գ. Ռասուլ-Ջադեի մոտեցման կենտրոնում ևս «հյուսիսային իմպերալիզմի» և թուրքական արշավանքի միջև անօգնական Անդրկովկասի անելանելի կացությունն էր, և փրկության միակ ելքը նա համարում էր անկախության հայտարարումը:

«Իթթիհադի»-ի ներկայացուցիչ Մուհամեդբեկովը, որը, հավանություն տալով անկախության գաղափարին, այդ պահին արդեն փորձում էր պանթուրքիստական հեռահար խնդիրներ լուծել, հիմնավորում էր Դադստանի պարտադիր ընդգրկումը անկախ Անդրկովկասի կազմում<sup>3</sup>:

Ա.-ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը ընդգծում էր, որ պատմական ակտի հռչակումը իրականացվում է օբյեկտիվ նախադրյալների բերումով: Դրանց թվում նա առանձնացնում էր ուժգնացող կենտրոնախույս ուժերի ակտիվացումը և որպես լավագույն օրինակ վկայակոչելով Մալոռոսիայի (Ուկրաինա) անջատումը Ռուսաստանից՝ գտնում էր նույնիսկ, որ անկախացման հարցում Անդրկովկասն ուշացել է<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 43:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 39:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 41:

Հայազգի պատգամավորներից ելույթներով հանդես եկան երեքը, որոնցից Հ. Քաջագունին և Ալ. Խատիսյանը կողմ արտահայտվեցին անկախությանը, իսկ Էսեռ Լ. Թումանյանը դարձավ այս նիստի առանցքային ընդդիմախոսը՝ առաջ անցնելով կադետ Յու. Մեմյոնովից:

Քաջագունին մենշևիկ Լորդ-Կիպանիձեի՝ բուն ծափերով ընդունված ելույթից հետո հայտարարեց. «Քաղաքացիներ, Մեյմի անդամներ: Դաշնակցություն խմբակցությունը, լիարժեք հստակությամբ գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որն իր վրա է վերցնում այս պատմական պահին, միանում է անդրկովկասյան պետության ինքնուրույնության հռչակմանը»<sup>1</sup>: Կարող ենք նկատել, որ նա «անկախություն» բառի փոխարեն օգտագործում է «ինքնուրույնություն»՝ ավելի ցածր կարգավիճակի եզրույթը:

Ապրիլի 11 (24)-ի «Հորիզոնի» խմբագրականում այդ պատմական նիստը որակվում էր որպես «հուղարկավորություն, թաղում» և «ծննդաբերության երկունք», նշվում էր, որ «դեմոկրատիան փորում է իր գերեզմանը», իսկ «երբ մեզ ուժով անջատեն Ռուսաստանից, մեր վերքից դուրս կծորա մեր ամբողջ արյունը»: Ցավալին այն էր, որ, մեջ բերելով Քաջագունու վերը նշված խոսքերը, «Հորիզոնը» ևս փաստում էր. «Մենք էլ այսօր ուրիշ խօսք չունենք ասելու»<sup>2</sup>:

Մի քանի օր անց անկախության հռչակման ակտին իր խմբագրականը նվիրեց Ս. Վրացյանը: Նա այդ որոշումը որակում էր որպես «պատմական անհրաժեշտություն» և այն հիմնավորում հետևյալ կերպ. «Մենք ոչ միայն պաշտպանութիւն չգտանք կենտրոնի կողմից այն անհաւասար պայքարի մէջ, որ մղում է մինչեւ այսօր արտաքին թշնամու դէմ, այլեւ ստացանք Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, դուրելով կատարված փաստի առաջ: Մենք կորցրինք մեծ պետութեան բոլոր առաւելութիւնները և, մյուս կողմից՝ ձեռք չբերինք և փոքր պետութեան համեստ միջոցները և ապահովութիւնը: Ստեղծվեց մի անտերութիւն, այսպէս ասած, անպետութիւն ... անհրաժեշտ է ստեղծել իրաւական կացութիւն»<sup>3</sup>:

Նա ինչ-որ տեղ արդարանում էր նաև, որ «ռուսական մեծ դեմոկրատիան ոչ մի հիմք չունի մեզ դատապարտելու: Մենք վատութիւն չարինք. չդաւաճանեցինք հեղափոխութեան սկզբունքներին: Մօտիկ ապագան ցոյց կտայ, թե որքան հիմնաւոր են եղել Անդրկովկասեան դեմոկրատիայի ենթադրութիւնները: Մի բան սակայն պարզ է. հեռանկարները չեն կարող լինել աւելի վատ, քան պէտք է լինէին ներկա անորոշ, անհոյս կացութեան հարատւելու դեպքում»<sup>4</sup>:

Վրացյանն ու Խատիսյանը բարձր են գնահատել Քաջագունու հակիրճ,

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> «Հորիզոն», 1918, 11 (24) ապրիլ, թիվ 76:

<sup>3</sup> Նույն տեղում, 14 (27) ապրիլ, թիվ 79:

<sup>4</sup> Նույն տեղում:

գուսպ և, իրենց կարծիքով, տարողունակ ելույթը: Այդ կապակցությամբ փորձենք վեր հանել հենց իր՝ Քաջագունու մտորումները, Անդրկովկասի անկախության հռչակման պատճառներին առնչվող նրա պատկերացումները:

Ինչպես և Խատիսյանը, նա ևս կարծում էր, որ Մեյմի վրաց մենշևիկների շրջանում կար երկու հոսանք, որոնք ունեին երկու տարբեր կողմնորոշումներ՝ ռուսական ու գերմանա-թուրքական: Առաջինները չէին ցանկանում կտրվել թե անջատվել Ռուսաստանից, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը համարում էին անընդունելի և կարծում, որ ծանր հաշտության համեմատությամբ այն չարյաց փոքրագույնն է: Երկրորդ հոսանքը դեմ էր Ռուսաստանին, ռուսական վտանգը Վրաստանի անկախության համար համարում էր ավելի մեծ, քան թուրքականը և պատրաստ էր դիմելու ամենամեծ զիջումների՝ հանուն Թուրքիայի հետ փոխըմբռնում հաստատելու: Այլ կերպ ասած՝ հույս ուներ, թե Հայաստանի հաշվին կհաջողվի Վրաստանի համար փրկել եթե ոչ ամբողջ Աջարիան, ապա գեթ Բաթումը:

Մեյմի դաշնակցական խմբակցությունը ո՛չ ուզում էր անջատվել Ռուսաստանից, ո՛չ էլ բարեկամության նվազագույն ակնկալիքներ ուներ թուրքերից: Քաջագունին վկայում է, որ հակառակ իր գեկուցման՝ Ալեքսանդրապոլի ապրիլյան հայտնի խորհրդակցությունը վճռեց մերժել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և շարունակել պատերազմը: «Բայց իրականացնել այդ որոշումը, – նշում էր նա, – չէր տրած մեզ, որովհետեւ մենք չէինք դրութեան տերը, ոչ իսկ մեր սեփական բախտի տերը»<sup>1</sup>: Հետևում է նրա գլխավոր եզրահանգումը. «Հեշտ սրտով չէր, որ մենք արինք այդ. բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտայայտեինք, Անդրկովկասեան դաշնակցական (դաշնային – Վ.Մ.) Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու ադրբեյջանցիներն իսկոյն պիտի հաշուէին թուրքերի հետ ու թողնէին մեզ մենակ երես առ երես Վէհիպ փաշայի բանակի դէմ – մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բոլշեւիկեանը, ոչ հակաբոլշեւիկեանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթէ նոյնիսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբեյջանցիները (ո՛վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լօռին ու Փամբակը ամբողջովին գրաւելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում որ նա քանդուի, իսկ եթէ քանդուելու է որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թէ ինչու հարկադրուած էինք հետեւելու մեր դաշնակից-դրացիների քայլերին»<sup>2</sup>:

Հիմնականում բաժանում ենք նրա մտտեցումը, սակայն երկու վերապահումով.

---

<sup>1</sup> Քաջագունի Յուլի., Հ.Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 27-28:

<sup>2</sup> Եւսկան տեղում:



ա) իրադարձությունները շատ արագ ապացուցեցին, որ հայությունը և Դաշնակցությունը բոլոր դեպքերում մենակ մնացին Վեհիբ փաշայի բանակի դեմ, այնպես որ դաշնային հանրապետությանը չմիանալու փաստը ոչինչ չէր փոխի: Տարբերությունը կլիներ այն, որ հայկական զինուժը ստիպված կլիներ իր «մայիսյան հերոսամարտը» մղել ոչ թե Արարատյան դաշտում, այլ Կարսի և Ալեքսանդրապոլի մատույցներում, մանավանդ որ Քաջազունին ևս կարծում էր, որ «հայերը ամենից աւելի շահագրգռւած էին զենքով կանգնեցնելու թուրքերի արշաւանքը, որովհետեւ գիտէին, որ ամենից աւելի տուժողը (թերեւս միակ տուժողը) իրանք են լինելու եւ որովհետեւ դեռ յոյս ունէին ռազմական յաջողութեան վրայ»<sup>1</sup>:

բ) Ակնհայտ է, որ Քաջազունին ևս իր աղմկահարույց աշխատության մեջ չի փորձել քաղաքական այդ հորձանուտում գոնե այլընտրանք տեսնել կամ առնվազն հպանցիկ անդրադառնալ դրան: Ինչպես մեզ է թվում, այլընտրանքն ու օգնությունը, ի դեմս Ստ. Շահումյան – Դաշնակցություն կարճատև համագործակցության, 1918 թ. ապրիլին կարող էին կանխել հետագա բոլոր արհավիրքները: Հասկանալի է, որ անկախություն հռչակելու հնարավորությունը բացառված կլիներ, սակայն կպահպանվեր հայկական գործոնի դերը, և չէր հնչի Քաջազունու հուսահատ եզրահանգումը՝ «մենք չէինք դրութեան տէրը»:

Ավելին, այս տեսակետի օգտին է վկայում այն փաստը, որ նույն նիստում տեղի ունեցան սպասված բախումն ու առճակատումը վրաց-թաթարական դաշինքի հետ, երբ պարզվեց, որ Կարսը խայտառակ դավաճանությամբ հանձնվել է թուրքերին, ինչպես նաև այն, որ 1918 թ. հուլիսից դաշնակցությունը Բաքվի հայանպաստ իշխանությունը փրկելու վերջին ճիգն էր գործադրել:

«Հորիզոնը», մեջբերելով Թիֆլիսի «Единение» անկուսակցական թերթի հաղորդումը, թե «արդեօք Լենինը մտադիր չէ օգնելու Անդրկովկասին թուրքերի դեմ վարած պատերազմում», հրամցնում էր խորհրդային պատվիրականության ղեկավար Իոֆֆեի առաջարկը՝ օգնության դիմաց Բրեստ-Լիտովսկի պայմաններն ընդունելու վերաբերյալ: Ավելին, դաշնակցության գլխավոր լրագիրը հայտնում էր, որ Բաքվի բոլշևիկները խոստացել են օգնել Անդրկովկասին, եթե վերջինս ընդունի ժողկոմխորհի իշխանությունը: Նույն համարը հայտնում էր նաև, որ «Մոսկվայից եկողները պատմում են, որ այժմ Մոսկվայում բոլշևիկների վերաբերմունքը դեպի հայերը լավ է»<sup>2</sup>:

Այժմ քննարկենք Լ. Թումանյանի և Յու. Մեմյոնովի հակադիր կարծիքները: Թումանյանը նախ նշում է, որ ինքն արտահայտում է սոցիալիստ-հեղափոխականների խմբակցության այն հատվածի դիրքորոշումը, որը այս պա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>2</sup> «Հորիզոն», 1918, 24 (11) ապրիլի, թիվ 76:

հին դեմ է անկախացմանը: Նրա հարցադրումները վերաբերում էին հիմնականում երկու խնդրի. Առաջինը՝ անկախության նկատմամբ Անդրկովկասի ժողովուրդների կամքի արտահայտմանը, իսկ երկրորդը՝ թուրքական կողմնորոշմանը կամ ավելի ստույգ՝ թուրքական հպատակության հիմնահարցերին:

Թումանյանը չէր ընդունում, որ Անդրկովկասի անկախության հռչակումը երկրամասի ժողովուրդների կամքի դրսևորում է, և հարցնում էր ներկաներին, թե ինչու իշխանությունը այդ ժողովուրդներին չի դիմում հարցով, թե արդյոք ք նրանք ցանկանում են այդ անկախությունը, ինչո՞ւ այդ ժողովուրդները չարտահայտվեցին Մահմանադիր ժողովի ընտրությունների պահին, ինչո՞ւ չի կարելի հանրաքվե անցկացնել<sup>1</sup>:

Քաղաքական կողմնորոշման հարցում Թումանյանը գտնում էր, որ եթե «այժմ առաջ է եկել անջատման, անկախության, ինքնուրույնության մասին այդ գաղափարը, ապա պետք է ազնվորեն ընդունել, որ այն բխում է թուրքական իմպերալիստներից. եթե դա այդպես չէ, ապա ես ձեզ հարցնում եմ, թե Մահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ քաղաքական կուսակցություններից ո՞րն էր իր կարգախոսն ընտրել Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից: Այդպիսի կուսակցություն չի եղել, քաղաքացիներ, Սեյմի անդամներ»<sup>2</sup>: Իսկապես, «Հորիզոնը» ապրիլի 12-ին խոստովանում էր, որ հասարակությունը բավականաչափ նախապատրաստված չէր քաղաքական այդ մեծ քայլն ըմբռնելու և դրան ընդառաջելու, որովհետև անդրկովկասյան ժողովուրդների ժողովրդավարությունը, երկար տարիներ պայքարելով ռուսական միապետության դեմ, «այնուամենայնիվ իր դրոշակի վրա երբեք չի գրել պետական անկախության նշանաբանը: Նա ձգտել է մերթ տեղական լայն ինքնավարության, մերթ քաղաքական ավտոնոմիայի և վերջապես ժողովրդականացրել է ռամկավար ֆեդերացիայի գաղափարը Ռուսաստանի պետական պայմաններում»:

Քաղաքական կողմնորոշման փոփոխման կապակցությամբ «Հորիզոնը» իր համերաշխությունն էր հայտնում վրացական ս. -դ. օրգան «Էրթոբայի» այն եզրահանգմանը, թե «ընդհանրապես բոլոր փոքր ազգերը այժմյան համաշխարհային փոթորիկի մեջ ստիպված են իրենց օրիենտացիան փոխել և այն ուժն ընդունել, որն իրեն մոտ է գալիս»<sup>3</sup>: Միաժամանակ թերթը գովելի, բայց ոչ հեռատես վերապահում էր անում, թե «մենք նոր օրիենտացիան առանց կովի չենք ընդունի, կկովենք մինչև այն ժամանակ, երբ մի գորեղ ու կուլտուրական պետություն պաշտպան կհանդիսանա մեր օրիենտացիայի ու նրա ապահովության երաշխավորությունը կտա մեզ»<sup>4</sup>: Այս դեպքում «կուլտուրա-

<sup>1</sup> Տե՛ս Յակ. Շեյմ, Յակ. 22-օր, շ. 14:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Հորիզոն», 1918, 24 (11) ապրիլի, թիվ 76:

<sup>4</sup> Նույն տեղում:

կան» պետությունը, ի հարկե, բոլշևիկյան Ռուսաստանը չէր, այլ Գերմանիան:

Վրացական ազգայնականների «Սաքարթվելոն» փորձում էր այդ որոշման սթափ գնահատականը տալ և հիմնավորել Թուրքիայի դիրքորոշումը. «Ինչպես Կ. Պոլսի կառավարության ապրիլի 10-ի (նոր տոմար) գրությունից երևում է, ինքը՝ Թուրքիան է պահանջում Անդրկովկասի անկախությունը, որպես հաշտության բանակցությունները վարելու անխուսափելի պայման: Անկախ Անդրկովկասը ամենալավ պատնեշը կլինի Թուրքիայի կայսրության համար՝ ռուսական իմպերալիզմից պաշտպանվելու համար: Իր կողմից էլ Անդրկովկասում հիմնվող նոր պետությունը երկյուղալի չի լինի Թուրքիայի ամբողջության համար, թե ցեղային ու կրոնական և թե զինվորական տեսակետից»<sup>1</sup>:

Սեյմի անդամ կադետ Յու. Սեմյոնովի հարցադրումները հիմնականում դատապարտող, մերկացնող բնույթի էին: Նրա կարծիքով, չառաջադրվեցին անկախության օգտին արված լուրջ կովաններ: Նա հիշում էր, թե 1916 թ. Մոսկվայում կայացած Համառուսաստանյան քաղաքների միության համագումարում Կովկասյան բաժանմունքն առաջին անգամ ներկայացնող լիագոր Խատիայանն ինչպես է ասել, որ «եթե մեզ, Անդրկովկասն ուժով պոկեն Ռուսաստանից, ապա բացված վերքից կհորդա մեր ամբողջ արյունը»<sup>2</sup>: Յու. Սեմյոնովը նշում էր, որ այդ նույն տրամադրությունն ինքը զգացել է նաև Սեյմի փետրվարի 21-ի նիստում, երբ առաջին անգամ քննարկվում էր Անդրկովկասի անկախության հարցը:

Ուշագրավ է, որ խոսելով այն մասին, թե հնչած բոլոր պատճառաբանություններին ներկաներից և ոչ մեկը հավատ չի ընծայում, Յու. Սեմյոնովը ինչոր առումով միամտորեն հավաստիացնում էր, որ բոլորին դա ստիպում է անել Մուսավաթի խմբակցությունը, և ավելացնում. «Մեկ շաբաթ առաջ, երբ այստեղ լուծվում էին պատերազմի ու խաղաղության, Տրապիզոնի պատվիրակությունը ետ կանչելու հարցերը, կար մի հատված, որն ասաց, թե «մենք այդ Անդրկովկասը չենք պաշտպանի», «մենք թուրքերի դեմ չենք կռվի»: Եվ դուք, որ մեկ շաբաթ առաջ խոսում էիք ռուսական կողմնորոշումից, հիմա ընտրում եք թուրքականը: Եվ երբ ասում եք, թե Անդրկովկասի անկախությունն անդրկովկասյան կողմնորոշումն է, կողմնորոշում է իր համար, դա ճիշտ չէ, դա թուրքական կողմնորոշում է: Եթե դա իրոք լիներ ներսից բխող ինքնորոշման ակտ, դուք վաղուց կանկախանայիք»<sup>3</sup>:

Մեր կարծիքով, անվիճելի էր նաև Յու. Սեմյոնովի փաստարկն առ այն, որ «այդ մեծ ակտից հետո, ինչպիսին է անկախության հռչակումը, բոլոր մյուս ակտերը փոքր կլինեին, և դուք համաձայն կլինեք դրանց հետ և կդառ-

<sup>1</sup> Նույն տեղում, 25 (12) ապրիլի, թիվ 77:

<sup>2</sup> Зак. Сейм, за с. 22-ое, с. 16:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 18:

նաք կենտրոնական տերությունների դաշնակիցները»<sup>1</sup>: Նա հեռատեսորեն ակնարկում էր, որ երկրորդ կարևոր ակտը կհանգեր Թուրքիայի հետ բանակցություններում ընդգրկվելուն ու դրանց արդյունքում կնքված ստորագուցիչ պայմանագրին: Ապա հետևում է նրա գլխավոր հարց-կշտամբանքը. «Եթե հիմա չէք կարողանում հաղթահարել ձեր տարանջատվածությունը, հետո ի՞նչ եք անելու»<sup>2</sup>: Յու. Մեյրնոփը իրավացի էր, որ Քառյակ դաշինքին անդամակցելով՝ անկախ Անդրկովկասը փաստորեն շարունակելու էր ընթացք տալ վերջինիս գերմանա-թուրքական նկրտումներին երկրամասում: Ավելին, նա կարծում էր, որ անկախանալով և ինքնորոշման սկզբունքից ելնելով, երկրամասի կառավարությունը պետք է ճանաչի նաև Բաքվի ինքնորոշումը: Մա, իհարկե, ծայրահեղական հայտարարություն էր, քանի որ Բաքուն չէր ինքնորոշվել, այլ ապրիլից այստեղ հաստատվել էր խորհրդային իշխանություն:

Այնուհետև, ըստ ծրագրված սցենարի, նախագահ Չխենկելին հայտարարում է, որ ելույթները սպառվել են, և առաջարկության համար ձայնը տալիս է նիստը բացող Դ. Օնիաշվիլին:

Վերջինս պարզապես հայտարարում է նախապես մշակված բանաձևը. «Անդրկովկասյան Մեյրնոփը որոշեց. Անդրկովկասը հռչակել անկախ ժողովրդավարական, դաշնային հանրապետություն»: Քվեարկությամբ բանաձևը ձայների մեծամասնությամբ ընդունվում է<sup>3</sup>: Կողմ են քվեարկում ա.-դ. մենշևիկների, վրացական էսեռների, դաշնակցության և մուսավաթի խմբակցությունները: Մինչև քվեարկությունը դահլիճը լքել էին մի քանի ռուս, հայ և 2-3 վրացի ա.-դ. մենշևիկներ<sup>4</sup>:

Ապրիլի 9 (22)-ի նիստի վերջում անդրկովկասյան հաշտության պատվիրակության հաշվետվությամբ հանդես եկավ նաև վերջինիս նախագահ Չխենկելին: Մանրամասների մեջ չխորանալով՝ մենք կներկայացնենք նրա մտորումներն ու կարծիքները անկախության հիմնահարցի համատեքստում:

Չխենկելին իր խոսքը սկսում է գլխավորից. «Երբ մենք ժամանեցինք Տրապիզոն և հարաբերության մեջ մտանք օսմանյան պատվիրակության հետ, առաջին հարցը, որ մեզ տրվեց, այն էր, թե «դուք ո՞վ եք, ի՞նչ պետություն եք դուք ձեզնից ներկայացնում, ինչպիսի՞ն է ձեր պետության կառավարման ձևը»: Մեր պատասխանը նրանց չբավարարեց: Հիմա ձևավորված Մեյմի վստահության քվեն արդեն կտա որոշակի պատասխան՝ մենք անկախ անդրկովկասյան դաշնային, ժողովրդավարական հանրապետության

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 56:

<sup>4</sup> Տե՛ս **Аркомед С. Т.**, Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923, с. 67:

քաղաքացիներ ենք: Չնայած մենք ասում էինք, որ բոլշևիկյան հեղաշրջումից ի վեր մեր պետությունը փաստորեն արդեն գոյություն ուներ»<sup>1</sup>: Հենց սա էին պնդում Լ. Թումանյանն ու Յու. Սեմյոնովը՝ ընդգծելով անդրկոմկապյան իշխանության ոչ իրավասու և ոչ իրավատեր լինելու հանգամանքը: Իսկապես, Կոմիսարիատը կարող էր հավակնել միայն ժամանակավոր իշխանության կարգավիճակին, ինչպիսին որ ուներ: Չխենկելին միայն հաստատում էր քննադատությունների գլխավոր բովանդակությունը, այն է՝ հարկ է հեռանալ, անջատվել Ռուսաստանից, որից հետո թուրքերի հետ հնարավոր կլինի երկխոսության մեջ մտնել:

Երկրորդ հարցադրումը վերաբերում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրին. Չխենկելին հայտնում էր, որ եթե, ըստ թուրքերի, Անդրկոմկասն անկախ պետություն է, ապա ինչու պաշտոնապես դա հայտնի չէ, չի եղել տերություններին ուղղված հայտարարություն, ուստի և այդ անկախությունը չի ճանաչվել: Ստացվում է, որ Անդրկոմկասը Քառյակ միության ու Թուրքիայի համար Ռուսաստանի մասն է, ուստի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը պարտադրվում է: Նույնիսկ այս տրամաբանության սահմաններում Չխենկելի նրբանկատ դիվանագիտությունը ծանրակշիռ դեր չէր կարող խաղալ: Նա պատասխանում էր, որ եթե դա այդպես է, ապա ինչու է պարտադրվում Անդրկոմկասյան Սեյմին ճանաչելու Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը? «Եթե մենք Ռուսաստանի մասն ենք, եթե մենք փաստացի ոչ անկախ պետություն ենք, ապա ինչու են նրանք պարտադրում մեզ ճանաչել այդ պայմանագիրը, – եզրակացնում էր Չխենկելին: – Տրապիզոնում երկու պատվիրակության գտնվելու փաստը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը երկուսի կողմից անտեսելու ապացույց է, և Թուրքիայի հետ պայմանագիրը Անդրկոմկասի անկախ պետության կողմից վավերացնելուց հետո, իհարկե, կիրականացվեն միջազգային իրավունքի բոլոր ձևականությունները»<sup>3</sup>:

Այնուհետև հետևում է թուրքական հայտնի շանտաժ-պահանջը, ըստ որի՝ բանակցությունները կարող են շարունակվել միայն այն դեպքում, եթե Սեյմը հրաժարվի այսպես կոչված սանջակների՝ Բաթումի, Կարսի, Արդահանի նկատմամբ պահանջներից, իսկ Թուրքիան պատրաստ կլինի ճանաչելու Անդրկոմկասի անկախությունը<sup>4</sup>:

Որպես զիջում Չխենկելին այդ «վիճելի շրջաններից» առաջարկել էր Օլթիի ամբողջ շրջանը, Արդահանի օկրուգի, ինչպես նաև Կարսի մարզի կեսը և Կաղզվանի օկրուգը: Դժվար չէ նկատել, որ դրանք հայկական տարածքներն էին: Նրա արդարացումները, թե իբր ինքը պահանջել է այդ քաղաքները կապող ռազմավարական ճանապարհներից օգտվելու իրավունքը,

<sup>1</sup> Зак. Сейм, зас. 22-ое, с. 57:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

կոպտորեն մերժվում է օսմանյան կայսերական կառավարության վերջնագրով, որը, հենվելով իր պատվիրակության հռչակագրի վրա, պնդում էր, որ Անդրկովկասի պատվիրակությունը «ընդհանրապես պետք է հրաժարվի այդ սանջակներից և ընդունի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը»<sup>1</sup>:

Թուրքիայի դեմ Անդրկովկասի մուսուլմանների չեղվելու հարցում Չխենկելիի ամբոխավարությունը հասնում էր լկտիության: Նա դա համարում էր միանգամայն օրինաչափ և նույն հարթության վրա զուգահեռներ անցկացնում Ռուսաստանի հանդեպ քրիստոնյա ժողովուրդների վերաբերմունքի միջև, որոնք «նման պայմաններում չէին գնա Ռուսաստանի դեմ պատերազմի»<sup>2</sup>: Հայերը՝ միգրացե, բայց հայտնի է նաև 1914 թ. թուրք-վրացական պայմանագիրը, ըստ որի՝ Վրաստանը հակառուսական ռազմական դաշինք էր կնքել: Եթե, ըստ Չխենկելիի, մուսուլմաններն այլ ելք չունեին և անդրկովկասյան պետության մեկ հիմնարար կողմն էին, ավելին՝ անհնար էին համարում Անդրկովկասի՝ ռուսական պետության մաս կազմելը, ինչպես քրիստոնյաների համար հնարավոր չէր ընդունել Թուրքիայի մասը կազմելու հնարավորության տարբերակը, այլևս ինչո՞ւ էր սկիզբ առել ընդհանրապես միասնական պետությամբ հանդես գալու գաղափարը: 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. փետրվարի սկիզբը հակաբոլշևիկյան ալիքի վրա դա դեռ ընդունելի ու հասկանալի էր, սակայն 1918 թ. ապրիլին թուրքական նպատակալաց ու անզիջում առաջխաղացման պայմաններում, երբ դրվում էր հատկապես Հայաստանի վերացման ու հայ ժողովրդի բնաջնջման խնդիրը, ինչպե՞ս էր պատկերացնում մենշևիկ Չխենկելին ճակատի միասնական պաշտպանության հարցը: Այդպես էլ եղավ. մասնավորապես Ղարաբաղիստանի հերոսամարտով հայերը փրկեցին Թիֆլիսը ու վրացիներին, որոնք, ինչպես հայտնի է, խուճապահար փախչում էին Հյուսիսային Կովկաս:

Այս նիստում ևս մեկ անգամ հիմա արդեն բախտորոշ պահի դրսևորվեց վրաց-թաթարական-թուրքական դաշինքը: Փաստն այն էր, որ Չխենկելին բացահայտորեն պաշտպանում էր հենց մուսուլման եղբայրներին և ոչ թե քրիստոնյա դարավոր բարեկամներին: Չէ՞ որ հայերի պատմական տարածքների հաշվին էր իրականանալու վրացական ենթադրյալ «մեծ հաշտությունը» Թուրքիայի հետ, հարևանի տարածքների հաշվին էր նա անկախություն քարոզում և միասնություն գովերգում: Գիտակցելով այդ ամենը՝ Ս. Վրացյանը այդ «խուժանավարությունը» բացատրում էր Կովկասի մուսուլմանների տեսակարար կշռի բարձրացումով, որոնց «չխենկելիները քծնում ու սիրաշահում էին»<sup>3</sup>:

Այսպիսով, ամփոփելով անկախության վերաբերյալ արտահայտված կողմ և դեմ ելույթները, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 59:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1995, էջ 109:

ա) վերջնականապես բացահայտվում էր հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած վեց ամիսների գլխավոր քաղաքական հակասությունը. մի կողմից՝ լիովին պարզ էր, որ այդ հեղաշրջման պատճառով հակահեղափոխական, հակաժողովրդավարական, ինչպես նաև ռուսական պետության համատեքստում և ռուսական հակապետական քաղաքականության կիրառումը երկրամասն իրականում հեռացնում էր խորհրդայնացված Ռուսաստանից, անջատողականության և անկախության ձեռքբերման քաղաքական պարարտ դաշտ ստեղծում: Այս հարցում Անդրկովկասը ռուսական նախկին բազմազգ կայսրության՝ բացառություն կազմող միակ տարածաշրջանը չէր: Սակայն մյուս կողմից էական հակասություն կար վրացական-մուսուլմանական թևի այն հարցադրման մեջ, թե Անդրկովկասը այժմ գործ ուներ «ռեակցիոն Ռուսաստանի» հետ: Հասկանալի է, որ նրանք նկատի ունեին բոլշևիկյան վարչակարգը, բայց դրանով իսկ նրանք միաժամանակ հմտորեն խուսափում էին պետականամետ Ռուսաստանի, ասենք՝ գեներալ Ա. Դենիկինի և այլոց ծավալած շարժումից, ինչն անուղղակիորեն և հասկանալի կերպով պաշտպանում էր կադետ Յու. Մեմյոնովը և անուղղակի կերպով՝ անգամ էսէռ Թումանյանը: Հայտնի է, որ «Միացյալ, անբաժան Ռուսաստան» կարգախոսի պայմաններում Անդրկովկասի ժողովուրդները առանձին-առանձին և առավելապես միասնական երկրամասային պետության կազմում երբեք ձեռք չէին բերի իրենց երազած անկախությունը, տվյալ դեպքում՝ Ռուսաստանից անջատումը: Միաժամանակ ի տարբերություն ապագա Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների, որոնց Ա. Դենիկինը մութ ու անորոշ ճակատագիր էր խոստանում, ինքնավար և Մեծ Հայաստանը ռուսական պետության մեջ գտնելու էր իր պատվավոր և պաշտպանված տեղը:

Ի. Շախդինը վկայում է, որ Դաշնակցության և Կամավորական բանակի հրամանատարության միջև գոյություն ուներ ռազմական գաղտնի համաձայնություն, և որ եվրոպական պատվիրակության ռուսական առաքելության կազմում Դաշնակցություն կուսակցությունը 1918 թ. հունվարի 30-ին Ա. Դենիկինի մոտ էր գործուղել Մ. Արզումանյանին: Ավելի ուշ Լ. Կոլչակի դիրեկտորիան Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչվել էր որպես «Համառուսաստանյան իշխանություն», որտեղ Հայաստանը պաշտոնապես ներկայացնում էր Տ. Չամոյանը<sup>1</sup>:

բ) Չնայած Քաջագունիի կարճ, զուսպ հայտարարությանը, միննույնն է, Դաշնակցության Մեմի խմբակցությունը ոգևորությամբ չէր դիմում այդ քայլին, ինչի մասին իրենց հուշերում վկայում են նաև Վրացյանը և Խատիայանը:

<sup>1</sup> St' u Шахдин И., Дашнакцутюн на службе Русской белогвардейщины и Английского командования на Кавказе, Тифлис, 1931, с. 6.

«Ուրիշ ճանապարհ չկար. իսկական սգի մեջ էին հայերը: Միրտ չկար խոսելու»<sup>1</sup>, – նշում էր Վրացյանը:

Խատիսյանը «թուրքերուն դիմաց մինակ չմնալու» հանգամանքով էր բացատրում վրացիների հետ համերաշխության պահպանումը՝ անտեսելով ներքին գլխավոր հակառակորդներին՝ թաթար-մուսուլմաններին: Ոչ միայն վիճելի, այլ պարզապես անընդունելի էր Արևմտյան Հայաստանը կորցնելուց, Չխենկելիի կողմից Կարսի բացահայտ «դավաճանական հանձնումից» հետո Խատիսյանի մեկնաբանությունը, թե «պատերազմի ամբողջ պատասխանատու թուրքերուն հետ Հ.Յ. Դաշնակցությունը իր վրայ չէր կրնար վերցնել իսկ այդպես պիտի ըլլար, եթէ ան գործէր հակառակ վրացիներու»<sup>2</sup>: Թերևս դա նկատի ուներ նաև Վրացյանը, երբ նշում էր, թե «ուրիշ ճանապարհ չկար»: Վիճելի է այն, որ խնայելով վրացիներին՝ Վրացյանը հարվածի թիրախ էր ընտրում մուսավաթական խմբակցությանը՝ այս հարցում կրկնելով և հետևելով կադետ Սեմյոնովին: «Չէ՞ որ իրականանում էր իրենց նվիրական տենչը, – գրում էր Վրացյանը, – մի քայլ դեպի Ռուսաստանի քայքայումը, մի քայլ դեպի «թուրք ազգերի դաշնակցությունը»՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքեստան և Թուրքեստանից Անատոլիա»<sup>3</sup>: Մեր կարծիքով, կարիք չկա նորից կրկնելու, որ այս բեմականացման վարագույրի ետևում կանգնած էին հենց վրաց մենջևիկ առաջնորդները, որոնք գիտակցաբար չբարձրացան ամբիոն, քանի որ «Մավրը իր գործն արդեն արել էր»:

Անհասկանալի է նաև Քաջագունու մեկնաբանությունը. «Մա անջատում չէր Ռուսաստանից, այլ մի փաստային դրութին, որ՝ ենթադրում էր՝ պիտի ունենար ժամանակաւոր բնույթ միայն: Միջազգային տեսակետից, Անդրկովկասը շարունակում էր մնալ Ռուսաստանի անբաժան մաս»<sup>4</sup>: Հարց է առաջանում, թե ո՞ր Ռուսաստանի և կամ ինչո՞ւմ էր անջատման ժամանակավոր բնույթը. Ռուսաստանում իբր կվերականգնվեր օրինական իշխանությունը, ինչն այդ պահին գոնե ժամանակավրեպ կանխատեսում կարող էր լինել, և կամ՝ նկատի ուներ Թուրքիայի հետ բանակցությունների գործընթացը, որը բոլոր դեպքերում Ռուսաստանին չէր վերադարձնելու Անդրկովկասը մանավանդ Բրեստի հաշտությունից հետո:

գ) Անկախացման գործընթացի արագացմանը նպաստում էին հիմնականում երկու գործոն, որոնք միաժամանակ հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքն են: Առաջինը՝ Բրեստ-Լիտովսկի համատեքստում ընթացող Կոմիսարիատի, իսկ այնուհետև Սեյմի ու թուրքական պատվիրակության միջև ընթացող Տրապիզոնի բանակցություններն էին, որոնց նպատակը Անդրկով-

<sup>1</sup> Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 109:

<sup>2</sup> Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 54-55:

<sup>3</sup> Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 109:

<sup>4</sup> Քաջագունի Յովհ., նշվ. աշխ., էջ 23:



կասը Ռուսաստանից անջատելն էր և տարածքային նվաճումները: Փոխարենը Թուրքիան Սեյմի պատվիրակությանը խոստանում էր անկախություն: Կարևոր է այն հանգամանքը, որ անգամ Տրապիզոնի բանակցությունների ձախողումից հետո վրացական ազգայնականության «Չխենկելիի թևը» Թուրքիայի հետ բանակցային գործընթացի հաջողության գրավականը ի դեմս Անդրկովկասի տեսնում էր անկախության հռչակումը, այլ խոսքերով՝ պետականության ինստիտուտի կայացումը: Ինչպես պարզվում է նրա ելույթից, Թուրքիան Անդրկովկասից հենց դա էր պահանջում:

Երկրորդը՝ Անդրկովկասը խորհրդայնացումից զերծ պահելու խնդիրն էր: Հարկ է նշել, որ Մո. Շահումյանի ծրագրի ձախողումից հետո այս հարցն այլևս օրակարգային չէր կարելի համարել, չնայած Բաքվի կոմունան շարունակում էր սարսափեցնել վրացական-թաթարական դաշինքին: Այս առումով միանգամայն տեղին ու հիմնավոր էին կադետ Յու. Սեմյոնովի կանխատեսումները թուրքերի հետ միասին Բաքուն գրավելու վերաբերյալ: Այս պարագայում «խորհրդայնացման վտանգը» առավելապես առիթ էր Թուրքիայի աջակցությամբ «ռեակցիոն Ռուսաստանից» ազատագրվելու հարցում:

Այսպիսով, 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան Սեյմը հռչակեց Անդրկովկասի անկախ պետությունը: Ե. Գեգեչկորիի կաբինետը փաստորեն հրաժարական տվեց\*: Հարկ է նաև նշել, որ այդ վճռական քայլն ուղեկցվում էր տագնապալի լուրերով, ինչը վկայում էր, որ գոնե երկրամասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, սպասվում էին հակակառավարական ելույթներ:

Ըստ հայ մենշևիկ Գ. Ղարաջյանի (Արկումեդ)՝ իշխանության ղեկավարության խնդիրը քննարկվել էր ավելի վաղ՝ ապրիլի 7-ի երեկոյան, ՌՄԴԲԿ մարզային ու Թիֆլիսի միացյալ նիստում: «Դուք յանձնեցիք և ոչ այլ ոք՝ Բաթումը տաճիկներին», – բացականչել է Ն. Ժորդանիան, դիմելով Չխենկելիին<sup>1</sup>: Ժողովը ձայների մեծամասնությամբ ձախողել էր վարչապետի պաշտոնում Չխենկելիի թեկնածությունը: Հաջորդ օրը՝ ապրիլի 8-ին, վրաց մենշևիկներից Չխենկելին, Ն. Ռամիշվիլին, Գվարչելաձեն ազգային գործիչների հետ հարցն անօրինաբար տեղափոխում են վրացական ազգային խորհուրդ, որն ընդունում է Անդրկովկասի անկախության և իշխանությունը Չխենկելիին փոխանցելու մասին որոշումը:

Ապրիլի 9-ին՝ ժամը 10-ին, Ն. Ռամիշվիլին հրավիրում է երկրամասային կոմիտեի արտակարգ նիստ՝ ապրիլի 7-ի միացյալ նիստի մերժված օրակարգը քննարկելու նպատակով<sup>2</sup>: Գ. Ղարաջյանին զարմացրել էր այն հան-

---

\* Մարտի 17 (29)-ին կաբինետը մեկնել էր Քուբայիս՝ նախագահական պարտականությունները հանձնելով Ն. Ռամիշվիլիին, իսկ զինվորականը՝ գեներալ Օդիշելիձեին: Տե՛ս «Հորիզոն», 1918, 20 մարտի (2 ապրիլի), թիվ 59:

<sup>1</sup> **Ղարաջյան Գ.**, Անդրկովկասի քաղաքական կյանքը, Թիֆլիս, 1918, էջ 39:

<sup>2</sup> Տե՛ս **Аркомед С. Т.**, նշվ. աշխ., էջ 66:

զամանքը, որ նախորդ նիստում Չիսենկելիի թեկնածությունը վճռականորեն մերժող Ն. Ժորդանիան այժմ պաշտպանում էր նրան: Ի՞նչ էր փոխվել երկու օրում\*. Գ. Ղարաջյանը դա բացատրում էր այն բանով, որ Ն. Ժորդանիան՝ որպես ազգային խորհրդի նախագահ, «կուլ գնաց ազնվական-բուրժուական այդ հավաքության անդրկուլիսյան խաղերին»: Որպես կուսակից-մենչնիկ՝ Գ. Ղարաջյանն ամեն կերպ փորձում էր պաշտպանել Ն. Ժորդանիային. կարծում էր, թե այդ «ազնվականները» «գրավել, մոլորեցրել են նրան»<sup>1</sup>: Կարող ենք ենթադրել, որ այդ երկու օրվա ընթացքում Չիսենկելին պայմանավորվածություններ ձեռք բերեց Վեհիբ փաշայի հետ մասնավորապես Կարսը հանձնելու վերաբերյալ: Այդ էր վկայում նաև իրադարձությունների անմիջական մասնակից Ալ. Խատիսյանը, որը միայն օրերի հարցում էր թերևս սխալվում. ամեն ինչ սկսվել էր ավելի վաղ՝ ոչ թե ապրիլի 10-ից, այլ 7-ից:

Ալ. Խատիսյանի մեկնաբանությամբ՝ «երբ Սեյմը որոշեց յայտարարել Անդրկուլկասեան հանրապետության անկախությունը եւ վերսկսիլ հաշտության բանակցութիւնները թուրքերու հետ, Գեգեչկորիի դահլիճը նկատեց այդ որոշումը իբր անվստահության արտայայտութիւն իր քաղաքականության եւ հեռացաւ քաղաքական բեմէն»<sup>2</sup>: Ապրիլի 10-ին նրա այն հարցին, թե նոր կառավարության բացակայության պայմաններում ինչու է վերջինս հրաժարական տալիս, Գեգեչկորիին պատասխանում է, որ Սեյմի որոշումից հետո այլև չկա հին կառավարություն<sup>3</sup>:

Ալ. Խատիսյանի կարծիքով ապրիլի 7-13-ի ընթացքում տեղի ունեցան չորս կարևոր իրադարձություններ. ապրիլի 9-ին Կարսը հանձնվեց թուրքերին, նույն օրը Սեյմը հռչակեց իր անկախությունը Ռուսաստանից, ապրիլի 13-ին Սեյմին ներկայացավ Չիսենկելիի նոր կառավարությունը, և վերջապես Չիսենկելին ու Վեհիբ փաշան փոխանակեցին նոտաներ հաշտության բանակցությունները վերսկսելու մասին: Խատիսյանն այս բոլոր բախտորոշ ու բեկումնային իրադարձությունները բացատրում է նրանով, որ «վրացիները այլևս կռուիլ չէին ուզեր», ավելին՝ հաշտության թնի կողմից Չիսենկելին, դառնալով կառավարության ղեկավար, կարողացավ, ըստ նրա, վերջապես ետ մղել կառավարության պատերազմական թևը՝ Ե. Գեգեչկորիին ու Խ. Կարճիկյանին: Որպես Չիսենկելիի «հաղթանակի» հիմնավորում՝ Խատիսյանը բերում էր այն փաստարկը, որ վերջինս Կարսի հանձնման հրամանը սովել էր առանց Սեյմի վստահությունն ստանալու<sup>4</sup>:

Հետհոկտեմբերյան քաղաքական գործընթացների ամբողջությունը մեզ

---

\* «Անդրկուլկասի քաղաքական կյանքը» գրքում հեղինակը նշում է «24 ժամվայ ընթացքում»: Տե՛ս **Ղարաջեան Գ.**, նշվ. աշխ., էջ 39:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 55:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 54:

հանգեցնում է այն համոզման, որ, ըստ Խատիսյանի, «վրացիներու մէջ երկու հոսանքի» առկայությունը իրականում դիվանագիտական շինծու մարտավարություն էր: Այն պատմական ու քաղաքական աղերսներ կարող է ունենալ Բրեստ-Լիտովսկի բանակցություններում Լենին-Տրոցկի «հակամարտության» հետ, երբ միանգամայն տարբեր, անգամ բնեռային տարաձայնություններ հրամցնելու մեթոդով իրականացվում էր գլխավոր նպատակը: Ինչևէ, Խատիսյանը համոզված էր, որ վրաց քաղաքական գործիչների միջավայրում երկու գերիշխող հոսանք կար. առաջինը Ն. Ժորդանիայի ու Ե. Գեգեչկորիի գլխավորությամբ ձգտում էր շարունակել պատերազմը և դեմ էր Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն, իսկ երկրորդը Չխենկելիի ու Ն. Ռամիշվիլիի ղեկավարությամբ անկախության և հաշտության կողմնակից էր<sup>1</sup>: Ցավալի է, որ դաշնակցության ղեկավար գործիչներից Ալ. Խատիսյանը Ն. Ժորդանիայի «սոցիալիստական-մենշևիկյան» արտահայտության ենթատեքստում չէր նկատել հակառուսական և հակախորհրդային հետևողական ռազմավարությունը, երբ վերջինս, սկսած 1917 թ. նոյեմբերից, ճառում էր մի բան, բայց իրականացնում միանգամայն այլ բան: Վերջապես այդ մասին էր վկայում այս նիստում վրացի մենշևիկների, էսեռների, սոցիալիստ-ֆեդերալիստների ելույթների բովանդակությունը:

Ալ. Խատիսյանը կարծում էր, որ Գեգեչկորի-Կարճիկյան-Ռամիշվիլի երրորդությունը ժամանակից շուտ էր լքել իշխանությունը, և ապրիլի 9-ի գիշերվանից մինչև ապրիլի 13-ը երկիրը մնացել էր առանց օրինական իշխանության<sup>2</sup>:

Մեր կարծիքով, Ալ. Խատիսյանի հարցադրումն անտեղի էր և ժամանակավրեպ, քանի որ գլխավոր հարցի՝ անկախության հռչակման լուծումը կորզելուց հետո այլևս էական չէր, որ երեք-չորս օր երկիրը մնացել էր առանց վարչակարգի: Մենք հիմնավորել ենք նաև, որ Մեյմի ձևավորումը ևս օրինական գործընթաց չէր: Բայց դա չէ էականը. այդ երեք-չորս օրերը, պարզվում է, Չխենկելիին անհրաժեշտ էին թուրքերի հետ իր գործարքի գլխավոր մասը սկսելու համար. Կարսը հանձնվեց թուրքերին: Դա գիտեր նաև Խատիսյանը, երբ ինքն իրեն հարց էր տալիս, թե «հետաքրքիր է իմանալ, թե ի՞նչ ըրաւ Չխենկելին իր միահեծան իշխանութեան երեք օրերու (Ապրիլի 10, 11, 12) ընթացքին: Ան յարաբերութեան մէջ մտաւ Վեհիպ փաշայի հետ, վերսկսելով հաշտութեան բանակցութիւնները անոր հետ, հրաման արձակեց գոր. Նազարբեկեանին յանձնել Կարսը թուրքերուն եւ զբաղեցաւ իր դահլիճի կազմութեան գործով»<sup>3</sup>: Այդ գործի իրականացումն ավելի վաղ էր սկսվել մարտի 16 (28)-ից: Այդ օրը Թիֆլիսից Չխենկելիին ուղարկվեց հեռագիր՝ Ն. Ժորդանիայի, Ի. Ծերեթելիի, Ե. Գեգեչկորիի և Ն. Ռամիշվիլիի ստորագրություններ:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 56:

<sup>3</sup> Նույն տեղում:

րով, որը դատապարտում էր Չխենկելիի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչելու որոշումը: Վրացական գործիչները դա համարում էին Վրաստանի և իրենց կուսակցության ազգային ու քաղաքական ինքնասպանություն և «գերադատում» էին նվաճվածի կարգավիճակը: Այդ խմբակային դատապարտումից հետո Ե. Գեգեչկորին և Ն. Ռամիշվիլին նույն օրը Տրապիզոն ուղարկեցին նոր հեռագրեր, որոնք ապշեցնում էին նախորդի համեմատ իրենց անհամապատասխանությամբ. «Քո հարցին, կարո՞ղ ենք պաշտպանել Կարս-Բաթումը, պատասխանում եմ – երկար չենք կարող: Բաթումի ճակատագիրը կլուծվի երկու-երեք շաբաթում: Մենք որոշել ենք զիջել Կարսը, Արդահանը, բայց պահել Բաթումը. տեղի թաթարներն առաջարկում են ճորոխ-Աջարիա-Օդալի սահմանը. պայմանն ընդունելի է, **թիֆլիսցիները կհամաձայնվեն** (նկատի ունեն Սեյմի անդամներին – Վ.Մ.): **Վերջացրեք մի շաբաթվա ընթացքում, քանի Բաթումը մեր ձեռքերում է: Մեր ժողովուրդը չի կարող վարել լուրջ, երկար պատերազմ, դա պարզվեց վերջնականապես**»<sup>1</sup> (ընդգծումը մերն է – Վ.Մ.):

Այդ մասին, ըստ Ալ. Խատիսյանի, կառավարության արդեն նոր անդամներն ու Սեյմի պատգամավորներն իրազեկվեցին միայն ապրիլի 13-ին՝ Սեյմի նիստում Չխենկելիի ելույթի ժամանակ: Մինչ այդ Վորոնցովյան պալատի ետնամասերում կայացան մի քանի ոչ էական հանդիպումներ:

Նոր կառավարության կազմում ընդգրկվեցին. 1. նախարար-նախագահ և արտաքին գործերի նախարար՝ Ա. Ի. Չխենկելի, 2. ներքին գործերի նախարար՝ Ն. Վ. Ռամիշվիլի, 3. ֆինանսների նախարար՝ Ա. Ի. Խատիսյան, 4. հաղորդակցության ուղիների նախարար՝ Խ.-բ. Մելիք-Ասլանով, 5. արդարադատության նախարար՝ Ֆ.-խ. Խոյսկի, 6. զինվորական նախարար՝ Գ. Տ. Գեորգաձե, 7. հողագործության նախարար Ն. Գ. Խոմերիկի, 8. ժողովրդական լուսավորության նախարար՝ Ն. Բ. Ուսուբբեկով, 9. առևտրի և արդյունաբերության նախարար՝ Մ. Գ. Հաջինսկի, 10. պարենավորման նախարար՝ Ա. Ի. Սահակյան, 11. պետական խնամատարության նախարար՝ Ռ. Ի. Քաջազնունի\*, 12. աշխատանքի նախարար՝ Ա. Ա. Երզնկյան, 13. պետական վերստուգիչ (վերահսկիչ)՝ Ի.-բ. Հայդարով<sup>2</sup>:

Նոր կառավարության ծրագրի և մարտավարության ներկայացմամբ հանդես է գալիս Չխենկելին: Որպես առաջին ու կանխորոշիչ դրույթ նա առանձնացնում էր Անդրկովկասյան դաշնային ժողովրդավարական հանրապետության ինքնիշխանությունն ու անկախությունը, ինչի մասին բոլոր տերությունների կառավարություններին տեղյակ էր պահել հենց ապրիլի 9-ին հաջորդած գիշերը: Իրոք, անգամ այս նրբությունը վկայում է այն մասին,

<sup>1</sup> Տե՛ս **Аркомед С. Т.**, նշվ. աշխ., էջ 53:

\* Անունները ներկայացված են ըստ սկզբնաղբյուրների:

<sup>2</sup> Տե՛ս **Зак. Сейм**, с. 1:

որ գոնե այդ օրվանից Չխենկելին իրեն էր վերապահել կառավարության ղեկավարի դերը:

Չխենկելին առաջադրում էր առաջնահերթ խնդիրներ ու նպատակներ. ա) նորաթուխ հանրապետության սահմանադրության հիման վրա Անդրկովկասի պետական կարգի ամրապնդման անհապաղ իրականացում, բ) Անդրկովկասի ժողովուրդների տարածքային տարանջատում: Իր իսկ ձևակերպմամբ՝ խոսքը վերաբերում էր **Անդրկովկասյան դաշնության ազատ ժողովուրդների առանձին միավորների ճշգրիտ սահմանների հաստատման հարցին**<sup>1</sup>:

Վստահաբար կարող ենք եզրակացնել, որ 1918 թ. ապրիլի 13-ին, վերջապես, ի դեմս Չխենկելիի, վրացական մենշևիզմը ազդարարում էր ազգային անկախ պետությունների ստեղծման հրամայականը, թեև այդ գործընթացին ձեռնամուխ էր եղել դեռևս 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերից:

**Ваган Меликян – Проблема политической переориентации Закавказского Сейма и провозглашение независимости региона**

С января 1918 г. проблема власти в Закавказье стала непосредственно связываться с вопросом об окончательном отделении региона от Советской России и провозглашением независимости. Идеологом этой последовательной политики был сперва Закавказский комиссариат, а затем и Сейм, в котором преобладала грузинская социал-демократическая меньшевистская фракция. В этом контексте изменились и политические устремления властей Закавказья, выразившиеся в принятии германско-турецкой ориентации. В статье утверждается, что идея независимости Закавказья и вытекающая из нее идея создания национальных государств зарождается не в апреле 1918г. (после сдачи Карса), а в ноябре-декабре 1917 г. Она проходит несколько этапов, одному из которых и посвящено данное исследование.

**Vahan Melikyan – The Issue of Changing the Political Orientation of Transcaucasian Seimas and Proclamation of Independence in the Region**

Since January 1918 the issue of the power in Transcaucasia had directly and openly been connected with definitely separating the region from Soviet Russia and declaring independence. At first, the direct bearer of that consistent policy was the Transcaucasian Commissariat, then the Sejm, which was represented by the activity of dominating Georgian Menshevik s.-d. Fraction. In this context, the political orientation of Transcaucasian authorities also changed. The Sejm adopted the German-Turkish orientation.

The article substantiates that the independence of Transcaucasia and the idea of creating national states proceeding from this goes back to 1917 November-December and not to 1918 April (after the surrender of Kars). It goes through several stages and the present study is devoted to the elucidation of one of them.

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 3:

## К ВОПРОСУ ОБ ОПРЕДЕЛЕНИИ “ХУДОЖЕСТВЕННОЙ ШКОЛЫ” В КУЛЬТУРЕ ХАЧКАРОВ

*Ключевые слова* – хачкар, археология, художественный стиль, композиция, средневековая культура, художественная школа, направление в искусстве, Котайк, Арагацотн, Армения

В условиях феодальной раздробленности средневековой Армении, когда страна разделена на ряд небольших княжеств, явление художественных школ закономерно и наблюдается в архитектуре и книжной миниатюре. В культуре хачкаров этот аспект пока еще мало изучен, хотя видимое многообразие хачкарных форм со схожими мотивами позволяет говорить о существовании хачкарных школ. Для освещения этого вопроса в культуре хачкаров в первую очередь следует найти те параметры, на основе которых возможно определение этих художественных школ.

«Школа» в значении направления или течения в науке, литературе и искусстве обозначает единство основных взглядов, общность и преемственность основных принципов и методов<sup>1</sup>. Рассмотрим некоторые признаки, которые, на наш взгляд, помогут обосновать наличие «школы» в культуре хачкаров. Для их выявления мы обратились к таким областям армянской средневековой культуры, как архитектура и книжная миниатюра, где этот вопрос неоднократно изучался. К примеру, С. Мнацаканян на основе своих исследований выделяет четыре творческих очага – это архитектурные школы Сюника, Васпуракана, Арагат-Ширака с центром в Ани и Ташир-Дзорагета или Лори<sup>2</sup>. Кроме этих школ М. Асратян и З. Саргсян<sup>3</sup> в IX-XI вв. выделили и архитектурную школу княжества Тайк. Школе Арцаха посвящена одна из монографий М. Асратяна<sup>4</sup>. В. Арутюнян, исследуя процесс развития архитектуры, описывает школы в Сюнике, Васпуракане, Арцахе, Шираке и Гугарке<sup>5</sup>. Целый ряд монографий<sup>6</sup> посвящен и вопросам определения школ в армянской миниатюре.

Из названия вышеотмеченных архитектурных школ становится ясно, что большинство из них выделяются на основе историко-географического деления

<sup>1</sup> Ожегов С.И., Словарь русского языка, М., 1953.

<sup>2</sup> Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960:

<sup>3</sup> Հաւրաթյան Ս., Մարգարյան Զ., Հայաստան: Քրիստոնէական ճարտարապետության 1700 տարին, Երևան, 2001:

<sup>4</sup> Հաւրաթյան Ս., Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992:

<sup>5</sup> Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

<sup>6</sup> Измайлова Т. А., Армянская миниатюра XI века, М., 1979, Акопян Г., Миниатюра Васпуракана 13-15 вв., Ереван, 1989, Свириц А. Н., Миниатюра древней Армении, М., 1939.

территории. Однако при определении школ существует и другой подход. Так, А. Свирин, выделяя региональные особенности армянской миниатюры, кроме школ Центральной Армении и Киликии, называет и камсараканскую школу VI-VIII вв., от которой не сохранилось ни одной рукописи, но на которую указывают некоторые источники X в.<sup>1</sup> Эта школа определяется по имени княжеского рода, которым принадлежали рукописи или на кого работали мастера. Некоторые рукописи атрибутируются по названию монастырей, где они были написаны и где работали художники. К примеру, С. Мнацаканян отмечает, что «в Татеве в IX-X вв. была создана школа изобразительного искусства, связанная с монументальной скульптурой и архитектурой. Достаточно отметить, что росписи Татевского монастыря и Гндеванка, а также рукопись «Эчмиадзинского евангелия 989 г.» выполнены этими мастерами»<sup>2</sup>.

Что же касается школ в культуре хачкаров, то вопрос определения их творческих очагов часто не столь очевиден, как в случае с миниатюрой. Хачкары установлены не только вблизи монастырей и на кладбищах, но и в самых отдаленных и укромных местах, а ареал распространения их школ, по мнению Г. Петросяна, может быть уже или шире историко-географических границ территории<sup>3</sup>. В некоторых случаях очень похожие между собой хачкары встречаются достаточно далеко друг от друга, как хачкары XI в. в Бджни (рис. 1), Ваанаванке и Цахац-Каре, которые, по нашему предположению, были сделаны армянскими мастерами.



Рис. 1



Рис. 2

Еще один пример схожих между собой хачкаров XIII в. – это в Бджни, Агарцинеи хачкар 1233 г. из Имерзека (рис. 2), который сейчас установлен в

<sup>1</sup> Свирин А. Н., указ. соч., с. 6.

<sup>2</sup> Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 255-256:

<sup>3</sup> Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 147:

Эчмиадзине. Хачкары имеют идентичную структуру и орнаментальные мотивы в композициях. В подобных случаях порой достаточно сложно определить границы влияния стиля конкретной школы.

Важным показателем наличия «школы» в архитектуре и миниатюре, на который указывают вышеперечисленные авторы, является приверженность традиции, из чего вытекает принцип устойчивости стиля, где новые элементы конструкции или декора возникают и разрабатываются уже на основе существующих форм. Устойчивость стиля обуславливается не только средневековым мировоззрением, но и спецификой обучения средневековых мастеров-каменщиков, на которую указывал С. Бархударян<sup>1</sup>. Он отмечает, что подросток, поступая на обучение в подмастерья, в процессе работы у мастера получал все необходимые навыки, поэтапно осваивая то одну, то другую специальность каменщика. Благодаря такой системе обучения практическим приемам, опыт работы, накопленный веками, передавался из поколения в поколение. Секреты мастерства, как правило, старались сохранить в роду или среди братии одной общины, где ремесло переходило от старшего к младшему. Подтверждением этому служит надпись 1221 г., расположенная на наружной стене церкви св. Карапета в монастыре Ованаванк: «...вардапет Аствацатур, при содействии (духовного) брата и (духовного) сына моего Акопа, вардапета, построили эту дивно украшенную патриаршую церковь...»<sup>2</sup>. Скорее всего это были монахи одной общины, но разного возраста т.к. один назван братом, второй сыном. Такая система обучения мастеров-резчиков обеспечивала на протяжении нескольких поколений общность взглядов и преемственность методов работы с камнем, что поддерживало устойчивость стиля и, в конечном счете, приводило к формированию школы.

При определении территории, где зарождалась и формировалась та или иная «школа», понятие «стиль» является основным, т.к. можно сказать, что это своего рода «почерк» этой школы. Понятие «стиля» принадлежит к числу наиболее сложных и недостаточно разработанных категорий<sup>3</sup>. Кроме этого, общие процессы развития культуры, архитектуры и искусства сложно разделить на отдельные стилистические фрагменты. Следует учитывать и то, что при определении «стиля» в архитектуре и прикладном искусстве существуют два подхода: первый подход основан на том, что процесс развития «стиля» имеет общие закономерности, которые носят всеобщий и циклический характер, а второй подход обращается к «частному», индивидуальному стилю конкретного объекта.

---

<sup>1</sup> **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963:

<sup>2</sup> **Ղաֆարյան Վ.**, Հովհաննավանքը և դրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 94:

<sup>3</sup> **Бартенев И. А., Батажкова В. Н.**, Очерки истории архитектурных стилей, М., 1983, с. 4.





Рис. 3



Рис. 4

Для первого, общего, подходав определении «стиля» характерны следующие категории, которые были определены Кон-Винером<sup>1</sup>. Обобщив историческую - последовательность развития стилей в архитектуре и прикладном искусстве, автор выделил три основных стиля: 1. конструктивный (тектонический), 2. декоративный (композиционный) и 3. орнаментальный, которые на протяжении веков последовательно сменяют друг друга. Аналогичного мнения придерживается и М. Гинзбург, выделивший три стилистических типа: 1. конструктивный, 2. органический и 3. декоративный<sup>2</sup>, которые можно сопоставить с тремя предыдущими<sup>3</sup>.

Таким образом, вышеуказанные стилистические типы выделяются, исходя из того, что любой стиль в истории архитектуры и прикладном искусстве проходит три этапа развития. Все новое рождается большей частью как утилитарная необходимость в виде конструкции, лишенной декоративных прикрас – конструктивный стиль. Затем эта конструкция украшается декоративными элементами, которые, не нарушая ее, соединяют разрозненные части этой конструкции в единую композицию – композиционный стиль и, наконец, насыщенность декором переходит все границы, превращаясь в единственную доминанту – орнаментальный стиль. В. Фриче выделяет только два стиля - конструктивный и декоративный стиль<sup>4</sup>. Ни один из этих стилей не появляется «катастрофично», а развивается из предыдущего, поэтому, границы стилистических типов провести достаточно сложно.

Культура хачкаров с точки зрения общих закономерностей развития проходит те же этапы развития стилей. Так, конструктивный стиль, который характерен для ранних хачкаров IX-X вв., характеризуется принципом целесообразности изображения, который требует ясности и простоты в построении форм. Здесь каждый элемент хачкарной композиции функционален, имеет назначение

---

<sup>1</sup> **Кон-Винер**, История стилей изобразительных искусств, М., 1936, с. 211- 217.

<sup>2</sup> **Фриче В.**, Социология искусства, М., 1930, с. 82-83.

<sup>3</sup> Для того, чтобы избежать путаницы в названиях стилей, мы оставили только те термины, которыми пользуемся и в дальнейшем – конструктивный, декоративный и орнаментальный.

<sup>4</sup> **Фриче В.**, указ. соч., с. 79-86.

и графически не смешивается с остальными элементами. На гладкой поверхности глубокого фона хачкара расположено изображение креста или креста с элементами композиции, которые отличаются простотой и лаконичностью форм (**рис. 3**). Для изображения ранних хачкаров, как отмечает Г. Петросян, не свойственно сплетение отдельных частей композиции в единое целое, а изображение представляет собой скорее набор отдельных элементов, примыкающих друг к другу<sup>1</sup>.

К началу XI в. конструктивный стиль хачкаров постепенно сменяется композиционным, где между отдельными частями композиции появляется вязь, которая осуществляется при помощи орнамента, выполненного линией рельефного полувалика. Простота и грубость форм основных элементов хачкарной композиции предыдущего периода, сменяются более утонченными формами основных элементов композиции, которые теперь обильно украшены орнаментом. На втором этапе развития культуры хачкаров, в период с конца XII – начала XIII вв. и до середины XIV в., наблюдается повсеместное развитие композиционного стиля (**рис. 1, 4**). Именно в этот период в хачкарных композициях наиболее явно прослеживаются стилистические особенности, обусловленные элементами локального, регионального влияния. И именно в этот период наблюдается активное формирование хачкарных школ в изучаемом регионе Арагацотна и Котайка.

Для последнего периода развития хачкаров (XV-XVII вв.) наиболее типичен орнаментальный стиль, признаки которого появляются уже к концу XIII – первой половине XIV вв. (к примеру, хачкар из Имерзека (**рис. 2**) или хачкары мастера Погоса из Гошеванка или мастера Момика). Здесь доминирует мелкий декоративный орнамент. Все задачи изображения здесь сводятся к тому, чтобы создать впечатление возможно большей декоративности<sup>2</sup>.

При анализе общих принципов развития хачкарных композиций в зависимости от времени возведения хачкара следует учитывать и факт того, что целостный процесс развития культуры хачкаров дважды резко и насильственно прерывался иноземным вторжением в страну. Этот фактор сильно повлиял и на поступательное развитие хачкарных композиций. Именно по этой причине в начале каждого нового этапа, почти после векового перерыва, развитие хачкаров начинается с частичного возврата к достижениям предыдущих веков. Период формирования отдельных «школ» в культуре хачкаров непосредственно связан с развитием композиционного стиля, который всегда соотносится с периодом наивысшего расцвета культуры и искусства<sup>3</sup>.

Второй подход в определении стиля в конкретном, «частном» его проявлении, основан на принципе того, что при всей изменчивости форм в пределах определенного временного периода всегда есть относительно устойчивые композиционные, ритмические, пластические, колористические и др. художественные признаки, которые, в конечном счете, и определяют «стиль» при «частном», индивидуальном анализе конкретного объекта. Эти проявления стиля конкрет-

---

<sup>1</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 110:

<sup>2</sup> Кон-Винер, указ. соч., с. 212- 213.

<sup>3</sup> Там же, с. 214.

ного объекта сложно назвать каким-либо термином, поэтому обычно прибегают к методу его описания и к условному названию самого стиля. Таким образом, появление отдельных, региональных творческих очагов в культуре хачкаров связано с периодом развития композиционного стиля, а для определения «частного, индивидуального стиля» конкретной школы необходимо выяснить, на какие характерные признаки хачкара следует обратить особое внимание, чтобы выделить хачкарную школу и определить ее своеобразие.

Учитывая, что хачкары являются архитектурным сооружением, обратимся к анализу школ в архитектуре, где описание конкретного стиля не сводится только к набору его декоративно-орнаментальных средств, т.к. понятие «стиль» шире и в него входят характерные для данного времени приемы построения, а также объемные архитектурные композиции и типичные формы и мотивы художественного декора<sup>1</sup>. Стиль в «частном» своем проявлении определяется совокупностью основных черт и признаков данного времени и данного региона, которые проявляются в особенностях его функционального, конструктивного и художественного аспектов. Раскрывая это определение «стиля» на примере архитектурных памятников, можно сказать, что функциональная сторона архитектурного стиля выражается утилитарным, культурным и культовым назначением сооружения. Конструктивный аспект стиля отображает архитектурную композицию сооружения, имеющую пространственное т.е. объемное решение. Здесь появляется такое понятие как «тип». К примеру при описании архитектурной школы Сюника IX-XI вв., С. Мнацаканян<sup>2</sup> сгруппировал все архитектурные памятники типологически (триконхи, тетраконхи, купольная зала и т.д.), по возможности соблюдая хронологическую последовательность каждой группы. Вместе с тем конструкции связаны и со строительным материалом, так как для конструкции важно, из какого материала (камня или дерева) строится сооружение. И, наконец, художественная ценность архитектурных сооружений определяется внешним и внутренним обликом здания, его декором<sup>3</sup>. При определении своеобразия стиля хачкарной школы учитывались все указанные аспекты хачкара, а особое внимание уделялось его конструктивной и художественной стороне. Конструктивная сторона хачкара определяется тем, что хачкар имеет только внешне объемное решение. Хачкар может представлять собой отдельно установленную на земле стелу и стелу вставленную в стену храма. Он также может быть вертикальной составляющей одиночного надгробного комплекса или составлять часть крупного комплекса родовых захоронений, который включает в себя несколько хачкарных плит, установленных на постаменте (или нескольких постаментах) с рядом надгробий перед ними. Подобный тип «семейного кладбища» получил наибольшее распространение с конца XII – начала XIII вв. В этом случае хачкары и установленные перед ними надгробия являются одинаково значимыми, но разнофункциональными элементами<sup>4</sup> единого архитектурного комплекса. К анализу таких хачкаров мы обратимся ниже на

---

<sup>1</sup> Баргенов И. А., Батажкова В. Н., указ. соч., с. 8.

<sup>2</sup> Մնացականյան Ս., նշվ. աշխ., էջ 248:

<sup>3</sup> Баргенов И. А., Батажкова В. Н., указ. соч., с. 5-11.

<sup>4</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 141:

примере хачкаров Егварда (рис. 5), Аштарака, Аринджа и некоторых других. Хачкар также может быть выражен одной хачкарной композицией, нанесенной на вертикальную поверхность скалы, как, к примеру, часть хачкаров в монастыре Гегард. Художественная сторона хачкара, в основном, выражена его рельефной композицией, которая является идейным центром всего монумента.

При определении творческих очагов хачкарных школ в изучаемом регионе Арагацотна и Котайка и принимая во внимание специфику культуры хачкара, в первую очередь следует учитывать такие признаки школы, как преемственность традиции и категорию «стиля». Преемственность традиции заметна при сопоста-



Рис. 5

вительном анализе группы хачкаров, где определяется специфика их конструктивной и художественной стороны. В процессе этого анализа, особый акцент делался на композицию, т.к. будучи наиболее выразительным элементом хачкаров, она ярко представляет «стиль» местной камнерезной школы.

Функциональный аспект хачкара как архитектурного сооружения выражается в том, что хачкары подразделяются на votive и надгробные. Однако это разделение не отображает всего разнообразия хачкарных функций. К примеру, С. Бархударян<sup>1</sup> и А. Шагинян<sup>2</sup> в своих исследованиях на основе многочисленных эпиграфических текстов выделили более полусотни причин возведения хачкаров. По мнению Г. Петросяна, который также подробно исследовал эту тему<sup>3</sup>, при изучении хачкаров следует различать такие понятия как повод для возведения хачкара и цель его возведения, т.к. они различны. Поводом для возведения хачкара могло служить любое значимое для средневекового общества событие, но цель возведения всегда относится к сфере средневекового мистико-религиозного мировосприятия.

Все вышеперечисленные теоретически разработанные критерии определения хачкарных школ на практике применялись для определения хачкарной школы Арагацотна и Котайка. Хачкары этого региона были изучены и классифицированы, в результате чего определились два отличных друг от друга стиля – стиль Арагацотна и стиль Котайка, - в основе формирования которых лежат разные традиции. Однако общность территории привела к взаимопроникновению этих стилей, а также некоторой преемственности основных принципов и методов работы, что, в конечном счете, и предопределило наличие единой хачкарной школы Арагацотна и Котайка. Наличие традиций местной хачкарной школы в изучаемом регионе отмечается с конца XI до XV вв., где с конца XII-XIV вв. идут процессы формирования и развития этих традиций в культуре

<sup>1</sup> Բարխուդարյան Ս., նշվ. աշխ., էջ 129-132:

<sup>2</sup> Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողապի նուշարձանները. 9-13-րդ դարերի խաչքարերը, Երևան, 1984, էջ 51-60.

<sup>3</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 234-265:

хачкаров, которые были обусловлены периодом феодальной раздробленности территории, а с XV в., после почти векового перерыва, наблюдается возврат к традициям предшествующих эпох и постепенное угасание хачкарной школы Арагацотн-Котайка.

**Վարդանեսովա Տատյանա – Խաչքարային մշակույթի մեջ «գեղարվեստական դպրոցների» սահմանման հարցի շուրջ**

Հոդվածում քննարկված հարցերը վերաբերում են խաչքարային մշակույթի քիչ ուսումնասիրված այնպիսի թեմայի, ինչպիսին է խաչքարային դպրոցի գաղափարը, որը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում այս մշակույթի ընդհանուր հարցերի շրջանակներում: Հայաստանի ֆեոդալական մասնատվածության պայմաններում, երբ երկիրը բաժանված էր մի շարք ոչ մեծ իշխանությունների, գեղարվեստական դպրոցների երևույթը օրինաչափ է և նկատելի ճարտարապետության և մանրանկարչության մեջ: Սակայն խաչքարային մշակույթում այս հարցը դեռևս հետազոտված չէ: Հեղինակը վերլուծում է և հիմնավորում այն սկզբունքները և չափանիշները, որոնց հիման վրա կարելի է խոսել խաչքարային մշակույթի մեջ «գեղարվեստական դպրոցի» գոյության մասին: Այդ սկզբունքների որոշման համար նա դիմել է հայկական միջնադարյան մշակույթի այն ոլորտներին, ինչպիսիք են ճարտարապետությունը և մանրանկարչությունը, որոնցում դպրոցների առանձնացման հարցն արդեն ուսումնասիրվել է: «Դպրոց» որպես գիտության, գրականության կամ մշակույթի մեջ ուղղվածություն, նշանակում է հիմնական հայացքների ամբողջություն, սկզբունքների և մեթոդների ժառանգում: Դրանք հաշվի են առնվել Արագածոտնի և Կոտայքի ուսումնասիրվող խաչքարերի տարածաշրջանային ոճի առանձնահատկությունների հստակեցման հարցում:

**Tatyana Vardanesova – On the Issue of the Definition of “Art Schools” in Khachkar Culture**

The issues discussed in the article relate to such insufficiently studied topic of khachkar (cross-stone) culture as the idea of Khachkar School. In conditions of feudal segmentation of Armenia, when the country was divided into a number of small authorities, the existence of art schools was natural which was evident in architecture and miniature painting. But in khachkar art this question hasn't been examined yet.

The author analyzes and substantiates the principles and criteria according to which the existence of the “art school” in the khachkar culture can be testified. For a more accurate definition the author has turned to such spheres of Armenian medieval culture as architecture and miniature painting where the issue of the separation of schools has already been studied. A “school” as a direction in science, literature and culture, is the totality of basic views, inheritance of principles and methods. All these characteristic features have been taken into account while determining the peculiarities of Aragatsotn and Kotayk khachkar regions.

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՂԿՈՒՐԱՆՑՈՒ «ՎԱՄՆ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ  
ԳԼԽԱՏՄԱՆ» ԵՎ «ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵՎԵՆՈՒԹԻՒՆ» ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂԵՐԸ**

***Բանալի բառեր*** - Հովհաննես Թլկուրանցի, Հովհաննես Մկրտիչ, Արշակ Չոպանյան, միջնադար, վիպական տաղ, աստվածաշնչյան թեմաներ, քնարականություն, գեղարվեստական պատկեր, գրական աղբյուր, չափածո քերթված

Հովհաննես Թլկուրանցին, որն ապրել և ստեղծագործել է XIV դարի երկրորդ և XV դարի առաջին կեսերին, միշտ եղել է հայ միջնադարյան բանաստեղծությունը հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն նրա վիպական տաղերը, ի տարբերություն սիրո տաղերգության, անբավարար են ուսումնասիրվել ու գնահատվել, այնինչ դրանք առանձնապես կարևոր են բանաստեղծի չափածոյի ընդհանուր համակարգում և ինչ-որ չափով լրացնում են հայ միջնադարյան պոեզիայում համեմատաբար թույլ արտահայտված էպիկականության հատկանիշը: Նա միջնադարյան առաջին բանաստեղծն է, որը ստեղծել է վիպական տաղեր՝ դրանք մշակելով ժողովրդական բանահյուսության պոեմների հիման վրա, որոնք առ այսօր միջնադարյան քնարերգության առավել արժեքավոր էջերից են: Մեզ են հասել նրա «Աշայի և Յովհաննեսի», «Գեղ մի կայր Նարեկ ասեն», «Տաղ սրբոյն Ալեքսիանոսի», «Տաղ վասն Սուրբ Յովհաննու գլխատման», «Մեկնութիւն Արարածոց» տաղերը, որոնցում հառնում է զգայուն, աշխույժ, ինքնատիպ քնարերգակը՝ իրեն հատուկ գունագեղ ու թրթռուն ոճով:

Միջնադարյան նուրբ ու պայծառ բանաստեղծի՝ Թլկուրանցու վիպական ստեղծագործություններում կան նաև աստվածաշնչյան մոտիվներով մշակումներ: Ահա այդպիսի գեղարվեստական արժեքավոր երկերից է «Վասն սուրբ Յովհաննու գլխատման»<sup>1</sup> վիպական տաղը: Մատթեոսի ավետարանում սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման մասին պատմող դրվագի հիման վրա ստեղծված այս գեղեցիկ տաղը միջնադարյան գրականության յուրօրինակ քերթվածներից է:

Ուշ միջնադարում ստեղծված այս պատկերավոր ու հետաքրքիր տաղի աղբյուրը մասամբ Եփրեմ Ասորու «Ի Յովհաննես Մկրտիչն և իր կաքաւումն

1 Տե՛ս **Չոպանեան Ա.**, Յովհաննես Թլկուրանցի, «Անահիտ» 1931, թիվ 5-6: Այս տաղը հրատարակված է 1513 թ. Վենետիկում տպագրված «Տաղարանում»: Տաղի իր օրինակը Չոպանյանը գտել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի թիվ 615 ձեռագրում (Էրզրում, 1592): Ուրիշ օրինակ նրան հայտնի չի եղել:

Հերոդիդայ» հայտնի ճառն է<sup>1</sup>, մասամբ նաև հիշողություններով փոխանցված, իրականությունից ստացած՝ հեղինակի կենդանի տպավորությունները, ինչպես նաև նրա վառ երևակայությունը: Այս տաղը հրատարակող մեծանուն գրականագետ Արշակ Չոպանյանը ենթադրում է, որ որոշ մանրամասնություններ բանաստեղծը «թերեւս ինք երեւակայած է, կամ հայ ժողովրդական ավանդութիւններէ քաղած է, կամ թերեւս անվաւեր Աւետարաններու կամ Յայսմաւորքներու մէջ գտած է»<sup>2</sup>:

Այս թեմայով մեզ են հասել նաև երկու այլ տաղեր, որոնցից մեկը վերագրված է Գրիգոր Նարեկացուն, իսկ մյուսն անանուն է<sup>3</sup>: Ըստ Չոպանյանի՝ «Թլկուրանցիի քերթվածը, աւելի ժողովրդական ոճով, երբորդ գեղեցիկ արտադրութիւնն է՝ նուիրուած Աւետարանի այդ խորախորհուրդ դրուագին, որ ԺԹ դարուն ֆլուպերներու եւ Օսքար Ուայլտներու պիտի թելադրէր իրենց գրական հրաշակերտներէն երկուքը, եւ Կիւսթավ Մորօրին՝ իր նկարներուն ամենէն մոգիչներէն մէկ քնիւնի»<sup>4</sup>:

Բացառիկ նրբությամբ ու քնարականությամբ մեծատաղանդ Թլկուրանցին նկարագրում է թե՛ Հովհաննես Մկրտչի ծնունդը (ըստ Ղուկասու)<sup>5</sup> և՛ թե՛ նրա գլխատման տեսարանները (ըստ Մատթեոսի)<sup>6</sup>: Հրեաստանի թագավոր Հերովդեսի ժամանակներում ապրող Չաքարիա քահանան և նրա կինը՝ Եղիսաբեթը, զավակ չունենին, քանի որ վերջինս ամուլ էր: Ինչպես Ալեքսիանոս ճգնավորի ծնողները, նրանք ևս տաճարներում խունկ էին ծխում, անվերջ աղոթում, կատարում Տիրոջ բոլոր պատվիրանները՝ զավակ ունենալու ցանկությամբ: Որքան նուրբ է բանաստեղծը պատկերում նրանց որդու՝ Հովհաննեսի ծնունդը.

*Յորժամ ծընաւ զՏէրն եւ զծառան,  
Երկինք եւ երկիր շնորհօք լըցան  
Հովիւքն եւ մոզքըն շարժեցան՝  
Երկրրպագեն սուրբ ծընընդեան<sup>7</sup> :*

Մեծանում է սուրբը, քարքարոտ լեռները վերածում իր համար բնակարանի, ճաշակում «մարախ եւ մեղր», քարոզում մկրտություն և Հորդանանի ջրերում մկրտում Աստծո Որդուն՝ սուրբ Քրիստոսին, որ «բառնայ ըզմեղրս զամենայն»: Հովհաննես Մկրտիչը հանդիմանում է Հերովդեսին, որը կնության էր առել իր եղբայր Փիլիպպոսի կնոջը՝ Հերովդիային.

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Հ.**, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 222:

<sup>2</sup> **Չոպանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս **Չոպանեան Ա.**, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 60-61 և 71-72:

<sup>4</sup> **Չոպանեան Ա.**, Յովհաննես Թլկուրանցի, էջ 5:

<sup>5</sup> Ղուկաս, գլ. Ա:

<sup>6</sup> Մատթեոս, գլ. ԺԴ:

<sup>7</sup> **Չոպանեան Ա.**, Յովհաննես Թլկուրանցի, էջ 6: Տաղից հետագա մեջբերումները ևս այստեղից են:

*Ասաց՝ «Օրէնք չէ քեզ առնուլ  
Զեղբորդդ կինն իժ ու գազան»:*

Հերովդէսը բարկանում է նրա այս խոսքերից և նրան բանտարկում: «Բայց ժողովրդիցը վախենում էր, որովհետև նորան ընդունում էին ինչպես մարգարէ»<sup>1</sup>: Իսկ Հերովդիան, որ անպատասխան սիրել էր Հովհաննէսին, վճռում է իր վրեժը լուծել բանտարկված սրբից: Ուստի թագավորի ծննդյան օրը նա զարդարում է իր դստերն ու պատվիրում.

*«Գընա՛ եւ անդ խաղա՛,  
Հանց որ ժողովքն հիանան.  
Ինդրէ՛ գգըլուխըն ԶՅովհաննու  
Յորժամ պարգէւք քեզ խոստանան»:*

Չքնաղ աղջիկը պարում է այնպես գեղեցիկ, որ «յիմարեցոյց զթագաւորն», ու այնքան հաճելի է թվում նրան, որ Հերովդէսը խոստանում է տալ այն ամենը, ինչ որ նա ցանկանա: Իսկ աղջիկն արդէն գիտեր իր խնդրանքը՝ Հովհաննէս Մկրտչի գլուխը: Դժվարանում է մի պահ Հերովդէսը գոհացնել նրան, սակայն չէր կարող դրժել իր արքայական խոստումը և «առաքեաց դահիճ»՝ կատարելու հրամանը: Ահա և բերում են սրբի գլուխն ու տալիս աղջկան, որն այն հանձնում է «ի մայրն ամբարտաւան»:

Գլխատված Հովհաննէս Մկրտչի մարմինն իր աշակերտները դնում են գերեզման, իսկ

*Հոգին գընաց առ մարգարէքն,  
Ասաց՝ «Կուգայ անման արքայն.  
Գայ եւ ամէնքս ազատ առնէ  
Ի դրժոխոցն անդնդական.  
Տանի ի դասն ի հրեշտակաց,  
Ուրախութիւն եւ անվախճան»:*

Իսկ Հերովդիայի դուստրը՝

*Զհւր գործ չարիք ի պաղն եհան.  
Պաղըն եքաց ըզհւր բերանն,  
Մէկ շուն մարմին երկու եղան,  
Լաշըն գընաց ի կեր ձրկանցն,  
Գըլուխըն մընաց սառցին բերանն:*

Աղջկա վիճակը տեսնելով՝ մայրը սարսափում է, զայրացած բողոքում Աստծու դէմ, անիծում Հովհաննէս Մկրտչին, բարկությունից խելքը կորցնում է, իսկ դեմքը՝ կպատում.

---

<sup>1</sup> Մատթեոս, գլ. ԺԴ:



*Ձեռքըն եւ ոտքըն կապւեցաւ,  
Ի յառիքէն քար մի անկաւ,  
Ի վերայ գլխոյն անկեալ ջարդաւ,  
Որպէս պիղծ շուն սատակեցաւ:*

Տունը փլվում է չար կնոջ վրա, և նա չի արժանանում անգամ գերեզման ունենալուն:

Իսկ սրբի գլուխը ծառաները դնում են մի պատուհանի առջև՝ խորհելով, թե նրա աշակերտները թերևս «գին եւ կաշառ» տալով առնեն այն: Շատ ժամանակ անց գալիս են երկու արեղա, որոնք, Հովհաննես Մկրտչի գլուխն այնտեղ տեսնելով, վերցնում են ու տանում: Ճանապարհին

*Ի բրտին հանդիպեցան,  
Վաճառեցին գուհարըն այն.  
Բըրուտն առեալ տարաւ իւր տունն,  
Նըշան արար իսաչանըման:*

Չափազանց հուզական ու գմայելի այս տաղն ավարտվում է Թլկուրանցուն բնորոշ բարեմաղթանքներով.

*Ես՝ Յովհաննէս Թլկուրանցի,  
Կարճ, համառօտ ասցի զայս բան.  
Տէրն տայ ձեզ խաղաղութիւն,  
Պահէ անփորձ եւ անսասան:*

«Վասն սուրբ Յովհաննու գլխատման» վիպական տաղը, ըստ Չոպանյանի բնորոշման, «այդ գմայելի երգչին ամենէն նուրբ էջերէն մին է, ուր իւրաքանչիւր տողը թարմ ու լուսերանգ է գարնան ծաղկի պէս»<sup>1</sup>: Այս տաղը կարծես պատկերների մի հրավառություն է՝ ապշեցնող գեղեցկություններով համակված ու զարդարված: Մի սքանչելի պատկեր է Հերովդիայի դստեր պարի նկարագրությունը.

*Գընաց մըտաւ պիղծն ի ժողովն,  
Հոն, որ իշխանքըն կուտեցան,  
Զվիզըն կեռեց քան զքարբի օձ,  
Զմէջքն ոլորեց քան զաղեղան:  
Աչօք՝ ունօք ինձով նայէր,  
Բագուկ ձրգէր քան զուռ ճօճան,  
Զոտքըն առեալ մանիւ ճեմէր՝  
Ի լեզէհոն զօրքն ի նման:  
Յիմարեցոյց ըզթագաւորն,  
Շարժեաց ի ախտ պոռնըկութեան...:*

---

<sup>1</sup> Չոպանեան Ա., Հայ էջեր, էջ ԺԹ:

Այս տեսարանը հիշեցնում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակվող Նազենիկ վարձակի պարը, որի հոյակապ և անգերազանցելի նկարագիրը վերստեղծել է հանճարեղ Դանիել Վարուժանն իր «Հարճը» պոեմում: Այդպես մենապարողները հիմնականում եղել են կանայք, իսկ պարը կոչվել է «կաքա»<sup>1</sup>, որը շատ դեպքերում ունեցել է զգայական բովանդակություն և իմաստ: Քանի որ եթե Տրդատը Նազենիկին նայելով «շամշելով վաւաշեր» (Խորենացի), կամ Հերովդեսը հիացած ու ինքնամոռաց խոստանում է տալ այն ամենը, ինչ կինը ցանկանար, ապա պետք է ենթադրել, որ նկարագրված այս պարը նման է եղել Հռոմի անկումից հետո Առաջավոր Ասիայում, հատկապես Ասորիքում և Բյուզանդիայում շատ տարածված կանացի հրայրքոտ ու պագշոտ մենապարերին<sup>2</sup>:

Իսկապես, Թլկուրանցին վրիժառու աղջկա պարը պատկերել է մեծ վարպետությամբ՝ արտակարգ տպավորիչ դարձնելով ոչ միայն պարի տեսարանը, այլև տաղն ամբողջությամբ: Հատկապես հետաքրքիր և ուշագրավ է Հերովդիայի դստեր զգեստավորման ու զարդարվելու տեսարանը, որը նույնպես թերևս սկիզբ է առնում ոչ թե գրական սկզբնաղբյուրներից, այլ կենդանի տպավորության արդյունք է.

*Ձաչքն եւ գուներըն թրխացոյց,  
Ձերեսն օծեց դեղ դիւական:*

Իսկ աղջկա սպանվելու տեսարանը բանաստեղծը նկարագրում է այդ ոճրագործության ու մեղկ պարի արժանի վախճանը ցույց տալու համար: Ե՛վ այս վերջին նկարագրությունները, և՛ Հերովդիայի մահվան, և՛ Հովհաննես Մկրտչի գլխի և մարմնի ամփոփման տեսարաններն այնպիսի գեղարվեստական պատկերներ են, որոնք բացակայում են աստվածաշնչյան դրվագում և ստեղծված են Թլկուրանցու բանաստեղծական վառ երևակայության ու տաղանդի ուժով: Այս տաղը հիշեցնում է Օսկար Ուայլդի «Մալումեն», որն ի վերջո հասնում է իր ցանկությանը՝ համբուրում է գլխատված Յոքանասանին և սպանվում:

Աստվածաշնչյան թեմաներ մշակելով՝ Թլկուրանցին թերևս նպատակ ուներ կապ ստեղծել եկեղեցու և ժողովրդի միջև, քանի որ այդ շրջանում եկեղեցուց խորթանալու միտում էր զգացվում: Սուրբ Գրքի բովանդակությունն ավելի մատչելի ու հետաքրքիր դարձնելու համար Մագիստրոսը, Շնորհալին և նրանց հետքերով՝ Թլկուրանցին մշակում են նրա առանձին դրվագներ, որպեսզի հասարակ մարդը հետաքրքրություն հանդես բերի և ընտանենա Աստվածաշնչին: Դրա լավագույն ապացույցը նաև Թլկուրանցու «Տաղ Արա-

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 221:

<sup>2</sup> Հայտնի է, որ արևմտաեվրոպական հիստորիոսների և աճպարարների թափառական խմբերում եղել են այդ պարը ներկայացնող պարուհիներ (տե՛ս նույն տեղում, էջ 222):

րածոցն» է<sup>1</sup>, ուր նա չափածո վերաշարադրել է Աստվածաշնչի «Ծննդոց գիրքը», բանաստեղծական գեղեցիկ տողերով նկարագրել մովսիսական այդ մատյանի դեպքերը և իրադարձությունները: Բայց վիպական այս տաղը ոչ թե անմիջապես «Ծննդոց գրքի», այլ Վարդան Արևելցու «Արարածոց մեկնութիւնն» է՝ տողատված, վերածված չափածոյի, և կազմում է շուրջ 1600 տող: Թլկուրանցին իր տաղը բաժանել է հատվածների և կոչել շաբաթվա օրերի անուններով, որոնցից յուրաքանչյուրը պատմում է ըստ աստվածաշնչյան համապատասխան մասի նկարագրության:

«Մեկնութիւն Արարածոցը»<sup>2</sup> սկսվում է, այսպես կոչված, նախերգանքով, ուր բանաստեղծն իրազեկ է դարձնում իր ստեղծագործության նյութին և ընդգրկման սահմաններին.

*Ես Յովհաննէս նուաստ ոգի,  
որ մականունս Թուլգուրանցի,  
Կամաւ իմով ի հոգ մտի  
բանս ժողովել ինձ յիշելի.  
Աստ կարճաբան հաւաքեցի,  
յԱրարածոցըն Մովսեսի,  
Մեկնեալ Վարդան Վարդապետի,  
քաղեալ ի հարցն հոգելի»<sup>3</sup> :*

Բանաստեղծը քնարական գեղեցիկ ու նուրբ պատկերներով նկարագրում է աշխարհի, մարդկանց ու կենդանիների ստեղծումը.

*Երկիր էր աներեւոյթ, չէր էր լոյս, չէր էր տեսական,  
Եւ ջուրըն ծածկէր զաշխարհըս, չէր էր մարդ ստեղծեալ յերեւան:  
Եւ որ անպատրաստ ասէ՝ չէր էր զարդ, չէր էր բուսական,  
Ո՛չ ծառք, ո՛չ լէրհինք, ո՛չ դաշտք, ո՛չ զեռունք եւ ո՛չ լողական:*

Մական ամենագոր և ամենակարող Աստծո սուրբ հոգին շրջում է՝ ամենուր կենդանություն ու լույս շնորհելով.

*Եւ աստ ասաց Աստուած՝ եղիցի լոյս, եւ սփռեցան,  
Եւ եւս զերագոյն բարին վըկայեաց բարին բնութեամբ:*

Գթառատ Աստծո ամենակարող հրամանով ու ցանկությամբ ստեղծվում են երկիր ու երկինք, արև, լուսին ու աստղեր, գիշեր ու ցերեկ: Չափազանց

---

<sup>1</sup> «Արարածոց Տաղաչափեալ Մեկնութեան» մեզի ծանօթ հնագոյն օրինակն գրուած է 1485-ին և կը գտնուի Ս. Յակոբեանց թիւ 1647 բոլորգիր ժողովածոյին մէջ: Տե՛ս **Ն. Էպ. Մովսէական**, Տաղգիրք, Երուսաղեմ, 1958, էջ Զ:

<sup>2</sup> Բանասիրության մեջ կա նաև այն կարծիքը, որ Թլկուրանցին «Արարածոց մեկնութիւն» տաղի ոճով ու հանգով գրել է նաև Նոր Կտակարանի պատմությունը, որը սխալ է: Տե՛ս **Պետրոսյան Հ. Մ.**, Միջին դարերու հայ բանաստեղծութիւնը, «Բազմավեպ», 1905, էջ 455:

<sup>3</sup> «Տաղգիրք», էջ 75: Որոշ ձեռագրերում այս հատվածը բացակայում է, և տաղն սկսվում է հաջորդ տողով՝ «Սլըսաւղն է սկիզբն սկըզբան, արարիւր Աստուածն յախտեան» (նույն տեղում): Հետագա մեջբերումները ևս այս տպագրից են:

գեղեցիկ ու պատկերավոր է արևի և լուսնի նկարագրությունը.

*Արեւն ի հողով զընաց, եւ լուսինն ի սահ սողըման,  
Անմոլար մոլորականք՝ աստեղունք ոստոստ ընթանան:  
Արեգակն է լուսոյ ակն, եւ լուսինն է երկու բերան,  
Զլոյսն յարեգակնէն առնու, կամ ծածկոյթ է բացխրփական:*

Հատկապէս հետաքրքիր են տաղում գրեթէ միշտ առկա հեղինակի բանաստեղծական մեկնաբանությունները, ինչպէս՝

*Խաւարըն չէ գոյութիւն, լոյսն է գոյ եւ յոյժ պիտեւան,  
Իւ պակասութիւն լուսոյ՝ տարերացն ըստուերք զօրանան:*

Կամ՝

*Մինչ չէր մեղանչել Ադամ, չունէին ոյս թըշնամական,  
Ինձ, առեւծն եւ գայլն եւ արջն ընդ ոչխարսն էին միաբան:*

Այսպէս, Աստված հինգ օրում արարում է երկինք ու երկիր, կենդանիներն ու բույսերը, և արևի պայծառ լույսով ողողված երկիրը լցվում է դյուրիչ գեղեցկությամբ և աշխույժով: Իսկ

*Ի վեցերորդումն աւուր՝ մարդասէր Հայրըն զըթական,  
Ասաց ընդ բնութեան Որդին, արասցուք զԱդամ մեզ նման:  
Արար Աստուած զմարդն Ադամ, ի պատկերն իւր սուրբ տիրական,  
Զոր ի վեց դարուն զգեցաւ ի Կուսէն Որդին Հօր եւ Բան:*

Այստեղ դարձյալ նկատելի է Թլկուրանցու անհատական մոտեցումը, որ այնքա՛ն նրբորեն է արտահայտվում նրա ստեղծագործության մեջ առհասարակ.

*Եւ ըստ պատկերի հոգոյն, մարդ հոգի է անմահական,  
Հոգին Սուրբ անքրննելի, նոյնպէս եւ հոգիքն մարդկան:*

Իսկ որքա՛ն ցավով և ամսոսանքով է բանաստեղծը պատկերում Ադամի ու Եվայի անզգույշ, մարդկության համար ճակատագրական դարձած քայլը.

*Գիտութեան պրտոտըն իսակ՝ ձեզ լինի պատճառ մահըւան,  
Մերկ էին Ադամ եւ Եւայ՝ անպատկառ եւ անզգուշական:  
Յետ մեղանչելոյն ապա զմերկութիւն իւրեանց գիտացան,  
Զի մեղքըն զըղջալ բերէ թէ խոստովանել գիտենան:  
Դրրախտն անժառանգ մընաց, զի չունէր գայլ ոք մնացական,  
Ո՛հ թէ զինչ պատահեցաւ, վա՛յ մարդկան մեծի կորըստեան:*

Այսպէս «անպատկառ եւ անզգուշական» Ադամից ու Եվայից ծնվում ու սկիզբ է առնում մարդկային ամբողջ աշխարհը: Գեղեցիկ ու մեղմ նկարագրություններով բանաստեղծը շարադրում է նրանց սերունդների պատմությունը և տալիս քնարական ինքնատիպ ու յուրօրինակ մեկնաբանություններ: Ինչպէս տաղերում, այստեղ ևս Թլկուրանցին իր պատմությունն ավարտում է բոլորին ուղղված բարեմաղթանքով.

*Յաւարտման այսրմ բանիս շարադրական,  
Որ յոլովից եւ ի բազմաց կարճ գրեցան,  
Վայելէ շօրն անեղին եւ անըսկըզբան,  
Անեղ Որդոյն, որ է ծընունդ շօր բընութեան.  
Նոյնպէս եւ Հոգւոյն Սրբոյ անճառական,  
Երգեսցուք փառք եւ պատիւ այժմ յափտեան:  
Եւ զանարժան եւ զեղկելիս թափառական  
ԶԹուլգուրանցիս միշտ յիշեցէք հարք պատուական:*

Այս մեկնողական բնույթի վիպական տաղը, թեմայի առումով լինելով աստվածաշնչյան, կատարման առումով միանգամայն ինքնատիպ բանաստեղծական հորինվածք է: Ընդ որում, գրեթե ամենուրեք դրսևորվում է Թլկուրանցու հուզական վերաբերմունքը, ինչը քնարական որոշակի երանգ է հաղորդում նյութին: Ի դեպ, այդպիսի մոտեցում բանաստեղծն ունի իր գրեթե բոլոր վիպական տաղերում, որոնցում թվում է, թե սյուժեների հանրահայտ բնույթը թույլ չպիտի տար երևան հանելու սեփական վերաբերմունքը: Դա նշանակում է, որ տաղերգուն իրեն կաշկանդված չի զգում ստեղծագործելիս և ունի թեթև ոճ ու դյուրաշարժ գրիչ:

***Вардан Егиазарян – Эпические песни Ованеса Тлкуранти «Об усекновении головы святого Иоанна» и «Толкование созданий»***

Среди эпических произведений Ованеса Тлкуранти есть поэтические обработки библейских мотивов. К таковым относятся эпические песни «Об усекновении головы святого Иоанна» и «Толкование созданий», обладающие высокими художественными достоинствами. Первая из этих песней представляет собой нетрадиционную для средневековой литературы обработку сюжета из Евангелия от Матфея об усекновении головы Иоанна Крестителя. Экзегетическое произведение «Толкование созданий» является поэтическим переложением Книги Бытия. Здесь Тлкуранти с большим поэтическим мастерством описывает события, представленные в этой моисеевой книге.

***Vardan Yeghiazaryan – The Epic Poems “On Beheading of St. John” and “Interpretation of Creatures” by Hovhannes Tlkurantsi***

In the epic works of Hovhannes Tlkurantsi there are developments in biblical motifs. Such valuable literary works are the epic verses “On Beheading of St. John” and “Interpretation of Creatures”. The mentioned first epic poem is an original verse created in medieval literature based on the episode of beheading John the Baptist in the Gospel of St. Matthew. And in “Interpretation of Creatures” – an epic poem of interpreting type, Tlkurantsi had recomposed the Book of “Genesis” in verse and in beautiful poetic lines had described the events of that Mosaic book.

**ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ՎՐԱՑԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

*Բանայի բառեր – Քուչակ, Շահնագար, հայրեն, հնդեվրոպական լեզվաընտանիք, քարթվելական լեզուներ, վրացերեն, զուգադրական քերականություն, թարգմանություն*

Թարգմանության համար սահմանումներ և կանոններ չեն ստեղծվել և երբեք չեն ստեղծվի, առավել ևս եթե խոսքը վերաբերում է գեղարվեստական թարգմանությանը: Գեղարվեստական թարգմանությունը արվեստ է, մինչդեռ սահմանումները կաշկանդում են ստեղծագործողին, սահմանափակում ինքնաբացահայտվելու հնարավորությունները: Ժամանակները փոխվում են և առաջադրում իրենց պահանջները: Այդուհանդերձ, գեղարվեստական թարգմանության մասին կան հակամերժ կարծիքներ ու տեսակետներ: Այսպես, տեսաբաններից ոմանք պնդում են, թե պոեզիան երկրորդ լեզվի վերածելիս բնագիրը պետք է պահպանի իր նախնական լեզվի զգացողությունը, ընթերցողը պետք է «տեսնի» այդ լեզուն, պետք է զգա, որ հեղինակը թարգմանվող լեզվով չի մտածում ու գրում: Ըստ երկրորդ տեսակետի կողմնակիցների՝ ընթերցողը պետք է զգա, որ հեղինակը գրել է թարգմանվող լեզվով, իսկ թարգմանությունը պետք է ոչ միայն արտացոլի այն դարաշրջանի առանձնահատկությունները, երբ ստեղծվել է բնագիրը, այլև միաժամանակ մոտ լինի այն դարաշրջանին, երբ իրականացվել է թարգմանությունը:

Ընդունենք թե չընդունենք նման կարծիքները, և անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեսություններ կմշակվեն գեղարվեստական երկերի թարգմանության համար, այդ յուրահատուկ աշխատանքի ծանրությունը կմնա թարգմանչի ուսերին:

Քանի որ հոդվածը գրելու բուն նպատակը հայերենից վրացերեն թարգմանության մասին է, ներածական հակիրճ խոսքից հետո հարկ է թեկուզ համառոտակի անդրադառնալ, թե թարգմանիչը որքանով է թափանցել հեղինակի աշխարհընկալման, յուրաձևության (մաներա), ոճական խառնվածքի, լեզվական այն երևույթների մեջ, որոնք իշխող-տիրական են թարգմանության գործընթացում:

Հայերենը և վրացերենը, պատկանելով տարբեր լեզվաընտանիքների (հնդեվրոպական և իբերական), առանձնահատկությունների հետ ունեն նաև բազմաթիվ ընդհանրություններ: Ակադեմիկոս Նիկողայոս Մառը իր աշխատությունների մեջ բազմիցս նշել է, որ հայերենն ու վրացերենը «ազգակցական ամենասերտ կապակցության մեջ են»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Март Н. Я.**, Грамматика чанского (лазского) языка, 1910, с. 10-11. Տե՛ս նաև Նիկողայոս Յակովլևիչ Մառ (ծննդյան 100-ամյակի առթիվ), Երևան, 1965, էջ 52:

«Ազգակցությունն» սկիզբ է առնում հայոց և վրաց լեզուների հնչյունական համակարգերից, որոնք ունեն միասնություն կազմող, գրեթե ամբողջությամբ համընկնող կառուցվածք:

Չայնավորները, օրինակ, չեն տարբերվում, եթե հաշվի չառնենք, որ հայերենում 6 ձայնավոր գրվում է 8 տառով, և ք-ի գաղտնավանքը, որը բացակայում է վրացերենում: Բաղաձայնների միջև ևս կատարյալ ներդաշնակություն է. գործում է հնչյունների եռաշարք, երկշարք և միաշարք համակարգ, բարդ բաղաձայնների (աֆրիկատների) հինգ եռյակ:

Ընդհանրություններից են բառակազմական միջոցները, գոյականական և դերանվանական սեռերի բացակայությունը:

Նմանությունների շերտերն զգալի են օրինանքների, անեծքների, հանելուկների, ծիսակատարությունների, երգերի, հեքիաթների ու լեզենդների, առածների ու ասացվածքների մեջ: Հայոց և վրաց լեզուների ուղղագրության հիմքերում հիմնականում ընկած է գրության միևնույն՝ հնչյունական սկզբունքը:

Տարբերություններից է վրացերենի բայերի բազմադիմությունը. բազմադիմային խոնարհում, ձևախմբաստային շերտավորումներ, արտասովոր արտահայտչականություն և հագեցվածություն:

Թե՛ չափածոյի, թե՛ արձակի թարգմանության ժամանակ դժվարություն կարող է հարուցել շեշտադրության հետևողական պահպանումը: Եթե հայերենը միատեսակ և կայուն շեշտադրություն ունի, ապա վրացերենում շեշտը շարժական է. այդ պատճառով վրացերենում տողերն ունեն միայն իգական (բառի վերջից երկրորդ շեշտված վանկով) կամ դակտիլային (բառի վերջից երրորդ շեշտված վանկով) վերջավորություն (քառավանկ և ավելի բառերում հիմնական, ուժեղ շեշտից բացի, ի հայտ է գալիս նաև երկրորդական՝ թույլ շեշտ):

Բացի դրանցից, վրացերենում կան բազմաթիվ բառեր, որոնց հայերեն թարգմանությունը պահանջում է չորս-հինգ, նույնիսկ ավելի բառ, որոնք «խոչընդոտներ» են ստեղծում, ուստի իմաստաբովանդակային վթարներից, ոճական անհարթություններից և լեզվական այլ կարգի սխալներից զերծ մնալու համար անպայման պետք է հաշվի առնել վերոհիշյալ կարգերն ու նրբերանգները:

Շարահյուսության ոլորտում ևս տիրում է կատարյալ համերաշխություն: Դա, անշուշտ, բովանդակության միասնության փոխարկումը դարձնում է դյուրին: Ի դեպ, այս մասին նշել են հայոց և վրաց լեզուների մասնագետները և թարգմանիչներից ոմանք: Նիկողայոս Մառը «Իմ ուսանող Վահան Տերյանի հիշատակին» հուշերում «Ընձենավորի» նախաբանի թարգմանության նախապատմության առնչությամբ գրում է. «Հայոց լեզվի կառուցվածքին թե՛ ի բնե, թե՛ կուլտուր-պատմականորեն հատուկ է լավագույն կերպով արտահայտել վրաց լեզվի բնույթն ու առանձնահատկությունները... Բանաստեղծությունների ներքին ռիթմը, պատկերավորումներն ու ոճերը,

հայ և վրաց ժողովուրդների բուն հոգեբանությունն ամբողջապես ոչ միայն հարազատ են իրար, այլև նույնն են ըստ էության...»<sup>1</sup>: Նույն միտքն է հայտնում Վրաստանի ժողովրդական բանաստեղծ, պոետ, ակադեմիկոս Իոսեփ Գրիշաշվիլին. «Առհասարակ պետք է ասել, որ հայերեն երկերը վրաց լեզվով ավելի ինքնատիպ ու հարազատ են հնչում, քան այլ լեզուներով: Թումանյանի երկերը վրացերենի վերածելիս բազում տողեր առանց միջամտության շարվում էին թարգմանության մեջ...»<sup>2</sup>:

Լսենք նաև վրացական պոեզիայի անգուգական թարգմանիչ, բանաստեղծ Հովհաննես Կարայանին (Կարապետյան), որի հարցազրույցներից մեկում կարդում ենք. «...Մորիսի (խոսքը վրացի բանաստեղծ, հայ պոեզիայի թարգմանիչ Մորիս Փոցխիշվիլու մասին է - Ն. Բ.) բանաստեղծություններից ոչ մեկի թարգմանության ժամանակ ոչ մի ջանք չեմ թափել, դրանք «իրենք են» վերածվել հայերենի...»<sup>3</sup>:

Ընթերցողը անհամեստություն թող չհամարի, եթե ասենք, որ տասնամյակների թարգմանչական մեր փորձը ևս հիմք է տալիս հավաստելու, որ հատկապես վրացերենից հայերենի փոխադրելու դեպքում գերազանց թարգմանության լայն հնարավորություններ է ընձեռվում:

Այլ հարց է, որ բառաքանակի նույն չափանիշներով թարգմանված տեքստերում ստացվում է ծավալների անհամապատասխանություն. վրացերենից թարգմանվող տեքստերի ծավալները հայերենում մեծանում են, իսկ հայերենից վրացերենի դեպքում՝ սեղմվում: Երևույթը բացատրվում է ոչ թե քերականական առանձին կարգերի գործոնով, այլ հայերեն բառերի բազմավանկ լինելու իրողությամբ:

Չուգադիպությունները, նմանությունները պատահական չեն անշուշտ. դրանք արդյունք են հայկական և վրացական ցեղերի՝ վաղ շրջանի լեզվամտածելակերպի դրսևորումների, զարգացման նույն աստիճանին գտնվող երկու լեզուների խաչավորման, ներթափանցումների, փոխառությունների, տնտեսական և քաղաքական շփումների, ընդհանուր գոյավիճակի ու տևական համակեցության, թերևս հետևանք են նաև ծագումնաբանական (նոստրատիկ) ընդհանրությունների:

Հայերենի և վրացերենի քերականական «օրենքներում» դեռևս կարելի է բազում ակնհայտ ընդհանրություններ, համապատասխանող կարգեր ու երևույթներ վկայել, որոնք պահանջում են գիտահետազոտական ծավալուն աշխատանք, ուստի սահմանափակվենք այսքանով և անցնենք բուն նյութին:

---

<sup>1</sup> **Շոթա Ռուսթավելի**, Ընձենավորը, Երևան, 1966, էջ 261:

<sup>2</sup> Ուղեցույց աստղը (Վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին), Երևան, 1999, էջ 88:

<sup>3</sup> «Կամուրջ», Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի օրգան, Թբիլիսի, 1985, էջ 299:



Նահապետ Քուչակը XV դարի վերջի և XVI դարի սկզբի հայ առաջին տաղերգուներից է, որի անունով գրավոր և բանավոր պահպանվել են սիրային, խրատական, պանդխտության և կրոնական թեմաներով քառատող քերթվածքներ: 1880-ական թվականներից հանիրավի նրան են վերագրվել միջնադարից իբրև ժառանգություն մեզ հասած հարյուրավոր հայրեններ: Հայրենը, որ նշանակում է հայերեն ասել, զուտ հայոց միջավայրի ծնունդ է, հայ միջնադարյան քառատող բանաստեղծություն: Քնարերգության այս տեսակով ստեղծագործել են դեռևս Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Մկրտիչ Նաղաշը, Գրիգոր Աղթամարցին և այլ տաղերգուներ: Չնայած 1922 թ. Մանուկ Աբեղյանը բացահայտեց այս թյուրիմացությունը և ապացուցեց, որ հայրենները Նահապետ Քուչակի գրչին չեն պատկանում<sup>1</sup>, բայց և այնպես բանասերները մեծարժեք այդ երգերի հեղինակ ավանդաբար շարունակում են համարել մեկ անհատի՝ «հայ քնարերգության լուսապսակ ճակատին»: Մինչև հիմա նրա անունով են հրատարակվում հայրեններ բովանդակող ժողովածուները, որոնք և թարգմանվում ու լույս են տեսնում օտար լեզուներով թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում<sup>2</sup>: Ինչևէ, հայրենները հայ բանաստեղծական մտքի բարձրագույն արտահայտություններից են, անթառամ են, իրապես անսահման հուզմունք, գեղագիտական հաճույք են պատճառում, և կարևոր չէ՝ դրանք անհատակա՞ն, ժողովրդակա՞ն, թե՞ տարբեր գուսանների հորինվածքներ են: Մեր խնդիրը հայրենների հեղինակի կամ հեղինակների առեղծվածը պարզելը չէ, մանավանդ որ այդ առթիվ գրվել են բազմաթիվ հոդվածներ ու գիտահետազոտական աշխատանքներ<sup>3</sup>:

Հայրենների թարգմանությունները վրաց իրականության մեջ ի հայտ եկան 1960-ական թվականներին: Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության և վրաց բանասիրության ֆակուլտետների ուսանողների համար վրացերեն լույս ընծայված քրեստոմատիայում զետեղված են Նահապետ Քուչակի հայրեններից ութը<sup>4</sup>: Այս թարգմանությունը իր ժամանակի համար, անշուշտ, շնորհակալ աշխատանք էր, բայց կան աչքի զարնող թերություններ, շեղումներ: Շեղումներ են նշմարվում նաև հանգավորման սկզբունքից. բնագրում տողերը սահմանակից են (aaaa), մինչդեռ թարգմանության մեջ երբեմն կից են (aabb), երբեմն՝ խաչաձև (abab), երբեմն էլ՝

<sup>1</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, Երևան, 1967, հ. 2, էջ 11-23:

<sup>2</sup> Տե՛ս **Напет Кучак**, Сто и один айрен, Ереван, 1975, **նույնի՝** Лирика, Айрены, М., 1972, հավաքված լեզուով, ձև յրտու ձևերն, տեղում, 2011: **Նահապետ Քուչակ**, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, 2012:

<sup>3</sup> Տե՛ս **Չոպանյան Ա.**, Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902, **նույնի՝** Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., **Գրիգորյան Շ.**, Ո՞վ է ի վերջո Նահապետ Քուչակը, Երևան, 1984: **Թամրազյան Հ.**, Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, Երևան, 2001, **Մնացականյան Ա.**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 2:

<sup>4</sup> **Սոմսյուրի Դա Վեյրմաիջանյուլի Լուիցերաթյուրոս յրեթեոմատու, տեղում, 1968, թ. 65-66.**

ოჲსკადს (abba): ორთა ართიმოდ ჭარღვანსჲს ხაჯოღվել է ხათկაყეს «ერე სერს ი ქაჯჲარხუ სკაი» բանատողով սկսվող հայրենը.

ერე სერს ი ქაჯჲარხუ სკაი,  
სკაი იმ სჲრთრუ բნასტეგაი,  
საყა იმ ართეს ი რორუ`  
ქერქერქ ქერქერ ჭაჲსტეგაი.  
სკაი ი გლქას სკაი,  
ი რღეტა სკაი ჭათნეგაი,  
საჲსუ ართასთრე ნიკეს,  
ნა არხინ ი վარ վარსტეგაი:

სიყვარული როცა გაჩნდა,  
ჯერ ჩემს გულზე შემოჯდა,  
შემდეგ მისწვდა კიდით-კიდე  
ქვეყნის გარეშეშობა,  
თავს დამეხსნა, ტვინს ჩამეჭდო,  
სული არ მოასვენა  
და თვალები სისხლიანი  
ცრემლით ჩამოასველა<sup>1</sup>.

ერე ასე ორხანსკომ, ყათსკერაჲს ხამასკარგე თეტაჲსანგნელქ, რიყენ-ჩინჯ ჭიქსანგელ է ხაჲრენსი ხმასთრე, საყა მჲთუ ხაჲრენსნერომ, აჲრუ-ხანღერდ, გგაქორენს ჲარჲარქელ სნ გონაჲს ლსლქსნერე ს გეტარქსთასკანსოქონს: რქვარ ჯ სსკათელ, რე რა ყაჲმანსაქორქად է ჭარღვანსოქონს ქრავტერენ სკამ რთისტერენ თოღავსინტრეჲს ჲრასკანსანგნელი ჲრთოქოქამრ, რრე ს ათავ ჯ ტერელ სმანს ყარავანსტრინს რნორთე ხესსანსქნერ, ჭერეს ხსნგ რა ს ყათსჯათრე, რე სნტრასხაროჲს ხაჲრენსნერე აქელსი ხანგა-ქორქად რათავსი ჭარღვანსოქონს თყაქოროქონს სნ ჭოღნომ, სსკათელქორენს მნდ է ჭარღვანსჲს სთეტღავტორდასკანს «სუ»-რ:

სერ სყათასკელ, სასკაჲს, 2011 ჭ. ათანსჲსი გრქოქ<sup>2</sup> ლჲს თესად ხაჲრენსნერსი რნსოქონსნ ს: ჯრქენს მჲსჲს, რე վტერქობოქონს ს გნახათმანს ხჲმანსკანს ჯაჲსანსჲრე რნავტრს დსი ს როქანოქასკოქონს მჲსანსოქონსნ ს, რან-გჲს ჭესკოღ ანსნჯანს ჯეტქელქო რესყრომ აჲს ჯი სკართე ხამარქელ ქარქტე, ათაქელ სნ ხამარქტე:

ჯაჲრენსნერე 15-ქანსკანსი 7/8 რაქანსომოდ რათათოღ რანასთეტობოქონსნერ სნ. ჭარღვანსჲსე დრქოქ რნსოქონსნ ს სკათარელ` ნაქასყათოქონსნერ თაქოქ გრესე ხამარქტე, ხაქასარ სჲსათოღტრს` 8/8 ქანსკაჲსა-ქის` რნორთე მრქნაოქონს რანასთეტობასკანს ოდსინ. XII რარეჲს მინსე XIX რარე ქრავსკანს ჯაჲსადოქონს გქსაქორაყეს ჲქსელ ს 16-ქანსკანსი თოღე ხამახაქასარ რაქანსომოდ, რე სოქქომ ს **ჯაჲრე**:

მიჯნურსა თვალად სიტურფე // ჰმართებს, მართ ვითა მწეობა,  
სიბრძნე, სიმდიდრე, სიუხვე, // სიყმე და მოცაღეობა,  
ენა, გონება, დათმობა, // მძლეუთა მებრძოლთა მძლეობა,  
ვისცა ეს სრულად არა სჭირს, // აკლია მიჯნურთ წნეობა.

<sup>1</sup> სომხური და აზერბაიჯანული ლიტერატურის ქრესტომათია, თბილისი, 1968, გვ. 66.  
<sup>2</sup> ნაჰაპეტ ქუჩაკი, ას ერთი ჰაირენი, თბილისი, 2011 (ჭარღვანსოქონსნერ` გჲქსი ტახინაქარჲს):

Ահա բերված քառատողը Վահան Տերյանի թարգմանությամբ.

Սիրահարը/ պետք է լինի // արևի պես /չքնաղ և վառ,  
Առատաձեռն/ և ունևոր, // ազատ, դյուցազն/ ու զորավար,  
Կռվում հաղթող./ համբերատար, // մտքով հարուստ./ լեզվով ճարտար,  
Ում լիովին/ չի տված այս // - նա չի կարող/ լինել սիրահար<sup>1</sup>:

Օգտվելով նշված կաղապարներից՝ թարգմանիչը բանաստեղծական արվեստի պահանջները անխաթար իրականացնելու առումով, ինչպես Վահան Տերյանը, բարձր արդյունքի է հասել. վանկաշեշտային՝ ութ-յոթ համաչափությունը, որ համապատասխանում է բնագրի ռիթմայնությամբ, պահպանել է մինչև վերջ, կարողացել է հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի հյուսվածքին, բառանյութին. գրեթե չի անտեսել և ոչ մի էական խոսք, մակդիր կամ համեմատություն, իսկ եթե որոշ տողեր, այնուամենայնիվ, իրենց տեղը զիջել են այլ տողերի, ապա դրանք չեն խանգարում տվյալ բանաստեղծության նրբերանգներն ընկալելուն:

**Բնագիր՝**

Ես աչք ու դու լոյս, հոգի՛,  
առանց լոյս՝ աչքն խաւարի.  
Ես ձուկ ու դու ջուր, հոգի՛,  
առանց ջուր՝ ձուկըն մեռանի.  
Երբ գձուկն ի ջըրէն հանեն  
ի այլ ջուր ձըզեն, նայ ապրի,  
Երբ զիս ի քենէ գատեն,  
քան զմեռնէլն այլ ճար չի լինի:

**Գիվի Շահնագարի թարգմանությամբ.**

Սե-տեգալո, Սե-տեգալոս հոնո,  
տեգալո շինոտ ճա՛մրեմոս,  
Սե-տեգե՛նո, Սե-Վեգալո, հեմո,  
հեյեն Սորոս Երտո-Գեմեյնո;  
Սեգա Վեգալոս տու Սերտոգ, Գեոցեղեյո  
տեգե՛նո, Ենեղ Երեյեյո Գեռեյեյոս,  
Սեգեռեմ հեյոս ՍեՎեյեյոս Գեո Գեյեյոս,  
տու Գե Սեյեյոտ ճա՛մրեյեյո!<sup>2</sup>

**Վրացերեն գեղարվեստական  
թարգմանության տողացի  
թարգմանությունը՝**

Ես՝ աչք, դու՝ աչքի լոյս,  
առանց լոյս աչքը կչորանա,  
Ես՝ ձուկ, դու՝ ջուր, հոգի,  
մեր միջև ստեղծողը միայն,  
Այլ ջրի թե միացնես, կապրի  
ձուկը՝ տաք ափ նետված,  
Բայց... իմ կյանքը ո՛ւմ է պետք,  
Թե պիտի մնամ քեզնից գատված:

<sup>1</sup> Շոթա Ռուբալակի, Ընձենավորը, Երևան, 1966, էջ 254:

<sup>2</sup> Նաճաթեյ Քուրբանո, Ես Երտո Ֆեյրեյո, տոմոլոսո, 2011, ԳԳ. 15.

Ընդգծված արտահայտությունը, թերևս, ավելորդ չէ, ավելին՝ տեղին է, որովհետև միջնադարում խավարամիտ հոգևորականները, «վկայելով» Աստծուն, կնոջ հանդեպ սերը համարում էին մեղսագործություն: Այս պարագայում թարգմանիչը հենց հայրենի հեղինակի միտքն է փոխանցում, սիրահարի ու սիրած էակի արանքում հենց Արարիչն ինքն է, որ գատում, բաժանում է գույզին:

Թարգմանչի վարպետության շնորհիվ վրացի ընթերցողին թվում է՝ քերթվածքները գրված են վրացերեն: Դրա առաջին նախապայմանը բնագրի ոճական առանձնահատկություններին հավատարիմ մնալն է, որ նա վերարտադրել է՝ ժողովրդական պոեզիայի և միջնադարի ու ժամանակակից գրական վրացերենից լիարժեք օգտվելով: Մա բոլորովին չի նշանակում, որ հայոց քնարական հերոսին վերագրել է վրացուն բնորոշ մտածելակերպ, հագցրել ազգային տարագ, գունավորել վրացական վարք ու բարքով:

Բանաստեղծություն կարդալը ենթադրում է ձայն, տեմբր, մոտենում է մեղեդայնությանը, որը կարող է գերակայություն առաջ բերել իմաստի հանդեպ: Ներքոբերյալ հայրենում գերիշխում են **ր-լ** և **գ-ս** (թարգմանության մեջ՝ **շ-ս** և **ր-լ**) հնչյունները, որոնք առաջացնում են երաժշտականության զգացում: Դրանք, անշուշտ, տարբեր ընթերցողների մեջ կարող են տարբեր զգացողություններ արթնացնել, որովհետև տվյալ հնչյունը կարող է ունենալ այլ գույգորդումներ:

Սիրեմ գայդ սիրուն երեսըդ,  
որ լուսին ի մոտն է գերի.  
Պագնեմ գայդ բարկուկ պըռկունքդ,  
որ շաքարն ի մոտն է լեղի.  
Թուխ աչք ու կամար ունքերդ  
քան ըզծով կու գարնե ալի.  
Բերնիկդ է ի շիջ նըման,  
որ վարդին ջըրովն է ի լի:

მიყვარს შენი ტურფა სახე-  
მთოვარეც კი მასთან მკრთალო!  
საამბორლად ბავე შენი,-  
შაქარიც კი მასთან მწარი!  
ვე თვალ-წარბი, გიჩანს ასლად  
მღელეგებულ ზღვასთან,- მწყრალი  
მაგ ტუჩებთი მიწყვი მონქებს  
სურნელოვან ვარდის წყალი!

### **Գեղարվեստական թարգմանությունը՝ տատաղարձված.**

Միղվարս շենի տուրփա սախե,-  
Մթովարեց կի մասթան մկրթալի!  
Սաամբորլադ բագե շենի,-  
Շաքարից կի մասթան մծարի!  
Էգ թվալ-ծարբի, գիչանս ասլադ  
Մղելվեբել գղվասթան,- մծղրալի  
Մագ տուչեբիթ միծղիվ մոչքեբս  
Մուրնելովան վարդիս ծղալի:

<sup>1</sup> Նաճաճեց Ժլեճայո, ձև յրտո Յօորցեո, տձոցոսո, 2011, էջ 64:

Գեղարվեստական թարգմանությունը ներկայացնելով տառադարձված՝ ընթերցողը հնարավորություն է ստանում պատկերացում կազմելու ձևի և բովանդակության մասին, այս պարագայում նաև այն մասին, որ թարգմանիչը ապահովել է և՛ ընկալելին, և՛ ըմբռնելին, այսինքն՝ հնչյունային կողմը համերաշխ է իմաստային կողմի հետ:

Թարգմանչին հաջողվել է վրաց ընթերցողի առաջ բացել քուչակյան հրաշալի և խորախորհուրդ աշխարհի դռները, քանզի պատկերավորման և արտահայտչական միջոցները, հաճախ էլ ինքնատիպ հնչեղությունը, ինչպես բերված օրինակում է, կարողացել է պահպանել և հավասարապես լսելի դարձնել: Հեղինակն ու թարգմանիչը, «մեկ սիրտ, մեկ հոգի դարձած» ներկայացել են ընթերցողին:

Քո ծոցդ է ճերմակ տաճար,  
քո ծըծերդ են կանթեղ ի վառ.  
Երթամ ես, ժամկոչ ըլլամ,  
գամ, լինիմ տաճրիդ լուսարար:  
-Գընա, ծօ տըղայ՝ տըղմար,  
չի վայլես տաճրիս լուսարար.  
Երթաս դուն խաղով լինաս,  
ու թողուս տաճարս ի խաւար:

ვგ მკერდი თეთრი ტაძარი,  
ძუძუნე-წყვილი კანდელო,  
მნათოდ მოგივალ, რომ ტაძარს  
მოგმადლო უფლის ნათელი...  
-განვედ, ყრმავე, უცადს რა გეხმობ  
ტაძრის ან საკმელ-სანთელის,  
წახვალ, თავს სხვაგან გაირობდ,  
მე კი ბნელს მიმცემ-გათელილს!..<sup>1</sup>

Ընդունված է ասել, որ դասական բնագրի կյանքը մշտատև է, իսկ թարգմանության կյանքը՝ սովորաբար կարճատև: Ելնելով թարգմանություններից՝ դժվար է համաձայնել նման կարծիքին: Ելնելով ժամանակի ու տարածության պահանջներից ու չափանիշներից՝ այս թարգմանությունները կարող են քննել, վերլուծել նաև ապագայում. սրանք բանաստեղծական թարգմանության գոհարներ են, քուչակյան բառ ու բանի վերակենդանացում, եթե ոչ գրեթե լիովին բնագրային, ապա անպայման շատ մոտ ու հարագատ բնագրին:

Միջնադարի կրոնական հալածանքների ու նեղմտության պայմաններում հայրենների հեղինակը համարձակ, անթաքույց երգել է կնոջ մարմնական գեղեցկություն, զգայական սեր ու կիրք: Դա սիրտ հոգեկան ապրումների ընդհանրացում է: Բանաստեղծն այնքան անկեղծ, այնքան համոզիչ և այնպիսի հաճույքով է նկարագրում իրեն համակած զգացումները, որ ընթերցողն էլ հակվում է հավատալու, որ այդ «քաղցր բարը» առաջինը համտես է արել տվյալ տողերի հեղինակը: Խոսքը, անշուշտ, «Մէրն երբ ի յաշխարհս եկա» բանատողով սկսվող հայրենի մասին է: Բայց իսկական, խորունկ սերը զուտ հաճույք ու վայելք չէ պոետի համար, այն նաև վիշտ, դառնություն ու տառապանք է պատճառում: Ճիշտ է ռուս քննադատ Գ. Միտինը,

<sup>1</sup> Նաճաճեց Քյոնեյո, ձև յրտօ Յօօրցեօ, տձօցօօօ, 2011, էջ 56:

որը Քուչակի «հայրեններին համահեղինակ համարում է բոլոր այն գեղեցկուհիներին, ում սիրել է բանաստեղծը, հատկապես նրանց, ովքեր սիրել են բանաստեղծին, քանզի քերթվածքների գլխավոր երանգը սիրո բերկրանքն է, կրթի պոեզիան...»<sup>1</sup>: Այդ պոեզիան կենսուրախ է, հուզառատ ու զգայական, իր հրաշագեղ մերկությամբ ելևէջում է երկրի ու երկնքի միջև:

Միտո անկասելի պոռթկումներից հետո գրել վրդովմունք ու զայրույթ արտահայտող, բռնի կամ շահախնդիր ամուսնությունները պախարակող, առավել ևս պանդխտություն երևույթի դեմ կամ մասին, հեշտ չէ, իհարկե: Մանավանդ որ օտար երկրներ մեկնողը բաժանվում է սիրած էակից և սրտի կսկիծով սիրեցյալին որպես «ամանաթ» պահ տալիս այլոց.

*Կելնեմ, կերթամ, մանկտիք բարով մնացեք,  
Զիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջն պահեցեք.  
Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէր հասուցեք.  
Թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդն ձեզ՝ գտերն յիշեցեք:*

Ցավոք, հոգեկան ծանր դրամա պարունակող այս հայրենը տեղ չի գտել ժողովածուի մեջ, ինչպես նաև «Երբ սերն ի յաշխարհս եկավ» բանատողով հանրահայտ հայրենը:

Ամփոփենք. լեզվի տարբեր մակարդակներում քննության նյութ դարձնելով հայերենի և վրացերենի առանձնահատկություններն ու ընդհանրությունները, թարգմանական արվեստի սկզբունքներն ու մեթոդները՝ հանգում ենք հետևյալին՝ ա) թարգմանիչն ի հայտ է բերել հայոց և վրաց լեզուների բացառիկ զգացողություն, բ) հայրենների վրացերենը տաղաչափական համակարգերի և գեղարվեստականության առումով ներկայանում է որպես թարգմանության բանաստեղծական պահանջների իրականացման բարձրագույն աստիճան, գ) թարգմանչին հաջողվել է վերակենդանացնել քուչակյան հայրենների բառ ու բանը և վրաց ընթերցողի առաջ բացել յուրօրինակ և խորախորհուրդ աշխարհի դռները:

\* \* \*

Հաջողության գրավականը պետք է փնտրել նաև նրանում, որ թարգմանիչը Գիվի Շահնագարը, ծնված ու մեծացած լինելով հայ հոր և վրացի մոր ընտանեկան հարկի տակ, կարողացել է միահյուսել լեզուների՝ հայերենի և վրացերենի կատարյալ իմացությունը, քաջատեղյակ է երկու ժողովուրդների գրականությանը, պատմությանն ու մշակույթին, բարքերին ու սովորույթներին, ազգագրությանը՝ ամենալայն իմաստով, որ թարգմանությանը վերաբերող կարևորագույն բնագավառներից է, ամբարել է տեսական գերազանց պաշար, արարելու ավելի քան կեսդարյա հարուստ փորձ, ի վերջո՝ նրան վերուստ տրված է բանաստեղծելու և թարգմանելու ձիրք ու շնորհք:

<sup>1</sup> Мастерство перевода (Сборник двенадцатый, 1979), М., 1981, с. 193.

Թարգմանչի վաստակը աննկատ չի մնացել. Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի առաջին հրատարակությունը ընթերցողների հիացմունքին արժանանալուն պես Հայաստանի և Վրաստանի գրողների միությունները գրեթե միաժամանակ համապատասխանաբար շնորհեցին Եղիշե Չարենցի և Իվանե Մաչաբեևու անվան մրցանակներ: Դրան հաջորդեցին Գալակտիոն Տաբիձեի, Իլիա Ճավճավաձեի, Ֆրիտյոֆ Նանսենի և նույնքան նշանակալից այլ մրցանակներ: Պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Վրաստանի «Պատվո նշան» շքանշանի ասպետ է, իսկ Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարելիցի առիթով նրան շնորհվել է Մովսես Խորենացի մեդալ:

Վերջերս հայ և վրաց գրական հասարակայնությունները նշեցին վաստակաշատ գործչի ծննդյան 80-ամյակը: Մաղթենք նրան կայուն առողջություն, ստեղծագործական բեղուն գործունեություն, հաջողություններ ու հաղթանակներ՝ ի փառս հայ և վրաց գրական-մշակութային առնչությունների հարստացման ու մերձեցման:

#### **Грачик Байрамян – По вопросам перевода айренов на грузинский язык**

На разных уровнях языка автор статьи исследовал отличия и общие особенности армянского и грузинского языков, принципы и методы искусства перевода и пришёл к следующему выводу: а) автор перевода выявил необычайное восприятие армянского и грузинского языков, б) оригинал и перевод адекватны по художественности и стихосложению, в. переведенное произведение на высокой степени отвечает требованиям по стихотворному переводу, г) Гиви Шахназару удалось открыть перед грузинским читателем двери необыкновенного и таинственного мира Армянских айренов.

#### **Hrachik Bayramyan – On the Translation of Hayrens into Georgian**

By studying varieties and common features of the Armenian and Georgian languages, the principles and methods of the art of translation at various language levels, the author of the article has come to the following conclusion: a. the translator has manifested an exceptional insight of the Armenian and Georgian languages; b. the original text and the translation are almost adequate concerning their versification and artistic merit; c. the literary work, to the utmost level, meets the requirements of verse translation; d. Givi Shahnazar has managed to provide the Georgian reader with the unique and mysterious world of Armenian Hayrens.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ

*Բանայի բառեր – բնականուն, բնականունների դասակարգում, հայկական երկրա-  
ծին բնականուններ, հայկական մարդածին բնականուններ*

Տեղանվանագիտության մեջ բնականունների քննությունն առավել քան կարևոր է և հրատապ, որովհետև բնակավայրերի անվանակոչման սկզբունքները, դրանց տարածված կաղապարները բացահայտում են լեզուների և դրանք կրող հանրությունների աշխարհընկալման և մտածողության ընդհանրություններն ու տարբերությունները տարբեր ժամանակներում և աշխարհագրական տարածքներում: Բացի այդ՝ տեղանունների բառագանձի հարստացման և տեղաշարժերի հիմնական ուղղությունը նոր բնականունների առաջացումն է, կամ նախկինում եղածների փոխարինումը նոր անվանումներով: Արդեն առկա բնականունները տարբեր արտալեզվական և լեզվական պատճառներով կարող են դուրս մղվել գործուն բառապաշարից, դառնալ յուրօրինակ հնաբառեր: Նման երևույթ լեռնանունների և ջրանունների դեպքում գրեթե չի կատարվում: Ֆիզիկաաշխարհագրական միավորների անունները հաստատունության մեծ ներուժ ունեն, ուստի մի անգամ ստեղծվելով՝ դրանք շարունակում են իրենց գոյությունը հազարամյակներ շարունակ: Պետք է ընդունել նաև այն իրողությունը, որ աշխարհում վաղուց արդեն նոր լեռներ, ջրային միավորներ չեն առաջանում, և դրա հավանականությունը չափազանց փոքր է, ստեղծվածներն էլ վաղուց ի վեր անվանակոչվել են: Իսկ բնականունները պարբերաբար թարմացվում են, որովհետև մարդն ընդլայնում է իր գոյության կենսական տարածքները, դրանք անվանելու անհրաժեշտությունը մշտական է, համենայն դեպս այնքան ժամանակ, որքան սահմանված է մարդկության համար: Անշուշտ բնականունների և մնացյալ տեղանունների միջև անխախտ պարհսպներ չկան. դրանք փոխներթափանցման մեջ են: Հովհ. Կարազյոզյանն իր «Մեպագիր տեղանուններ» աշխատության մեջ բերում է բազմաթիվ օրինակներ հնարավոր տարբեր անցումների՝ ցեղանունից քաղաքանուն, գործրինակ՝ *Լոռի, Շաքի, Վեդի*, երկրանունից քաղաքանուն՝ *Բջնի, Գառնի, Գորիս, Ջերմուկ, Միսիսան*, դիցանուններից քաղաքանուն՝ *Հաղորթ, Մաղարթ, Մղարթ* և այլն: Այս առումով ուշագրավ է *Գորիս* անվան կապը Ռուսա Ա-ի (735-713) Շովինարի ժայռափոր արձանագրության մեջ թվարկված 19 երկրներից 4-րդ շարքի 2-րդ տեղում հիշատակված *Գուրիս* անվան հետ. ուրարտերենում *n*-ի փոխարեն



ու սեպագիրը հաճախ է կիրառվում, ուստի եղել է *Գորիս*, իսկ իս>ի անցումով՝ *Գորի* ձևը, որի հոգնակի ուղղականը կլինի՝ *Գորիք*, հայցականը՝ *Գորիս*: *Միսիան*-ը բխեցվում է Արգիշտի Բ թագավորի Խորխոռոյան արձանագրության մեջ առկա *Օիծիանի* երկրանունից, *Ջերմուկ*-ը կապում է Ռուսա Ա-ի նույն Ծովինարի արձանագրության մեջ թվարկված 6-րդ շարքի 2-րդ երկրի անվան հետ՝ *Երիա>Եռիա*, որտեղից *են* արմատն է երևում, ժամանակի ընթացքում փոխարինված *ջերմ* արմատով<sup>1</sup>:

Բնականունների մեջ առավել հաճախ են հանդիպում ժողովրդանունները, այսինքն՝ դրանք էթնոտեղանուն դառնալու ավելի մեծ հավանականություն ունեն, քան ֆիզիկական աշխարհի միավորների անվանումները, որովհետև բնակիչների էթնիկական պատկանելությունը բնակավայրի հիմնադրման դեպքում հաճախ վճռորոշ նշանակություն է ձեռք բերում և անգամ տարբերակման հիմք է դառնում: Ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ նման տեղանուններ ծագում են տարբեր էթնիկական խմբերի բնակության հատման վայրերում, այսինքն՝ պետական կազմավորումների սահմաններում կամ խառը բնակության շրջաններում, որտեղ խիստ կարևոր է շեշտել որևէ ազգային խմբին տվյալ բնակատեղի պատկանելությունը: Այս երևույթն այսօր էլ առկա է տարբեր ժողովուրդների արդի տեղանվանացանկերում, օրինակ՝ *Հայաստանի Հանրապետությունում* ունենք *Դվին Ասորական, Լեզգու Ճոճկան, Քրդեր, Թուրքի տափեր, Հայի տափեր, Մեծ Հայաբերդ, Փոքր Հայաբերդ, Հոռոմաբերդ, Գնչուի գյուղ, Ռուսի շեն* և համանման այլ գյուղանուններ ու մանրատեղանուններ:

Այս կապակցությամբ անդրադառնանք մի հետաքրքիր երևույթի ևս. բացի իրական էթնոտեղանուններից, որոնք այսպես թե այնպես առնչվում են տվյալ տարածքի ժողովրդագրական պատկերի հետ, պետք է տարբերել թվացյալ կամ կեղծ էթնոտեղանունները, որոնք առաջացել են ազգանուններից, անուններից և մականուններից: Որոշ տեղանվանագետներ առաջարկում են անգամ տարբերակել մետաէթնոտեղանունները, որոնք ոչ թե տվյալ տարածքում անվանվող ժողովրդի բնակության արտահայտությունն են, այլ պայմանականորեն ասած՝ տեղանվանական փոխաբերության արգասիք են<sup>2</sup>:

Մետաէթնոտեղանունները ծագում են ժողովրդանունների վերաիմաստավորման հետևանքով՝ վերածելով դրանք հասարակ անունների, որոնք արտացոլում են որոշակի ազգային հանրույթի՝ անվանողի կողմից ամենաբնութագրական համարվող հատկանիշները: Օրինակ՝ Բելառուսում կան

<sup>1</sup> Տե՛ս **Յ. Կարազեռզեան**, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 135-152:

<sup>2</sup> Տե՛ս **А. Ф. Роголев**, К вопросу о методике историко-лингвистического анализа этнотопонимов, Этническая топонимика, Сборник статей, М., 1987, с. 29-30, **Կուլի Ա. Ա. Трубе, Н. Я. Макарычева**, Этноним корел в топонимии Горьковской области, сборник «Ономастика Поволжья», I, Ульяновск, 1969, с. 277:

*մագուր* հիմքով տեղանուններ, իսկ *մագուր* անվամբ 19-րդ դարում այստեղ հայտնի էին լեհերը, բայց այդ բառը հետագայում ձեռք է բերել ոչ էթնիկական այլ իմաստ՝ «մարդ, որը շրջում է չլվացված, կեղտոտ դեմքով, ի բնե թուխ է»: Նման օրինակներ մենք ունենք նաև հայ իրականության մեջ, այսպես՝ *թուրք* ժողովրդանունը մեզանում նշանակում է նաև «վայրի, դաժան», ուստի *Թուրքի գյուղ* տեղանվան մեջ այն նշանակում է ոչ թե գյուղ, որտեղ ապրել են թուրքերը, այլ դաժան, վտանգավոր բնակիչներով հայտնի գյուղ, *Քրդի գյուղը* անվանումը կարող է ոչ մի կապ չունենալ քուրդ բնակչության հետ, այլ նշանակել բռի, կոպիտ, անկիրթ մարդկանց բնակավայր, որովհետև *քուրդ* բառն ունի նաև այդ իմաստները: Կամ Երևանում հայտնի ոչ պաշտոնական *Բանգլադեշ* մանրատեղանունը ոչ մի կապ չունի իրական Բանգլադեշի հետ, այլ նշանակում է հեռավոր, կորած-մոլորած, ինչպիսին է այդ երկիրը մեր անվանադիրների ընկալմամբ: Նույն սկզբունքով՝ Կոտայքի մարզում առկա *Հնդուձորը* հնդիկ ժողովրդի հետ առնչություն չունի, այլ դարձյալ հեռավոր, կենտրոնից կտրված իմաստն ամրագրող մանրատեղանուն է:

Կարծում ենք, սակայն, այս ոճական-իմաստային տարբերակումն այնքան էլ էական չէ տեղանունների հիմնական դասակարգման ընթացքում, ուստի մետատեղանուններն առաջին մակարդակում հանգիստ միավորվում են կեղծ կամ թվացյալ էթնոտեղանունների հետ, որոնք նշանակում են անձնանունների կամ դրանց հարաբերակից, երբեմն նաև պարզապես համահունչ կամ վերաիմաստավորված հիմքերից առաջացած բոլոր տեղանունները: Այս խմբի տեղանունները չեն կարող աղբյուր ծառայել պատմական կամ էթնոլեզվաբանական հետազոտությունների դեպքում:

Տեղանունների դասակարգման մեջ բնականուն էգրույթն այսպիսով տարողունակ է, ունի ենթատեսակներ: Այն միավորում է մարդկային բնակչության ցանկացած վայրի անվանումները՝ երկիր, գյուղ, շեն, ավան, քաղաք, մարզ կամ վարչատարածքային այլ միավորի անվանում: Թեև երկրանունները կամ պետությունների անվանումները որպես կանոն առանձնանում են բուն բնականուններից, որովհետև դրանք հիմնականում ծագում են ժողովրդանուններից (էթնոնիմ), որոնց գումարվում է հավաքականակերտ կամ հոգնակերտ որևէ ածանց: Երկրանունները, ինչպես և լեռնանուններն ու ջրանունները կայունացել են: Աշխարհի ազգային-պետական քարտեզն արդեն գծված է, սահմանված, և հնարավոր փոփոխությունների հավանականությունը չնչին է: Նոր ազգերի ստեղծման ժամանակը կարծես անդարձ անցել է, իսկ ստեղծվող նոր պետական միավորումները սովորաբար ստանում են արդեն շրջանառության մեջ գտնվող հին անուններ, ինչպես եղավ, օրինակ, Հարավսլավիայի տրոհման դեպքում, երբ այս համադաշնության միավորները պարզապես անջատվեցին՝ դառնալով ինքնանկախ պետություններ՝ *Սերբիա*, *Բոսնիա*, *Չեռնոգորիա*, *Խորվաթիա*, *Մակեդոնիա*, *Սլովենիա*: Այս երկրանուններն արդեն մի քանի դար վկայված էին: Այսպիսով, տեղանունների համակարգում նորակազմություններ և նորաբանություններ կա-

րող են առաջանալ միայն բնականու՛նների և, իհարկե, մանրատեղանու՛նների դեպքում:

Մանրատեղանու՛նները՝ քաղաքային, գյուղական համայնքների, փողոցների, հրապարակների, նրբանցքների և նմանատիպ այլ միավորների անվանումները, իրենց կառուցվածքով և բնույթով շատ չեն տարբերվում խոշոր բնականու՛ններից: Ի վերջո, քաղաքները ծագում են գյուղերից և ավաններից: Խոշոր քաղաքների մերձակա շեներն ու բնակավայրերն աստիճանաբար միաձուլվում են և մտնում ավելի մեծ վարչատարածքային միավորի կազմի մեջ, իսկ դրանց անունները դառնում են քաղաքային թաղամասերի անուններ, գործրինակ՝ Երևանի դեպքում *Առինջը, Քանաքեռը, Շենգավիթը, Վարդաշենը*: Ազգային իղձերը և չլուծված տարածքային խնդիրները ևս կարող են քաղաքանուններից մանրատեղանունների առաջացման պատճառ դառնալ: Այս երևույթը հատկապես նկատելի է հայ տեղանվանացանկում: Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան և Կիլիկյան Հայաստանի մեզ համար կորուսյալ բնակավայրերի անունները դեռ խորհրդային ժամանակներում դարձան հախուռն կառուցվող Երևանի, Գյումրիի, Վանաձորի թաղամասերի անուններ՝ *Մալաթիա, Սեբաստիա, Կիլիկիա, Զեյթուն, Մարաշ, Տարոն, Մուշ, Ադանա*: Ակնհայտ է, որ թե՛ խոշոր, թե՛ փոքր բնականու՛ններն ինքնին ավելի փոփոխական են, քան մնացյալ տեղանունները, որովհետև առավել կախված են մարդկային գործոնից, մարդաստեղծ են՝ ի տարբերություն աշխարհագրական միավորների, որոնք մարդային կենսագործունեության արդյունք չեն: Աստուծո կամ բնության կամքի դրսևորումներ են, որն էլ մոտ է հավերժին, իսկ մարդկային կենսագործունեությունը միշտ էլ սահմանափակված է ժամանակի գործոնով: Բայց եթե որևէ ազգային հանրույթ ստեղծում է բնականուն կամ այն ժառանգություն է ստանում իր տարածքի հնաբնակներից, որոնք ձուլվել են իր զարմի մեջ, ապա ամեն կերպ փորձում է այդ լեզվական կառույցը կիրառության մեջ պահել, չկորցնել, որովհետև դիտում է այն որպես իր ազգային ժառանգություն, հոգևոր, անգամ նյութական մշակույթի բաղադրիչ: Այստեղից էլ բխում է ազգային կնիք կրող բնականու՛նների երկակի բնույթը. դրանք մասամբ փոփոխական են, որովհետև այդպես անվանվող բնակավայրերը կարող են անհետանալ, կործանվել, վերանվանվել, բայց մասամբ նաև կայուն են, քանի որ շարունակում են նշանակել նորաստեղծ այլ բնակավայրեր:

Բնականու՛նները փաստորեն ինչ-որ առումով նման են անձնանուններին, որոնք միշտ շրջանառության մեջ են, ունեն անվանողական գործառույթ և կազմում են տեղանվանական յուրօրինակ հիմնական բառֆոնդը:

Բնակավայրերի անվանադրման սկզբունքները բազմազան են. դրանց կազմում որպես հնարավոր բաղադրիչ կարող են ներառվել ինչպես ժողովրդանունները կամ դյուցազնանունները, անձնանունները, այնպես էլ լեզվի ընդհանուր բառապաշարի բազմաթիվ այլ միավորներ, ինչպես՝ շրջապատող աշխարհի և բնության միավորների անվանումները, կենդանանուն-

ները, բուսանունները, գունանունները, մարդկային կենսագործունեության արդյունք երևույթների անվանումները և այլք: Այսինքն՝ բուն բնականունների քննությունն առնչվում է լեզվի բառապաշարի տարբեր շերտերի հետ: Ընդ որում, բնականվան բաղադրիչ դառնալու ընթացքում սովորական բառն անցնում է իմաստափոխության յուրօրինակ ճանապարհ՝ վերածվելով տեղանվանական ավանդույթի բաղադրիչի: Ա. Մուպերանսկայան, անդրադառնալով տեղանվանական ավանդույթ հասկացությանը, գրում է. «Բնակավայրերի անունները գրեթե երբեք անմիջաբար չեն կազմվում հասարակ անուններից..., նրանց և ելակետային հասարակ անունների միջև երկարատև տեղանվանական ավանդույթն է: Այս ավանդույթի համաձայն՝ բնական ճանապարհով տեղանվանական համակարգերի կայացման ընթացքում հասարակ անվան և բնակավայրի անվանման միջև կա՛մ ֆիզիկաաշխարհագրական միավորի անունն է, որի մերձակայքում ձևավորվել է ավանը, կա՛մ անունը, հայրանունն այն մարդու, որն ամենասերտն է կապված այդ օբյեկտի հետ (տեղը, հիմնադիր առաջին բնակիչը)»<sup>1</sup>: Այս հիմնավորմամբ տեղանվանագիտության մեջ ընդունված է տարբերակել երկու տիպի բնականուններ՝ 1. բնական-աշխարհագրական բնույթի՝ գեոգեն կամ երկրածին և 2. պատմամշակութային բնույթի՝ անտրոպոգեն կամ մարդածին բնականուններ: Յուրաքանչյուր ժողովուրդ պատմության ընթացքում ձևավորում է բնականունների անվանակոչման իր ավանդույթները, որոնք սերտորեն առնչվում են տվյալ ժողովրդի աշխարհընկալման հետ. անվանակոչումն ազգային ինքնության դրսևորումներից մեկն է: Այս տեսանկյունից, մեր համոզմամբ, պետք է տարբերակում կատարել նաև խոշոր և փոքր բնականունների պարագայում, պայմանականորեն ասած՝ քաղաքանունների և գյուղանունների միջև հստակ սահմանագիծ է անցնում: Փոքր բնակավայրերի անվանակոչման դեպքում որոշիչ գործոն է տեղանքն իր աշխարհագրական բնութագրիչներով, այսինքն՝ գյուղանունները երկրածին են, փոքր բնակավայրերի անվանումներում աստվածների կամ արքաների և իշխանների գործոնն այդքան վճռորոշ չէր: Փոքր բնականուններն անվանակոչվում էին հիմնականում ըստ իրենց աշխարհագրական տեղադրության և վերջինիս շրջակա բուսական և կենդանական աշխարհի բնութագրերի՝ **Աղնջաձոր**, **Գետափ**, **Շղեգիս**, **Քարագլուխ**, **Մեծամոր**, **Խնածախ**, **Գլաձոր**, **Ագարակաձոր** և այլն: Այս տեսանկյունից **Կիրովականի** անվանափոխությունը **Վանաձորի** հաջող տարբերակ չէր. **ձոր** բաղադրիչով հայերենում կան հազարավոր գյուղանուններ, ուստի որպես քաղաքանուն **Վանաձոր**-ը կարծես համակարգից դուրս է, թեև մեր հետինդուստրիալ իրականության մեջ շատ գյուղական բնակավայրեր խոշորանալով վերածվում են քաղաքների, ուստի անունների նման միա-

---

<sup>1</sup> А. В. Суперанская, Что такое топонимика? Из истории географических названий, М., 2011, с. 65.

խառնումը հնարավոր է դառնում, այս սկզբունքով **Եղեգնաձոր**-ը ևս քաղաքանուն է, և արդեն ունենք *Եղեգնաձոր* և *Վանաձոր* համաբանությունների շարքը:

Բնական-աշխարհագրական բնույթի բնակավայրերի անվանումներն առաջանում են ֆիզիկական աշխարհի իմաստային դաշտի տարբեր հասկացությունների բառային անուններից, դրանք որպես կանոն արտացոլում են տեղանքի ֆիզիկաաշխարհագրական հատկանիշները, բնական պայմանները, բուսական և կենդանական աշխարհը, ուղղակի բնութագրում են բնակավայրի ֆիզիկական հատկանիշները: Այդպիսի տեղանունների նշանային գործառույթն ուղղակի բխում է այն լեռից, ձորից, ծովից, լճից կամ գետից, որին կից նրանք հիմնվել են: Կախված տվյալ ազգի զբաղեցրած աշխարհագրական տարածքից՝ նրա բնականունների մեջ որպես տեղանվանակազմիչ կզերիշխեն լեռնային կամ ջրային տեղանքին բնորոշ միավորների անվանումները՝ լեռ, սար, քար, ձոր, այր, հովիտ կամ ջուր, ծով, խորշ, ծոց, ափ: Հայկական բնականուններում, հատկապես գյուղական, լեռնային տարածքը բնութագրող բառարմատներն ամենահաճախադեպն են՝ **Միլքար, Քարակերտ, Քարանիստ, Սևքար, Քարահունջ, Լեռնապար, Լեռնակերտ, Լեռնահովիտ, Սարիգյուղ, Սարակապ, Սարանիստ, Բարձրաշեն, Եղեգնաձոր, Վանաձոր, Վարդաձոր, Վարդաբլուր, Արջաձոր, Ծաղկահովիտ** և այլն:

Նման կադապարով տեղանունները սփռված են Հայաստանի ողջ տարածքում: Այս առումով հետաքրքիր է Հ. Կարապետյանի կողմից *Կումայրի/Գյումրի* և *Մեղրի* բնականունների ստուգաբանությունը, որը կապվում է այր բառի հետ. «*Կումայրի* (հմմտ. *Բզրայրի*)՝ գիւղ Տուրուբերանի Ասպակունիք գավառում)> \**Կումերի* (այ>ե անցումով)> \**Կումիրի* (միջնադարյան ե>ի անցումով)> *Կումրի* (ենթադրեալ վերջնական ձև, հմմտ. \**Մեղայրի*>\**Մեղերի*>\**Մեղիրի*>\**Մեղրի*)»<sup>1</sup>:

Հայերենում առատ են նաև **ջուր** իմաստային դաշտի բառերից կազմված բնականունները՝ **Թթուջուր, Աչաջուր, Ջրաձոր, Ջրաբերդ, Ջրառատ, Կաթնաղբյուր**:

Վայրի կամ ընտանի կենդանանուններից բաղադրված բնականունները ևս կազմվում են, բայց, որպես կանոն, միայն փոքր գյուղական շեների համար՝ **Աղավնաձոր, Աղավնատուն, Արծվաշեն, Արջուտ, Երնջատափ, Եղնիկ, Խոզնավար, Խաշթառակ, Լորուտ, Սարալիկ**: Ընդգծենք, որ ներկա ժամանակներում կենդանանուններից բնականուններ այլևս չեն կազմվում, միայն մանրատեղանուններ:

Պատմամշակութային բնույթի են այն բնականունները, որոնք կապված են տվյալ բնակավայրի տերերի կամ բնակիչների անունների և նրանց վարած գործունեության հետ: Դրանք կարող են ծագել. ա) անձնանուններից,

---

<sup>1</sup> Յ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 84:

տոհմանուններից կամ ժողովրդանուններից, բ) դիցանուններից կամ կրոնապաշտամունքային բառապաշարի այլ հասկացությունների անվանումներից, գ) մարդու տնտեսական, մշակութային և սոցիալական գործունեությունը բնութագրող իմաստային դաշտերի բառային միավորներից: Օրինակ՝ **Այբում, Հերեր, Բայանդուր, Շիրակավան, Արտաշատ, Հայկաշեն, Գեղամավան, Վաղարշապատ, Վահագնի, Չարենցավան, Աբովյան, Հաղթանակ, Շինուհայր, Հայրենյաց, Նոր կյանք, Բուժական** և այլն:

<sup>2</sup> «Դասընկեր» այբբենարան-ընթերցարանը հրատարակվել է Թիֆլիսում 1909 թ.: Դասագրքի մանկավարժական նյութերը կազմել ու պատրաստել են Տիգրան Ռաշմաճյանը և Արշակ Չիլինկարյանը, իսկ գրական ողջ նյութը՝ Ավետիք Բսահակյանը: 1922 թ. այբբենարանի բարեփոխված տարբերակը արժանացել է ՀՄԽՀ լուսժողովմատի մրցանակին: Դասագիրքը գործածվել է մինչև 1927 թ.:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թ. 135:

<sup>4</sup> Թարգմանություն անգլերեն բնագրից (տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թթ. 159-160):

գոյութիւն ունեն զանազան կտակներ, որոնք թողնւած են ունեւոր հայերի կողմից հայ ազգի շահերը զարգացնելու նպատակով: Այս կտակները հովանաւորողների կողմից ոչ մի ջանք չի նկատուում այդ գումարները տրամադրելու այն միակ երկրի զարգացման համար, որտեղ հայկական կեանք կայ եւ ազգային գոյութիւն: Եթէ ներկայ Հայաստանը յառաջադիմելու է, նա պետք ունի, եւ ստիպողաբար պետք ունի բոլոր գումարներին, զորս հնարաւոր կը լինի տրամադրել իրեն.... Թոյլ տւեք աւելացնել թէ իմ անհատական հաստատ համոզումս է թէ Հայաստանի կառավարութեան ներկայ պաշտօնեաները գործունէայ են իրենց գործին մէջ, խելօք եւ արդիւնաւոր, եւ թէ այս երկրում ծախսուած որևէ դրամագումարս պիտի գործածուի այստեղ ապրող Հայ ժողովուրդի լաւագոյն շահերին համար»<sup>1</sup>:

1923 թ. հունվարին Ամերկոմի խնամքի տակ գտնվող որբանոցներում ընդգրկված էին 21.635 որբեր, որոնցից 20.367-ը սովորում էին որբանոցներին կից մանկապարտեզներում, դպրոցներում, դպրոց-արհեստանոցներում, մանկավարժական տեխնիկումում, բուժքույրերի դասընթացներում: Միայն Ալեքսանդրապոլի Պոլիգոնի որբանոցներին կից գործել են 10 դպրոց՝ 104 ուսուցիչներով և բարձր դասարանն ավարտած 25 աշակերտ-ուսուցիչներով, 5305 աշակերտներով, որոնց՝ տարիքային առումով գերակշռող մասը՝ 3519, եղել են 10-ից 14 տարեկան երեխաները<sup>2</sup>:

1926 թ. հունվարին Ամերկոմի խնամքի տակ կային դեռևս 8234 որբեր<sup>3</sup>:

Ամերկոմը իր գործունէությունը Հայաստանում դադարեցրեց 1931 թ., և անկախ ամեն ինչից, բարի համբավ թողեց երկրում, քանի որ տնտեսական անմխիթար կացության մէջ գտնվող հայ ժողովուրդը միշտ անկեղծ շնորհակալությամբ է գնահատել ամերիկյան ժողովրդի մարդասիրական առաքելությունը:

Ստորև հրապարակվող փաստաթղթերը մասամբ լուսաբանում են 1919-1929 թթ. կրթական ոլորտում Ամերկոմի ծավալած գործունէությունը: Հայերեն և ռուսերեն փաստաթղթերում, բացի կետադրական մասնակի շտկումներից, ուղղագրական և լեզվաոճական միջամտություններ չեն կատարվել<sup>4</sup>:

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## 1

*Հայաստանի Հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարար Ս. Թորոպյանի զեկուցագիրը Նախարարների խորհրդին՝ Ամեր-*

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 42, թթ. 320-324:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 489, թ. 44 :

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 39, ց. 1, գ. 2, թ. 17:

<sup>4</sup> Հայերեն փաստաթղթերի մի մասը գրված է դասական ուղղագրությամբ, մի մասը՝ 1922 թ. ընդունված փոփոխություններով, սակայն միշտ չէ, որ պահպանվել են դրանց ուղղագրական կանոնները: Ուստի ձեռնպահ մնացինք դրանցում շտկումներ կատարելուց:

*կումի ներկայացուցչի հետ կազմած համաձայնագրի նախագծի մեջ փոփոխություն մտցնելու վերաբերյալ վճիռ ստանալու մասին*

5 ապրիլի 1919 թ.  
Երևան

Համաձայն Մինիստրների Խորհրդի 1919 թ. Մարտի Բ-ի նիստի<sup>1</sup> որոշման՝ բանակցելով Ամերիկական կոմիտեի Երևանի ներկայացուցիչ կապիտան Էլդերի հետ, եկանք որոշ համաձայնության ու կազմեցինք պայմանագրի նախագիծը: Ամերիկական կոմիտեի Երևան ժամանած անդամները, քննելով այդ նախագիծը, մի կէտի նկատմամբ իրենց անհամաձայնությունն են յայտնում: Այդ կէտը վերաբերում է Մոսկւայի կոմիտեի, Եղբայրական օգնության և Հայոց բարեգործական ընկերության որբանոցներին և խմբագրած է այն իմաստով, թէ յիշեալ որբանոցների ներքին կառավարութիւնը մնում է վերոյիշեալ ընկերութիւնների ձեռքին, իսկ Ամերիկական կոմիտեն նրանց ծախքերն է հոգում և դրամականի հաշիւը պահանջում: Այժմ Ամերիկական կոմիտեն պահանջում է այդ կէտը փոխել այն իմաստով, որ այդ որբանոցներն ևս տրուում են Ամերիկական կոմիտեին ի կատարեալ տնօրինումին: Գտնելով, որ խնդիրը ծանրակշիռ է, Մինիստրների Խորհրդի վճիռը անհրաժեշտ եմ գտնում<sup>2</sup>:

Խնամատարութեան և աշխատանքի մինիստր՝ Սահակ Թորոսեան<sup>3</sup>

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 77 և շրջ., բնագիր, ձեռագիր:

## 2

*Հայաստանի Հանրապետության խնամատարության և աշխատանքի նախարար Ս. Թորոսյանի և Ամերկումի հայկական բաժանմունքի լիազոր կապիտան Էլդերի միջև կնքված համաձայնագիրը Հայաստանի պետական և հասարակական հաստատությունների որբանոցներն ու հիվանդանոցներն Ամերկումին հանձնելու մասին*

12 ապրիլի 1919 թ.  
Երևան

1919 թ. Ապրիլի 12-ին ներքոյ ստորագրեալներս՝ Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան մինիստրը և Մերձաւոր Արևելքի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտեի հայկական բաժանմունքը՝ յանձին նոյն բա-

---

<sup>1</sup> Նիստը կայացել է մարտի 3-ին:

<sup>2</sup> Խնդիրը լուծվել է հոգուտ Ամերկումի պահանջի: Տե՛ս թիվ 2 փաստաթուղթը:

<sup>3</sup> Թորոսյան Սահակ Դավթի (1885-1940) – ՀՅԴ կուսակցության անդամ, մանկավարժ: 1919 թ. փետրվարի 7-ին նշանակվել է ՀՀ խնամատարության (հետագայում՝ խնամատարության և աշխատանքի) նախարար: Հայաստանի խորհրդայնացումից հետո երեք անգամ կալանավորվել է, արտրվել: 1938 թ. դատապարտվել է գնդակահարության, որը հետաձգվել է:

Ժանմունքի լիազոր կապիտան Էլդերի, քանադա և անձամբ բանակցությունների հիման վրայ կայացրինք հետևեալ համաձայնությունը.

1. ՀՀ խնամատարութեան և աշխատանքի մինիստր Սահակ Թորոսեանը Ամերիկեան կոմիտէի հայկական բաժանմունքին է յանձնում ինչպէս Հայաստանի, նոյնպէս և Վրաստանի սահմաններում գտնուող թէ՛ հայ պետական ու հասարակական կազմակերպությունների որբանոցներում, ապաստարաններում և մանկական հիւանդանոցներում պատսպարուած և թէ՛ դեռ անպատսպար մնացած որբերի ամբողջ խնամքը, պահպանությունն ու դաստիարակությունը, առանց որբերի թուի սահմանափակումի: Որբերի դաստիարակութեան ու կրթութեան գործը պետք է տարուի Հայաստանի կրթութեան մինիստրութեան մշակած ծրագրով:

2. Հայաստանում, ինչպէս նաև Վրաստանում գոյություն ունեցող որբանոցների թում կան Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան, Եղբայրական օգնութեան, Մոսկուայի Հայկական կոմիտէի և այլ հասարակական կազմակերպությունների որբանոցներ, ապաստարաններ և մանկական հիւանդանոցներ, որոնք նոյնպէս յանձնում են Ամերիկեան նոյն կոմիտէին միևնոյն պայմաններով:

Օանոթություն. 2-րդ կետում յիշատակուած կազմակերպությունները հնարաւորութիւն ունեն վերստանալ իրենց որբանոցները, եթէ նրանք ցանկութիւն կյայտնեն պահպանելու այդ որբանոցները իրենց սեփական միջոցներով:

3. Գոյություն ունեցող որբանոցների, ապաստարանների և մանկական հիւանդանոցների ամբողջ գոյքը և կահաւորութիւնը յանձնուած է Ամերիկեան կոմիտէի հայկական բաժանմունքին:

4. Պետական կառավարական այն բոլոր շէնքերը, որոնց մէջ ներկայիս հաստատուած են որբանոցներ, ապաստարաններ կամ մանկական հիւանդանոցները, ձրիաբար դրում են Ամերիկեան կոմիտէի հայկական բաժանմունքի տրամադրութեան տակ:

5. Հայաստանի կառավարութիւնը պարտաւորուած է հնարաւորութեան սահմաններում Ամերիկեան կոմիտէի տրամադրութեան տակ դնել յարմարաւոր շէնքեր՝ որբերի պահպանութեան նպատակների համար:

6. Ամերիկեան կոմիտէի հայկական բաժանմունքը պարտաւորուած է պատսպարել, խնամել և դաստիարակել իր միջոցներով որբերը մինչև այն ժամանակ, երբ ունէ այլ կազմակերպութիւն կամ ապագայում Հայաստանի նկատմամբ իրաւասու կառավարութիւնը հնարաւոր կհամարի իր վրայ վերցնել որբերի խնամքի և դաստիարակութեան գործը:

7. Ամերիկեան կոմիտէի հայկական բաժանմունքի գործունէութեան դադարեցման կամ որբանոցները վերադարձնելու պարագային որբանոցների, ապաստարանների և մանկական հիւանդանոցների ամբողջ գոյքը, կահաւորութիւնը և ստացուածքը դրում է Հայաստանի Հանրապետութեան տրամադրութեան տակ:

8. Յանձին Հայաստանի խնամատարութեան և աշխատանքի մինիստրի՝ Հայաստանի կառավարութեանը վերապահում է բարոյական վերահսկողութիւնը Ամերիկեան կօմիտէի որբանոցներում, ապաստարաններում, մանկական հիւանդանոցներում և, առհասարակ, որբանոցային հաստատութիւններում որբերի խնամքի և դաստիարակութեան գործի կազմակերպութեան և ընթացքի նկատմամբ, առանց, սակայն, միջամուխ լինելու Ամերիկեան կօմիտէի ներքին խնդիրներին և կարգուկանոնին:

9. Որբանոցների, ապաստարանների և մանկական հիւանդանոցների Ամերիկեան կօմիտէի հայկական բաժանմունքին փոխանցելու ժամանակը նշանակուում է 1919 թ. Մայիսի 1-ը:

10. Ամերիկեան կօմիտէն իր վրայ վերցնում է որբերի խնամքի, պահպանութեան և դաստիարակութեան ամբողջ ծախքերը ստանձնումի օրից՝ 1919 թ. Մայիսի 1-ից:

11. Մինչև 1919 թ. Մայիսի 1-ը որբանոցների, ապաստարանների և մանկական հիւանդանոցների համար կատարուած բոլոր ծախքերը՝ կանխիկ թէ ապառիկ, վճարել պարտաւորուում է Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան և աշխատանքի մինիստրութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան և աշխատանքի մինիստր՝ Ս. Թորոսեան

Մերձաւոր Արևելքի Ամերիկեան Նպաստամատոյց կօմիտէի հայկական բաժանմունքի գլխաւոր լիազօր՝ կապիտան Էլդեր

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 94, թթ. 14-15, պատճեն, ձեռագիր:

### 3

*Ամերկումի բժշկական գործերի վարիչ Բ. Աշքրի գրութիւնը Հայաստանի Հանրապետութեան ներքին գործերի, լուսավորութեան, խնամատարութեան նախարարներին՝ որբերին խնամելու համար հարմար շինութիւններ տրամադրելու խնդրանքով*

16 ապրիլի 1919 թ.  
Երևան

Պարոնայք,

Ի նկատի ունենալով Կառավարութեան յայտնի շահագրգռութիւնը փախստականների վիճակի մասին և այն խոստումը, որ արած է Հայկական Կառավարութեան և Մերձաւոր Արևելքի Ամերիկեան օգնութեան կոմիտէի միջեւ, թէ Կառավարութիւնը պիտի տրամադրի յիշեալ Կոմիտէին բոլոր անհրաժեշտ շինութիւնները նրա գործերի համար, միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով այն մեծ վտանգը, որ սպառնում է քաղաքի առողջապահութեան խճողման առթիւ այն փախստականներին, որոնց մէջ այժմս վարակիչ

հիւանդութիւնները արագութեամբ տարածուում են, և նոյնպէս ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայկական Կառավարութիւնը խնդրել էր Ամերիկեան կոմիտէից իր վրայ վերցնել որբերի խնամատարութեան հոգսը և բժշկական օգնութիւնը, մենք խնդրում ենք շտապեցնել, որ քաղաքի մեջ գտնուող յարմար վայրերը իսկոյն և եթ տրամադրուեն երկու հազար անտեր փախստական երեխաների համար, որոնք սպառնում են մեծ վտանգ քաղաքի առողջապահութեանը:

Քննելով պայմանները և լիովին ըմբռնելով, թէ որքան կարեւոր է մատաղ սերնդի համար բարձր կրթութեան պահանջը, այնուամենայնիւ մենք եկել ենք այն եզրակացութեանը, որ վերոյիշեալ մանուկների կեանքի պահպանութիւնը կրթութիւնից առաջնակարգ տեղ պիտի բռնէ:

Այս բոլորը ի նկատի ունենալով, մենք յարգանօք խնդրում ենք հետեւեալ շինութիւնները անյապաղ մեր տրամադրութեան տակ դնել, որպէսզի մենք կարողանանք տեղաւորել որբերը. գիմնագիայի մեծ և կիսակատար շինութիւնը Աստաֆեան<sup>1</sup> փողոցի վրայ, սրանից գատ կամ հին բերդի զօրանոցը և կամ Քանաքեռիւնը:

Հարիւրաւոր հիւանդ փախստական երեխաների համար օրիորդաց մեծ սեմինարիան Աստաֆեան փողոցի վրայ, իր բակով և պարտեզով, որը սրանից առաջ գործածուած էր զինուորական հիւանդանոցի և տիֆով վարակուածների համար. այդ շէնքը այժմ դատարկ է:

Զբոսարանի և ապաստարանի համար՝ Անգլիական այգին<sup>2</sup> իր շինութիւններով միասին:

Ի նկատի ունենալով, որ իւրաքանչիւր օրւայ յապաղումն շատ կեանքեր պիտի խլէ, մենք խնդրում ենք որ կարգադրութիւնները լինեն անմիջապէս<sup>3</sup>:

Խորին յարգանօք Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան օգնութեան կոմիտէի բժշկական գործի վարիչ՝ Քլարենս Տ. Աշըր

ՀԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 85 և շրջ., վավերացված պատճեն, մեքենագիր:

---

<sup>1</sup> Ներկայիս Աբովյան փողոցը:

<sup>2</sup> Երևանում գտնվող Բուսլիայի ներկայիս դեսպանության հարևանությամբ այգին է (խորհրդային շրջանում կոչվում էր «Կոմայգի»):

<sup>3</sup> Ամերկումի պահանջը կատարվել է: Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 98:



*Ամերկոմի ներկայացուցիչ Տ. Լոներգանի գրությունը հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանին՝ Ամերկոմի որբանոցներում աշխատելու համար հոգևորականներ տրամադրելու մասին*

17 նոյեմբերի 1919 թ.

Թիֆլիս

Касаясь нашего сегодняшнего разговора о религиозных службах по Воскресеньям в приютах N[ear] E[ast] R[elief]<sup>2</sup> (Помощь на Ближнем Востоке) не будете ли Вы так добры помочь нам, и через Католикоса<sup>3</sup> снабдить нас священниками на известный период – пока только по Воскресеньям, для наших приютов.

Вопрос о вознаграждении, дело Армянского Правительства т. к. эти дети сделаются в будущем гражданами Армении, а религия эссенция гражданственности.

В дополнение, эти дети в громадном количестве без отцов и матерей и Армянское Правительство должно работать для их развития.

Не будете ли Вы так добры оказывать нам содействие и о своем ответе сообщить начальнику штаба N[ear] E[ast] R[elief] Тифлис.

С выражением моего уважения Вам за заместителя Верховного Комиссара полковника Рея полковник Генерального штаба Т. Лонерган

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թ. 19, պատճեն, ձեռագիր:

## 5

*Երևանի փոխթեմակալի պաշտոնակատար Հակոբ ավագ քահանա Խաչվանքյանի գրությունը Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարին Ամերկոմում աշխատանքի նշանակված քահանաների մասին*

14 փետրվարի 1920 թ.

Երևան

<sup>1</sup> Աղբալյան Նիկոլ Պողոսի (1873-1947) – հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, մանկավարժ, ՀՅԴ կուսակցության անդամ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Մոսկվայի, Լոզանի, Սորբոնի համալսարաններում: 1918-1920 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, 1919 թ. նշանակվել կրթության և արվեստի նախարար: Հայաստանի խորհրդայնացումից հետո տարագրվել է արտասահման, 1930 թ. բնակություն հաստատել Բեյրութում, եղել Նշան Փալանճյանի ճեմարանի տնօրեն:

<sup>2</sup> Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտե:

<sup>3</sup> Գևորգ Ե Սուրենյանց (1847-1930) – Ամենայն հայոց կաթողիկոս (1911-1930): Նրա՝ 1914 թ. դեկտեմբերի 28-ի թվակիր կոնդակով է ստեղծվել Եղբայրական օգնության կոմիտեն: Նա 1918 թ. մայիսյան հերոսամարտերի եռանդուն կազմակերպիչն էր, չի հեռացել Էջմիածնից, և նրա հովվապետական օրհնությամբ Մայր աթոռի միաբաններից շատերը Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ օրերին ռազմաճակատի առաջին գծում եղել են հայ մարտիկների կողքին: Մարմինն ամփոփված է Էջմիածնի Մայր տաճարի բակում:

Երևանի Փոխ-Թեմակալ Գերապատիվ Տ. Խորեն եպիսկոպոսը<sup>1</sup> Եւրոպա մեկնելուց առաջ յանձնարարեց ինձ հաղորդել Ձերդ Պայծառափայլութեանը, որ Ամերիկեան որբանոցների եկեղեցական, կրօնա-բարոյական պետքերի համար նշանակուած են քահանաները.

Երեւանում՝ Յակոբ աւ. քահ. Խաչվանքեան

Միմէօն քահ. Աբրահամեան

Դարաքիլիսայում՝ Խորեն քահ. Խանգաղեան

Դարսում՝ քահանաներից յարմարագոյնը, որի մասին արդէն գրած եմ տեղի Տեր Փոխանորդին տնօրէնութիւն անելու, իսկ Ալեքսանդրապօլում արդէն նշանակուած է:

Այդ մասին գրել եմ նաեւ Ամերիկեան որբանոցների վարչութեան ի գիտութիւն եւ ի տնօրէնութիւն<sup>2</sup>:

Երեւանի Փոխ Թեմակալի պաշտօնակատար Յակոբ աւ. քահ. Խաչվանքեան

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թ. 71, բնագիր, մեքենագիր:

## 6

*Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանի գրությունը Կարսի բերդապետ զեներալ Դանիել բեկ Փիրումյանին՝ Ամերկումի որբանոցներին շենքեր տրամադրելու մասին*

28 հուլիսի 1920 թ.

Երևան

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դժբախտ հայ որբերը Կարսում որբանոցների յարմարութեան բացակայութեան պատճառով ոչ նպաստաւոր պայմանների մէջ են գտնուում եւ նոցա դրութեան բարեփոխումն առաջնակարգ պահանջ է դարձել Հանրապետութեանս համար ու այցի առաջ ունենալով, որ հայ որբերի մեր ապագայ սերունդի վիճակի բարելաւումն անշուշտ Ձեր սրտին շատ մօտ կլինի, խնդրում եմ Ձեզ հաճիք կարգադրել, որ բերդի ձորի որբանոցների մօտ գտնուող սպաների բնակարանների

---

<sup>1</sup> Խորեն Ա Մուրադբեկյան (1873-1938) – Ամենայն հայոց կաթողիկոս 1932-1938 թթ., հաջորդել է Գևորգ Ե Մուրեկյանցին: 1910-1923 թթ. եղել է Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ: 1938 թ. Վեհարանի իր բնակարանում խեղդամահ է արվել, աճյունը ամփոփված է Էջմիածնի Մայր տաճարի բակում:

<sup>2</sup> Տե՛ս նույն գործում, թ. 72:

<sup>3</sup> Դանիել բեկ Աբխաղումի Փիրումյան (Փիրումով) (1861-1921) – Հայաստանի առաջին Հանրապետության բանակի զեներալ-լեյտենանտ: Մասնակցել է 1918 թ. Սարդարապատի հերոսամարտին, եղել ռազմաճակատի հրամանատար, Կարսի բերդապահ, 1920 թ. սեպտեմբերին նշանակվել է Կարսի զեներալ-նահանգապետ: 1921 թ. բոլշևիկների կողմից գնդակահարվել է Դարաքիլիսայում:

երկու շինությունն ու նրանց կից հիւանդանոցի շէնքը տրամադրւի որբերին եւ յանձնի Ամերիկեան կոմիտէին:

Նոյնպէս նախարարութեանս յոյժ ցանկալի կլինէր բարեհաճ կարգադրութեամբ չզլանայիք 2-րդ գումարտակի քաղաքի շէնքը դատարկել տալ այնտեղ 4000 որբ երեխաների համար դպրոց բաց անելու:

Նախարարութիւնս լիայոյս է, որ Դուք, պ. գեներալ, ընդառաջ կգաք մեր այս դիմումին, որով հնարաւորութիւն տւած կլինէիք որբերի կրթական գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու:

Հանրային կրթութեան եւ արւեստի նախարար [Գ. Ղազարյան]

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թ. 104 և շրջ., պատճեն, մեքենագիր:

## 7

*Ամերկոմի կրթական մասի ղեկավար Հ. Բարթոնի գրութիւնը Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանին որբանոցների դպրոցների ուսուցիչների կայանայիք համագումարին ներկայացուցիչ ուղարկելու մասին*

Օգոստոս, 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Ներկայ ամսոյս Օգոստոս 21-ին տեղի է ունենալու Ամերիկեան որբանոցային դպրոցներու ուսուցչական համագումարը՝ խորհրդածելու յառաջիկայ ուսումնական տարւայ կրթական գործին:

Համագումարին պիտի մասնակցեն վճռական ձայնի իրաւունքով Ամերիկեան որբանոցային դպրոցներու վերատեսուչները, աւագ ուսուցիչները, ընտրւած և մասնաւոր ուսուցիչները, ընտրւած ուսուցչական խումբի կողմէ:

Ուստի կը խնդրուի դրկել և Ձեր ներկայացուցիչը՝ մասնակցելու կատարուելիք աշխատանքներուն:

Համագումարին աշխատանքները պիտի ըլլան.

1. Պետութեան դաստիարակութեան ուղղութիւնն ու ծրագիրը:
2. Ամերիկեան նպաստամատոյցի կրթութեան ուղղութիւնն ու ծրագիրը:
3. Կրթութեան նպատակն ու ձգտումը:
4. Տիպար դաստիարակութիւնը և ուսուցման եղանակը:
5. Արհեստագիտական և գյուղատնտեսական ուսուցումը:
6. Կրօնական դաստիարակութիւնը:
7. Դպրոցներու տիպերը (որբանոցային).  
ա) մանկապարտէզ  
բ) մի դասեան դպրոց 8-12 տարեկաններու.  
գ) երեք դասեան դպրոց (վեցամեայ) 12-16 տարեկաններու:
8. Դպրոց և կարգերու կազմութիւն:
9. Դպրոցական առողջապահութիւն (ֆիզիքական և բարոյական):

10. Դպրոցական կարգապահություն:

Կը խնդրուի նախօրօք յայտնել Ձեր ներկայացուցչի անունը:

Յարգանք Ն. Բարթոն

ՀԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 120 և շրջ., բնագիր, ձեռագիր:

## 8

*Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության տարրական դպրոցների բաժնի վարիչ Գ. Էդիլյանի՝ գրությունը Թիֆլիսի Հովնանյան դպրոցի<sup>2</sup> տեսուչ՝ Դեմիրճյանին՝ կոյր երեխաների հետ աշխատելու համար ուսուցիչ փնտրելու խնդրանքով*

3 սեպտեմբերի 1920 թ.

Երևան

Մեծարգոյ Պարոն Դեմիրճեան,

Խնդրում եմ տեղեկացեք արդեօք Թիֆլիսում կը գտնուի մի հայ ուսուցիչ, որը ծանօթ լինի կոյր երեխաներին ուսուցանելու եղանակներին: Ամերիկեան կոմիտեն Ղարաքիլիսայում այս տարի բանալու է կոյր երեխաների յատուկ դպրոց և պատրաստ է տալ դասատուին լաւ վարձատրութիւն և յարմարութիւններ: Դիմումն անել Ղարաքիլիսէի Ամերիկեան կոմիտէի ճիւղին:

Հանրային կրթութեան մինիստրութեան տարրական դպրոցների բաժնի վարիչ Գ. Էդիլեան

ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 46, թ. 122, ինքնագիր:

---

<sup>1</sup> Էդիլյան Գուրգեն Մեսրոպի (1885-1942) – մանկավարժ, հոգեբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, հասարակական գործիչ: 1916 թ. Անդրկովկասի գաղթականական որբանոցների տեսուչն էր, կազմակերպել է անապաստան երեխաների կրթության ու դաստիարակության գործը: Եղել է Առաջին հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության տարրական դպրոցների բաժնի վարիչը: 1921-1933 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում: Ստալինյան բռնադատության զոհերից է, հետազայում արդարացվել է:

<sup>2</sup> Հովնանյան կամ Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցը հիմնվել է Թիֆլիսում 1877 թ.: Գործել է մինչև 1920 թ.՝ պարբերաբար փակվելով և բացվելով: Տեսուչներից են եղել անվանի մանկավարժներ Տ. Ռաշմաճյանը, Ստ. Մալխասյանցը, Տ. Տեր-Միրաքյանը:

<sup>3</sup> Նամակը հասցեագրվել է դպրոցի տեսուչ Դեմիրճյանին. ամենայն հավանականությամբ հեղինակը այն ուղղել է գրող Դերենիկ Դեմիրճյանին, որը 1910 թվականից դասավանդում էր դպրոցում: Հովնանյան դպրոցի տեսուչը 1914-1921 թթ. եղել է անվանի մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը:

9

*ՀԱԽՆՉ լուսժողկոմատի գրությունը Ամերկոմի կրթական բաժնի վարիչին Ամերկոմի դպրոցներում բարոյագիտության դասավանդումը արգելելու մասին*

5 հոկտեմբերի 1922 թ.  
Երևան

Ձեր սեպտեմբերի 29-ի գրությանն ի պատասխան պարտք եմ համարում հայտնել, որ մեր վերջին անգամ ունեցած խոսակցության ժամանակ մենք համաձայնության եկանք, որ Ամերկոմի դպրոցները իր ամբողջությամբ պետք է կիրառեն խորհրդային դպրոցների ծրագիրը: Այդ ծրագրով բարոյախոսության դասավանդությունը խորհրդային դպրոցներում չի թույլատրվում, հետևապես և Ամերկոմի դպրոցներում էթիկայի դասընթացը չպիտի լինի: Ինչ վերաբերում է անգլիական լեզվին, Ամերկոմի կրթական բաժինը կարող է յուր դպրոցներում ավանդել այդ լեզուն, քանի որ և խորհրդային դպրոցներում ավանդվում են եվրոպական լեզուներ:

Լուսժողկոմի ժամանակավոր պաշտոնակատար<sup>1</sup>

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 399, թ. 32, պատճեն, մեքենագիր:

10

*ՀՄԽՉ լուսժողկոմ Ա. Մոսվյանի<sup>2</sup> գրությունը Ամերկոմի դպրոցների լիազոր էլիտերին կրթական գործի կազմակերպման մասին*

3 ապրիլի 1923 թ.  
Երևան

Համաձայն Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության կառավարության և Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի միջև կնքված համաձայնագրի՝ Ամերկոմի բոլոր որբանոցներում, մանկատներում ու դպրոցներում սաների դաստիարակությունը տարվելու է համապատասխան հանրապետությունների լուսավորության կոմիսարիատների հսկողության ներքո (տե՛ս համաձայնագրի § 5)<sup>3</sup>:

Կրթական-դաստիարակչական գործը նորմալ ընթացքի մեջ դնելու և հսկողությունը կանոնավորելու համար, և որպեսզի միաժամանակ կասեցրած լինենք ամեն մի թյուրիմացություն, որ կարող է տեղի ունենալ ապագա-

<sup>1</sup> Փաստաթուղթը ստորագրված չէ:

<sup>2</sup> Մոսվյան Ասքանազ Հարությունի (1885-1929) – պետական գործիչ, 1921-1923 թթ. Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի, 1923-1929 թթ.՝ լուսավորության ժողովրդական կոմիսար և Ժողկամխորհի նախագահի տեղակալ:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1280, թթ. 1-6:

յում, անհրաժեշտ ենք համարում Ձեզ մոտավոր կերպով ծանոթացնել այն գործելակերպին, որ կիրառվելու է մեր կողմից:

1. Դպրոցներում, մանկապարտեզներում, արհեստանոցներում և սկաուտական կազմակերպություններում հսկողությունը տարվում է լուսավորության կոմիսարիատի սոցիալական դաստիարակության և պրոֆտեխնիկական կրթության վարչությունների կողմից՝ համապատասխան լուսբաժինների միջոցով:

2. Հրահանգիչները պարտավոր են հսկել, որ դպրոցական ծրագրերն ու կանոնադրությունները ճշտությամբ իրականացվեն կյանքում, հարկ եղած դեպքում իրենց ցուցումներն ու դիտողություններն են անելու տեղում, եթե այդ վերաբերում է ծրագրին, կանոնադրությանը, մեթոդին, դպրոցական պիտույքներին և այլն: Բոլոր այն խնդիրներում, որ նախատեսված չեն և կարող են սկզբունքային տարաձայնությունների տեղիք տալ, հրահանգիչները դիմում են կենտրոնին՝ հատուկ ցուցումներ ստանալու:

3. Կրթական-դաստիարակչական գործը արժանավայել բարձրության վրա դնելու համար լուսբաժինները հրահանգիչների միջոցով կազմակերպում են դասընթացներ (կուրսեր), համագումարներ, դասախոսություններ, փորձական ցուցադրական դասեր, ցուցահանդեսներ և այլն՝ անհրաժեշտ ծախսերի վերաբերմամբ համաձայնության գալով Ամերկոմի հետ:

1. Լուսբաժինները ստանում են պարբերաբար գրավոր տեղեկագրեր Ամերկոմի դպրոցների և դպրոց-արհեստանոցների վարչություններից:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ որբանոցների սասները ավելի քան կարիք ունեն մոտ ապագայում ինքնուրույն պրոֆեսիոնալ տեխնիկական աշխատանքի անցնելու, անհրաժեշտ է պրոֆտեխնիկական կրթությանը զարկ տալու:

2. Այս իսկ տեսակետից անհրաժեշտ է ներկայումս գոյություն ունեցող Ա աստիճանի դպրոցներին կից բանալ տեխնիկումներ, գլխավորապես՝ գյուղատնտեսական:

3. Մանկատներին կից արհեստանոցներին տալ այնպիսի կազմակերպչական ձև, որ նրանք կարող լինեն ծառայել Ա և Բ աստիճանի դպրոցներին՝ աշխատանքային դպրոցի հիմնական պահանջները իրականացնելու:

4. Հասակավոր տղաների համար կազմակերպված արհեստանոցներում կիրառել աշխատանքի կոմիսարիատի աշխատանքին վերաբերող օրենքները:

5. Աղջիկների համար հիմնել պրոֆեսիոնալ դպրոցներ, դպրոց-արհեստանոցներ, որ առաջնորդվելու են պետական նման հիմնարկների կանոնադրության ծրագրով:

Լուսծողկոմ՝ Ա. Մռավյան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 442, թ. 45, բնագիր, մեքենագիր:

*Անդրֆեդերացիայի Ժողովուրդի նախագահ Շ. Էլիավայի<sup>1</sup> գրությունը Ամերկոմում ՀՄԽՀ Ժողովուրդի ներկայացուցիչ Ն. Տեր-Ղազարյանին՝ հետագա համագործակցության առաջարկի առիթով իր շնորհակալությունը անդրծովյան գործողությունների գլխավոր տնօրեն Բ. Աջիսունին հայտնելու խնդրանքով*

6 օգոստոսի 1928 թ.

Թիֆլիս

Прошу сообщить Генеральному директору Заморских операций Амеркома гр. Ачесону, что его письменное предложение, адресованное мне 22 Июля т. г., по поводу окончательной ликвидации помощи сиротам, находящимся на иждивении Комитета, Закавказским Правительством одобрено и принято к сведению, на основании чего существующий договор между Закавказским Правительством и Амеркомом отсрачивается до 1-го Ноября 1929 года на старых началах.

Ходатайство Амеркома по поводу дальнейшего ввоза тюков старой одежды и продажи излишка товаров удовлетворено; детали поручаю Вам выработать с Амеркомом и оформить письменно.

Передача 350 до 400 детей СНК Армении одобрена также, а потому необходимо установить с Амеркомом количество передаваемых детей, сроки и размер субсидии.

В отношении же постоянной работы Амеркома, Закавказское Правительство, относясь доброжелательно к предложению Комитета об учреждении на его средства сельско-хозяйственной школы в Закавказском масштабе с программой государственных школ для сирот, находящихся на его попечении, находит необходимым подвергнуть это предложение детальному изучению, тем более, что окончательное решение его находится в связи с обсуждением вопроса Исполнительным Комитетом в Нью-Йорке.

Прошу передать гр. Ачесону и всем сотрудникам иностранного персонала Амеркома от имени Закавказского Правительства наши наилучшие пожелания за их плодотворную работу по оказанию помощи сиротам.

Председатель Совета Народных Комиссаров ЗСФСР Ш. Элиава

ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 664, թ. 36, վավերացված պատճեն, մեքենագիր:

## 12

*Ամերկոմի անդրծովյան գործողությունների գլխավոր տնօրեն Բ. Աջիսունի նամակը Ամերկոմում ՀՄԽՀ Ժողովուրդի ներկայացուցիչ Ն. Տեր-Ղազարյանին Հայաստանի հետ հետագա համագործակցությունը շարունակելու պատրաստակամության շուրջ*

13 օգոստոսի 1928 թ.

Բաթումի

---

<sup>1</sup> Էլիավա Շավա Զուրաբի (1883-1937) – խորհրդային պետական և կուսակցական գործիչ, 1923-1927 թթ. եղել է Վրաստանի, իսկ 1927-1931 թթ. Անդրֆեդերացիայի Ժողովուրդի նախագահ: 1937 թ. բռնադատվել է և գնդակահարվել: Հետմահու արդարացվել է:

Многоуважаемый гр. Тер-Газарян,

Я хочу официально известить Вас о получении Вашего письма за N 870, к которому была приложена копия письма от Председателя Заксовнаркома гр. Элиава, адресованного Вам от 6-го Августа 1928 г. Это письмо было ответом на мое письмо от 22-го Июля, которое указывало предложения Амеркома для окончательной ликвидации его приютской программы и которое говорило о предложениях по поводу продления воспитательной работы.

Прошу Вас уверить гр. Элиава в моем громадном удовольствии по поводу получения этого ответа на мое письмо и по поводу того, что планы, которые мы обсуждали совместно так тщательно, встретили его полное одобрение.

Я повезу нашему Исполнительному Комитету в Нью Йорк его письмо, написанное Вам, и подробно извещу моих коллег там о результатах нашего обсуждения. Я уверен, что они будут заинтересованы отношением Закавказского Правительства к постоянной работе и мое искренне убеждение, что как результат наших обсуждений и на основе взаимного доверия, которое установилось восьмилетней совместной деятельностью, какаянибудь созидательная работа в этом направлении будет иметь место.

Перед своим отъездом с Кавказа, я хочу поблагодарить через Вас гр. Элиава и власти в Эривани за все те любезности, которые они оказывали мне во время моего там пребывания и выразить Вам свои лучшие пожелания на будущее.

Искренне Ваш Барклай Ачесон,  
Генеральный директор Заморских операций.

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 664, թթ. 37-38, պատճեն, մերենագիր:

### 13

*Լենինականում ՀՄԽՀ Ժողովխորհի Ամերկումին կից ներկայացուցիչ Գ. Մարգարյանի գրությունը ՀՄԽՀ Ժողովխորհի և Լուսժողովմատ Ամերկումի գլխավոր տնօրեն Ջ. Բիչի ոչ հանդուրժելի գործելաոճի մասին*

5 հունվարի 1929 թ.  
Երևան

Երեկ ես պաշտոնապես առաջարկեցի Ամերկումին, որպեսզի նրա կողմից կարգադրվի այսօր հավաքել Պոլիգոնի դպրոցների բարձր խմբերի աշակերտներին՝ ծննդյան տոների առթիվ նրանց հետ զրույց ունենալու համար՝ լուսբաժնի գծով: Սակայն չնայած այդ հանգամանքին՝ Ամերկումը, հանձին իր գլխավոր դիրեկտոր քաղ. Բիչի, կտրականապես հրաժարվեց թույլ տալ, որ այդ զրույցը տեղի ունենա՝ հայտարարելով, որ Պոլիգոնի սահմաններում հակակրոնական թեմայով զրույցներ կազմակերպել չի թույլատրվում: Նա նույնպես մերժեց թույլատրել այդ աշակերտներին գալ քաղաք և մասնակցել քաղդպրոցներում տեղի ունեցող զրույցներին: Նույն ձևով Ամերկումը հրաժարվեց կատարել նաև իմ պաշտոնական առաջարկությունն այն մասին, որ, համաձայն Աշխժողովմատի կարգադրության, սույն հունվարի 6-ի կիրակի օրը, ինչպես բոլոր պետական հիմնարկություններում, նույնպես և Ամերկո-



մում նորմալ պարապմունքներ տեղի ունենան, բացառությամբ ամերիկյան պերսոնալի, որը կարող է չաշխատել այդ օրը:

Ես կառավարության անունից պաշտոնապես բողոքեցի Ամերկումի այսպիսի վերաբերմունքի դեմ, որ տրամագծորեն հակասում է խորհրդային իշխանության վարած ընդհանուր քաղաքականությունը կրոնի նկատմամբ, և հայտնեցի, որ այդ մասին կտեղեկացնեմ Ձեզ:

Ի նկատի ունենալով, որ Ամերկումի նման գործելակերպը ոչ մի դեպքում այլևս տանելի լինել չի կարող Խորհրդային Հայաստանի սահմաններում այն ժամանակ, երբ նրա մանկատներում միայն 480 որբեր են մնացել, ես խնդրում եմ կտրուկ կերպով պահանջ դնեք քաղ. Բիչի առաջ, որպեսզի նա ամբողջովին և առանց առարկության կատարի ներկայացուցչության առաջարկությունները իր դպրոցներում և աշխատակիցների շրջանում խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը կրոնական և այլ հարցերում կիրառելու մասին, և, ընդհանրապես, անշեղ կերպով կատարի խորհրդային կառավարության և նրա միջև կնքված պայմանագիրը, մանավանդ որ Ամերկումը էքստերիտորիալ իրավունքներով օգտվող կազմակերպություն չէ, այլ մասնավոր ձեռնարկություն: Բացի այդ խնդրում եմ Ձեր կողմից ևս ուլտիմատիվ կերպով բողոք հայտնեք քաղ. Բիչի վերև հիշված վերաբերմունքի դեմ:

Լենինականում ՀՄԽՀ Ժողկոմխորհի՝ Ամերկումին կից ներկայացուցիչ  
Գ. Սարգսյան

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 664, թ. 20, բնագիր, մեքենագիր:

#### 14

*ՀՄԽՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանի՝ շնորհակալական նամակը Ամերկումի Կովկասյան բաժանմունքի ընդհանուր վարիչ Ե. Յարրոնյին ամերիկյան ժողովրդի ցուցաբերած մարդասիրական օգնության համար*

22 հունիսի 1929 թ.

Երևան

Թույլ տվեք Խորհրդային Հայաստանի բազմահազար որբերի և սովալուկների կողմից անկեղծ շնորհակալություն հայտնել այն բարձր մարդասիրական օգնության համար, որ Դուք ցուցադրիք նրանց սովի և հիվանդությունների ճիրաններից ազատելու համար: Անձնվեր այն օգնությունն ու կարեկցությունը, որը գտավ համաշխարհային պատերազմից տեղահանված հայ ժողովրդի ամենատանջված մասը, այդ կարեկցությունը, այդ սիրառատ

---

<sup>1</sup> Կասյան Սարգիս (Սարգիս Հովհաննեսի Տեր-Գասպարյան) (1876-1937) – խորհրդային կուսակցական և պետական գործիչ, հրապարակախոս: 1927-1931 թթ. եղել է Անդրֆեդերացիայի և ՀՄԽՀ Կենտգործկոմի նախագահ: 1937 թ. բռնադատվել է, հետմահու՝ արդարացվել:

վերաբերմունքը անմոռանալի կմնա հայ ժողովրդի կյանքում: Խորը շնորհակալություն ենք հայտնում Ձեզ և հանձին Ձեզ Ամերիկայի ժողովրդին, որը հեռու Ամերիկայից մարդասիրական իր խոսքը և գործը արտահայտեց հանդեպ հայ ժողովրդի:

Չենք կարող ցավ չհայտնել, որ Դուք, ամենահարգելի միստր Յարրո, այսօր թողնում եք Ձեր սիրելի գործը և հեռանում մեզնից: Բարի երթ մաղթելով Ձեզ դեպի Ամերիկա, հայտնում ենք նաև խորը հավատ, որ այնտեղ ևս Դուք կշարունակեք Ձեր բարի մարդասիրական ջանքերը թափել հօգուտ այն մեծ գործի, որը Դուք այսքան երկար տարիներ կատարել եք Հայաստանում:

Խորին, անկեղծ շնորհակալություն Ձեր ազնիվ, մարդասիրական աշխատանքների համար և բարի, հաջող ճանապարհ Ձեզ:

Հայաստանի Կենտրոնական նախագահ՝ Ս. Կասյան

ՀԱԱ, Ֆ. 112, ց. 4, գ. 758, թ. 10, պատճեն, մեքենագիր:

#### **Эмма Овсепян – *Документы об образовательной деятельности Амеркома в Армении***

С 1915 г. на Ближнем Востоке действовали два благотворительных учреждения – армянский и сирийский комитеты, которые оказывали помощь в некоторых странах данной территории, открыв там приюты, где приютили тысячи сирот, чудом спасшихся от геноцида армян.

В итоге объединения этих учреждений в 1918 г., был образован Near East Relief, который с 1919 г. по 1931 г. проделал такую же огромную работу на территории Армении, сотрудничав с правительствами как Первой республики Армении, так и Советской Армении.

Приняв под свою опеку около 26.000 сирот, Амерком на территории Армении создал огромную сеть приютов, а при них организовал детские сады, школы, училища ремесленников и медсестер, педагогический техникум.

Образовательный процесс этих учреждений был под присмотром Министерства образования Армении и учащиеся получали образование, по предусмотренной государством программе.

#### **Emma Hovsepyan – *Documents about the Educational Activities of the Near East Relief of Armenia***

Since 1915 in the Near East operated two American charity organizations: Armenian and Syrian relief committees, which took care of thousands of Armenian orphans who miraculously survived the Armenian Genocide. They took care of these children in their orphanages. From the union of these two committees the Near East Relief was organized in 1918. From 1919 to 1931 the Near East Relief did the same great job in Armenia cooperating with the governments of the First Republic of Armenia and the Armenian Soviet Socialist Republic. The Near East Relief created a wide set of orphanages in Armenia, which took care of 26 thousand orphans. It also opened kindergartens, schools, craftsmanship, nursing, pedagogical colleges. The educational process of these institutions was organized with due care and attention under the superintendence of the Ministry of Education of Armenia, and children received their education appropriate to the state program.

# Գ Ր Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

*Гегам Петросян, Отношения Республики Армения с Россией (1918-1920 гг.), Ереван, Издательство ЕГУ, 2012, 423 с.*

*Գեղամ Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 423 էջ:*

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի գրախոսվող մենագրությունը նվիրված է պատմագիտական հետաքրքիր և արդիական հնչեղություն ունեցող քաղաքական հիմնահարցի: Այն վերաբերում է հայ-ռուսական հարաբերություններին 1918 թ. հունիսից մինչև 1920 թ. ապրիլն ընկած ժամանակաշրջանում, այն է՝ Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումից մինչև Ռուսաստանի Հարավի կամավորական բանակի պարտությունը քաղաքացիական պատերազմում:

2013 թ. դեկտեմբերի 6-ին Մոսկվայում՝ «Արգումենտի ի ֆակտի» գործակալության լրատվական կենտրոնում տեղի է ունեցել գրախոսվող գրքի շնորհանդեսը՝ «Զգույշ, պատմական փաստեր են» ծրագրի շրջանակում, և «Կովկասագետների գիտական ընկերության» ու «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության (Հայ դատի Մոսկվայի գրասենյակ) համատեղ ջանքերով: Իր ելույթում Գ. Պետրոսյանն իրավամբ նշել է, որ «Հայոց պատմության կեղծարարությունը հայ ժողովրդի մասին բացասական կարծիք է ձևավորում, ինչն առաջացնում է ոչ միայն արդարացի վրդովմունք, այլև հղի է վտանգավոր հետևանքներով»<sup>1</sup>: Հիրավի, հակահայկական հիստերիան խնդիրներ է առաջացնում Հայաստանի ազգային անվտանգության համար, ուստի հեղինակը՝ հայերեն լեզվով լույս ընծայած իր աշխատությունը<sup>2</sup> թարգմանաբար ներկայացրել է նաև ռուսաստանյան հանրությանը:

Անհերքելի է, որ Հայաստանի առաջին և երրորդ Հանրապետությունների միջև բազում ընդհանրություններ կան: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.) գրքի շնորհանդեսը Մոսկվայում», Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ, 2013, թիվ 6, էջ 31:

<sup>2</sup> Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, 2011:

առնել և գնահատել նաև այն, որ 1918-1920 թթ. տարածաշրջանային զարգացումներն այսօր ևս իրենց որոշակի շարունակությունն են ստացել՝ ի դեմս Արցախի ազատագրական շարժման ու ինքնորոշման հիմնահարցի, որի առանցքի շուրջ լավագույնս դրսևորվում են պատմության քաղաքական դասերը:

Այս առումով կարևորում ենք «երկու» Ռուսաստանների, այլ կերպ ասած՝ երկու քաղաքական մոտեցումների առկայության հանգամանքը, որը, մեր կարծիքով, արդի փուլում, ինչպես 1918-1921 թթ., վճռորոշ դերակատարություն ունի և կարող է մեծապես նպաստել հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանը:

Հասկանալի է, որ քննարկվող ժամանակաշրջանում Ռուսաստանի արտաքին քաղաքականության կտրուկ շրջադարձի, քաղաքական ասպարեզում տարբեր Ռուսաստանների հանդեպ գալու գլխավոր պատճառը բոլշևիկյան հեղաշրջումն էր: Ռուսաստանն առաջին հերթին պետք է այդ մղավանջային իրավիճակից դուրս գալու ելք գտներ: Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո ձևավորվող հակախորհրդային պետական կազմավորումները 1917-1918 թթ. արդեն իսկ փորձում էին ընդհանուր թշնամու՝ բոլշևիզմի դեմ պայքարում հարաբերությունների եզրեր գտնել Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա նաև Սեյմի հետ:

Ուշագրավ է, որ այս փուլում ևս Ռուսաստանի Հարավի ու Դոնի հակախորհրդային պետական կազմավորումների նկատմամբ անդրկովկասյան իշխանությունների վերաբերմունքը գրեթե նույնությամբ նախորդում է այդ հարաբերությունների ակտիվ փուլի՝ 1919-1920 թթ. պատկերին: Անդրկովկասյան իշխանությունների վրաց-թաթարական (ադրբեջանական) մեծ մասը կտրականապես դեմ էր Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացմանն ու ծավալմանը, իսկ հայկական կողմը, թեև ոչ հետևողականորեն, ինչ-որ տեղ զգուշավորությամբ, այնուամենայնիվ փորձում էր կապեր հաստատել հակաբոլշևիկյան պետական կազմավորումների հետ: Այս հանգամանքն ինքնին վկայում է, որ, անկախ քաղաքական ուժերի երանգավորումից, հայկական քաղաքական վերնախավը, այդուհանդերձ, չէր այրում Ռուսաստանի հետ կապող կամուրջները մանավանդ Հայկական հարցի առկայության պայմաններում:

Գ. Պետրոսյանը համոզված է, որ ռազմաքաղաքական շրջափակման մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունը միայն իր սեփական ուժերով չէր կարող ապահովել հետագա գոյությունը և այդ պայմաններում պետք է ձեռք մեկնեք յուրաքանչյուր արտաքին ուժի, որը կօժանդակեր նրան՝ կանխելու թուրքական վտանգը: Անկախության հռչակումից ամիսներ անց՝ 1918 թ. ամռանը, ներքին ու արտաքին ծայրահեղ աննպաստ պայմաններում հայկական քաղաքական ու հասարակական շրջաններում իշխող էր Ռուսաստանի հետ բարեկամական դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ցանկությունը: Այդ մասին է վկայում նաև Ռուսաստանի Հարավի

զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Անտոն Դենիկինը, որն ընդգծում էր Հայոց ազգային խորհրդի կողմից Ռուսաստանի հետ, թեկուզ և խորհրդային, պետական մակարդակով ամեն տեսակ կապերի հաստատման անհրաժեշտության հանգամանքը:

Հուսալքությունն ու անորոշությունը հասել էին այն աստիճանի, որ 1918 թ. հոկտեմբերի 24-ին Ռուսաստանի Հարավի «Հատուկ խորհրդակցությանն» է դիմում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի օգնական Գևորգ Մելիք-Ղարազյոզյանը. «Հայաստանի քաղաքականությունը բարենպաստ է Ռուսաստանի հանդեպ: Այն հնարավոր է դարձնում մինչև անգամ Ռուսաստանի հետ Հայաստանի վերամիավորումը»: Միաժամանակ հեղինակը նշում է, որ ՀՀ պաշտոնական դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների շուրջ ամփոփված էր վարչապետ Հովհաննես Քաջազնունու կառավարության ծրագրում: Վերջինս, «դժբախտություն» որակելով Ռուսաստանի հեռացումը Անդրկովկասից, հույս էր հայտնում, որ վերադարձի պարագայում Ռուսաստանը Հայաստանի կողմից լայն աջակցություն կստանա: Հ. Քաջազնունին գտնում էր, որ ՀՀ քաղաքականությունն առայժմ չի կարող կառուցվել ռուսամետ կողմնորոշման վրա: Նա նկատի ուներ հենց իրական օգնությունը, ուստի և եզրակացնում էր, որ Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել Հայաստանի համար: Այս առումով Գ. Պետրոսյանի հիմնավորումները միանգամայն համոզիչ են:

Հեղինակն անդրադառնում է Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ միջև հարաբերությունների հաստատմանը 1918 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին, որոնք անհաջող ավարտ ունեցան: Նա ճիշտ է գնահատում նոյեմբերի 16-ին Յասսիում կայանալիք հակաբոլշևիկյան խորհրդակցությանը Հայաստանի ներկայացուցիչների մասնակցության խնդիրը, հակախորհրդային վճռական քայլերի չդիմելու մարտավարությունը: Այս առանցքային թեզն իր հիմնավորումն է ստացել նաև Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերությունների հաստատման սկզբնական փուլում: Գ. Պետրոսյանը եզրակացնում է, որ կապերն ունեցել են կիսապաշտոնական և նույնիսկ գաղտնի բնույթ: Նրա օգտագործած հարուստ սկզբնաղբյուրները փաստում են, որ ՀՀ կառավարությունը մի կողմից ձգտում էր հարաբերություններ հաստատել Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, իսկ մյուս կողմից՝ նրանց նկատմամբ դրսևորում էր ծայրահեղ զգուշավորություն: Կառավարությունը խուսափում էր որևէ քաղաքական պայմանագրի կնքումից և փորձում իր կապերը սահմանափակել սոցիալ-տնտեսական հարաբերությունների շրջանակներում:

Կարևորում ենք Գ. Պետրոսյանի եզրահանգումն առ այն, որ Դենիկինի կամավորական բանակի հետ դաշինքի կայացումը հարկ է դիտարկել նախ այդ շարժման մեջ առկա Ռուսաստանի ապագա պետական-վարչական կա-

ռուցվածքի նկատմամբ երկու տարբեր մոտեցումների (Դաշնային Հանրապետության և «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան», այն է՝ կայսրության), ապա նաև տարածաշրջանային խնդիրների համատեքստում:

Այս հարցում առանձնանում է Վրաստանի հետ հարաբերությունների հիմնախնդիրը: Վրաստանի Հանրապետությունը նախ սկզբունքորեն դեմ էր ռուսաստանյան որևէ պետական կազմավորման հետ կապերի հաստատմանը, ուստի և հմտորեն օգտագործում էր այն իրողությունը, որ Հայաստանը հնարավորություն ուներ այդ կազմավորումների հետ անմիջական կապ հաստատել միայն Վրաստանի տարածքով: Ավելին, Հայաստանի կապերը Դենիկինի հետ, պարզ է, որ հակադրվում էին Վրաստանի շահերին, ուստի այն Հայաստանին վերապահում էր կրավորական «գործընկերոջ» կարգավիճակ:

Աշխատության առավելություններից է նաև այն, որ հայ-ռուսական բազմաշերտ փոխհարաբերությունները Գ. Պետրոսյանը լուսաբանում է տարածաշրջանային և միջազգային առավել լայն համատեքստում: Նրա վերլուծություններն առնչվում են Մեծ Բրիտանիայի, Վրաստանի արտաքին քաղաքականության, այդ թվում նաև վրաց-ադրբեջանական հիմնահարցերին:

Անգլիական զինվորական հրամանատարությունը օգտագործում էր բոլոր միջոցները հայերի ռուսամետության դեմ պայքարելու համար: Միաժամանակ, Հայաստանի դիվանագիտությունը անհրաժեշտ ճկունություն չէր ցուցաբերում, որպեսզի չտուժեր Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի Հարավի շահերի բախումից: Համաշխարհային պատերազմի համատեքստում Հայաստանը շարունակում էր Դենիկինի Ռուսաստանը համարել Անտանտի երկրների դաշնակից ու բարեկամ: Հայ դիվանագետներն ի վերջո չկարողացան ճիշտ գնահատել Անգլիայի հետպատերազմյան քաղաքականությունը, որն Անդրկովկասում հիմնականում հակառուսական էր: Մեծ Բրիտանիան ձգտում էր երկրամասից դուրս մղել Ռուսաստանի Հարավի իշխող ուժերը և ամրապնդել սեփական ելքերը: Հայերն անգլիացիներին վստահություն չէին ներշնչում ավանդական ռուսամետ կողմնորոշման պատճառով:

Ռուսաստանի Հարավի հետ Հայաստանի հարաբերությունների վրա բացասաբար էին ազդում նաև Վրաստանի և Ադրբեջանի բացահայտ հակառուսական թշնամական դիրքորոշումները: Նրանք որդեգրել էին գերմանաթուրքական կողմնորոշում, ուստի անգլիացիների մուտքը Անդրկովկաս նրանց մոտ մտավախություն առաջ բերեց: Սպասեցնել չտվեց նաև անգլիացիների հակահայկական քաղաքականության դրսևորումը, որի գլխավոր պատճառը կրկին վրացիների և ադրբեջանցիների հակառուսամետ կողմնորոշումն էր: Անգլիացիների համար հայկական բանակն ընկալվում էր որպես Դենիկինի 9-րդ զորամաս:

Վրաստանի կառավարությունը, օգտագործելով անգլիացիների թշնամական վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ և Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Հարավի բարեկամական փոխհարաբերու-

թյունները, նպաստեց հայ-անգլիական հարաբերությունների վատթարացմանը և իր տարածքային խնդիրները լուծեց ի վնաս Հայաստանի:

Ավելին, Դենիկինի կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» փորձեցին 1918 թ. հայ-վրացական պատերազմը օգտագործել որպես հարմար առիթ տարածաշրջանում իրենց ազդեցությունն ամրապնդելու համար: Այդ ծրագրերը ձախողելու նպատակով անգլիացիներն աջակցեցին Վրաստանին: Չնայած հայ-վրացական պատերազմը ավարտվեց Հայաստանի Հանրապետության հաղթանակով, սակայն բրիտանական ռազմական հրամանատարության ճնշման պատճառով այն վերածվեց դիվանագիտական պարտության: Գ. Պետրոսյանը գտնում է, որ այդ պարտությունը հայկական կողմի սպասողական, կրավորական քաղաքականության հետևանքն էր:

Կարսի մարզի համար պայքարը ևս վկայում է, որ Հայկական հարցում բախվում էին Անգլիայի և Ռուսաստանի Հարավի շահերը: Հասկանալի է, որ կամավորական բանակի ղեկավարությունը Կարսի մարզը դիտում էր որպես նախկին ռուսական կայսրության տարածք, սակայն այս հարցում նրան մեծապես խոչընդոտում էր Մեծ Բրիտանիան: Թեև 1919 թ. ապրիլի 25-ին վերջինիս աջակցությամբ Կարսի մարզը հանձնվեց Հայաստանի Հանրապետության տնօրինությանը, սակայն բրիտանական հրամանատարությունը լռելյայն անտեսեց, եթե ոչ հրահրեց մուսուլմանական իշխանությունների ձևավորումը երիտթուրքերի նախաձեռնությամբ, մասնավորապես «Հարավարևմտյան Կովկասյան Հանրապետության» ստեղծումը՝ Կարս կենտրոնով: Հեղինակը գտնում է, որ փաստորեն տեղի ունեցավ անհնարինը. Կարսի հարցում բացահայտվեցին երկու դարավոր թշնամիների՝ Թուրքիայի և Ռուսաստանի շահերի ընդհանրությունը և համերաշխությունը, քանզի նրանք չէին հանդուրժում Անգլիայի ներթափանցումն Անդրկովկաս, ինչը կրկին հարվածում էր հայ ժողովրդի շահերին: Որոշակի երկակի բացասական դեր էր խաղում կամավորական բանակի հետ մուսուլմանների համագործակցությունը, որոնք ցանկանում էին ի վնաս Հայաստանի Հանրապետության Կարսի մարզում հաստատել ռուսական տիրապետություն:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև մենագրության այն հատվածը, որը վերաբերում է Միացյալ Հայաստանի անկախության հռչակման նկատմամբ անգլիական և ռուսական քաղաքական շրջանակների վերաբերմունքին: «Միացյալ ազատ Հայաստանի» հռչակումը նկատելիորեն փոխեց հակախորհրդային պետական կազմավորումների դիրքորոշումը, ինչը բացատրվում է այն բանով, որ Փարիզում գործող «Ռուսական քաղաքական խորհրդակցություն» հակաբոլշևիկյան պետականամետ խմբավորումը, որը Փարիզի խաղաղարար վեհաժողովից պահանջում էր Ռուսական կայսրության 1914 թ. սահմանների վերականգնում, չէր կարող համակերպվել մեծ և անկախ Հայաստանի գոյության փաստի հետ, քանի դեռ չէր վերականգնվել նախկին կայսերական Ռուսաստանի տարածքը:

Լիովին կիսում ենք Գ. Պետրոսյանի մտահոգությունը, որ անգամ այս հարցում Ռուսաստանի Հարավի ու Փարիզի «Ռուսական քաղաքական խորհրդակցության» առերես հայամետ դիրքորոշումը իրականում ոչ միայն հակասում, այլև խոչընդոտում էր հայկական խնդիրների լուծմանը: Ավելացնենք, որ այս հանգամանքն իր հերթին խանգարել է իրականացնելու Սևրի պայմանագիրը:

Այդ փոխհարաբերություններում ևս փորձաքար դարձան վրաց-ադրբեջանական հակառուսական ռազմական պայմանագրերը, որոնց քննությունը Գ. Պետրոսյանի աշխատության հետաքրքիր և հաջողված հատվածներից է հիմնավորապես լուսաբանված սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա:

1919 թ. մայիսի կեսերին Դենիկինի կամավորական բանակը գրավում է լեռնականների հանրապետությունը (Դադաստան-Պետրովսկ, Թեմիր-Խան Շորա և Դերբենտ) և Ադրբեջանի կառավարությունից պահանջում իրեն հանձնել երկաթուղագիծը՝ Բալաջարի կայարանով հանդերձ, և չխոչընդոտել 80 հազար ռուս զինվորների անցումը Բաքվից դեպի Անդրկովկասի հանրապետություններ: Այդ ամենը հիմնավորվում էր բոլշևիզմի դեմ պայքարով: Բայց քանի որ Դենիկինի առաջարկները վստահություն չէին ներշնչում Ադրբեջանում, ուստի վրացիների և թաթարների միջև կայացավ մի հակառուսական համաձայնություն: Հենց այս շրջանում սրվեց Ադրբեջանի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական շրջաններում սկսեցին տարածվել ստահոդ լուրեր այն մասին, որ Հայաստանը իբր գաղտնի պայմանագիր է կնքել կամավորական բանակի հետ. դրանց տարածմանը նպաստեցին նաև Անդրկովկասի բոլշևիկ գործիչները: Արդյունքում Դենիկինի և ըստ այդմ նաև Հայաստանի Հանրապետության դեմ կնքվեց վրաց-թաթարական նոր ռազմական պայմանագիր, որն առանց այն էլ ազգամիջյան լարված մթնոլորտում ավելի սրեց հակահայկական տրամադրությունները:

Հեղինակը մեծ տեղ է հատկացրել նաև Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Ռուսաստանի Հարավի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների լուսաբանմանը 1919 թ. օգոստոսից 1920 ապրիլն ընկած ժամանակաշրջանում, առաջին անգամ քննարկել մի շարք կարևոր հիմնախնդիրներ: Հատկապես կարևորում ենք Անդրկովկասի հանրապետությունների միջև համադաշնության հիմնահարցի լուսաբանումը, կազակական կառավարության երևանյան պատվիրակության գործունեությունը:

Հատկանշական է, որ, ըստ Գ. Պետրոսյանի, հանուն հանրապետության շահերի, Հայաստանի կառավարությունը ամեն դեպքում շարունակել է բարեկամական հարաբերություններ պահպանել Ռուսաստանի Հարավի հետ մինչ նրա վերջնական պարտությունը:

Սույն գրախոսությունում տողերիս հեղինակն ընթերցողի ուշադրությանը ներկայացրեց Գ. Պետրոսյանի վեր հանած առավել կարևոր



հիմնախնդիրները՝ կոչ անելով կարդալ այս մնայուն աշխատությունը, մանավանդ որ հեղինակը, չնայած իր հստակ գնահատականներին ու հիմնավոր եզրակացություններին, այնուամենայնիվ տեղ է թողնում ընթերցողին սեփական կարծիք ձևավորելու բարդ ու հակասություններով լի այդ պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ:

Գ. Պետրոսյանն անաչառ է իր հետևություններում. նրա կարծիքով՝ ժամանակակից քաղաքական իրադարձությունները հերթական անգամ ապացուցում են այն հանրահայտ ճշմարտությունը, որ պատմությունը կրկնվում է: Հայաստանի Հանրապետությունն այսօր գործ ունի նույն հարևանների, հակառակորդների ու «բարեկամների» հետ, բայց արտաքին քաղաքականության օրակարգում նրա առջև դարձյալ ծառանում են միևնույն բարդ հիմնահարցերը: Գ. Պետրոսյանի աշխատությունը շահեկան է և մնայուն նաև այն պատճառով, որ հավատարիմ պատմականության սկզբունքին և իրեն հասու սկզբնաղբյուրներին՝ նա չի հետևում ժամանակակից հայ հասարակության մեջ առաջացած երկփեղկվածությանը, նյութը արհեստականորեն չի հարմարեցնում ռուսամետ կամ հակառուսական միտվածություն ունեցող ճամբարների տրամադրություններին, այլ իրական պատմական համապատկերը ներկայացնում է անաչառորեն, որի համարձակ ընկալմամբ է միայն հնարավոր կերտել երկու բարեկամ ժողովուրդների ապագան: Այս պայմաններում կասկածից վեր է, որ ռուս ընթերցողին անհրաժեշտ՝ գրախոսվող մենագրության ռուսերեն թարգմանության հրատարակությունը դրվատելի է:

*ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ*

---

---

**Գառնիկ Ստեփանյան**, Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, 344 էջ:

Գրախոսվող մենագրության տիտղոսաթերթում կարդում ենք երկու անուն՝ Գառնիկ Ստեփանյան (1909-1989) և Հրաչյա Աճառյան (1876-1953), որոնք հայ բանասիրության երախտավորներից են, և շատ նշանակալից է, որ տարիների մտերմությունն ու ջերմ փոխհարաբերությունները նրանցից կրտսերին իրավունք և հնարավորություն են ընձեռել իր երախտիքի ու գնահատանքի տուրքը մատուցելու ավագ գործընկերոջ անգնահատելի վաստակին: Այս հայտնի անունների համատեղումը տիտղոսաթերթի վրա առավել ևս խորհրդանշական է, քանի որ նրանց վիճակված է եղել արժանանալ համանման ճակատագրի: Լինելով ծագումով արևմտահայ՝ նրանք վերապրել են եղեռնի հետևանքներն ու աստանդական կյանքի դժվարությունները, կրել ծանր աշխատանքով հաց վաստակելու «դառնությունն ու քաղցրությունը», սակայն երջանկություն են ունեցել ի վերջո հանգրվանելու մայր հայրենիքում և իրենց ամբողջ կյանքն անմնացորդ նվիրաբերելու հայրենի գիտության զարգացմանը:

Ակադեմիկոս Աճառյանը ականավոր լեզվաբան-հայագետ է, հայ նոր լեզվաբանության ակունքներում կանգնած հսկա, որից սկիզբ է առնում հայերենի պատմահամեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության համակարգված քննությունը, Ստեփանյանը նշանավոր բանասեր է, գրականագետ, արվեստի տեսաբան (արվեստագիտության դոկտոր), թատերագետ, խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ, կենսագիր, նույնիսկ հուշագրական վեպի հեղինակ:

Ուստի զարմանալի չէ, որ այս մենագրությունը գրված է գեղարվեստական երկի և գիտական հետազոտության ներդաշնակ միասնությամբ: Համեմատաբար սահմանափակ ծավալում հեղինակը ոչ միայն կերտում է Հ. Աճառյանի կերպարը, ի ցույց դնում նրա մարդկային նկարագիրը, անցած ուղին, ամենայն մանրամասնությամբ ու անաչառ վերլուծությամբ ներկայացնում նրա գիտական վաստակը, այլև տալիս է լեզվաբանի ապրած ժամանակաշրջանի բնութագիրը, որին խիստ բնորոշ էին պատմաքաղաքական և հասարակական հակասությունները, պետական գաղափարախոսության բիրտ կաշկանդումները, հաճախ ստեղծագործ մտքի համար անընդունելի սահմանափակումները, հալածանքներն ու անարդարությունները: Միևնույն ժամանակ մեր առջև հառնում է ազնիվ գիտնականը, որը, չնայած կրած դժվարություններին ու ստիպումներին, նույնիսկ բանտարկությանը, հավատարիմ է մնացել իր համոզմունքներին ու սկզբունքներին, և չնայած ֆիզիկական վատառողջ վիճակին, ընտանեկան դժբախտություններին ու հասարակական ճնշումներին գիտության մեջ և կյանքում եղել է հոգեպես աներեր ու անզիջում իր բարոյական

նկարագրով, թեև օժտված էր մեղմ ու բարեհամբույր բնավորությամբ:

Գիրքը ունի հետաքրքրական և միաժամանակ տրամաբանված կառուցվածք: Այն բաժանված է առանձին գլուխների՝ խոսույն վերնագրերով («Մանկություն», «Կենտրոնական վարժարանում», «Դեպի կյանք», «Թափառական կյանքի տարիներ» և այլն), որոնք արտացոլում են Հ. Աճառյանի կյանքի շրջադարձային փուլերը: Նրա կյանքի յուրաքանչյուր նշանակալից հատվածի նկարագրությունից հետո հեղինակը բանիմացորեն վերլուծում է տվյալ ժամանակաշրջանի նրա գիտական գործունեությունը, մատնանշում նաև գիտության մեջ նրա նվաճած նոր բարձունքները:

Հ. Աճառյանի գիտական հետաքրքրությունները ձևավորվել են շատ վաղ, դեռևս աշակերտական նստարանից: Ինչպես նշում է կենսագիրը՝ Կ. Պոլսի «Կենտրոնական վարժարանում սովորելու հենց առաջին տարվանից Հ. Աճառյանը խանդավառվել էր հնդեվրոպական լեզվաբանությամբ» (էջ 35), իսկ առաջին հոդվածը տպագրել է 1895 թ., երբ ընդամենը 19 տարեկան էր: Այնուհետև հաջորդում են կարճատև ուսուցչությունը ազգային դպրոցներում և ուսումնառության տարիները արտասահմանում այնպիսի նշանավոր հայագետների մոտ, ինչպիսիք էին Անտուան Մեյեն ու Հայնրիխ Հյուբշմանը: Այստեղ է, որ նա հասու է լինում ժամանակի հնդեվրոպաբանության բարձրագույն նվաճումներին, որոնք նա իր ամբողջ կյանքի ընթացքում զարգացրել է հայագիտության բնագավառում, անկախ այն բանից, թե ինչ դիրք է զբաղեցրել, սկսած հասարակ ուսուցչից մինչև համալսարանի դասախոսի, ամբիոնի վարիչի և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի: Գրքում տեսնում ենք նրա հայացքների և հետազոտական սկզբունքների աստիճանական ձևավորումն ու խորացումը, նրա աշխատություններում ընդգրկված հարցերի լայն շրջանակը և դրանց լուծումը ժամանակի գիտական չափանիշների ամենաբարձր մակարդակով:

Այստեղ մեր նպատակը չէ վերաշարադրել Գ. Ստեփանյանի մենագրության բովանդակությունը, Աճառյանի կենսագրության, ինչպես նաև գիտության մեջ նրա առաջընթացի մանրամասները թողնելով, որ ընթերցողն ինքը հասու լինի այդ ամենին: Նշենք միայն այն հիմնական արժանիքները, որոնք գիրքը հետաքրքրական են դարձնում թե՛ մասնագետ բանասերների, թե՛ ուսանողության և թե՛ ցանկացած ընթերցողի համար, որն անտարբեր չէ մեր ազգային արժեքների նկատմամբ:

Հ. Աճառյանի գիտական վաստակը, որից մեծապես օգտվել են հայ լեզվաբանների ու բանասերների բազում սերունդներ, գնահատվել է շատերի կողմից: Գիտության մշակները հղել են նրա՝ իբրև ամենահեղինակավոր լեզվաբանի աշխատությունները, մեջբերումներ կատարել դրանցից, ավելին հոդվածներ, հետազոտություններ, անգամ նաև ատենախոսություններ նվիրվել նրա գիտական գործունեության այս կամ այն բնագավառին, գուցե և ավելի մանրամասն ու գիտական վերլուծության տեսակետից ավելի խոր, բայց գրախոսվող գրքի առաջին կարևոր արժանիքը Հ. Աճառյանի կերպարի ամբողջացումն է, ի դեմս նրա՝ երիտասարդ սերնդին ներկայացնելը հայ մտավորականի վառ օրինակը, նրա նվիրվածությունը գիտությանը, անսահ-

ման աշխատասիրությունը, սկզբունքայնությունը, բժախնդրությունը փաստական նյութի հավաքման ու վերլուծության մեջ, նրա գիտական հետաքրքրությունների զարմանալի լայն շրջանակը, բազմաթիվ լեզուների գիտական ու գործնական իմացությունը: Միաժամանակ խորապես հուզիչ է նրա նվիրվածությունն ու երախտագիտական ջերմ զգացումը իր ուսուցիչների հանդեպ՝ սկսած Կ. Պոլսի դպրոցներից մինչև Փարիզ և Ստրասբուրգ, որտեղ նա վայելել է ժամանակի մեծ լեզվաբանների հոգատարությունն ու օժանդակությունը: Որպես դրա տրամաբանական շարունակություն՝ նա ևս նույնքան հոգատար և ուշադիր է եղել իր շնորհալի աշակերտների նկատմամբ, որոնցից շատերը հետագայում դարձել են նշանավոր գիտնականներ և նոր աստիճանի բարձրացրել հայ լեզվաբանությունը:

Գրքի մյուս կարևոր արժանիքն այն է, որ Հ. Աճառյանի անցած ուղին ներկայացվում է հայ ազգային-մշակութային կյանքի համայնապատկերի վրա, թե՛ նրա ծննդավայրում՝ Կ. Պոլսում և ընդհանրապես Արևմտյան Հայաստանում և թե՛ հետագայում՝ Արևելյան Հայաստանում և Հայաստանի Խորհրդային հանրապետությունում: Մենք տեսնում ենք, թե ինչպիսի լայն ընդգրկում ուներ դպրոցական գործը Արևմտյան Հայաստանում, ինչպիսի նշանավոր անձինք են դասավանդել շարքային դպրոցներում, ծանոթանում ենք, թեկուզ և հպանցիկ, ազգային մշակույթի, գրականության ու կրթության նշանավոր գործիչներին, որոնք թուրքական բռնապետության և ամենուր թափանցող գրաքննության, մշտական ճնշումների ու պարբերական կոտորածների պայմաններում ուժերի ներածին չափ և ավելին նպաստել են հայ ժողովրդի պահպանության ու լուսավորության գործին: Այդ ժամանակ էր, որ ծաղկում էին արևմտահայ գրականությունը, թատրոնը, լրագրությունը, ազգային-հասարակական, գիտական ու գեղարվեստական բնույթի պարբերականները:

Ճիշտ նույնպիսի նվիրվածություն և խանդավառություն էր տիրում նաև Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների կազմավորման ժամանակաշրջանում հայ մտավորականների՝ գիտության, գրականության, արվեստի նշանավոր գործիչների շրջանում, որոնք, լինելով ժամանակի առաջադեմ մտածողներ ու գործիչներ, արտասահմանի նշանավոր կենտրոններում կրթություն ստացած և գիտության ու արվեստի մեջ արդեն իսկ մեծ ներդրում ունեցող մարդիկ, հավաքվել էին հայրենի հարկի տակ՝ իրենց նպաստը բերելու մշակույթի ու գիտության զարգացմանը՝ չվախենալով դժվարություններից, եղեռնի և պատերազմի արհավիրքներից քայքայված տնտեսությունից, կենցաղային դժվարագույն պայմաններից: Գրքում տեսնում ենք, թե ինչ երազանքով էր Հ. Աճառյանը սպասում Հայաստանի պետական համալսարանի բացմանը, որտեղ նա անսահման նվիրվածությամբ աշխատել է մինչև կյանքի վերջին օրերը, թեև, ցավոք, ժամանակի քաղաքական ու գաղափարախոսական ճնշումների հետևանքով այդ աշխատանքն ունեցել է նաև ընդհատումներ: Դարձյալ ակնհայտ է դառնում, թե ինչպիսի տուկունությամբ է նա տանում այս անգամ արդեն հայրենի երկրում տիրող ճնշումներն ու հալածանքները՝ ինչպես վերադասների, այնպես էլ իր գործընկերների և, ցավալիորեն, նաև իր որոշ աշակերտների կողմից կիրառվող:

Մակայն ի պատիվ Հ. Աճառյանի՝ հարկ է մանրամասնել, որ նա երբեք չի իջել իրեն քննադատողների մակարդակին, ի տարբերություն նրանց՝ չի գրել «մերկացնող ու դատապարտող» հոդվածներ, և որ ամենակարևորն է, գեթ մեկ քայլ անգամ չի նահանջել իր սկզբունքներից, ուստի և հարկ է այստեղ ընդգծել գրքի թե՛ գիտական և թե՛, մանավանդ, բարոյական արժեքը:

Այն, որ մենագրությունն ունի նաև գիտական մեծ արժեք, նույնպես կասկածից վեր է, քանի որ հեղինակը բանասերի ու լեզվաբանի իր կրթությամբ և լայն մտահորիզոնով կարողացել է մասնագիտական բարձր մակարդակով ներկայացնել Հ. Աճառյանի հայացքներն ու ըմբռնումները, նրա հսկայական ներդրումը հայագիտության մեջ: Կարելի է ասել, որ այս գիրքը կարող է նաև գրավիչ ձևով շարադրված յուրօրինակ դասագրքի դեր կատարել հայ բանասեր ուսանողության համար՝ բազմակողմանի գիտելիքներ հաղորդելով նրանց հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության, լեզվական առնչությունների, բարբառագիտության, ստուգաբանության, բառարանագրության, բնագրերի քննության և այլ հարցերի վերաբերյալ՝ միաժամանակ ներայացնելով այդ բնագավառների զարգացման մեջ նրա հիմնարար դերը:

Հարկ է նաև նշել, որ նույնիսկ Հ. Աճառյանի նման մեծության նկատմամբ ունեցած ակնածանքն ու սերը չեն խանգարել հեղինակին շրջանցելու նրա աշխատանքներում տեղ գտած որոշ թերություններ, օրինակ՝ բարբառների նկարագրությանը վերաբերող վաղ աշխատություններում, երբ բավականաչափ սկզբնադրյուններ չունենալու պատճառով նա ստիպված է եղել բավարարվել մեկ-երկու բարբառախոսների վկայություններով: Կենսագիրն անդրադառնում է նաև մամուլում եղած թե՛ դրվատական և թե՛ քննադատական դիտողություններին՝ ի հայտ բերելով գիտական անաչառություն և նրբանկատություն: Նույն նրբանկատությունն է մղել հեղինակին խուսափելու մառականության տիրապետության ժամանակաշրջանում Հ. Աճառյանի քննադատողների և մեղադրողների անունները հիշատակելուց և դատապարտող բնութագրումներից՝ նրանց վարքագիծը թողնելով պատմության դատին, ինչպես վարվել է ինքը՝ Աճառյանը, որը Մառի տեսության մերժումից ու խստագույն քննադատությունից հետո ևս երբեք հանդես չի եկել նրա նախկին ջատագովների և անձամբ նրա դեմ՝ միշտ գնահատելով նրան որպես հայագիտության մեջ նշանակալից ավանդ ունեցող գիտնականի:

Ամփոփելուց առաջ կցանկանայի նշել նաև Գ. Ստեփանյանի գրքի գեղարվեստական արժանիքները՝ աշխույժ շարադրանքը, Հ. Աճառյանի կենսագրական հուզիչ պահերի, կենցաղային մանրամասների նկարագրությունները, մարդկային բնավորության առանձնահատուկ կողմերն ընդգծող հետաքրքրաշարժ կամ զվարճալի պատմությունների առկայությունը, որոնք գիտական լուրջ բնութագրումների հետ մեկտեղ առանձնահատուկ հմայք են հաղորդում մեծ լեզվաբանի կերպարին:

*ԼԻԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

---

*Marie-Anna Chevalier, Les ordres religieux-militaires en Arménie cilicienne. Templiers, hospitaliers, teutoniques et Arméniens à l'époque des Croisades. Préface de Jean Richard, Paris, Editions Geuthner, 2009, 890 p.*

**Մարի-Աննա Շևալիե**, Հոգևորասպետական միաբանությունները Կիլիկյան Հայաստանում: Տաճարականները, հիվանդախնամները, տնտեսականները և հայերը իսլամից արշավանքների դարաշրջանում: Առաջաբանը՝ Ժան Ռիշարի, Փարիզ, Գոտներ, 2009, 890 էջ:

Maître de Conférences en Histoire du Moyen Âge à l'Université Paul Valéry – Montpellier 3, membre du Centre d'Études médiévales de Montpellier, coordonnatrice française depuis 2012, de l'Accord interuniversitaire Montpellier 3 – Erevan, Marie-Anna Chevalier présente là son travail de thèse, revu et augmenté pour la publication, dans la collection « Orient chrétien médiéval », dirigée par les professeurs Isabelle Augé et Gérard Dédéyan.

Le sentiment premier, pour cet ample travail de 835 pages (les pages d'annexes comportant, entre autres, de précieuses et scrupuleuses traductions de colophons de manuscrits arméniens et de chroniques de l'époque des Croisades jusque-là publiées seulement en arménien) est celui de la richesse des résultats obtenus. Il s'agit d'un travail pionnier (si l'on excepte quelques brefs articles publiés sur ce sujet) sur les relations entre les ordres militaires et les Arméniens d'Arménie cilicienne ou de la diaspora, Marie-Anna Chevalier suivant les protagonistes jusqu'à Jérusalem et jusqu'à Rhodes. Malgré le prolongement « diasporique » du sujet et son traitement sur près de trois siècles, elle a su le cadrer par le biais d'un plan judicieux, étudiant d'abord le développement parallèle de l'édification de l'État arméno-cilicien et des relations avec les ordres militaires ; ensuite, dans la période de stabilisation du royaume, l'implantation, l'organisation et l'activité des ordres d'une part, les relations juridiques avec l'État arménien de l'autre ; enfin le progressif retrait des ordres dans la période d'affaiblissement du royaume (des années soixante-dix du XIII<sup>e</sup> siècle aux années soixante-dix du XIV<sup>e</sup> siècle). À travers l'étude des relations arméno-latines sous l'angle des ordres religieux-militaires, l'histoire de l'Arménie cilicienne comme celle de la diaspora se trouvent puissamment éclairées, particulièrement pour le XIV<sup>e</sup> siècle arménien, longtemps mal connu, les spécialistes, jusqu'à la publication du livre de Claude Mutafian, *L'Arménie du Levant* (Paris, Les Belles Lettres, 2012), n'ayant exploité directement que les sources occidentales seules ou les sources arméniennes seules.

L'auteur, à juste titre, exploite complémentaiement les deux catégories de sources et enrichit notre connaissance des sources arméniennes des données de chroniques élaborées et de mémoriaux de copistes (ces colophons de manuscrits ont été publiés en Arménie en plusieurs volumes), lesquels sont de l'histoire immédiate. Ces diverses sources sont judicieusement utilisées.

On prendra toute la mesure de cette belle étude en évoquant la région concernée. La zone appréhendée séparait, à l'époque abbasside, le *dâr al-islâm* du *dâr al-harb* et se trouvait constituée de *thoughûr* ou « marches », et des *awâsim* ou « places protectrices ». La Reconquête byzantine du X<sup>e</sup> siècle substitua à celles-ci des *mikra arménika thémata*, les « petits thèmes arméniens », hérissés de places « garnies » en majorité de stratiotes (soldats) arméniens. C'est dans cette zone, recouverte en partie par l'invasion turque à la fin du XI<sup>e</sup> siècle, qu'émergent les États latins du Nord et les principautés arméno-ciliciennes, dont la défense se trouve encore renforcée par l'implantation des ordres militaires. Quelle continuité, dans le système défensif, peut-on y observer ? Concernant l'implantation des ordres militaires en Arménie cilicienne et les ressources dont ils y disposent, il faut rappeler, à propos de l'éloquent tableau qui en est donné, les ressources cynégétiques de l'Arménie (l'émir syrien, Ousâma ibn Mounkidh, dans *Les Enseignements de la vie*, en quelque sorte, ses mémoires, évoque les fauconniers arméniens qui, chaque année, se rendent dans l'émirat de Shayzar) et ses possibilités de remonte pour les armées chrétiennes (les chevaux de la région – Cilicie et Euphratèse – étant particulièrement vigoureux). Les richesses forestières et l'abondance du minerai de fer sont mises en évidence, le trafic qu'en faisaient les Républiques italiennes avec l'Égypte, malgré les interdits pontificaux, pouvant surprendre d'autant plus.

L'étude très précise de l'occidentalisation des institutions de l'Arménie cilicienne sous l'influence de sa voisine, la principauté franque d'Antioche (dont les *Assises* ne sont conservées que dans leur version arménienne) suscite quelques rappels : comme les royautés occidentales (carolingienne, capétienne), la royauté arménienne, à l'époque des Croisades aussi bien que sous la monarchie bagratide au X<sup>e</sup> siècle, est une royauté sacrée, d'inspiration davidique. La situation de la Grande comme de la « Petite Arménie » fait des Arméniens une « chrétienté de frontière », pour reprendre l'heureuse expression du Professeur Levon Zekiyan, la sacralisation, très marquée, du guerrier se traduisant par la canonisation des combattants morts dans la guerre contre les infidèles (ce que refusa toujours l'Église byzantine). N'est-ce pas là ce qui explique – en même temps que le respect de l'Église arménienne pour les canons de l'Église primitive, interdisant aux clercs de porter des armes – que les ordres militaires n'aient pas fait école en Arménie : il ne semble pas y avoir eu, contrairement à certaines assertions d'ordre religieux-militaire spécifiquement arménien, comme l'écrit, de manière convaincante, Marie-Anna Chevalier ; elle montre, cependant, que, dans son *Encyclique à toutes les classes de la nation* (vers 1173), le catholicos-patriarche Nersès Chenorhali doit réprimander des prélats passionnés de chasse et amateurs de chevaux. L'ordre militaire le plus favorisé est celui des chevaliers teutoniques. Après avoir clairement mis en place tous les éléments nécessaires de la politique pro-germanique de Lewon le Magnifique (1187-1219) et de Hét'oum I<sup>er</sup> (1226-1269), il y avait une véritable architecture diplomatique incluant :

- Couronnement et sacre (dont l'*Ordo* est traduit en arménien) sous la suzeraineté du pape et de l'empereur.

- Les donations faites aux teutoniques vers le nord de l'Amanus et les Pyles amaniques.

- L'envoi d'ambassadeurs (à l'occasion, de souche germanique) auprès des empereurs d'Occident.

– L'accueil ménagé à Frédéric Barberousse par l'archevêque arménien des Balkans (siège à Philippoupolis) en lien avec le catholicos et le prince roubénien de Cilicie.

On pourrait observer encore, avec Alain Demurger, spécialiste internationalement reconnu des ordres religieux-militaires, que l'étude de l'implantation des trois ordres militaires en Cilicie, et des raisons, nuancées et complexes, de celle-ci, est remarquable. L'auteur montre les différences entre les ordres : l'ordre du Temple apparaît comme le fer de lance de la volonté d'expansion et de contrôle de certaines régions de Cilicie par les princes francs d'Antioche, la constitution de la marche templière de l'Amanus (datée, à juste titre, des années du principat de Renaud de Châtillon – 1153-1160, et non de 1137) entrant dans ce schéma. Le Temple s'installe moins en Arménie qu'il ne s'installe contre l'Arménie. Il en est autrement pour l'Hôpital et les Teutoniques : la remarquable convergence chronologique des concessions et donations diverses faites à ces deux ordres autour de 1210 (soit en pleine crise de succession d'Antioche), ainsi que la localisation des implantations, pleinement dans le territoire arménien et à ses frontières septentrionales (voire complètement à l'ouest du territoire avec l'importante châtellenie hospitalière de Séleucie), relèvent d'une autre logique et d'une autre politique. De la part de ces ordres bien sûr, mais aussi de la part des rois arméniens : l'ordre teutonique n'apparaît-il pas comme le garant de la légitimité de la royauté arménienne ?

Marie-Anna Chevalier est, par ailleurs, l'auteur d'une trentaine d'articles portant sur les chrétiens orientaux, les Arméniens dans leurs rapports avec l'Église latine, et, bien sûr, les ordres militaires, ainsi que de deux ouvrages : le recueil de ses articles « ciliciens », traduit en arménien oriental par l'historien Varoujean Poghosyan, sous le titre de *Sur l'histoire des relations de l'Arménie cilicienne avec les ordres religieux-militaires* (Erevan, Éditions de l'Université d'État d'Erevan, 2007, réédition 2013) et *La fin de l'ordre du Temple*, actes d'un colloque dont elle a assuré la direction, aux Éditions Geuthner, Collection « Orient chrétien médiéval » (Paris, 2012).

Pour conclure sur l'œuvre maîtresse de Marie-Anna Chevalier, on peut affirmer que, à partir d'une documentation enrichie de nouvelles sources arméniennes, elle a su écrire, avec autant de science que de brio, une nouvelle page de l'histoire des ordres religieux-militaires, qui est aussi une nouvelle page de l'histoire des Arméniens à l'époque des Croisades.

GÉRARD DÉDÉYAN



---

---

*Е. И. Пивовар, Российско-азербайджанские отношения. Конец XX – начало XXI века, М., Kremlin Multimedia, 2012, 448 с.*

*Ե. Ի. Պիվովար, Ռուս-ադրբեջանական հարաբերությունները: XX դարի վերջ – XXI դարի սկիզբ, Մոսկվա, Kremlin Multimedia, 2012, 448 էջ:*

Одним из важнейших приоритетов внешней политики Российской Федерации является развитие многосторонних отношений с государствами, возникшими на постсоветском пространстве. В этой связи большое значение для РФ приобретает развитие добрососедских отношений с южнокавказскими республиками, что вытекает в равной степени из интересов этих государств и национальной безопасности России, поскольку перспективы ее государственности в определенной степени переплетены с политическими процессами, происходящими на Южном Кавказе. Тем не менее, в специальной литературе мы не находим полноценных исследований о южнокавказских государствах. Работы о Грузии и Армении немногочисленны, а те, которые посвящены Азербайджану, касаются главным образом энергетических вопросов и проблем статуса Каспийского моря. В этом контексте выделяется рецензируемая нами монография ректора Российского государственного гуманитарного университета, члена-корреспондента РАН, доктора исторических наук, профессора Е. И. Пивовара.

Автор подвергает научной интерпретации вопросы установления межгосударственных, в том числе российско-армянских, отношений в рамках СНГ, ООН, ОБСЕ и других интеграционных структур, сотрудничества в связи с определением статуса Каспийского моря, а также проблемы, связанные со сферой бизнеса и социо-культурных взаимоотношений. Во второй части книги опубликованы многочисленные соглашения и договоры, заключенные между РФ и Азербайджаном за 1992-2011 гг. (с. 183-402).

Южнокавказский регион представляет для России особый интерес, поскольку здесь находятся не только такие субъекты международного права как Азербайджан, Армения и Грузия, но и непризнанные республики Абхазии, Нагорного Карабаха и Южной Осетии. После распада СССР сформировались два новых огромных геополитических макрорегиона – «Большая Европа» и «Большой Ближний Восток». Граница между ними пролегает по региону Южного Кавказа, который рассматривается исследователями как их периферия.

Неоспоримо, что в последние два столетия Россия преследует свои стратегические интересы на Южном Кавказе, который по своей значимости, наряду с Украиной, остается одним из важнейших для РФ регионов. Южный Кавказ граничит с самым «неспокойным» регионом РФ – Северным Кавказом. Таким образом, Россия является не только европейским и азиатским, но и кавказским государством, что и обуславливает то существенное значение, которое кавказский регион приобретает для нее.

В развитии многосторонних отношений Российской Федерации с государствами, возникшими на постсоветском пространстве, важное место занимают

также российско-азербайджанские отношения, анализ которых представлен в монографии Е. И. Пивовара. 1991-1993 годы были, по мнению российских и азербайджанских исследователей, самыми напряженными в отношениях между Россией и Азербайджаном. Внешнеполитическая и культурная ориентации новых азербайджанских властей были направлены в сторону Турции и Запада. Бывший президент Азербайджана А. Г. Эльчибей неоднократно заявлял, что членство в СНГ не является для Азербайджана перспективным и предъявил Москве ультиматум о выводе оттуда российских войск. Автор, к сожалению, рассматривает этот период довольно поверхностно.

Новый виток напряжения в российско-азербайджанских отношениях обозначился весной 1997 г., когда А. Г. Тулеев опубликовал данные о поставке в 1994-1996 гг. Российской Федерацией оружия Армении. В создавшихся неблагоприятных для Азербайджана условиях состоялся визит президента республики Г. А. Алиева в Москву, где 3 июля 1997 г. между двумя странами был подписан «Договор о дружбе, сотрудничестве и взаимной безопасности между Российской Федерацией и Азербайджанской Республикой». Подписанием этого договора Россия стремилась продемонстрировать Баку, что российско-армянские отношения не являются препятствием для углубления российско-азербайджанского сотрудничества и ведения с Азербайджаном более сбалансированной политики.

Автор довольно подробно останавливается на отдельных статьях упомянутого договора (с. 14-16), закрепившего, как он отмечает, «все те положительные моменты в отношениях между двумя странами, которые наметились в результате как эффективных действий руководства Азербайджана в лице Г. Алиева с одной стороны, так и усилий российской дипломатии середины 1990-х гг., с другой» (с. 14).

Тем не менее, было бы желательно, чтобы Е. И. Пивовар осветил также вопрос о том, почему в Баку отвергли первоначальный проект договора, в котором отраженная в заглавии идея о «взаимной помощи» по требованию азербайджанских властей была переформулирована на «взаимную безопасность».

В чем же заключается суть вопроса?

29 августа того же года Б. Н. Ельцин и Л. А. Тер-Петросян подписали «Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения». Сразу же после его подписания руководство Азербайджана охарактеризовало этот договор документом, противоречащим подписанному 3 июля 1997 г. российско-азербайджанскому договору. В 1997-1999 гг. Азербайджан направил российским властям множество нот протеста, которые, в первую очередь, касались российско-армянского военно-технического сотрудничества. В этот период Азербайджан углублял сотрудничество с НАТО, что также не способствовало развитию его отношений с Москвой. В ноябре 1997 г. в Баку был подписан протокол, в котором официально декларировалось создание военно-политического объединения ГУАМ, в состав которого вошли Грузия, Украина, Азербайджан и Молдова. Такое объединение двух кавказских и двух восточноевропейских государств без участия России появилось впервые. В этом документе отмечалось, что Азербайджан обретает стабильных потребителей нефти и надежный альтернативный маршрут для ее экспорта. В дальнейшем, в октябре 1998 г., вхождение Азербайджана вместе с Грузией,

Украиной и Молдовой в ГУАМ, было расценено Москвой как недружественный шаг.

Азербайджан активно обсуждает со структурами НАТО возможность получения от них военно-технической и финансовой помощи под предлогом охраны существующих трубопроводов. Началась поэтапная адаптация азербайджанских вооруженных сил к установленным в этом блоке стандартам. В рамках программы НАТО «Региональная аэрокосмическая инициатива» Азербайджан приступил к созданию региональной системы контроля воздушного пространства, реализация которой предоставило бы возможность командованию НАТО контролировать воздушное пространство Кавказского региона. На ее финансирование была выделена сумма в 5 миллионов долларов.

Период с 1999 г. по 2000 г. характеризуется уточнением оптимального формата сотрудничества между Россией и Азербайджаном. Именно тогда Азербайджан попытался вести многовекторную и прагматичную внешнюю политику.

Установив стратегическое сотрудничество с Западом в области энергетики, Азербайджан стремился повысить свою значимость во взаимоотношениях с ЕС и США. Нефтепровод Баку-Тбилиси-Джейхан и газопровод Баку-Тбилиси-Эрзрум ослабляют значение РФ как глобального экспортера энергоносителей. Энергетические проекты РФ не всегда совпадают с интересами Азербайджана. Предоставляя свою территорию для использования в качестве транзитного коридора для доставки энергетических ресурсов Центральной Азии на мировые рынки, Баку продолжает процесс интеграции в западные структуры и способствует развитию транспортного коридора. Правда, в отличие от азиатских стран, западные державы меньше критикуют Баку, однако это не означает, что этот вопрос снят с повестки дня.

И здесь для сдерживания ЕС и США важна роль РФ. В этом контексте нельзя недооценивать также роль иранского фактора. «Потепление» в отношениях между Россией и Азербайджаном каждый раз намечалось тогда, когда Запад и Иран усиливали давление на Баку. Г. А. Алиев, рассматривая Турцию как основного экономического партнера, в то же время полагал, что не следует терять сформировавшиеся в течение веков политические и экономические связи со странами СНГ, или менять одни приоритеты на другие. Наоборот, он стремился их уравнивать. В качестве доказательства вспомним его высказывание о турецко-азербайджанских отношениях: «Одна нация – два государства». Если при С. Демиреле турецко-азербайджанские отношения носили довольно теплый характер, то во время правления партии «Справедливость и развитие» во главе с президентом А. Гюлем и премьер-министром Р. Т. Эрдоганом они стали более прохладными. В этот период Баку решил снова улучшить отношения с Москвой. РФ всегда была более приемлемым партнером для Азербайджана. Отметим также, что Азербайджан поддерживал политику США в различных вопросах – от Косово до Ирана и от Афганистана до Ирака. Тем самым Азербайджан проявлял заинтересованность в сохранении правильного соотношения сдерживаний и противовесов.

В эти годы Россия придавала больше значения роли Азербайджана с точки зрения своей национальной безопасности, хорошо представляя, что динамика российско-азербайджанских отношений в значительной степени зависит от

позиции Москвы в карабахском конфликте. Именно поэтому РФ стремилась занять нейтральную позицию и не защищать какую либо из сторон.

Политическая элита Азербайджана хорошо сознает, что Россия связана с регионом множеством исторических, экономических и культурных связей. Однако в новых условиях, когда южнокавказский регион превратился в арену противоборства, Москве не удалось разработать в этом направлении целостную и перспективную стратегию. В отличие от начала XIX века, на современном этапе Россия ведет политику не захвата этих территорий, а сохранения и усиления там своего влияния. Разница в этих подходах существенна и предполагает разработку новой политики. В конце 1990-х гг. руководители обеих стран пытались найти грани для сотрудничества, что не всегда удавалось, так как во многих вопросах их интересы не совпадали, а особый формат сотрудничества был уточнен позднее, при В. В. Путине. В 1990-х годах был упущен благоприятный момент для углубления политического, военно-стратегического и экономического сотрудничества со странами «ближнего зарубежья», так что В. В. Путин был вынужден действовать в менее благоприятных геополитических условиях. Именно поэтому новые российские власти решили переставить акцент в отношениях со странами СНГ с многостороннего сотрудничества на эффективные и рациональные двусторонние взаимоотношения. Большое внимание было уделено, в особенности, экономическому сотрудничеству. Была создана специальная должность представителя России по урегулированию каспийских проблем, что позволило РФ вести в Каспийском регионе единую политику, координировать действия различных федеральных органов, ведомств и субъектов, которые ранее вели разрозненную и порой противоречивую политику. Во время визита В. В. Путина в Азербайджан 9-10 января 2001 г. президенты РФ и Азербайджана подписали «Бакинскую декларацию», а также «Совместное заявление Российской Федерации и Азербайджанской Республики о принципах сотрудничества на Каспийском море», согласно которым отношения между двумя странами должны были вступить в новую фазу стратегического сотрудничества.

Монография Е. И. Пивовара выиграла бы, если бы автор посвятил отдельную главу вкладу России в дело разрешения карабахского конфликта, поскольку азербайджанская сторона полагает, что ключ к решению данной проблемы находится в руках Москвы.

Надо отметить, что по уровню милитаризации Азербайджан является лидером в южнокавказском регионе. Сегодня можно констатировать, что Азербайджан избрал курс на интеграцию и сотрудничество с Турцией, НАТО, США и ЕС, в результате чего Россия лишилась там аренды Габалинской радиолокационной станции.

В своей книге Е. И. Пивовар не касается позиции азербайджанской политической элиты, не раз заявлявшей о намерении предоставить свою территорию для военной базы НАТО в противовес расположенной в Армении российской базы. В мае 2007 г. была принята «Концепция национальной безопасности Азербайджанской республики», уделившей особое место двусторонним взаимоотношениям с Турцией. Российско-азербайджанские отношения характеризуются в ней в общих чертах, при этом отмечается важность многовекового сотрудничества и мирного сосуществования. В документе особо отмечается углубление отношений с США и ЕС. Внешнеполитические приоритеты Азербайджана,

сформулированные президентом И. Г. Алиевым, разделены на несколько групп: 1) интеграция в европейское сообщество и его институты, участие в системе европейской безопасности; 2) становление наиболее развитого регионального государства; 3) сотрудничество со всеми странами, заинтересованными в безопасности и стабильности на Южном Кавказе.

Сбалансированная политика Азербайджана подтверждает его ориентацию на европейскую интеграцию. Она остается стратегическим союзником США в различных областях, а в отношениях с Россией пытается застраховаться от отдельных угроз, избегая ненужной конфронтации, решительно поддержав проект строительства газопровода «Набукко». Однако, у руководства Азербайджана нет выбора, кроме как иметь дело с Москвой, сохраняя в своих взаимоотношениях с РФ максимально возможную самостоятельность и двустороннее сотрудничество.

Хотя председатель общества дружбы России и Азербайджана Е. И. Пивовар в своей монографии постарался по возможности обойти негативные аспекты двустороннего взаимодействия (роль российской стороны в урегулировании Нагорно-Карабахского конфликта и ее место в энергетическом секторе Азербайджана, действия РФ как сопредседателя Минской группы ОБСЕ), тем не менее, содержащийся в ней богатый фактический материал, несомненно, полезен для всех тех, кто интересуется политическими процессами, происходящими в южно-кавказском регионе.

*МАРУТ ВАРДАЗАРЯН*

---

---

*Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Թ. հատոր, խմբագիր Երուանդ Փամպուքեան, Պէյրուօ, Համազգայինի Վահէ Մէթեան հրատարակչութիւն, 2012, 560 էջ:*

Հայոց պատմության տարբեր էջերին անդրադարձած ցանկացած աղբյուրագիտական բնույթի համահավաք ժողովածու ոչ միայն պատմաբաններին, այլև ընթերցասեր հանրության շրջանում միշտ հետաքրքրություն է առաջացրել: Նման աշխատանքները շատերին պատմագիտական մտքի յուրօրինակ ստուգաբանության հնարավորություն են ընձեռում: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» (այսուհետև՝ «Նիւթեր») շարքը: Բովանդակային առումով այն հարուստ փաստաթղթերի ամբողջություն է, որը զետեղվել է սովորաձևավալ հատորներում՝ հետզհետե ի հայտ բերելով հայ ժողովրդի նոր դարի պատմության տարբեր հիմնախնդիրներին առնչվող բազմաթիվ փաստեր: Հույս ենք տածում, որ այս շարքում այսուհետև ևս կշարունակվեն լույս տեսնել նորանոր փաստաթղթեր ամփոփող հատորներ:

Սույն գրախոսության նախապատրաստական աշխատանքները կատարելիս հետաքրքիր օրինաչափություն նկատեցինք խնդրո առարկա շարքում լույս ընծայված հատորների հրատարակության միջանկյալ ժամանակահատվածների հետ կապված: Փորձենք դրանք դիտարկել՝ ի մի բերելով Հայ հեղափոխական դաշնակցության պատմությանն առնչվող աղբյուրագիտական հրատարակությունները՝ ըստ տպագրության տարեթվերի: Նպատակահարմար ենք գտնում դիտարկումը սկսել ոչ թե Հ. Տասնապետյանի խմբագրությամբ լույս տեսած Ա հատորից, այլ Դաշնակցության պատմության նյութերն ընդգրկող՝ աղբյուրագիտության սկզբունքներին փոքրիշատե համարժեք առաջին հրատարակություններից, այն է՝ Ս. Վրացյանի խմբագրությամբ 1934 թ. և 1938 թ. լույս տեսած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելուած «Հայրենիք» ամսագրի» առաջին և երկրորդ հատորներից<sup>1</sup>: Այնուհետև անցում կատարենք 1970-1980-ական թթ. Հ. Տասնապետյանի խմբագրությամբ լույս ընծայված «Նիւթեր»-ի Ա-ից Դ<sup>2</sup> և Ե. Փամբուկյանի խմբագրությամբ 2009-2012 թթ. հրատարակված Ե-ից Թ հատորներին<sup>3</sup>: Արդյուն-

---

<sup>1</sup> Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելուած «Հայրենիք» ամսագրի, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հ. 1, 1934, հ. 2, 1938:

<sup>2</sup> Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հրաչ Տասնապետեան, Ա հատոր, Պէյրուօ, 1972, Բ. հատոր, Պէյրուօ, 1973, Գ. հատոր, Պէյրուօ, 1976, Դ. հատոր, Պէյրուօ, 1982:

<sup>3</sup> Տե՛ս Նիւթեր, Ե. հատոր, խմբ. Երուանդ Փամպուքեան, Պէյրուօ, 2007, Զ. հատոր, Պէյրուօ, 2010, Է. հատոր, Պէյրուօ, 2010, Ը. հատոր, Պէյրուօ, 2011, Թ. հատոր, Պէյրուօ:

քում տեսնում ենք երեքից երկու տասնամյակը մեկ Դաշնակցության արխիվային նյութերի հրատարակման բուռն գործընթաց: Հետաքրքիր օրինաչափություն, որը փաստում է տարբեր ժամանակահատվածներում պատմաքաղաքական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Դաշնակցության՝ նեղ առումով սեփական պատմության, իսկ լայն առումով հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջաններին վերաբերող արխիվային նյութերի նորանոր չափաբաժիններ վեր հանելու պատրաստակամությունը: Թեկուզ ոչ լիարժեք, այդուհանդերձ ներկայանալի բովանդակությամբ աղբյուրագիտական այս հրատարակությունների շնորհիվ ուսումնասիրողների համար նոր գիտական պրպտումների հորիզոններ են բացվում:

Երեք գլխից և տասնյոթ բաժնից բաղկացած գրախոսվող ժողովածուն ընդգրկում է 1897-1914 թթ. առնչվող 295 տարաբնույթ փաստաթղթեր՝ նամակներ, զեկույցներ, հաղորդագրություններ, շրջաբերականներ, դիմումներ, տեղեկագրեր, լիազորագրեր, հայտարարություններ և այլն, որոնք ներկայացնում են երեք հիմնական թեմատիկ ուղղություններ: Առաջին երկու բաժինները, այն է՝ «Պարսկաստան սահմանադրական շարժման տարիներուն (1909-1912)» (էջ 9-171) և «Կովկաս եւ Հ. Յ. Դաշնակցութեան դատը» (էջ 172-262), հիմնականում, ինչպես նշում է խմբագիրը, համալրելով Ը հատորը (էջ 3)՝ արտացոլում են հիշյալ խորագրերի ներքո տեղի ունեցած գործընթացներին Դաշնակցության մասնակցության և դերակատարության առանձին հարցեր: Երրորդ «Եւրոպայի հայ ուսանողական միութիւն» բաժինը (էջ 263-535), նվիրված է եվրոպական և ռուսական իրականության մեջ 1890-ական թթ. մինչև 1914 թ. ոչ միայն դաշնակցական, այլև առհասարակ տարբեր կուսակցությունների և քաղաքական հոսանքների հարած հայ ուսանողության՝ հայ ազատագրական պայքարի կայացման գործում դիրքորոշումներին և ձեռնարկած քայլերին:

Նախ հարկ ենք համարում շեշտել այն ակադեմիական բժախնդրությունը, որը լավագույնս կիրառել է Երվանդ Փամբուկյանը: Հատոր առ հատոր ավելի կատարելագործելով փաստաթղթերի դասակարգման, անձնանունների և տեղանունների հստակեցման և ծանոթագրություններով ներկայացման եղանակները՝ խմբագիրը ոչ միայն գրախոսվող ժողովածուի առաջաբանում, այլև յուրաքանչյուր բաժնին կից բովանդակալից և համառոտակի նկարագրել է փաստաթղթերի յուրաքանչյուր խումբ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ժողովածուում ձեռագրից տպագիր վերածված տարբերակների կողքին ներկայացված են նաև բնօրինակների արտատպումները, որոնք հատորին հաղորդում են մասնագիտական վստահելիության որակներ:

Հաշվի առնելով գրախոսվող ժողովածուի խմբագրի կատարած մանրամասն վերլուծությունները (էջ 3-8), ցուցաբերելով ոչ չափորոշիչային մոտեցում, ինչպես նաև նկատի ունենալով դրանում գետեղված փաստաթղթերի ժամանակագրական եզրերը՝ փորձենք այն քննարկել ավելի մասնավոր խնդրի համատեքստում: Ունենալով մասնագիտական հետաքրքրությունների նեղ շրջանակ, որն ընդգրկում է XX դարի առաջին երկու տասնամյակում Անդրկովկասում իրենց գործունեությունը ծավալած կուսակցությունների՝

մասնավորապես ՀՀԴ և ՌՄԴԲ(Բ)Կ, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատիայի ռուսական և հայկական քաղաքական դաշտերը ներկայացնող հոսանքների ու կազմակերպությունների միջև տեղ գտած փոխհարաբերությունների պատմության հարցերը, տողերիս հեղինակին ավելի հետաքրքրում էր Դաշնակցության արխիվների այս հավաքական տպագիր ընտրանիում վերոնշյալ թեմային վերաբերող նյութերի որոնումը: Հ ուրախություն մեզ գտնվեցին այդ հարցերին թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի առնչվող փաստաթղթեր: Մինչ սույն հատորի լույսընծայումը թե՛ ՀՀԴ և թե՛ ՌՄԴԲ(Բ)Կ ու թե՛ դրանց անդամագրված գործիչների առնչությունների մակարդակով բոլոր հիմնական փաստաթղթերի ժամանակագրությունը սկիզբ էր առնում 1916-1917 թթ.: Ավելին, հուշագրություններից գատ առկա չէին ավելի ուշ շրջանում հայ բոլշևիկների հետ դաշնակցականների հարաբերությունները փաստող սկզբնաղբյուրներ: Դաշնակցության հիմնադրման տասնամյակի առիթով հատորում զետեղված անվանի բոլշևիկ Ստեփան Շահումյանի՝ 1901 թ. «Դրոշակ» ամսագրի և «Pro Armenia» երկշաբաթերթի խմբագրություններին հղած շնորհավորական նամակները այս պահին հավակնում են դառնալ վերոհիշյալ թեմայի վերաբերյալ մեզ հայտնի ամենահին փաստաթղթերը (էջ 300-301): 1917-1918 թթ. ընթացքում ՀՀԴ և ՌՄԴԲ(Բ)Կ հարաբերությունների հիմնական դերակատարներից մեկը՝ Շահումյանը, այդ նամակներում հանդես գալով «Ռիգայի հայ ուսանողության» և «Ռուսահայ ուսանողների» միությունների անունից, չափազանց ջերմ բարեմաղթանքներ էր շնայլում Դաշնակցության հասցեին: Այս նամակները իբրև երևույթ շատ կարևոր են երկու կուսակցությունների հարաբերությունների սաղմնավորման նախապատմության վերաբերյալ պատկերացում կազմելու առումով:

Մյուս կողմից գրախոսվող հատորում Դաշնակցության և սոցիալ-դեմոկրատների հայազգի ներկայացուցիչների հարաբերություններում նկատելի են նաև նրանց առաջին անհամաձայնությունների մասին վկայություններ: Լիպարիտ Նազարյանը, ով 1917-1918 թթ. Ս. Պետերբուրգում և Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ բանակցող հայտնի դաշնակցական գործիչներից էր<sup>1</sup>, 1905 թ. Խ. Մալումյան-Ակունիին գրած նամակում հաղորդում է Եվրոպայի հայ ուսանողական միության շարքերում հայազգի սոցիալ-դեմոկրատների հետ ունեցած անհամաձայնությունների մասին (էջ 339-340): Սոցիալ-դեմոկրատների շարքում նա հիշատակում է նաև Ս. Շահումյանին, որն ընտրվել էր այդ միության կազմում իբրև սոցիալ-դեմոկրատների պատգամավոր: Եվրոպայի հայ ուսանողական միության շարքերում հայ սոցիալ-դեմոկրատների և դաշնակցականների միջև սկիզբ առած սուր մրցակցությունը, գերիշխող դիրք զբաղեցնելու նկրտումները հանգեցնում են, ի վերջո, միության լուծարմանը: Այս օրինաչափությունը գերիշխել է երկու քաղաքական կազմա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Նազարեանց Լ.**, Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Խորհրդային իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր, «Դրոշակ», թիվ 8-9, օգոստոս-սեպտեմբեր, 1928:



կերպությունների հետագա հարաբերություններում անգամ՝ փոխզիջումների տեղ գրեթե չթողնելով:

ՀՀԴ և ՌՄԴԲ(բ)Կ հարաբերությունների համատեքստում կուսակցական առանձին գործիչների՝ սույն հատորում ներկայացված լինելու առնչությամբ առանձնացնենք Սարգիս Արարատյանին, որը հանդես էր գալիս Արարատսկի մականվամբ: 1917 թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 8-ը Թիֆլիսում կայացած Դաշնակցության հատուկ ժողովը վերջինիս լիազորել էր բանակցություններ սկսել այդտեղ ժամանած Ս. Շահումյանի հետ<sup>1</sup>: Հատորում հրատարակված՝ 1908 թ. ապրիլին տեղի ունեցած «Եվրոպայի Հայ Յ. Դաշ. Ուսանողների Համագումարի Ատենագրութիւնը» գլխում ներկայացված նիստերի սղագրության մեջ ռուսական սոցիալ-հեղափոխականների հետ հարաբերություններ ձևավորելու (էջ 392, 396), 1911 թ. նոյեմբերից-1912 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում «Ջանք» խմբի գործունեության, ինչպես նաև «Հայկական քաղաքականութիւնը պայմանաւորւած երեք երկրների տուեալներով» զեկուցման (էջ 461) շրջանակներում պարզ է դառնում Արարատյանի՝ որպես դաշնակցական ռուսական դաշտի, մասնավորապես ռուսական սոցիալիզմի «ամենակարկառուն» ներկայացուցիչների՝ բոլշևիկների հետ հետագայում Դաշնակցության կողմից իբրև բանակցող լիազորվելու հիմնական պատճառը:

Այն, ըստ էության, պայմանավորված էր 1917 թ. Թիֆլիսում գտնվող դաշնակցական լիազորված պատգամավորների թվում՝ ռուս սոցիալիստների դաշտին վերջինիս համեմատաբար լավ ծանոթ լինելու հանգամանքով:

Նպատակահարմար ենք գտնում հատորում զետեղված՝ Մարտիրոս Հարությունյանի «Դրոշակ»-ին հղած նամակից և դրան կից ծանոթագրությունից երկու կարևոր փաստ արձանագրել (էջ 188): Առաջինը ուղղակիորեն հիմնավորում է Մ. Հարությունյանի 1917 թ. Թիֆլիսում տեղի ունեցած՝ վերը նշված Դաշնակցության հատուկ ժողովի նախագահ ընտրվելու փաստը և բացահայտում նրա թեկնածությունը այդ պաշտոնում հաստատելու պատճառները: Պարզվում է, որ նրան՝ իբրև դաշնակցական գործչի, առաջին անգամ չէ, որ նման բան էր վստահվում. դեռևս 1911 թ. հունիսին Դաշնակցության Արևելահայ Բյուրոյի պահանջով Թիֆլիսում հրավիրված տարածաշրջանի կուսակցական ժողովի կողմից Մ. Հարությունյանը լիազորվել էր ներկայացնելու տեղի կուսակիցների հավաքական տեսակետը 1911 թ. օգոստոսի 1-15-ը կայանալիք Դաշնակցության ընդհանուր ժողովին՝ Կովկասից մասնակիցներ ունենալու հարցի վերաբերյալ: Բացի դրանից, ակնհայտ է դառնում, որ այլ փաստաթղթերում Մ. Հարությունյանը հանդես է եկել Ասլան կամ Ասլան Շիրակունի ծածկանուններով: Վստահ ենք, որ այս փաստը հետագայում թույլ կտա նոր նյութեր քաղել մեր կողմից դիտարկվող թեմայի շուրջ:

Եվրոպայի հայ ուսանողական միության շրջանակում դաշնակցական-

---

<sup>1</sup> Տե՛ս Իշխանյան Ե., Լեոնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 52-53:

ների և սոցիալ-դեմոկրատների՝ հիմնականում ապագա բոլշևիկների միջև կուսակցական հողի վրա խարսխված հարաբերություններից զատ իրենց հետաքրքրությամբ աչքի են ընկնում նաև Եվրոպայի ՀՀԴ ուսանողների միության 1911-1912 թթ. առանձին քննարկումների ժամանակ ռուս սոցիալ-դեմոկրատների հետ հարաբերությունների և Ռուսաստանի արտաքին քաղաքականության լույսի ներքո Հայկական հարցի հնարավոր զարգացումների վերաբերյալ տեղեկությունները: Այսպես, Եվրոպայի ՀՀԴ ուսանողների միության 1911-1912 թթ. տեղեկագրի «Դասախօսութիւններ» բաժնի նյութերը վկայում են, որ տարաբնույթ հարցերի հետ մեկտեղ արդեն քննարկվում էր նաև կոմունիզմի և այդ գաղափարախոսությունը կրող՝ այդ թվում ռուսական ուժերի հետ Դաշնակցության հարաբերությունների հարցը, ինչպես օրինակ՝ Փարիզի և Նանսիի խմբակներում (էջ 450, 469): Ավելին, ներկայացվում է, թե ինչպես էին դաշնակցական ուսանողները ժխտում հանդես գալիս իբրև հաշտարար՝ Ռուսաստանի համայնավար ուսանողների ներքին անհամաձայնությունների կարգավորման հարցում, կամ թե ինչպես են դաշնակցական ուսանողները ժխտում «պաշտօնապէս» մասնակցել 1911 թ. մայիսի 1-ի «տօնին եւ ապա մի ցոյցի, կազմուած ընդդէմ ցարական կառավարութեան, Բ. պետական Դումայի սոց.-դեմ. պատգամաւորների գործի առթիւ» (էջ 450):

Առհասարակ առաջին հայացքից կցկտուր թվացող այս փաստերը վկայում են մեկ կարևոր իրողության մասին: Դրանց շնորհիվ շատ ավելի են պարզաբանվում 1917-1918 թթ. ՀՀԴ և ՌՄԴԲ(բ)Կ միջև հարաբերությունների խարսխման և համագործակցության փորձի գործում հիշատակված գործիչների մասնակցության, ինչպես նաև կուսակցությունների գաղափարական մերձեցման և ընդհանուր ճակատով տարաբնույթ հարցերում հանդես գալու պատճառները, ինչն իր հերթին կարևոր շեշտադրումներ է ապահովում հարցի հետագա խորքային հետազոտությունների համար:

Ըստ էության, այս մասնավոր դիտարկումների փորձը նպաստում է սույն ժողովածուի խմբագրի իրականացրած ահռելի աշխատանքի անկողմնակալ գնահատմանը շահեկան դիրքերից: Ավելին, մեկ առանձին վերցված թեմայի շուրջ մեր կողմից քննարկված փաստաթղթերը ուղղակիորեն նախանշում են բազմաթիվ այլ հիմնահարցերի մանրակրկիտ հետազոտության հնարավորությունը:

Եզրափակելուց առաջ հարկ էնք համարում մեկ անգամ ևս ընդգծել «Նիւթեր»-ի Թ հատորի աղբյուրագիտական մեծ նշանակությունը և երախտագիտության խոսք ուղղել խմբագիր Երվանդ Փամբուքյանին, քանի որ նրա հրատարակած փաստաթղթերի այս ժողովածուն, անտարակույս, մեծապես կօժանդակի դրանում շոշափված հիմնահարցերի պատմությունը հետազոտող ուսումնասիրողների աշխատանքների իրականացմանը:

*ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ*

---

---

*Zaven Messerlian, Armenian Participation in the Lebanese Legislative Elections, 1934-2009, Beirut, Haigazian University Press, 2014, 540 p.*

*Զաւէն Մսրրլեան, Հայոց Մասնակցութիւնը Լիբանանի Խորհրդարանական Ընտրութիւններուն, 1934-2009, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի Հրատարակատուն, 2014, 540 էջ:*

Հատորին հեղինակը՝ Դոկտ. Զաւէն Մսրրլեան հայ նորագոյն շրջանի պատմութեան լիբանանահայ հանրաժանօթ պատմաբան է: Անոր ուսումնասիրութիւնները կը վերաբերին մանաւանդ Հայ Դատի հոլովոյթին, Հայկական Ցեղասպանութեան, Բ. Համաշխարհային Պատերազմին հայութեան մասնակցութեան, Հայ Դատին առնչուող միջազգային դաշնագրերու, Հայ Դատի առնչութեամբ Մ. Նահանգներու արտաքին քաղաքականութեան, ինչպէս նաեւ իր հօր՝ Մկրտիչ Մսրրլեանի ազգային քաղաքական գործունէութեան եւ Ղարաբաղի տագնապին<sup>1</sup>:

Դոկտ. Մսրրլեան 1963ին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան Բաժանմունքէն ստացած է Մագիստրոս Արուեստից վկայականը՝ ներկայացնելով «Հայկական ներկայացուցչութիւնը լիբանանեան խորհրդարանէն ներս» նիւթը, որուն մէջ ի միջի այլոց 1934-1960ի խորհրդարանական ընտրութիւններուն հայկական մասնակցութեան Գլուխը կար: Թեզը գրուած էր թելադրանքովը պատմութեան դասախօս, թեզին խորհրդատու, ակաւանոր պատմաբան Դոկտ. Նիքոլա Զիատի:

Աւելի ետք, 2000ի սկիզբին, ան վերամշակեց իր թեզը եւ շարունակելով ընտրութիւններու պատուովը գայն հասցուց մինչեւ մեր օրերը՝ 2009ի վերջնագոյն ընտրութիւնները: Այս բոլորը ան մաս առ մաս հրատարակեց *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* 2000-2011 տարիներու ԻԱ.-ԼԱ. հատորներուն մէջ:

Գրախօսուող գիրքը մէկտեղումն է այդ ուսումնասիրութիւններուն, որոնք գիրքի ձեւաչափով վերամշակուած կը հրատարակուին այս հատորով:

---

<sup>1</sup> **Մսրրլեան Զ.**, *Հայկական Հարցի Մասին (Կարս-Արտահանի «Հարցը» Թուրք-Սիովետ Յարաբերութեանց Լոյսին Տակ (1939-1977), «Ներքին» Հոդերու Հարցը, Թուրքիոյ Քիւրտերը Եւ Հայկական Հարցը*, Պէյրութ, 1978, **նոյնի՝** *Երեք Դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Սոսկուայի Եւ Կարսի Դաշնագրերը, 1920-1921 թթ.)*, Պէյրութ, 1979, **նոյնի՝** *Մկրտիչ Մսրրլեանի Ազագ-Քաղաքական Գործունէութիւնը*, Պէյրութ, 1981, **նոյնի՝** *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians*, Antelias, 2001, **նոյնի՝** *Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արտաքին Քաղաքականութիւնը Եւ Հայկական Հարցը (1900-2009)*, Պէյրութ, 2010, **նոյնի՝** *Հայոց Ցեղասպանութենէն Առաջ Եւ Ետք*, Անթիլիաս, 2011:

Լիբանանը Մփիւռքի տարածքին միակ պետութիւնն է ուր հայութիւնը իբրեւ հայ քաղաքացի, ընտրելու եւ ընտրուելու սահմանադրական իրաւունքը ունի: Իրաւունքի այս գործընթացը սկիզբ կ'առնէ 1923ին՝ Լոզանի Պայմանագրով, որով Թուրքիոյ Հանրապետութենէն դուրս, նախկին օսմանեան տարածքներու մէջ ապրող օսմանահպատակներուն կը շնորհուէր իրենց նորահաստատ պետութեանց քաղաքացիութիւնը: Եւ քանի որ Լիբանանի պետական կառոյցը հիմնուած էր համայնքային դրութեան վրայ, ապա Լիբանան հաստատուած նախկին օսմանահպատակ հայերը անհատաբար ձեռք կը բերէին լիբանանեան հպատակութիւն, իսկ հաւաքաբար՝ համայնքային պետական իրաւունքներ: Այսու լիբանահայութիւնը կ'ունենար իրաւունք՝ քուէարկելու եւ ընտրելու՝ հպատակութեան ստացումին յաջորդող առաջին տասնամեակին, իսկ այնուհետեւ՝ նաեւ ընտրուելու: Եւ իրաւամբ, 1934ին լիբանահայութիւնը կ'ունենար երեսփոխանական մէկ աթոռի իրաւունք: Այդ իրաւունքը պիտի փոխուէր ամէն անգամ որ խորհրդարանական աթոռաթիւերը փոխուէին: Այսպէս, 1943ին՝ երկու առաքելական ներկայացուցիչ Պէյրութի ընտրատարածքէն, իսկ 1951ին՝ երկու առաքելական եւ մէկ կաթողիկէ ներկայացուցիչ Պէյրութի եւ մէկ առաքելական ներկայացուցիչ Լեռնալիբանանի Մէթնի ընտրատարածքէն: 1953ին Լիբանանի առաքելական ներկայացուցիչներուն թիւը կը նուազի երկուքի (երկուքն ալ Պէյրութի մէջ), իսկ 1957ի ընտրութեան կը վերականգնի 1951ի դրոյթը: 1960էն մինչեւ 1989 լիբանահայութիւնը կ'ունենայ երեք առաքելական եւ մէկ կաթողիկէ ներկայացուցիչ Պէյրութէն եւ մէկ առաքելական ներկայացուցիչ Լեռնալիբանանի Մէթնի ընտրատարածքէն: Լիբանանի քաղաքացիական պատերազմին աւարտը նշանաւորող Թաէֆի Համաձայնագրով վերոյիշեալ աթոռներուն վրայ աւելցաւ մէկ առաքելական աթոռ՝ Պեքաայի Նահանգի Զահլէի ընտրատարածքին մէջ, մինչ աւետարանական աթոռին աւետարանական հայեր ալ կրնան թեկնածու ըլլալ<sup>1</sup>: Ներկայիս լիբանահայութիւնը խորհրդարանին մէջ կը ներկայացուի հինգ հայ առաքելական եւ մէկ հայ կաթողիկէ երեսփոխաններով:

Բնականաբար, համայնքներուն առնչութիւնը պետութեան՝ չի սահմանափակուիր լոկ երեսփոխանական կամ նախարարական մասնակցութեամբ: Լիբանանի պետականօրէն ճանչցուած համայնքները իրաւական բաղադրիչներն են այդ պետութեան: Ըստ այդմ ալ, լիբանահայութեան քաղաքական դերակատարութիւնը կարելի է դիտարկել նաեւ իբրեւ միւս համայնքներուն հետ՝ պետութեան մէջ իշխանութեան իրաւունքի փոխյարաբերութեան պահպանում:

---

<sup>1</sup> Լիբանանի Հանրապետութիւնը չի ճանչնար Լիբանանի Հայ Աւետարանականները իբրեւ առանձին համայնք, այլ զանոնք կը նկատէ Լիբանանի *Փրոթեստանթ Համայնքի* մաս. ասոնց յատկացուած է խորհրդանական մէկ աթոռ: 1972էն մինչեւ 2000 հայ աւետարանական երեսփոխաններ կը ներկայացնէին *Փրոթեստանթ Համայնքը*:

Աննախընթաց այս հատորը բաժնուած է տաս Գլուխներու, որոնցմէ երկուքը ունին երկուքական բաժին: Հատորը կ'աւարտի ամփոփումով մը, աղբիւրացանկով եւ անուանացանկով:

Գիրքին առաջին երկու Գլուխները ունին ներածական բնոյթ: Առաջինը կը ներկայացնէ լիբանահայութեան պատկերը՝ հայութեան զանգուածաբար Լիբանան հաստատուելէն (1921) մինչեւ այսօր լիբանահայութիւնը իր յարանուանութիւններով, կրօնական-եկեղեցական, հասարակական, ընկերային, մարզական, կուսակցական, կրթական, մշակութային եւ այլեւայլ կառոյցներով: Այս առումով, այս Գլուխը ունի ճանաչողական նորագոյն արժէք: Երկրորդ Գլուխը կը համառօտէ Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները՝ 1934-2009 շրջանին:

Մնացեալ Գլուխներէն իւրաքանչիւրը կը ներկայացնէ Լիբանանի Հանրապետութեան իւրաքանչիւր նախագահի պաշտօնավարութեան տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնները: Այսպէ՛ս կազմուած են նախագահներ Պշարա Խուրիի (1943-1952), Քամիլ Շամունի (1952-1958), Ֆուատ Շեհապի (1958-1964), Էլիաս Շրաուիի (1989-1998), Էմիլ Լահուտի (1998-2007) եւ Միշէլ Սլէյմանի (2008-2014) պաշտօնավարութեան շրջանին ընտրութիւններուն նուիրուած Գլուխները: Բացառութիւն կը կազմեն ֆրանսական հոգատարութեան հանգրուանի (1934-1943) ու նախագահներ Շարլ Հելուի (1964-1970) եւ Սլէյման Ֆրանժիէի (1970-1976) պաշտօնավարութեան շրջանին ընտրութիւններուն վերաբերող երեք առանձին Գլուխները:

Այս Գլուխներուն մէջ Մարրլեան պատմաբանի բժախնդրութեամբ կը ներկայացնէ լիբանահայութեան ներքին պայքարները՝ խորհրդարանական ընտրութեանց առթիւ, եւ անոնց ունեցած ազդեցութիւնները թէ՛ լիբանահայ զանազան խաւերուն, եւ թէ՛ լիբանահայ մշակութային ու ազգային զանազան իրադարձութիւններու վրայ: Ի տարբերութիւն այլ ուսումնասիրողներու, որոնք կուսակցութիւն մը, կամ եկեղեցին առած են իրենց պատումին առանցքը, Մարրլեան ունի քաղաքական ընթացքի աւելի չէզոք եւ հաստատութենական առանցք ընտրութիւնները:

